


ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼՅԱՆ

ԼԿ 19



ՍԵՎ ՔԱՌԱԿՈՒՄԻ
ԿԱՐՄԻՐ ԱՆԱՊԱՏՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ԱԳԱԼՅԱՆ

**ՍԵՎ ՔԱՌԱԿՈՒՄԻ
ԿԱՐՄԻՐ ԱՆԱՊԱՏՈՒՄ**

Երևան

«Լուսարաց հրատարակչատուն»

2008

897.54

Ա-1^ա
ՀՏԴ 891.981-3 Աղայան
ԳՄԴ 84Հ-4
Ա 190

**Հեղինակը շնորհակալ է ժԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ՝
գրքի տպագրությունը հովանավորելու համար:**

Կազմի լինոփորագիր ձին՝ ՈՌԻՔԵՆ ԱԴԱԼՅԱՆԻ

**Ա 190 Աղայան Ն.
Սև քառակուսի կարմիր
անապատում / Նորայր Աղայան.-Եր.: Լուսարաց,
2008.- 288 էջ:**

ԵՊՀ գրադարան



SU0145079

ԳՄԴ 84Հ-4

ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ԼԵՔՏԻՎՆԵՐԻ ԱՆՈՒՑԱԾՈՒՄ
MARKS AND MAKE TRADE LIBRARY OF YEREVAN STATE UNIVERSITY

© Ն. Աղայան, 2008 թ.

**Այս վեպը նվիրում եմ Հայոց Յեղասպանության
նահապակների անմահ հոգիներին:
ՀԵՂԻՆԱԿ**

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՍ

Ցեղասպանության տեսիլքները մշտապես ներկա են իմ ստեղծագործական կյանքում, եթե նույնիսկ դրանք որևէ ժանրով չեն վավերագրում: Իմ մեջ են իբրև արթուն զգացմունք, ժողովրդից ինձ ժառանգված հիշողություն, կենդանի ցավ ու տառապանք: Հայոց Ցեղասպանությունը պատմական անցյալ չէ միայն, այլ ներկայի իրողություն, որ հարաբերում է ամեն ապրող հային այսօր և վաղը, այնքան ժամանակ, քանի դեռ մեր ճշմարիտ ու ազնիվ պահանջատիրությունը լուծում չի ստացել: Երանելի կլինի այն օրը, երբ մեր անօրինակ ողբերգությանը կնայենք իբրև հեռավոր անցյալի պատմության:

Այս վեպը իմ միակ երկն է, որը տարիներ առաջ գրելուց հետո կրկին ու դարձյալ ծայրեծայր գրի եմ առել՝ փորձելով դարձնել ավելի կատարյալ ու ամբողջական՝ բավարարում տալու իմ ներքին մարդու հուզաշխարհին: Այժմ ամենավերջին տարբերակն եմ հանձնում ձեզ: Բառա-շարահյուսական խմբագրումից բացի, վեպն այստեղ ներկայանում է բոլորովին նոր գեղարվեստական կառուցվածքով, անընդմեջ շարադրանքի փոխարեն՝ երեք պատմողական գործողություն, այդ հյուսվածքում ամբողջովին նորություն է ընդարձակ երկրորդ մասը, որը կամրջում է առաջին և երրորդ մասերում Ցեղասպանությունից փրկվելու հոգեկան ու մարմնական աներևակայելի ջանքեր գործադրող քարավանի ողբերգական մեղեդիները:

Ն ԱԿԱՆՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Երզնկա: Քարավանը: Եփրատ:

Ներսես Ալթուն: Մզրո: Ոսկե յիու առասպելը: Օսան և Աբլաս:

Նանե: Ճակարագրի սև բուն: Իանայի: Լուսնի մանգաղը:

Մնացյալքը՝ վեպի մեջ:

Ձին վրնջում էր և օգնություն կանչում, քայց ոչ ոք չէր լսում նրա աղիողորմ ձայնը:

Ինչպես միշտ և հազար ու ավելի տարիներ առաջ, 1918 թվականի գարունը Երզնկա քաղաքում լուսացավ կայծակ-ամպրոպներով ու տեղատարափներով, կարկուտ խփեց, ցուրտ ու տաք քամիներ եկան անցան, կոտորվեց սառույցը, պղտոր ջրեր ու հեղեղներ հոսեցին և, ճանկռտելով հողի երեսը, քանդելով ցանկապատ ու պարիսպ, մատղաշ ծառեր արմատահան անելով, թավալվոր վազեցին դեպի դաշտ՝ լցվելու Եփրատ մայր գետի մեջ:

Երկնքի սևաթույր վերմակը կայծակներից ճեղքվեց և պատառ-պատառ եղավ:

Աստղերը, որոնք Եկեղյաց գավառում ավելի պայծառ են, քան աշխարհի ամենամաքուր և շողշողուն ադամանդը, բյուր հազարներով զարդարեցին գիշերային տիեզերքը և տարածության անհուններից լույս նաղեցին խոշտանգված երկրի վրա:

Բյուրակն-Մեծուրյան լեռնաշղթայի թիկունքից ելավ մեծ ու գունեղ արևը:

Դաշտը կանաչեց:

Դեղձենու անուշահոտ ծաղկի առէջքում բզզաց մեղուն:

Տաք քարին երգեց խատուտիկ արտույտը:

Լեռների փեշերից ձյուները բարձրացան երկնահաս գագաթները, որտեղ նրանց հավերժական սահմաններն են:

Դրախտի գետը դուրս ելավ ափերից և, ազահորեն լափիլգելով դաշտի հողն ու քարը, հարբած վիշապի նման փորսող գնաց գոռում-գոշյունով զարկվելու Քեմախի սև-անդունդ կիրճի ապառաժներին:

Եփրատ գետը, դրախտի գետը՝ ըստ Սուրբ Գրքի, և դժոխքի գետը՝ պատմության ճակատագրով: Այդ գարուն ո՞ր էր հեռանում նա և ինչո՞ւ էր հեռանում՝ մարդկանց անպատմելի դժբախտություններին անտեղյակ և ձիու աղաչական կանչին խուլ ու անաարբեր:

Քաղաքի թուրք բնակչության ուշադրությունը չգրավելու համար գաղտնի պայմանավորվածություն եղավ հավաքվելու կեսգիշերին, Սուրբ Փրկիչ եկեղեցու հրապարակում, և լույսը չբացված բռնել էր գրումի ճանապարհը:

Այդ օրվան հայ տների վերջին բեկորները երկար էին սպասել՝ ամբողջ խստաշունչ ձմեռը, որ ուղեկցվում էր իշխանության հալածանքով, սպանություններով ու հրդեհներով, կտղուստով: Ռուսական բանակը մի քանի ամիս առաջ մահանջել էր Կարս: Վեհիք փաշայի զորքը և թուրք խուժանը անարգել մահ-կրակ էին տեղում քաղաքի ու գավառի վրա: Մերաստացի Մուրադը հօդս էր հանել Եփրատի կամուրջը, ողջ մնացած իր մի բուռ տղաներով գնացել արևելյան հողեր և այժմ, լուրեր էին պտտվում, հուսահատ ու անհեռանկար կռիվներ էր մղում երկրի ու ժողովրդի փրկության համար: Դպրոցները փակ էին: Երեկվա աշխույժ, ուրախ փողոցները ամայի էին և ահասարսուռ, մերթընդներթ, չաղ-

րայով գեղեցիկ դեմքը ծածկած, սևորակ աչքերի կայծկլտոցով, հպարտ ու տիրականորեն անցնում էր քրքուռին: Եկեղեցիները պղծված էին: Ողջերն աղոթում էին տանը՝ առ Մարիամ Աստվածածին և Քրիստոս Հիսուս, առ արդարություն, լույս և փրկություն, դագաղի կափարիչի պես խուլ կողպված դռների հետևը: Երզնկան և երզնկացիները մնացել էին մեն-մենակ. աշխարհում, ժողովուրդների մեծ ընտանիքում, տիեզերքում:

Սուրբ Փրկիչը քաղաքի հինգ եկեղեցիներից մեկն էր՝ քարուկիր սյուներով ու բարձր կամարներով ամրակուռ մի շինություն, որին 1886 թվականի մեծ երկրաշարժն անգամ չէր վնասել:

Ամեն եկեղեցի ուներ իր կենսագրությունը և որևիցե նշանավոր մասունք, որ անկրկնելի էր դարձնում նրան՝ շրջապատելով հատուկ սիրով ու բարեպաշտությամբ:

Սուրբ Նշանը աթոռանիստ մայր եկեղեցի էր: Ավանդությունն ասում էր, որ նրա հիմքում Գրիգոր Լուսավորչի կառուցած համանուն եկեղեցին է՝ Հռոմից բերված Տրդատ թագավորի խաչով: Այստեղ էր գտնվում նաև 12-րդ դարի երզնկացի ականավոր քերականագետ ու մատենագիր Հովհաննես Պլուզի գերեզմանը: Շիրմաքարին փորսգրված էր. «Այս է տապան հանգստեան Յովհաննես Պլուզ Ծործորեան, էր վարդապետ ճարտասան»:

Սուրբ Երրորդությունը նոր ու մեծաշուք կառույց էր՝ ժամանակակից երզնկացու կյանքի ու մտածողության հայելին, ուներ ընդարձակ սրահ, բարձր ատենաբեն, առաջնորդանիստ ամպիոնավանի, կամարակապ որմնախորշերը, առաստաղը, լայնակոնք սյուները զարդարված էին ոսկեզօծ նկարներով և շողշողուն կանթեղներով: Գավիթում էր գտնվում մարդասեասակ սուրբ խաչքա-

րը, որի վրա ջերմեանդ հավատացյալները մոմ էին վառում՝ իրենց բաղձանքը իրականացած տեսնելու համար:

Սուրբ Սարգիս եկեղեցին աղքատն էր իր եղբայրների մեջ. հասութաբեր կալվածքներ, հարուստ սպասքներ, աչքառու պերճանքներ ամենևին չուներ, միակ նշանավոր ունեցվածքը մագաղաթ ու գրչագիր «Կոլոչ Ավետարանն» էր՝ փղոսկրե կողերով ու միջմաղարյան զարդանկարներով: Տարին երկու անգամ՝ Սուրբ Սարգսի պահքի շաբաթը և մեծ պահքի առաջին շաբաթվա չորեքշաբթի օրը, Ավետարանը հանդիսավորությամբ բերվում էր գավիթ և ընթերցվում ժողովրդին: Այդ օրերը եկեղեցու դուրսն ու ներսը լեփլեցուն էին տեղացիներով և հեռավոր գյուղերից եկած ուխտավորներով: Ամեն մարդ ուզում էր սեփական աչքով տեսնել մագաղաթե մատյանը, ձեռք տալ, հույս-հավատով համբուրել: Եվ երբ հաջողվում էր մատներով դիպչել նրան, մանավանդ՝ հուզված շուրթերով համբուրել, ուրեմն երջանիկ էր լինելու ամբողջ տարին, ամբողջ կյանքը՝ մինչև խոր ծերություն:

Սուրբ Աստվածածինը ավելի պատմական հուշարձան էր, քան գործող եկեղեցի: Երկրաշարժերը կործանել էին նրա գմբեթը, խարխալել պատ ու խոյակ, որոնց ճեղքերում ծիծեռնակը ամեն զարուն շինում ու վերաշինում էր իր բույնը: Աստվածածնի քակում հին գերեզմանոց կար՝ գեղեցիկ խաչքարերով ու տապանաքարերով: Տարին միայն մեկ անգամ՝ Սրբուհու տոնին, ժողովուրդն ուխտի էր գալիս այստեղ, և քաղաքում հայտնի Եզնիկ քահանան կատարում էր եկեղեցական ծեսեր ու պատարագ:

Իսկ Սուրբ Փրկիչ եկեղեցին նշանավոր էր իր վիթխարի զանգով, որն անցյալ դարում Հողկրոյան ընտանիքն էր բերել Ռուսաստանից: Տոն լինելը թե ողբանք, ուրախություն թե վիշտ ա-

մանձնական՝ Փրկչի զանգը դողանջում էր քաղաքում, հասնում շրջակա գյուղերը՝ իր խրոխտ ու գեղեցիկ երգեցողությամբ մարդկանց ներշնչելով հոգու անդորրություն, հորդորելով մխիթարել իրար և սիրել միմյանց: Քանի՛-քանի անգամ բարբարոս թուրք խուժանը փորձեց իջեցնել զանգը և ջարդուփշուր անել, նրանից կացին ու յաթաղան ձուլել: Շատ անմեղ արյուն թափվեց Սուրբ Փրկիչում, զոհվեցին երիտասարդ այրեր ու կանայք, բայց պահպանեցին զանգի թանկ ու սրբազան ազատությունը:

Կեսգիշեր դեռ չեղած, առաջինը եկեղեցուն մտտեցավ Ներսես Ալթունյանը՝ քսանյոթ տարեկան, բարձրահասակ, ջլապինդ մի երիտասարդ. նա էր քարավանի առաջնորդը: Ներսեսն ավարտել էր Կեդրոնականը և ապա, իր շատ հայրենակիցների նման, Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանը: Խաղաղ տարիներին աշխարհագրություն ու երգարվեստ էր դասավանդում Արամյան և Քրիստինյան աղջկանց վարժարաններում: Նա Երզնկայի հանրային կյանքի գործունյա դեմքերից էր, նրա նախաձեռնությամբ կազմակերպվեց տարբեր վարժարանների տղա և աղջիկ սաների միացյալ երգչախումբը, որը կիրակի ու տոն օրերին եկեղեցիներում հանդես էր գալիս հոգևոր ու ազգային երգերաժշտության զմայլելի կատարմամբ՝ անսահման հպարտություն պատճառելով ժողովրդին: Մեծ ու նշանավոր գերդաստանի շառավիղն էր Ներսես Ալթունյանը, նրա մեջ գիտության և արվեստի նրբազգացողությունները զուգակցված էին հայրենասեր հոգու մարտնչող ու անձնվեր վրիժառությանը: 1915-ից ի վեր Ներսեսը սերաստացի Առյուծ Մուրադի գլխավորությամբ կռիվներ էր մղում Տերսիմում, Ակնի ու Սանսայի ձորերում, Մուշում և,

իհարկէ, հայրենի գավառում, որտեղ թուրքական մահաբեր լեղին առանձնահատուկ թունդ էր ու առատ:

Նա միակ արու գավակն էր Սրբուհի և Պարզև Ալթունյանների, Ռոզեթ, Սաքենիկ և Հռիփսիմն կույսերի եղբայրը, որոնք դաժանորեն խոշտանգվեցին իրենց բնակարանի մեջ և կրակբոցի մատնվեցին:

Նրա մորենական պապը Երզնկայի թատրոնի հիմնադիրն էր՝ Մահտեսի Կարապետ աղան, որը պատրաստեց «Վարդան Մամիկոնյան» ներկայացումը՝ խանդավառելով ժողովրդին հայրենասեր ցնծությամբ:

Նրա հորեղբայրը համբավավոր երկաթագործ-զինագործ Տիգրանն էր:

Նրա կնքահայրը, - կնունքը տեղի էր ունեցել Սուրբ Երրորդություն եկեղեցում, - Ոսկան պեյ Մարտիկյանն էր՝ սահմանադրության տարիներին Թուրքիո փոստ-հեռագրատան նախարարը: Վտարվեց պաշտոնից այն պատճառով, որ նոր թողարկության մամականիշների եզերքին հայ տառերին նմանվող զարդանախշեր էին տպված:

Նրա հորաքրոջ տղան Հայկ Քաջյանն էր՝ բժիշկ, լեզվագետ, ընտիր նկարիչ, Ապտուլլահ փաշայի հրամանով քառատվեց Սերայի հրապարակում հեղափոխական գործունեության համար:

Կարելի չէր այդ գիշեր բոլորին տեսնել անուն առ անուն, որովհետև ցուրտ էր գիշերը և մթին, իսկ ամեն մեկը՝ անտանելի կսկիծ, ցավ ու կարոտ:

Նա դրկիցն էր և զենքի ընկերը Սողոմոն Թեխլերյանի. կանցնի ընդամենը մի քանի տարի, և Մուրադի խմբի ամենակրտսերը՝ գեղեցիկ ու նրբակազմ Սողոմոնը, Բեռլինի փողոցներից մեկում

լույս օրով գնդակահար կանի օսմանյան դժոխքի նախկին վարչապետ, հայ ժողովրդի դահիճ Թալեաթ փաշային, իր անունը զարդարելով հավերժական փառքի լուսապսակով: Բայց Ներսեսը ոչինչ չի տեսնի, ոչինչ չի իմանա, ոչինչ չի լսի...

Նրա կինը Լուսին Սրապյանն էր՝ բարակիրան, թխահեր, ծիծեռնակի թևի պես սուր հոնքերի ստվերում միշտ ժպտացող աչքերով, իր երկու անմեղների հետ քշվեց անապատ և, ասում են, մեռավ շիկացած ավազների մեջ: Սուտ են վկայում, սուտ են ասում, հնարում են, խաբում են, հնարում ու խաբում են, խաբում են, խաբում են:

Նա տեսել էր Ջեռիի կախաղան բարձրանալը, որ տեղի ունեցավ 1903 թվականի հունիսի 10-ին, Յոթյանի հրապարակում, ապա և՛ հերոսի ժողովրդական քաղումը. դագաղը իրենց ուսերի վրա տանում էին Ջեռիի գեմքի ղնկերները՝ Կայծակ Առաքելը, Ավոն, Շեկ Պեռոսը, Մեպուհը և Առյուծ Մուրադը: Դագաղն ուղեկցող սզավոր ժողովուրդը երգում էր. «Բացվի՛ր, բացվի՛ր, հայոց վարդը, ժպտի՛ր, ժպտի՛ր, հայոց բախտը»:

Նա հիշում էր Չեքի փաշայի դեմքը՝ մանր ու կլոր աչքերի խորամանկ ժպիտով: Չեքի փաշան էր, որ հրի մատնեց Սասունը և անձամբ ղեկավարեց Երզնկայի 1895 թվականի կոտորածը շուկաներում, դպրոցներում, հիվանդանոցներում, եկեղեցիների մեջ: Տակավին երեխա՝ նա միտք արեց սպանել նրան:

Նա խաղացել էր Գալուստ Մյուրմենյանի հետ, լողացել Եփրատում, նրա հետ դպրոց հաճախել: Կար մի աղջիկ, մի հիանալի ու գեղեցիկ հայուհի, ի՞նչ էր անունը, Գալուստը նրան սիրում էր, սիրում էր, սիրում էր, ի՞նչ էր անունը... Հիմա որտե՞ղ են նրանք, ո՞ղջ են, թե՞ մեռած, ի՞նչ էր այն աղջկա անունը, ո՞ղջ են, թե՞ ար-

դեն նահատակ, անունը, անունը, նրա անունը... Կանցնեն շատ տարիներ, և Գալուստ Սյուրմենյանը սրտի հիշողություն ու հիշատակ գիրք կգրի և կանվանի «Երզնկա»:

Սուրբ Փրկիչ եկեղեցու բակում Երզնկայի վերջին գիշերվա սառը երկինքն էր: Հարդագողի ճամփան աստղերի փոխարեն լցված էր հարյուր հազարավոր հայերի երամով:

Սահակ վարդապետ Օտապաշյան. խաչ հանվեց Գարահիսարում:

Քէլապպի Գուկաս. շիկացած շամփուրներ խոթեցին մարմինը, և մեռավ ահավոր-ահավոր ցավերից:

Արամ Ադայան. ազգային երեսփոխանական ժողովի անդամ, իրեն և կնոջը սրախողխող արեցին հայոց գերեզմանատան մեջ, երբ նրանք սգում էին ծնողաց շիրիմները: Մնաց Մարտիրոս տղան. քիչ հետո նա վերջին երզնկացիների հետ տարագրության կելնի դեպի արևելք, ամիսներ անց սովալլուկ ու բոկոտն կհասնի Երևան, կամուսնանա այնուհետև և Սեդա, Ռուբեն, Նորայր, Ռաֆֆի զավակներին կպատմի իր տեսածը, գլխով անցած-դարձածն ու տառապական ապրումները՝ առանց որևէ թել ավելացնելու կամ պակասեցնելու, նրանք էլ կասեն-կպատմեն իրենց զավակներին, վերջիններս էլ՝ իրենց, սրանք էլ իրենց նորածիններին կպատմեն, նորածիններն էլ՝ իրենց ուստրերին ու դուստրերին, բոլորը բոլորին դար ու դարեր կպատմեն Արամ-Եվայից ծնված երկրի ու ժողովրդի բռնադատությունը, և այդ անընդհատ ու հարատև պատմությունը՝ կենդանի էիշողության դաշտը, կյանք և ծաղիկ կտա նրանց հողմահար-կացնահար-խորշակահար ծառին:

Ճիզմենճյան մեծ ընտանիք, բաղկացած 27 հարազատներից. բոլորը, բոլորը նահատակ են: Ճիզմենճյան ազգանունն այլևս չկա: Եղել էր: Կար ու ապրում էր: Իսկ հիմա չկա, չկա Ճիզմենճյան հիանալի, անմնան, հրաշք ազգանունը, մեռել է, անշունչ ոսկոր է դարձել, փոշիացել է, չկա:

Անուշ Մեծուրյան, գեղուհի Անուշ, ամբողջ Եկեղյաց գավառի ծաղիկ զարդը. բռնաբարված է խմբովին և տանջամահ արված:

Վերին փողոցից խուլ ու ծանր ոտնաձայներ լսվեցին:

Գալիս են:

Գևորգ Հալաճյան. իր ազգուտակից միակ ողջ մնացածը, տարիներով կթափառի աշխարհի տարբեր քաղաքներում, անտուն ու անընկեր, և կխելագարվի վերջ ի վերջո:

Մեսրոպ Քաջբերունի, անունն անգամ ահ ու սարսափ էր քորքերին, կախաղան հանվեց Սեբաստիայում:

Չապել, Վարսենիկ, Շողակաթ, Հայկանուշ, Նուարդ, Արևալույս, Նոյեմզար քույրեր. Ակնի սոտ, բարձր ժայռից իրենց նետեցին Եփրատի հորձանքը՝ ասկյարներին չհանձնվելու համար:

Խաչիկ Մեյիսյան. մեռած է, թե՞ ողջ-առողջ Խաչիկը... Երևանում, խոր ծերության հոգեվարքից մեկ-երկու րուպե առաջ նա ապրող հարազատներին կպատգամի. «Երգինճանի մեր տունի երդիկեն ձունը վար առնել չնոռնաք: Մեր ծիրանի ծառը պաղ ջուր շատ կսիրե, ջուր չխնայեք անոր: Ուխտ կերթաք Մեծ Լուսավորչա վանք, ժողովուրդ ըսվածը ուխտով կուժեղանա: Ականջ կախեք, հացին բույրը անպակաս ըլլա մեր տուն ու տեղեն: Ամեն եկող-գացողի, հարուստ ըլլա թե աղքատ, անուշ հյուրասիրություն կընեք, տուն ու մեծի պատիվ բարձր պահելու եք, մինչև ես

երթամ Սեպուի լեռան ստորոտեն խաս պողիկ ժողվեմ ու ետ դառնամ»:

Նա՛ ներսես Աթուրյանը, հիշեց ու աստղի լույսով տեսավ ինչ-որ թերթում ամիսներ առաջ տպագրված սարսափելի լուսանկարը՝ «Հայ նահատակաց դիակները Դեր-Չոր անապատին մեջ»: Անհամար դիեր, կմախքների ու դիերի բլուրներ, կոդուպված, լլկված, ճզմված դիերի անապատ: Ներսեսի մարմինը ցնցվեց-ցնցվեց սարսուռներից, նա ձեռքն արագ տարավ զենքին և վրեժի ու ատելության ձայնով գոռաց.

– Հե՛յ, ո՞վ է...

Մտեցողը Վահրամն էր՝ առավոտ լուսո սկսվող տաժանակիր ճանապարհի իր օգնական թևը: Նա էլ էր մի քանի շաբաթ առաջ Մուրադի հանձնարարությամբ ծայտյալ վերադարձել Երզնկա՝ կազմակերպելու ողջ մնացած հայերի տեղափոխության գործը:

Տեղափոխություն, տեղաշարժ, տեղահանություն... Եկե՞՛լ էին, որ այժմ էլ պիտի գնային: Հյուր ու եկվո՞ր էին, որ հիմա էլ ժամն ու ժամանակն էր հեռանալու: Ինչո՞ւ, ինչի՞՞ համար... Իրենց նախասկիզբն է, իրենց մայր հողը, իրենց Հայկյան արգանդը, իրենց աշխարհագրությունը, իրենց Արարատյան երկիրը, իրենց բնությունը, իրենց ոսկեհատ Անահիտը, իրենց քաղաքը, իրենց տունը: Ախր ինչո՞ւ, ինչի՞՞ համար այդ ամբողջը պիտի բաշխեն-նվիրեն օտարին, թշնամուն, գող ու ավազակին, ոճրագործին, արյունախում մարդասպանին:

Գաղթի ղեկավար մարմնի անդամների, ինչպես նաև գաղթականների միջև, վերջին օրերը, երբ ձյուններն արագորեն սկսեցին հալչել ու ճամփաները քացվեցին, շատ խոսք ու վիճարանություն

եղավ. գնա՞լն է ճիշտ, թե՞ մնալը, դեպի ո՞ր մեկնել՝ ամենուրեք մահ է ու ամայություն, և եթե մնալու են իրենց հողի վրա՝ ինչպե՞ս - պիտի տոկան ու ընդդիմանան թուրքի նոր հարձակումին, որ արդեն սպասվում է ամեն օր ու ժամ:

- Աս իմ երգիւրն է, տունես պի չի ելնիմ:

- Կգերադասիմ թաղվիլ իմ հողին գիրկը:

- Մինչև հիմա ո՞վ թաղվեցավ, բոլորը քշվեցան անապատները, սպանվեցան կիրճերուն մեջ, իջան Եփրատին հատակը, ձուկերու բաժին եղան, գայլերը լափեցին անոնց սառած արյունը, գիշանգողը հռչոտեց անոնց միսը, կարիճներն ու օձերը անոնց մարմիններում թունավոր բույներ շինեցին, նույն հալածանքն ու վախճանը մեզի կսպասե:

- Էրգոես քայլ մը անդին պի չի ընեմ:

- Լուր առա, խուժանը կփայլեցնե իր յաթաղանը, խելամիտ ըլլալը մեզի փրկություն է, արդեն նա կապրի մնացորդացս մարմիններուն վրա իր ժանիքը նորեն սրելու հաճույքին հեռանկարը:

- Սպանեցեք զիս, հիմակուհիմա ձեզի կխնդրեմ, սպանեցեք զիս:

- Փասսափուսադ ժողվե, տուն ապրելու ես:

- Մեռնիլ, մեռնիլ կուզեմ:

Վարսուներեքամյա կաշեգործ Փղրափիյոնը դեռ երկար, շատ երկար կապրի և ժամանակներ հետո ծնված իր աղջիկ թոռան անունը, հակառակ բոլոր հարազատների ընդդիմության, կկնքի Փղրափիյոն:

- Էրգան-բարակ խոսելու միջոց չէ, ախպար, օր առաջ ճամփա ելնելու ենք:

- Ո՞ր ճամփան:

– Դեպի Սվազ երթանք:

– Առ Բաբերդ:

– Տրապիզոնեն առաջացող Վեհիբ փաշան կրնա փակել մեր ճամփաները և բնաջինջ ընել մեզ:

– Սբնգորեն հիմա անցնիլը անկարելի է, լեռնանցքները ձյունին մեջ են տակավին:

– Մալաթիա-Ուրֆային ճամփան բաց է:

– Խե՞նք ես, առ ճամփան Սուրիո ամապատները կերթա, Դեր-Չոր դժոխքը, ուրդեղեն ոչ ոք, ոչ մեկ հայ գլուխն ազատեց, հարյուր հազարներով մեռան սովեն, հուսահատության ցավեն, համաճարակներեն, սպանվեցան գազանաբար, կանայք մերկանդամ խաչվեցան, երեխաները ողջ-ողջ թաղվեցան ավազներուն մեջ, տղամարդիկ ցից ու կախաղան հանվեցան, եթե Աստված մեզի կամենա ապրիլ, պիտի խելագարվինք ազգովին:

– Թուրքի ուզածն ալ աղ է:

– Չարաչար կսխալիս, ան կուզե հայու ծուխը տակնուվրա մարել, մարդկային հիշողությունեն անգամ վտարել մեր հայրենիքը, մեր սիրտը, մեր բարբառը, մեր մտածությունները:

Մերժվեց նաև Քենախի ճանապարհը, որ գնում հասնում էր Ակն, Արարկիր, Խարբերդ: Քենախի կիրճում անհնարին է չհանդիպել գորշ գայլերի հրոսակներին, անվտանգ անցնել Եփրատի հորձանքը, որ հատկապես զարմանը դիվտ է ու փրփրաբերան: Քանի՜-քանի տարագիր բարավաններ կիրճի անդունդներում գտան իրենց դժնդակ մահը, կամովին կամ բռնությամբ կուլ գնացին Եփրատին, նրանց անշունչ մարմինները փրկվեցին միայն է վտառներով լողացին-լողացին դեպի հեռու հարավները:

– Ամեն տեղ ալ կոտորածի վերջին արարն է:

– Ի՞նչ կուզես ըսել:

– Կայնի՞նք և մեր կյանքի համար մաքառի՞նք մինչի վերջ:

– Աֆերի՛մ... Ի՞նչ բազուկներով... Արդեն ծերեր, կիներ ու երեխաներ մնացեր ենք:

– Ես կերթամ, քալելով կերթամ մայր Եփրատին հոսանքն ի վար, չորեքթաթ սողալով, քար ու տատասկ ուտելով, գետինը ճանկոռտելով կեասնին անապատ, ուրդեղ Չուքուրյան մերիններուն դիերն են. կուզեն լսել անոնց վերջին բառերը, զգալ անոնց վերջին շունչը, տեսնիլ անոնց վերջին տեսածը, հայերեն կխոսիմ, կհասկնամ՞ք ինձի:

Հասկանում էին և չէին հասկանում. նրանց թվում էր, թե ամեն մեկն ուրիշ ցավ է լացում. այնինչ բոլորը նույնն էին և մեկ մարդ ու մարմին՝ նույն և նույնանուն հուսահատությունը, կորուստը, ողբագին աղաղակը, սև մութը, տվայտանքը, միայնությունը, փակ դուռը, շղթայակապ ճակատագիրը: Եվ դա ուժեղացնում էր նրանց: Եվ նրանք այդ չգիտեին:

– Բոլոր ճամփաներն ալ դեպի մահ և անէություն կտանին:

– Արդեն ամբողջ Տաճկաստանը գերեզման ու մեռելատուն դարձած է:

Այո, բայց...

Տաճիկն ապրում էր:

Ծիծաղ և շարություն էր դենքին:

Սփռում էր ավերակ և սուգ, արյուն և տառապանք:

Հանգիստ քնում էր:

Երգում էր. «Անխնա կոտորենք հայերին ամբողջ երկրագնդի վրա, արևելքում թե արևմուտքում, հյուսիսում թե հարավում»:

Երազ էր տեսնում՝ հյուր է կարմիր սուլթաններին. ճաշը՝ համեղ ու առատ, հարեմի կանայք՝ մեկը մեկից կրքահույզ, նվազածությունը՝ արբեցնող և մեղրի պես քաղցր ու ծործոր:

Մզկիթներում աղոթում էր ծնկաչոք, մեջքը յաթաղանի մնան ծռած, գլուխը գետնին քսելով. «Թուրքիան միայն թուրքերի համար... Գործի՛ր, օհ, թուրք... Գործի՛ր, ինչպես գորշ գայլ...»

Տաճիկն ավելի էր տաճիկ կտրում՝ Աղանայում, Տրապիզոնում, Երզնկայում, Բաբերդում, Արաբկիրում, Դիարբեքիրում, Ջոնիայում, Մալաթիայում, Էրզրումում, Բիթլիսում, Խարբերդում, Սվազում, Մուշում, Այնթափում, Ամասիայում, Մարզվանում, Մաստուում, Ակնում, Կեսարիայում, ամեն տեղ, ամեն տեղ, ամեն տեղ: «Ուրֆայում 3000 հոգու փակեցին եկեղեցում և կենդանի-կենդանի խորովեցին հրդեհի մեջ»:

Հողված ու ոտանավոր էր գրում. «Յուրաքանչյուր զինվոր պետք է վերադառնա բարբարոսության օրերին, պապակի արյան, լինի անգութ՝ մանուկներին ու կանանց, ծերերին ու տկարներին սպանելիս»:

Բաժակ էր բարձրացնում և ճառում իր համաթուրանական երկրի կենացը, որ տարածվելու է Միջերկրականից մինչև Արալյան ծով:

Կոչ էր անում. հայերին չխնայեք, կենդանի շունչ չթողնեք, հող, կայք, եղած-չեղած ամեն բան հափշտակեք, դպրոց, եկեղեցի, խաչքար, բերդ ու պարիսպ, մատյան, ջրաղաց, ակունք գետնին հավասարեցրեք, ձայնը պարանով քարկապ արեք, մեխերով գամեք, անունը, աճունը, անունը իջեցրեք մութ ու խուլ մռռացության վիհը, որ հարյուր հազար տարի հետո էլ դուրս չգա:

Պորտապար էր խաղում:

Լամուկներ եր ցնկնում: Կրկին ու դարձյալ ցնկնում եր: Ցնկնում եր, ինչպես շունը, կատուն, գայլը:

Ստամբուլը փրկություն եր ինչ-որ չափով: Եվրոպայի աչքի առջև տաճիկը բաղդատաբար զուսպ ու համեստ եր ցեղասպանություն անում սիրալիրության, ամոթի, բարեպաշտության դիմակ հագած: Այնտեղից, մտածում էին, կարելի է գնալ միջերկրյա ծովյան երկրներ և նույնիսկ Ամերիկա, որ Տաճկաստանից ապահովպաես պաշտպանված է խոր ու հսկա օվկիանոսով: Բայց դժոխքի յոթ սար ու ձոր ճանապարհով ինչպե՞ս ողջ կամ մեռած հասնել Ստամբուլ:

Անկարելի է:

Անլինելի:

Անհնար, անհնար, անհնար:

Ի վերջո, որոշեցին գնալ դեպի Էրզրում: Այդ ճանապարհը, մյուսների համեմատությամբ, ուներ իր առավելությունն ու աննպաստ կողմերը: Բավականաչափ ավեր վիճակում եր, մինչև իսկ փոստի ձիակառքերին մի քանի օր եր անհրաժեշտ տեղ հասնելու համար: Քուրդ ավազակախմբերի հարձակումն անխուսափելի եր, նրանք վրա էին տալիս հանկարծակի, զինյալ ու ձիավոր, և կայծակի արագությամբ թալան անելով, նույնքան արագ էլ հեռանում իրենց ամպ ու մշուշ լեռները: Այդ կողմերում մշուշը շատ եր, և արևը թաց ու սառը աչքերով եր նայում իողին: Դա լավ եր, մշուշներն օգնում էին աննկատ մնալ, բայց՝ ոչ զինավառ քրոյից, որն առանց տեսնելու էլ տեսնում եր հայ քարավանների դանդաղ ու հոգմարեկ շարժումը: Եղեռնի ու պատերազմի հրդեհն արդեն անցել եր շատ զավառներով՝ հետևում թողնելով ավերակներ, մեռած հող ու մոխրակույտեր՝ ինչպես հզոր երկրաշարժից ու հրաբխից հետո:

Եվ դեռևս մխում էր ծանր ու մահաշունչ: Երբեմն այս ու այնտեղ ժայթքում էին նոր բոցեր, հոսում էր ամենեղ արյունը, և թվում էր ամեն ինչ սկսվում է վերստին՝ ամենա-ամենասկզբից: Համատարած սով էր: Սակայն արևելքի ճամփան նախընտրելի էր ու հուսատու: Այդ կողմերում կովում էին զարավար Անդրանիկն ու Մերաստացի Մուրադը, որոնք կարող էին օգնության հասնել իրենց: Կար նաև շատ կարևոր մի հանգամանք, թերևս՝ ամենակարևորը, որը Ներսես Ալթունյանը գնահատում էր և հաշվի առնում ամենից առաջ, բարավանը իր երկրից գնալու էր դեպի իր երկիրը և ոչ թե օտարություն, օտար ափեր, իր երկիրը, իրենը, իր հայրենիքը, որն ապրում է Ռուսիո քրիստոնյա հովանու տակ:

– Ինչո՞ւ եմ ուշանում,– ինքն իրեն և բարձրաձայն հարցրեց Ներսեսը:

– Մնացել եմ մի քանի մարդ ու ընտանիք,– ասաց Վահրամանը,– քիչ հետո այստեղ կլինեն:

Ներսես Ալթունյանը հիմա միայն տեսավ, որ Մուրք Փրկիչի չորս կողմը լցված է մարդկանցով: Նա մթության մեջ չճանաչեց նրանց դեմքերը, բայց պարզ հասկացավ, որ դրանք իր համաքաղաքացիներն են, և տխուր, բոլորի աչքին անտես ժպտաց:

Հարավ-արևելքում, որտեղ Մթին լեռան բարձր գագաթն է, երևաց Արուսյակը և իր առկայծող պայծառությամբ խամրեցրեց երկնքի աստղաբույլը:

Աքաղաղը կանչեց:

Ինչ-որ տեղ կողկոնձաց շունը:

Շաղ իջավ եկեղեցու մամռազույն քարին:

– Ժողովուրդ, ականջ արեք,– դիմեց Ներսեսը հավաքվածներին:–Երեք հազար տարի մենք ապրել ենք Երզնկայում: Հիմա ժամն է մեկնումի:

Բազմությունը հուզմունքից ծանր ու խուլ ծփաց: Նրանք միայն այժմ տեսան, որ կանգնած են անդունդի եզրին՝ ողբերգական ու անշքելի իրենց ճակատագրի առջև, զգացին, պարզ զգացին՝ բաժանվում են, մեկնում են, հեռանում են իրենց ծննդավայրից, իրենց հարազատից, իրենց շունչ ու հոգի մարմնից: Դաժան իրականությունը սարսուռ բերեց, ցնցեց նրանց:

Սուգ ու ողբի խուլ հառաչներ բարձրացան երկինք:

Երեխաները աղիողորմ լաց եղան:

Եղավ քար լռություն:

Ներսեսը գիտակցեց, որ ինքը չունի իրավունք՝ աղ լցնելու ժողովրդի վերքին, կուլ տվեց կոկորդում գունդ ու կծիկ դարձած հուզմունքը և ասաց.

– Ե՛վար և տաժանելի է լինելու մեր ճամփան դեպի սուրբ լյառն Արարատ, բայց ավելի ծանր կլինի պատասխանատվության խաչը, որ ծանրացած է բոլորիս և ամեն մեկուս վրա:– Նա լռեց, չգիտեր՝ խոսի՞ այն, ինչ սրտի լեզուն էր թելադրում: – Մենք ողջ մնացած վերջին հայերն ենք, լավ գիտցեք, վերջինը, ամենավերջինը... Աշխարհում այլևս չկան հայեր մեզնե բացի, բոլորը մեռան, արդեն բոլորը նահատակ են... Մենք կարող ենք մոխրակույտից հարություն տալ մեր էրգրին՝ եթե ապրենք, իսկ եթե մեռնենք՝ նրան գերեզման կդնենք վերջնականապես: Կհիշե՞ք Նոյ նահապետի պատմությունը, անշուշտ կհիշեք, մեր քարավանը նման է Նոյ նահապետի տապանին, պիտի լողանք, պիտի նավենք գիշեր-ցերեկ՝ մեր ահավոր, սոսկալի ջրհեղեղից փրկության

հանգրվան գտնելու համար: Չեն ուզեր ինձ և ձեզ օրորել սին պատրանքներով, չգիտեն՝ կգտնվի՞ այդ հանգրվանը և կկարողանա՞նք հասնել նրան, չեն ուզեր խաբել ինձ և ձեզի:— Նա իսկույն հասկացավ, որ այս վերջին նախադասությունը սխալ էր ու ավելորդ, թեև՝ դառն ու դաժան իրականություն, և փորձեց արագ շտկել իրեն:— Մեր ձեռքերում է մեր սիրելեան, հոգեհատոր ժողովրդի ու էրզրի փրկությունը, մեր այս ձեռքերում, մեր այս տառապած ու բազմաչար ձեռքերում մեջ... Մենք դատապարտ ու դատապարտված ենք ապրելու:— Նա տեսավ ինչպես են առաջ պարզված ձեռքերը դողում հուզմունքից, բռունցքեց մատները և զգաց իր տաք արյան տրոփումը:— Կարգելեմ մեռնել ծերերին, թող նրանք ամեն կերպ և ամեն գնով տոկան իրենց ծերությունը: Կարգելեմ մեռնել հիվանդներին և տկարներին, թող նրանք խեղդեն, լեցնեն իրենց վերքերն ու ցավերը: Կարգելեմ մեռնել մեր բույր ու մայրերին, թող նրանք իրենց փուխր ու դյուրաբեկ մարմիններում զորություն արթնացնեն՝ հաղթահարելու փշոտ ճանապարհը: Կարգելեմ, կարգելեմ մեռնել մանուկներին, նրանք են, որ ծնելու են նոր հայեր, խոսելու են հայերեն և պատմելու են աշխարհին համայն դժնի պատմությունը այս:— Նա լռեց: Չգիտեր էլ ինչ ասի, ինչպես ավարտի միտքն ու մտածմունքը, և ասաց:— Մենք, մենք մեզ աստված և պահապան:

Ժողովուրդը ելավ ու շարժվեց դեպի փողոց:

Ինչ-որ տեղ տուն էր այրվում, և խրխնջում, աղաչական ձայնով կանչում, վրնջում էր ձին:

Եկեղեցու բակում Ներսես Ալթունյանը մնաց մենակ: Նա մեջկապի պատյանից դուրս քաշեց դաշույնը, մոտեցավ եկեղեցու դռանը և փայտին դաշույնի ծայրով սկսեց գրել: Քանի՞ բույե-

ներ անցան: Առանց տառն անգամ տեսնելու, որովհետև դեռևս -
մութ էր, կարդաց գրածը և դարձյալ կարդաց: Հետո դռան երկու
փեղկերը քաշեց-մոտեցրեց իրար, երկաթե օղակներից ծանր կող-
պեք կախեց և բանալին դրեց խոր գրպանը: Շրջվելուց առաջ նա
նորից նայեց դռան փորագրությանը. «Այս սուրբ դուռը այլևս ոչ ոք
չի բացի, փակ է հավիտյանս հավիտենից»:

Նա վազեց՝ հասնելու քարավանին:

Նրան թվաց՝ ծառերից մեկի վրա կանգնած է բուն և սուր-
արթուն աչքերով ճանապարհում է իրենց:

Հեռվում երևաց բերդի մութ սավերագիծը:

Լուսանում էր:

* * *

Քարավանը ձգվել-երկարել էր լեռներով շրջապատված կա-
նաչ դաշտում, որտեղ քափ ու քրտինք կտրած հոսում էր ձնհալ-
ներից փքված Եփրատը:

Արևը բարձրացել և ժպտերես նայում էր հարթավայրին:

Խոտերն ու ծաղիկները թրթռում էին մեղմ հովից:

Եղեգները շնկշնկում էին:

Ծփում էին հակինթ լճակները:

Մնձուր, Մերջան, Սեփիկյոր, Միքրետ լեռնագոտին թա-
փանցիկ և ոսկեկապույտ մշուշների մեջ էր:

Օդը լցված էր հողի ու կանաչության անուշ բուրմունքով:

Ճահճուտներից արագիլը թև առավ դեպի քաղաք՝ բարդինե-
րի անհաս կատարներին նորոգելու ձյուն ու հողմերից ավերված
իր անկողինը:

Անտառոտ ու ժայռեղեն բարձունքներից այծյամը շշուկով
իջավ, երկարեց վիզը, նայեց՝ հո իրեն տեսնող չկա, և, ճկվելով,
համբուրեց Եփրատի շուրթը:

Տաք ու հարավ երկրներից վերադարձած երգասան թռչուն-
ները, ձայն ձայնի տալով, գեղգեղում էին վաղորդյան մեղեդին:

Բարձր երկնքում աննկատելի թևաբախությամբ դանդաղ լռ-
դում էր մոխրագույն, խռշոր ճանկերով ազպապա անգղը և
փնտրում իր գոհին:

Ջորավար Անտոնիոսը՝ մեր թվարկությունից առաջ, և ճա-
նապարհորդ Մարկո Պոլոն՝ մեր թվարկության միջնադարում,
Երզնկայի դաշտում եղել են գարնան հենց այս օրերին և կարծել,
թե արքայության մեջ են, դրախտում, երանության գրկում:
Դրախտ էր իսկապես: Դրախտային էին ոչ միայն գետը, այլև
ամբողջ բնությունը՝ օդը, ջրերը, բուսականությունը, թռչուններն
ու կենդանիները, հողը, քարերը, մարդը: Թվում էր՝ աչքին երևա-
ցող ու աներևույթ ամեն ինչ դրախտի հեքիաթի պես հնագույն է,
սկիզբ ու ամենասկիզբ, նախա-նախագոյություն և, միաժամա-
նակ, հարահոս ու մշտնջենավոր: Նրանք չիմացան, որ կանցնի
ընդամենը մի քանի շաբաթ, գուցե քիչ ավելի, և դաշտը կտոչորվի
արևի կիզիչ ճառագայթներից, հողը ճաքեր կտա, թռչունները ա-
պաստան կսրոնեն այգիներում ու ծերպերի մեջ, խոտ ու ծաղիկ
կմահանան, լճակները կսուզվեն գետնի ընդերքը, Եփրատը
կխեղճանա ու կհանդարտվի վերջապես և, սանձահար առյուծի
նման, մտնելով իր բնական հունը, կհոսի հոգնած խաղաղությ-

յամբ, և կփչեն, օր ու գիշեր կփչեն հարավ-արևելյան տաք ու հեղ-
ձուցիչ քամիները: Նրանք չիմացան նաև, որ իրենցից հետո կլինի
ահավոր հրդեհ ու ավեր, կկարմրեն երկնաբարձ լեռների ձյու-
ներն անգամ, կմթնի արևի դեմքը, դրախտի գետը կլցվի լերդ ար-
յունով՝ իր թանձր ընթացքի ոլորաններում առաջացնելով արյան
ճահիճներ և սառած, լերդացած, մեռած կղզյակներ:

Դրախտի մեջ նրանք չզգացին ու չտեսան դժոխքի բարբա-
րոս ներկայությունը, որը բյուզանդացու, արաբի, սելջուկ թուրքի,
մոնղոլի, օսմանցու զենք-զրահով անցյալում, ներկայում և ապա-
գայում քանդում էր, այրում, սպանում, ավերում, փոշիացնում ա-
մեն ինչ, մույնիսկ՝ խուլ քարը, անշունչ քարը, համր քարը, միայն,
ականատեսի, պատմաբանի, տեսանողի վկայությամբ, «սակավ
մանկունս և աղջկունս ապրեցուցեալ՝ վարեցին իր գերութիւն»:

Քարավանում կար 178 մարդ: Բոլորը եկել էին, բացի Արմե-
նակ Մեփեճյանի ընտանիքից՝ ինքը, մայրը, կինը և աղջիկները:
Վերջին պահին, երևի, որոշել էր մնալ, մայրը ծեղ էր ու հիվանդ,
ինչպե՞ս պիտի դիմանա գաղթական կյանքի դժվարություննե-
րին, որոնք կարող են ավելի ծանր լինել, քան իրենք պատկերաց-
նում են, թեև, զարմանալի է ու տարօրինակ, նա ոչ մի անգամ
կասկածի տակ չառավ Երզնկայից ելնելու իրենց որոշումը և ե-
րեկ ամբողջ օրը ճանապարհի պատրաստություն էր տեսնում՝
հարազատների հետ կապկպելով ամենաթանկ, կարևոր ու անհ-
րաժեշտ իրերը:

178 մարդու արյան մեջ տրոփում էր պատմությունը՝ կռա-
պաշտական շրջանից մինչև քսաներորդ դար:

Պատմությունն ասում էր. քո սկիզբն ու ելքը Արամագոլից է
ու Անահիտից, Տիրից ու Միհրից, Վահագնից ու Աստղիկից, իսկ

հիմա քո վերջն է ու վախճանը, և քեզ չի փրկի նույնիսկ կենաց ու մահվան, հերոսականի ու ողբերգականի, հարության ու զոհաբերության, հաճույքի ու տառապանքի, վերածննդի ու նահատակության հզոր աստված Վանատուր-Ռիոնիսիոսը, նա էլ, ինչպես բոլոր աստվածները, հոգու մխիթարություն է միայն, հեքիաթ, շաքարաջուր, խաղալիք և ոչ թե մարմնի ցավող վերքերին դեղ ու դարման:

178 մարդ քայլում էր պատմության առջևից և ուզում փրկվել:

Ապրել, ապրել:

Շարունակվել:

Միրել:

Միրել մերձավորաց, ազգն ու հայրենքը, գիրը, խոսքն ու բանը, աշխարհը:

178 մարդ ժողովուրդ էր:

Ժողովուրդը թվով չէ, այլ էությանը՝ արյունով, սրտով և ուղեղով, իր պատմության մատյանով:

Նույնիսկ միլիոններ ունեցող զանգվածը կարող է և ժողովուրդ չլինել, այլ՝ ամբոխ, բազմություն, խուժան, եթե շինելու փոխարեն քանդում է, լլկում, այրում հարևանի տունը, փուշ ցանում, ճիվաղություն անում, ատում լույսը և իմաստությունը, չունի պատմություն, որովհետև չունի հիշողություն՝ ինչպես օձը, թշվառական մանկուրտը, բորենին, իր արյան մեջ ապրող սաղմերով ծնում ու վերածնում է բարբառոսությունը, անզթությունը, վայրագությունը, զազանությունը, կրակ ու պատուհաս է մարդկության գլխին, մահ տալաժամ, սև ցավ, ժանտախտ, ժանտախտ, ժանտախտ:

Մի մարդն էլ ժողովուրդ է, — ասում էր քարավանի 178 մարդուց ամեն մեկը, — եթե իրեն ընկեր է առաքինությունը, բարին, գեղեցիկը: Եվ իր ողբերգության մեջ անգամ սրտի ձայնով երգում էր. «Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդու»:

Պետք չէ զարմանալ, որ մի մարդն էլ կարող է ժողովուրդ լինել՝ արտահայտել նրա դեմքն ու պատկերը, միտքն ու զգացմունքը, կենսագրությունն ու ճակատագիրը՝ ընդհանուր գծերով և շոշափելի գծագրությամբ: Արյան ձայնով: Արյան գույնով: Արյան կառուցվածքով:

Ծովի կաթիլը ծով է:

Ոսկու հյուլեն ոսկի է:

Երկնքի պատառը երկինք է:

Լուսի ճառագայթը լուս է:

Մի մարդը ժողովուրդ է, եթե հալածյալ է և ոչ հալածիչ՝ ինչպես իր մայր հողն ու ժողովուրդը:

178 հալածական մարդ մեծ ու մեծաքանակ ժողովուրդ էր, իմ ժողովուրդը, քո ժողովուրդը, մեր, մեր ժողովուրդը:

Մեր տառապանքը,

Մեր հույսը:

Մեր ապագան:

Մեր փրկությունը:

1918 թվականի գարունն էր: Ջարավանն անցնում էր առավտի միջով՝ լուռ ու դանդաղ: Ոչ ոք չէր խոսում: Ոչ այն պատճառով, որ բան ու խոսք չունեին իրար ասելու, այլ՝ շատ ունեին, առեղիքաբանական մտքերի, իրադարձությունների, զգացմունքների հրաբուխ սարեր կային նրանց հոգիներում, նրանք պատմության միլիարդատեր էին՝ միլիարդ թելերով կապված անցյալ դարերին,

իրենց ժամանակին, ներկա օրերին: Ո՞ր մեկն ասեին: Ինչպե՞ս ասեին, որ կիսատ-պռատ չմնար: Ինչո՞ւ ասեին: Որ ի՞նչ: Նրանք տանում էին իրենց պատմության ծանր, ծանր, ծանր բեռը: Լուստանում էին մեջքն ու ծնկները ճռռացնելով: Բռռան տակ ճգնվելուց չէին վախենում, չէ ու չէ, վախենում էին տեղ չհասցնեն այդ բեռը՝ իրենց անուն-ազգանունը, ինքնությունը, մեռնն ու մկրտությունը, ետը, աշխարհում իրենց խոսքն ու իրավունքը:

Այդ վախը նրանց մեջ առաջին անգամ շարժվեց երեկ՝ մինչև քաղաքից ելնելը, իսկ այժմ դա արդեն բավականին շոշափելի զգացմունք էր, որ գնալով խորանալու էր և ահագնանալու:

Պատմությունը նրանք դարսել-բեռնավորել էին ամենապահով տեղը՝ իրենց հոգուն, սրտին ու հիշողությանը: Որ չարական անչք չտեսնի: Որ յաթաղանի թունոտ բերան ու մահաբեր գնդակ չդիպչի: Որ կախաղան չհասնի նրան: Որ հրդեհ չայրի: Որ գող ու ավազակ չհարձակվի: Որ նրան բորենի, օձ, կոկորդիլոս փորսող տալով չնոտենան:

Տեղը ճիշտ էր ընտրված: Հարկավոր էր միայն դիմանալ ու պաշտպանել իրենց հոգու, սրտի ու հիշողության գոյությունը, մարմնի կյանքը՝ շումեր ու աքքադացի, Բաբելոն ու Ասորիք շրառնալու համար, թե չէ հազարավոր տարիներ հետո օտար ու այլակերպ մարդիկ կգան և իրենցից ընդամենը փշրանքներ կգտնեն հողի խոր շերտերում և լավագույն դեպքում կասեն ամենածանր խոսքը, որ դանակի պես կմխրճվի սիրտը և արյուն չի կաթի. նրանք երևի կային, բայց անհիշատակ կորել են, վաղուց, վաղուց ի վեր, վաղուց չկան:

Առաջապահների մի խումբ՝ Վահրամի գլխավորությամբ, այց ու ահյակ ուշադիր նայելով մոտիկ ու հեռու տարածությունն-

րին, ապահովում էր քարավանի շարժումը: Նրանք ձիավոր էին, զինված վեցհարվածյան հրացաններով և դաշույններով, կովի փորձառություն ունեցող երիտասարդ այրեր: Բոլորն էլ մասնակցել էին դիմադրական շարժումներին, ապրել ամեն օր ու ժամ զոհաբերության պատրաստ, խիզախ, անանձնական ֆիդայու կռիվ ու բոց կյանքը, երդում արել ամբողջ հոգով՝ չխնայել արյան վերջին կաթիլը հարազատ ժողովրդի ու երկրի փրկության համար, իսկ մի քանիսն արդեն ճաշակել էին ցավոտ-ցավոտ, քուն ու դադար չտվող վերքերի տառապանքը, որոնք իրենց հպարտությունն էին, պատիվ, շքանշան:

«Թող ձեր արյունը ձեր հայրենիքի հողը ներկե, ձեր դիակները լեռներուն զազանները հռչոտեն, միայն մի՛ բաժնվի՞ջ ձեր նվիրական հողեն, մինչև որ ծածանի ազատության սրբազան դրոշը հայրենի լեռներուն ու դաշտերուն վրա»:

Այս պատգամը նրանց տվել էր Մուրադը, երբ նրանք, դեռևս անփորձ երիտասարդներ, թողած տուն ու տեղ, ծնող և հարազատ, զինվորագրվեցին նրան:

Մուրադին այդ պատգամը տվել էր Անդրանիկը:

Անդրանիկին այդ պատգամը տվել էր Գևորգ Չաուշը:

Գևորգ Չաուշին այդ պատգամը տվել էր Աղբյուր Սերոբը:

Աղբյուր Սերոբին այդ պատգամը տվել էր Արաբոն:

Արաբոյին այդ պատգամը տվել էր իր հայրը:

Նրան այդ պատգամն անցել էր իր հորից:

Մրան էլ՝ իր:

Վերջինիս էլ իր հայրն էր պատգամել:

Նրան՝ իր հայրը:

Դարեր ու հազարամյակներ հայրը պատգամել էր որդուն:

Այս պատգամը ծնվել էր հուրիներ Հայկ մահապետից՝ Արա-
բատյան աշխարհի առաջին ֆիդայուց, որը սրտի հայրենասի-
րության բոցով հրդեհեց իր սերունդների արյունը:

Եվ հիմա գնում էին՝ ընդդեմ և հակառակ հայկյան պատգա-
մի:

Չէին ուզում և գնում էին, նույնիսկ շարժում, տանում, առաջ-
նորդում էին քարավանը: Ամաչում էին՝ դասին անպատրաստ ա-
շակերտի մման: Մտածում էին՝ դավաճանում են պատգամին,
խնայում իրենց կյանքը, չեն ուզում հայրենի հողը ներկել իրենց
արյունով: Զգացմունքները կատարում էին գիտակցության հրա-
մանը. գնա՝ փրկվելու, հեռացիր՝ ապրելու համար:

Առանձնապես տխուր էր Ներսես Ալթունյանը, իրարամերժ
մտքերն ու զգացմունքները շփոթեցրել էին նրան, տրամադրու-
թյունը ճնշում էր մարմինը: Նա ձիու ոտքը կախ էր արել և ընթա-
նում էր քարավանի պոչից:

Նա թողնում էր հարազատ ու թանկ հիշատակներ: Նրան
թվում էր՝ իր հիշատակներն ամենամվիրականն են: Այդպես էր
կարծում յուրաքանչյուր ոք՝ ամենամվիրականը, թանկից թանկը,
ամենահարազատը իրենն է, իր գոյությանը, իր սիրտ ու հոգունը,
իր արյանը, առանց որի ինչպե՞ս ապրել և ինչո՞ւ, ինչո՞ւ ապրել:

Նա հեռանում էր իր գերեզմաններից: Երեկ, վաղ առավոտ-
յան, երբ քաղաքը դեռ ամալի էր, շուն էլ չէր հաչում, նա գնաց
Քեմախի ճանապարհի վրա գտնվող հայոց գերեզմանատունը, որ-
տեղ թաղված էին մահատակ ծնողների և քույրերի նշխարքները:
Գերեզմանը ծաղիկ էր: «Մա Ռոզեթի ծաղիկն է, սա՛՝ Մաթենիկի-
նը, իսկ սա Հռիփսիմենն է»: Նա ջուր խմեց գերեզմանատան աղ-
յուրից, որ տարիներ առաջ շինել էին քարեպաշտ ազգայինները:

Քեռիի գերեզմանին քառակողմյան շիրմաքար-կոթող կար, որի երեք երեսներին արձանագրված էին Սեպուհ լեռան հերոսների անուններն ու գործերը, իսկ չորրորդ կողմում Քեռիի բարձրաքանդակ պատկերն էր: «Դու երջանիկ ես, Քեռի, դու հավիտենորեն այստեղ ես»:

Նա հեռանում էր իր քաղաքից, որի յուրաքանչյուր փողոցը, շինությունը, ծառը, քարը, աղբյուրը արթնացնում էր մի պատմություն, մի դեպք, մի անմոռանալի հուշ: Կային տխուր պատմություններ, կային և ուրախները, մակ՝ այնպիսիք, որոնց տեղը սրտի խորքն է, միայն քո տառապած սրտին կարող էս վստահել քո գաղտնիքը և հավատալ, որ նա ոչ մեկին երբեք, երբեք ոչինչ չի ասի, մինչև մութ գերեզմանի դուռը, հուր հավիտյան գաղտնիքը կպահի իր մեջ: Արշակ թագավորի վաղնջական օրերից մնացած Արշակա կամուրջ... Դարերի ընթացքում Եփրատը իր հունը փոխել էր, և կամուրջը հայտնվել էր քաղաքի շրջագծում՝ իր փլատակ, հողի մեջ մինչև գոտկատեղը սուզված կամարներով: Շատ տարիներ առաջ, կամուրջի տաք քարերի մոտ նա Լուսինեին՝ իր ապագա կնոջը, ասաց. «Չե՞ս տեսներ, ես քեզ կսիրեմ»: «Ինչպե՞ս կսիրես», - շիկնելով հարցրեց Լուսինը: Նա ո՛չ այդ օրը, ո՛չ իրենց հարսանյաց հանդեսին, ո՛չ այն ժամանակ, երբ կնոջ աստվածային ծոցում ծաղկում էին իրենց երկվորյակները, ո՛չ հետագայում և ո՛չ նույնիսկ վերջին անգամ նրանից բաժանվելիս չասաց, թե ինչպես է սիրում: Միայն սիրտը լսեց և իմացավ:

Ներսես Ալթունյանն ըմբոստացավ իր դեմ, մեղադրեց, հայհոյեց, դատապարտեց իրեն, դարձավ իր թշնամին: Ինչո՞ւ չասացի, որ նրան երկնքի չափ եմ սիրում, եթե իմանար, նրա համար ավելի հեշտ կլինեիր մեռնելը անապատի այրող ավազների մեջ,

անսահմանորեն սիրված լինելու երջանկությունը կթեթևացներ նրա տառապանքը: Խղճմտանքի ձայնը խեղդում էր նրան: Ի՞նչ անխիղճ, ահավոր-ահավոր, դժոխսային ձայն է. «Ինչո՞ւ, ինչո՞ւ - չասացիր»: Նրա համար ավելի դժվար, տառապալից, անտանելի կլիներ մեռնելը, եթե իմանար ինչքան են սիրում իրեն, սիրո կորստի ցավից կխելագարվեր նա, ինչպես այժմ ինքն է խելք-միտքը կորցնում, խելագարվում, մեռնում, խելագարվում:

Նա հեռանում էր իր հորենական տուն-օջախից: Երզնկայի տները նման էիր իրար, մեծ մասամբ՝ հում աղյուս ու փայտ, հիմքերը միայն քարից էին, որովհետև քարը հեռու էր՝ լեռներում, դժվար էր բերել քաղաք: Տափարակ կտուրները շոգ ու հեղձուցիչ ամռան գիշերներին դառնում էին ննջարան, այստեղ ամբողջ օրը խաղում էին երեխաները, աղավնի ու օղապարիկ թռչնում: Շատ բակերում հարդանոց կար, ախոռ, հավաբուն և իրենց բնական կյանքն ապահովող այլ շինվածքներ: Ամենապատվելիքն ձին էր, թեև պահում էին նաև կով, թռչուններ, շուն: Չին երզնկացու ընտանիքի հարազատն էր, նրան սիրում էին և խնամում՝ ինչպես մարդուն, բայց ոչ բոլորը ձի ունեին, իսկ ցեղական ընտիր ձիերը քիչ էին և շատերի ուշադրության առարկան: Վերջին տարիներին իշխանությունները ձիերը քաշեցին տարան, ինչպես տներում պահվող զենքերը, աշխատանքային գործիքները՝ եղաններ, քլունգներ, բահ ու մուրճ, կացիմներ, որոնցով իրենք տան սյուն պատրաստելու նպատակով ծառ էին հատում, վառելիք կոճղեր կտրատում, խլեցին տարան գարի, ցորեն կալսելու կամերը. ինքն ինչքա՞ն էր կանգնել կամին, ոգևորել լծկանին և ծիծաղել անսահման հաճույքից: Ամեն ինչ տարան, և եղավ սով: Տարա՞վ՝ եղաններով փորոտիք թափելու, քլունգներով ոսկոր քանդելու,

բահ ու մուրճով գլուխ ջարդելու, կացիներով պարանոց կտրելու, կամերով, կամերի կայծքարե սուր ատամներով մաշկ կրծելու, մարմին ճգնելու: Եվ տներում սուգ եղավ և ամայություն: Թոնիրը պաղեց: Մառանները դատարկվեցին: Ջրհորներում բնավորվեցին գորտերն ու օձերը: Իրենց հյուրասենյակը, որ այնքան պատվելի մարդիկ էր տեսել, համրացավ: Երդիկի աչքին, որտեղից ներս էր գալիս լույսը, նստեց սև ու խոշոր սարդը: Գեղաքանդակ պահարանում պղնձյա ամանները լեցին: Մարդկային տաք շնչառության կարոտից բորբոս ու խոնավություն իջավ ծալքում դարսված անկողինների վրա: Միայն դառն ու քաղցր հիշողություններ մնացին տանիքի սյուների տակ, թանկ սերեր, ցավ ու հեծեծանք, իրենց ընտանիքի անձեռագիր պատմության էջերը: Հիշողությունն ավելի գորեղ է, անջնջելի, հավերժական՝ քան գիրը, — խորհեց նա, նայեց հրացանին և էլի մտքի մեջ ընկավ, — հիշողությունը անպարտելի զենք է, որ միշտ ինձ հետ է, — հետո նայեց առջևից ընթացող քարավանին և դարձյալ մտածեց, — հիշողությունը կփրկի նրանց այս անհայտ ճանապարհին: Եվ հարցում արեց մտքին ու չեղավ պատասխան. կփրկի՞: Միտքը լուռ էր, ինչպես քարսիրտ քարը:

Նա հեռանում էր իր բնությունից: Եվ արդեն զգում էր՝ ինչքան է կարոտելու իր լեռներին, ձյուններին, արևին, քամիներին, անձրևներին, Եփրատին, թռչուններին, երկնքին, ձայներին, գույներին, ծիածանին, կիրճերին, աղբյուրներին, հողին, աճուռներին, ամպրոպներին, շոգին, ամպերին, կայծակներին, կայծակներին, կայծակներին: Տարին բոլոր՝ ձմեռ լինեք թե ամառ, գարուն լինեք թե աշուն, երգում էր նախշունիկ արտույտը: Հորթուկները բառաչում էին մանկան պես: Չին խրխնջալով վարգում էր ազատ դաշտում՝ պոչը քամուն տված: Չկները խայտում էին Եփ-

րատի այլակներում: Չմռան քրաշունչ գիշերներին գայլը լեռներից իջնում էր քաղաք՝ ողնաշարին կպած քաղցած փորը կշտացնելու հույսով: Նա լավ գայլ էր, չէր վնասում մարդկանց, նա բնության զավակն էր՝ բարի ու ազնիվ գայլ, նման չէր մարդկային ցեղի գորշ գայլին, որը կուշտ ու կուռ ժամանակ էլ շողացնում է գազան աչքը, սրում ժանիքները, արյուն, արյուն տենչում: Յոթ տարի, յոթ դար, յոթ հազարամյակ քոռ նստիս, գորշ գայլ, դու ու քո ծնողները, դու ու քո եղբայրները, դու ու քո արյունակիցները, դու ու քո ազգուտակերը, քոռ, քոռ նստիք, մինչև աշխարհի վերջը, մինչև ժամանակը իր վախճանին հասնի և արևն ու լուսինը փոշիանան:

Ներսես Ալթունյանը կարծեց, թե մարմինն է գնում, առարկա մարմինը, նյութ մարմինը, իսկ ինքը՝ հոգին ու սիրտը մնում են այնտեղ: Նա պարզ զգաց իր երկկերպությունը, խորին ճեղքվածքը, երկփեղկվածությունը և տազնապախռով ու նյարդային շարժումով քաշեց սանձը: Պողպատե լկամի պատճառած ցավից ձին խրխնջաց, բայց չենթարկվեց նրան:

Նա ուժեղ ու զինյալ տղաների փոքր խմբեր էր կարգել քարավանի նաև աջ ու ձախ կողմերում, որպեսզի նրանք դիմազրավեն թևերից գորշերի անակնկալ հարձակումը: Նրանք նույնպես կենաց-մահու կռվի դպրոց անցած մարդիկ էին, որոնց Ներսեսը հավաքագրել էր երկրի տարբեր վայրերում դեռևս գործող հայդուկախմբերից: Գալշոն Սասունից էր: Ջոհրապ Մշեցյանը՝ Մշո դաշտի Ցրոնք գյուղից: Լևոնը՝ հեռավոր Ջեթունից: Համբարձունը՝ Ուրֆայից: Գեղամ և Ժիրայր եղբայրները՝ Տրապիզոնից: Խաչատուր Դևրիկյանը՝ հարևան Ակնից: Մամիկոնը՝ Բաբերդից: Ղազարոսը՝ Ադանայից: Եփրենը Սեբաստիայից էր, Մուրադի

խմբի առյուծասիրտ տղաներից մեկը, իրենց մեջ ամենաավագը, սակայն Մուրադը իրեն հանձնեց երզնկացիների տարագրության ընթացքի դեկը, որովհետև Եփրեմը բնավորությամբ խենթ էր ու տաքզուխ և չուներ բարդ ու դժարին իրադրությունների մեջ սառնարյուն, կշռադատված որոշումներ կայացնելու շնորհք: Թեև շատ բարի էր, երեխայի չափ պարզ ու միամիտ, բայց զուրկ նաև մարդկանց անհրաժեշտաբար մխիթարելու, ոգևորելու կարողությունից, որը զարդարում էր ամենից ավելի Ներսեսին: Հաբեթը Շապին-Գարահիսարից էր ու թեև իր հռչակավոր հայրենակցի՝ զորավար Անդրանիկի բանակում երբեք չէր եղել, բայց իրեն համարում էր նրա զինվորը: Կարո՞նք Բիթլիսի վիլայեթի Վարդո գյուղաքաղաքից: Տասներեք բնիկ երզնկացի տղաներ կային Ներսեսի ձեռքի տակ, որոնք, ինչպես և ինքը, արդեն ոչ մի արյունակից-հարազատ չուներին աշխարհում: Նրանց համար իրենց համաքաղաքացիներին մահվան ճիրաններից փրկելն ու ապահով եզերք հասցնելը սուրբ գործ էր, Աստծո պատվիրան: Արշակը Մալաթիայից էր: Հեթունը՝ Տիգրանակերտից: Թորգոմը՝ Վանից: Եղիա Պետիկյանը՝ Հանչենից: Սկրտիչը՝ Կարմիր Վանքից: Դանիելը՝ Սևավերակից, որի անունն այնքան անհարիր էր իր չքմաղ տեսքին ու բնությանը: Յուրաքանչյուրի համար իր հողն ու ջուրը եզական էր ու չնաշխարհիկ, և նրանք, հին հայկական սովորությամբ, վիճաբանում էին և գերապատվությունը տալիս իրենց ծննդավայրին՝ ամենալավն է, ամենահայկականը, ամենասուրբը, սուրբ սրբոցը, Գրիգոր Լուսավորիչը իրենց հողին է առաջին անգամ ոտք կոխել: Եվ Ներսես Աթուրյանը, հիշում է, մի անգամ ասաց. թե ամենապատվականը իր ծննդավայրն է, քաղաք նման չիք մեր Երիզայի, սակայն բոլորն էլ Հայաստան են, իսկ իրենք՝ նույն և նույն հայ ժողովուրդը:

Ապա ավելացրեց, թե տեղային նեղմիտ զգացմունքները ցրում են և թուլացնում մեր հավաքականությունը:

Այդ բոլոր տեղանուններն արդեն անցյալ էին, վկայաբանություններ հիշողության պատին: Այդտեղից, ինչպես մորեխի լափիլզող ամպը, անցել էին թուրքերը՝ ամեն ինչ դարձնելով մոխիր ու ավերակ:

Ներսեսի առջևից ծանր ու դանդաղ ընթանում էր մի սայլ, որին վերմակով փաթաթված նստել էին երեք ծեր կին: Նրանցից մեկին նա ճանաչեց: Դա Փառանձեմ տուտուն էր՝ մայրը Հորաքույր մականվանյալ Սրբուհի Յանգյանի, որն ազգային գործունեության համար 101 տարի ցմահ բանտարկության պատիժ ստացավ, մոտ ութ տարի ապրելով տաժանելի բանտային կյանքով՝ ազատվեց օսմանյան սահմանադրությամբ, իսկ հետո շատ կանանց ու աղջիկների հետ բռնի տարագրվեց Երզնկայից և շուտով մեռավ Ալկն չիսսած, ասում են՝ ուղեկցող ենիչերու տևական ծեծ ու խոշտանգումներից:

– Բարի առավոտ, Փառանձեմ տուտու:

– Բարին իջնե աշխարքի և ամենիս վրա,– եղավ պատասխանը:

Մեկ ուրիշ սայլի բարձված էին անկողիներ, մի հին բազկաթոռ, պարկեր, իսկ ընտանիքի մեծ ու փոքրը քայլում էին աջ ու ձախ կողմերից:

Ներսես Աթուրյանը մտքում ուրախացավ. քարավանում շուրջ երեք տասնյակ սայլ կար, ուրեմն առնվազն այդքան էլ լծկան, որ ոչ միայն կարագացնեն իրենց առաջարժումը, այլև, անհրաժեշտության դեպքում, կերակուր կդառնան մարդկանց: Իսկ այդպիսի անհրաժեշտություն, նա չէր կասկածում, կլինի՝

հենց որ պարենը վերջանա և սկսվի որովայնն առնետի պես կրծող սովը: Հետո նրա հայացքը տխրեց. շատ-շատերը ոտավոր էին իրենց ունեցած-չունեցածը շալակած, ծանր ու դանդաղ գնում էին սայլերի հետևից: Գնում էին, գնում, գնում: Ո՞ր էին գնում: Ի՞նչ էին մտածում: Փրկվելո՞ւ էին, թե՞ ոչ: Պիտի ապրեի՞ն, թե՞ մահն էր նրանց սպասում կապույտ լեռների թիկունքում:

Տղամարդկանցից մի քանիսն իրենք էին լծվել երկանիվ սայլակներին, որոնց վրա տեղավորված էր նրանց աղքատիկ ունեցվածքը՝ մեծ մասամբ առաջին անհրաժեշտության կենցաղային իրեր, հագուստ, ուտելիք:

Մանգաղ ու փոցիս ուսած՝ իր առաջացած տարիքին անսովոր առույգությամբ քայլում էր Մամփրեն:

– Մամփրե, Մամփրե, մանգաղը ինչի՞նչ է պետք, անկողին շալակիր, ձավարի պարկը տար, երեխա գրկիր, – բղավեց Ներսեսը:

– Աշխարքը հո չվերջացա՞վ, – բղավեց Մամփրեն, – աշխարքը մանգաղով կապրե:

Ճիշտ է ասում, – մտքում համաձայն եղավ Ներսեսը և ամաչեց իր անխոհեմությունից:

Փոքրիկ մի տղա գրկել էր չալպտուրիկ մի շուն. իր շունն է, իր սիրելին, իր հարազատը, իր ընկերը, նրան ոչ մեկին չի տա, կմեռնեն միասին, կխաղան միասին, կապրեն միասին, չի տա, ոչ մեկին, ոչ մեկին չի տա:

Քարավանում մի քանիսը հավ էին տանում, բաղ, կակաչի պես կարմիր աքլորներ: Մատղաշ գառներ էլ կային, որոնք մայում-կանչում էին իրենց մորը, իսկ մայրեր բացակա էին, եղել էին, ծնել իրենց երեխաներին և տխուր-նեղացած հեռացել աշխար-

հից: Նեղացրել էին նրանց: Իսկ մի կին պարանով քարշ էր տալիս փարթամ կրծքով, մեծ ու պարարտ, կեռ կոտոշներով կովին:

Չուն՝ երեխաներին, կաթը՝ երեխաներին, միսը՝ երեխաներին, - մտածեց Ներսեսը և դարձյալ մտածեց: - Կյանքը՝ երեխաներին, փրկությունը՝ երեխաներին, արևը՝ երեխաներին, առողջությունը՝ երեխաներին, ծաղկունը՝ երեխաներին, հայոց լեզուն՝ երեխաներին, երգը՝ երեխաներին, սերը՝ երեխաներին, հիշողությունը՝ երեխաներին, պատմությունը՝ երեխաներին, ուժը՝ երեխաներին, ամեն ինչ նրանց, բոլորը՝ նրանց:

Արևը ելել էր երկինք և արդեն քայլում էր իր հավերժական ճանապարհով՝ դեպի Սեպուհ լեռան մշուշապատ գագաթները:

Եփրատը խուլ շառաչում էր:

Ներսես Աբունյանին թվաց, որ ճակատագիրը, քարավանը մատաղացու գառի մման հետևից քաշելով, տանում է զոհաբերելու, մատաղ անելու, զոհ տալու... Բոլորիս՝ տարիքավոր ու երեխա, կին ու տղամարդ, բոլորիս մեկտեղ, ամբողջ, ամբողջ քարավանը: Արդեն աղոթել են իրենց գլուխը, ականջը կտրել-արյունոտել, աղել բերանը, և հի՛նա տանում են չար, վայրենաբարո, ժողովրդասպան ու երկրաքանդ, արյունախում, դժոխքի ծնունդ աստվածներին ի հարգանս: Ներսեսի հոգին ծառս եղավ նախ իր դեմ, հետո՝ ճակատագրի. բողբոջեց, նզովեց, ատեց, դատապարտեց, ըմբոստացավ, վանեց իրենից քրիստոնեական հլու-հնազանդությունը, թիկունք դարձրեց բարությանը, որը երբեք, երբեք չարժանացավ պատվի ու ըմբռնողության բիրտ հարևանի կողմից, դեմ նետեց կյանքի, մարդու, բնության նկատմամբ սերը, որը նույն հարևանի կացնով տաշված սիրտը հիամարում էր թուլության նշան: Եվ իսկապես էլ թուլություն էր, անպետք զգացմունք, հիվանդություն: Ատամներով ու

մատներով բռնոցք արեց՝ արթնացնելու կամքը, վրեժը, ձգտումը, որ լուռ ապրում էին իր մեջ: Նա ոտքերով թեթևակի խթանեց ձին և, շատ չանցած, արդեն քարավանի առջևում էր:

Վահրամը ժպտաց. տես, արևը տաքացնում է, խաղաղ է բնությունը, իրենք արդեն հեռու են քաղաքից, առաջին օրը լավ է սկսվել, իրենց հետ է Աստված:

Ներսեսը նրա ժպիտին չպատասխանեց: Պատճառ կար: Թուրք հարևանը մտավ տարագիրների տուն, քիթ-բերանով հոտմտաց շուրջը, քսվեց լքյալ առարկաներին, դանդաղ սողաց սենյակից սենյակ, մառանից դեպի թոնիրը, ամբարից հասավ ծալքին, կծիկ դարձավ, ապա կրկին ձգեց մարմինը, կեռագծով շարժվեց ուրիշ անկյուններ, անկյունից անկյուն, սառնաշունչ ֆշշաց, թույն կաթեցրեց, մի պահ կանգ առավ ծանոթ խմբանկարի մոտ, որ տանտերը շտապելուց մոռացել էր վերցնել և մինչև իր օրերի վերջը պիտի տանջվեր դրա համար, նրանք ապրում էին այստեղ, մարմինը մի համր պտույտ գործեց խմբանկարի՝ չորս-դին, լեզվով դիպավ նրան, թաց ու թունոտ լիզեց, դարձյալ օղակվեց, գունդուկծիկ եղավ, սեղմվեց-խտացավ, էլի սեղմվեց, քարի պես ամրացավ և իր միջուկում խեղդամահ արեց խմբանկարը: Գնոթեց, խեղդեց, ճզմեց Անսահիտ քույրիկին, որի գաթայի համը հիմա էլ իր լեզվի վրա է, Երվանդ ախպարին, որն անցյալ տարի իրեն բժշկեց ջերմից, Էխսո մամեին, որը բարի մաղթանքներ էր անում իրեն՝ զավակներովդ ուրախանաս, դժբախտությունը հեռու մնա ձեր տունուտեղեն, Թորոս հայրապապին, որն ամեն գարուն էտում էր իր այգին, որպեսզի բերք-բարիքը առատ լինի և անուշ, Ղազար, Մանուշակ, Հովե երեխաներին, որոնք ամբողջ օրը խաղում էին իր լամուկների հետ և քիչ առաջ, խմբանկարում, խո-

նարի ու գեղեցիկ նստած էին գետնին, իրենց ծնողների ոտքերի մոտ: Նա թուլացավ, չգիտես՝ որձ էր թե էգարմատ, բացեց մարմնի կծիկը, երկարեց և լեզուն խաղացնելով, սառն ու կանաչ աչքերը իրերին հառած՝ շարժվեց-սողաց ուրիշ կողմ: Այդ ամենը հիմա իրենն են: Դուրս ելավ: Իրենն են ընդարձակ բակը, գոմը, ծառերը, փայտանոցը, ջրհորը: Գնաց՝ ցանկապատին քսվելով: Հիմա իրենն են հայոց բաղնիքը, եկեղեցիները, որոնք, եթե ոչ հենց այսօր, ապա վաղն անպայման՝ մզկիթ կդարձնի: Առաջնորդարանի երկհարկանի շենքը, Ժամուն հրապարակը, խանութները, որտեղ ընտիր կերպաս ու գորգեր կան: Հայոց գերեզմանատունը հողին կհավասարեցնի, կջարդի, հող ու փռչի կդարձնի տապանաքարերն ու խաչքարերը, որ հանգուցյալներից հետք-հիշողություն չմնա: Իրենն են դպրոցները, բերդն ու պարիսպները: Մեղաց Արշակա կամուրջի տաք քարերի վրայով և դարձյալ օդակ եղավ օդակին ու զնդվեց՝ դուրս թողնելով միայն երկայնագանգ գլուխը. կամուրջը հիմա իրենն է՝ իր պատմության հին շրջանի քարե վկայությամբ, ինքն է շինել իր ձեռքերով, ո՞վ է ասում՝ ինքը վայրենի քոչվոր է, բնիկ են ես, լեզուդ թույնեն, լեզուդ աքցանով քոքահան անեն, լեզուդ լեզվովս ծամեն, բնիկ են և վերջ ու վերջակետ, արդեն ոչ ոք չի կարող հակառակը ասպացուցել, իրողությունը ասել, ճշմարտությունը փաստել: Ինքն է ստեղծել Երզնկա քաղաքը, իրենն են դաշտը, լեռնաշղթան, Եփրատ գետը, Նոյ նահապետը թյուրք է, դե գնա, այս եղենը իրենն է արդեն հուր հավիտյան: Այնքան քաղցր է, ալլահը վկա, նվաճված երկրի արյունը...

Վերելք սկսվեց:

Ջարավանը ճռռաց-ճռնչաց: Բարձրանում էին դանդաղ, ծանրաշունչ, քայլ առ քայլ: Չիերն ու եզները, մյուս լծկանները՝

մարդ ու անասուն, ուժը տվեցին ոտքերին: Լռեցին ու փոքրացան: Ուտավորներն ավելի կռացան բեռան տակ: Պրկվեցին ձեռք ու թիկունքի մկանները: Ոչ ոք չիմացավ՝ զանիվերը ինչքան տևեց, քանի ծանր ու դժվարին պտույտ գործեցին անիվները, որքան բութ ցավ բաժին հասավ հեզ ու տկար ուսերին. ահագին ու շատ, շատ ու երկար:

Ներսեսը հրաման արձակեց՝ կարճ դադար առնել: Յրված քարավանը եկավ հավաքվեց մեկտեղ՝ հարթ լեռնադաշտում, որտեղից ճանապարհը լեռան մեջքին գոտի կապելով՝ գնում էր անտես հեռուները:

Քարերի մեջ գլզվում էր սառն ու վճիտ առվակը. վերևներում դեռ ձյուն կա:

Մարդիկ իջան սայլերից: Ջուր խմեցին ու շունչ առան: Մեկնվեցին խոտերի վրա: Ընդարմացած ոտքերն ուշքի եկան: Ուտելիքի կապոցները բացվեցին: Մի քանիսը սկսեցին ծխել: Օդը լցվեց Տրապիզոնի թութունի կապույտ ծխով ու անուշահոտությամբ: Չի, արջառ, էշ ու ջորի դադարից օգտվելով՝ որոճում էին ցողաշատ խոտն ու ծաղիկը:

Ներսեսին թվաց՝ դադարը երկար տևեց. դեռ շատ ճանապարհ կար մինչև Բզուան, որտեղ, որոշված էր, անցկացնելու էին գիշերը:

– Ժողովուրդ, ոտքի ելե՛ք, ժողովուրդ...– բարձր կանչեց Ներսեսը:– Գնում ենք... Հրածեշտ տվեք ձեր Երզնկային, այստեղից քաղաքը երևում է վերջին անգամ, էլ հեռու չեք տեսնի, բաժանվում ենք նրանից, գնում ենք, բաժանվում ենք, ամենավերջին անգամ նայեք ձեր ծննդավայրին, ձեր քաղցր օրորոցին, մնաս բա-

րով ասեք, ձեր աչքերի մեջ, ձեր սրտում դրոշմեք նրա չքնադ դեմ-
քը, աչքերով գրկեք, աչքերով հրաժեշտի համբույր տվեք նրան...

Քար լռություն և սարսուռ իջավ:

Ով պառկած էր՝ դանդաղ բարձրացավ տեղից, նստածները
ուտքի ելան, բոլորը դեմքով շրջվեցին ետ՝ դեպի դաշտը:

Շուրջը լեռնոտ, մեջտեղը՝ պարտեզ, Երզնկան էր:

Երկար, շատ երկար նայեցին՝ առանց մի բառ ասելու:

Նա էր՝ թափանցիկ ու կապույտ մշուշում:

Լռության մեջ մեկը սրտակեղեք ճչաց.

– Վա՛խ, սիրելի Էրզինճան...

Ճիչը կայծակի պես զարկվեց քարավանին:

Ողբ ու հեծեծանքը պատեց մարդկանց: Նրանք կարծես
սգում էին սիրասուն հարազատի դիակը՝ իրենց Երզնկան, որ աչ-
քերը փակ մեկնվել էր դաշտի մեջ, այդքան գեղեցիկ՝ չէր շնչում,
չէր խոսում, չէր լսում, ոչինչ, ոչինչ չէր տեսնում:

Դարձյալ իջավ սև ու սգավոր լռություն: Քարավանն արձա-
նացավ, քար կտրեց կորստի ու բաժանման ցավից: Սրտին դա-
նակ զարկեիր՝ արյուն չէր կաթի: 178 մարդուց բաղկացած խմբա-
քանդակ էր դարձել: Քարացել էին և ձիերը, ամեն կենդանի շունչ:

Ի՞նչ ձայն է, այդ ի՞նչ ձայն է, տեր իմ Աստված, ի՞նչ ձայն է...

Ներսես Աթուրյանը ցնցվեց, չհավատաց ականջին. զարկ-
զարկում, դողանջում էր Սուրբ Փրկիչ եկեղեցու զանգը: Իրակա-
նություն՝ է, թե՞ երագ, քաղցր-ահավոր երագ, խաբեություն... Ո՞վ
է զանգահարը... Նա կա՞, թե՞ չկա... Չունգը կա՞, թե՞ չկա... Չայնը
կա՞, թե՞ չկա... Ո՞վ է զանգահարում ու կեղեքում իր սիրտը:

Չանգի դողանջները փռվում-տարածվում էին դաշտի վրա և
ձայն տալիս լեռան քարքարոտ լանջերին:

– Վա՛խ, սիրելի Էրզինճան, վա՛խ, Էրզինճան, վա՛խ, սիրելի, սիրելի Էրզինճան, – աղաղակում էին մեծ ու փոքր, հող ճանկառում, կուրծք ծեծում:

Փառանձեմ տուտուն հարևանների օգնությամբ իջավ սայլից և քայլեց ճանապարհն ի վար՝ դեպի Երզնկա:

Նրան լուռ հետևեցին մի քանի կանայք:

Խահֆեճի Արամը՝ իր ընտանիքով:

Միմոն Տեր-Մարությանը:

Արտավազդ Հովեյանը՝ թոռան հետ:

Սիրարփին:

Ենքոը, խենթ, բարի Ենքոը:

– Ո՞ւր ես գնում, Ենք, կանգնիր... Բայց Ենքը նույնիսկ գլուխը չըջեց:

Քարավանից անջատվեցին Աննա և Սոֆի քույրերը:

Գորգավաճառ Կալուստ աղան և իր կինը՝ Չարուհին:

Էվան:

Տաճատոս Ռոփինյանը:

Սեդրակը իր զենքը, ձին և պարենը թողեց ու գնաց նրանց հետևից:

Վաղարշակը գնաց:

Ավետիսը:

Շուշոն:

Ներսեսը որևէ փորձ չարեց կանգնեցնելու, ետ պահելու նրանց ինքնասպան քայլից, որովհետև, մտածեց, ինքնասպանության ճանապարհին եմ մահ իրենք:

Մնացողները լուռ և սարսափած նայում էին նրանց թիկունքներից, որ հետզհետե հեռանում էին, փոքրանում, անէանում:

Մուրք Փրկիչ եկեղեցու զանգը լռել էր:

Քարավանը շարժվեց:

Մինչև միջօրե սգավոր թափորի նման շարունակեցին ճանապարհը: Մեծ մասամբ նրանց զգեստներն էլ էին սև, քարավանի ընդհանուր գույնը սուգ էր ու մռայլ: Չովաստուն ձորակում, սառն ու վճիտ ակնադբբյուրի մոտ կանգ առան կարճ դադարի: Լեռնագոգը կանաչ էր ու ծաղիկ: Գարնան սկզբին, արդեն քանի տարի ու դար, երզնկացին իր մեղուները բերում էր այստեղ և պահում մինչև հոկտեմբերի վերջը՝ երբ երկինքը թխպոտում էր և գալիս էին մշուշ ու անձրև օրերը: Փեթակներն արագ ուռճանում էին, մեղրը ավելի թանձր էր, ոսկեգույն, բուրավետ ու անուշ, քան մեղրը, որ մարդ երբևիցե ճաշակել է իր կյանքում: «Մեղրի մեջ կենաս»,— շնորհակալություն էր ասում երզնկացին հարազատին, բարեկամին, օտարին՝ ի պատասխան նրա առաքինի գործողությանը, որովհետև զիտեր, թե իր մեղրը որքան ազնիվ է՝ կամոքն բնության և Աստծո:

Ոտքի ելան, խմբվեցին մեկտեղ և դարձյալ ճանապարհ ընկան, որ երկարել էր լուռ և ամայի բնության զրկույմ:

Եփրատը հեռացել էր, և չէր լսվում նրա խռովահույզ ձայնն անգամ: Բայց նա կրկին կմոտենա իր փոքր ու մեծ վտակներով: Դա կլինի վաղը, մի քանի օրից, կամ էլ, — մտածեց Ներսես Ալթունյանը, — չի լինի երբեք:

Մի թռչուն էր երգում մոտիկ-հեռու տարածություններում: Ուշադիր ականջը կհիանար, որ դա վարդագույն արտույտն է: Նա

երգում էր այնպես, կարծես խոսում էր, այդպես երեխան է գեղգեղում՝ «մայր» և «հայր» բառերը թոթովելուց առաջ: Երգում էր վարդագույն արտույտը իր անմեղ ու միամիտ սրտի մեղեդին, և ոչ ոք չէր լսում նրան: Ուրիշ ժամանակ լինելը՝ ճանապարհորդը, մանուկ թե հասակավոր, ձայնակից կդառնար արտույտին, և նրանք միասին կգնային իրենց ճամփան, որը որքան էլ երկարեր խոչ ու խութերով՝ կթվար դյուրին և ուրախ:

Արտույտը լռեց:

Արևը իջնում էր մայրամուտ, և լեռներն ու բլուրները կապույտ ստվերներ էին տարածում հորիզոնի վրա: Որքան աչքը կտրում էր՝ ոչ մի տեղ շունչ-կենդանություն, որևէ շարժում չկար, մինչև իսկ խոտերն էին պապանձվել: Քարավանն էր միայն քաշում իր ծանր բեռը, մեջքով տնքում, ուժ տալիս ծնկներին, և դանշան էր ու ապացույց, որ աշխարհը կա տակավին և ապրում է:

Մութը շնչեղձ՝ շեղվեցին գլխավոր ճանապարհից և մտան Բզուան լեռնային գյուղը:

Բզուանը երկու տասնյակի չափ ծուխ ունեցող փոքրիկ գյուղ էր Քեշիշ Տաղ լեռան հարավարևելյան լանջին, քարաշատ գոգահովտում, որի թիկունքից սկիզբ էին առնում Մոսյաց նշանավոր անտառները և ընդմիջվելով մեծ ու փոքր բացատներով՝ հասնում Դերջանի գավառ: Լռակյաց և աշխատասեր մարդիկ էին բզուանցիք: Դա նրանց բնությունից էր, վեց ամիս դաժան ծնեռ էր լինում Բզուանում, աշխարհի ծյունը կարծես թափվում էր այստեղ, ճանապարհը փակվում էր, խրճիթները մինչև կոկորդը թաղվում էին ձյան մեջ, նույնիսկ անհնարին էր դառնում տնից տուն գնալ, գյուղը ոտ ու գլխով ծածկվում էր սպիտակ վերմակով և տեսողությունից վերանում իսպառ: Մարդը հանձնվում էր ձյան գե-

րությանը՝ իր հարազատի և անասունի հետ: Գարունը Բզուան էր մուտք գործում դանդաղ, անզուգական գույն ու բուրմունքով. մայում էին գառներն ու հորթուկները, խոխոջում էր լեռնային առվակը, թռչունները օդը լցնում էին զվարթ երաժշտությամբ, հարսի սրտի տակ ծաղկում էր մանուկը՝ ինչպես խոտ ու ծաղիկներն էին ժամեժամ փթթում սարի լանջերին: Ամառը կարճ էր, և ավելի համառոտ ու կարճ էր թվում, որովհետև այնքան աշխատանք կար անելու՝ հարկավոր էր նորոգել ծնռանն ավերված պատ ու տանիքը, խոտ հնձել, հատապտուղ ժողովել, անասուն կթել, բանջարեղեն աճեցնել, վառելափայտ կուտակել երկար ծնռան համար:

Իր բարիքներից բզուանցին ոչինչ չէր ծախում, թեև, օրինակ, կաթնամթերքը համեղ էր ու առատ: Միակ ապրանքը, որ նա սայլերով հանում էր Երզնկայի և մեկ-երկու այլ քաղաքների շուկաները, սոսու բնափայտն էր, որ իր ամուր ու թեթև հատկությունների շնորհիվ անմնան նյութ էր ատաղձագործության մեջ և բավականին թանկ էր գնահատվում: Այդ վաճառքից ստացված գումարով առնում էին թեյ, օճառ, ցորեն, թարմ ու չորացրած մրգեր, ձիթայուղ, շաքար, օղի, որ իրեց կողմերում չկար, կանանց ու հարսների համար՝ արծաթ զարդեր, զանազան ու գունավոր կերպասներ, որ ներմուծվում էր հեռավոր Հալեպ քաղաքից, իրենց աշխատանքում և տնտեսության մեջ անհրաժեշտ առարկաներ՝ թի, արոր, բահ ու քլունգի երկաթե մասեր և ուրիշ երկրագործական գործիքներ, ինչպես նաև ապակեղեն ու պղնձե ամաններ, տրեխ ու վերնահագուստ, որ կարվում էին շուկայի դերձականոցներում տեղական ու բերովի կտորներից: Նա վաստակած փողը քաղաքում ծախսում էր մինչև վերջին կոպեկը: Եթե, պատահում էր, ենթերու խոր գրպանում մի քանի դուրուշ էր մնում՝ ուրեմն անհաջո-

ղակ է եղել իր առևտուրը, և նա տունդարձի ամբողջ ճանապարհին, որ սովորաբար վերջանում էր առավոտվա կողմ, մութուսին, մտածում էր ու տանջվում, թե որտեղ է սխալվել, և երբեք չէր գտնում այդ սխալը:

Նա սիրում էր իր ձմեռը, գարունը, ամառը և աշունը: Նա անսահման նվիրվածությամբ ծառայում էր իր տանը, ամուսնուն, երեխաներին, կով ու շուն, ձի և ոչխար իր աչքին մարդ էր: 1915 թվականի մի գիշեր, երբ ամբողջ Բզուանը երկար օրվա անդադրում աշխատանքից խոնջացած քնի մեջ էր, թուրք խուժանը մտավ գյուղ, կրակի մատնեց խրճիթ ու հարդանոց և բոցերի լույսով կոտորեց ամեն կենդանի էակ՝ չխնայելով մինչև իսկ դեռևս չծնած կանսնց, դեռևս չծնված մանուկներին:

Այն չարաղետ գիշերից հետո Բզուանը միանգամից և վերջնականապես լռեց:

Կենդանիներին արձակեցին խոտ ու ծաղկի մեջ, իսկ իրենք մտան ավերակ խրճիթները, գոմերը, հարդանոցները: Մի քանի բակերից շուտով ծուխ բարձրացավ: Էշը զռաց: Հաչեց չալպտուրիկ շունը: Մալանչ-մալանչ հեծկլտաց երեխան: Արդեն մթնում էր, և սառը լռությունն իջնում էր, իջնում, իջնում մարդկանց վրա ու նահատակ հիշատակների:

Մարեցին կրակները:

Ներսես Ալթունյանը գիշերապահներ կարգեց գյուղի մուտքի մոտ և թիկունքին, որի վերևներում, լավ գիտեր, մի քանի բլուր հյուսիս-արևմուտք թուրք բնակավայր կար, իսկ ինքը քաշներն ուղղեց դեպի այն տունը, ուր գիշերել էր չորս թե հինգ տարի առաջ, երբ Էրզրումից լեռների կարճ, բայց խուլ ու դժվարանց ճանապարհով վերադառնում էր Երզնկա:

Տունը գյուղի աջ թևում էր, մյուսներից զգալիորեն կտրված, այդ վայրերի համար անտավոր ընդարձակ տափարակում: Հիշում է, բարի ու սրտաբաց մարդ էր տանտերը, ափսոս՝ անունը մոռացել է, չորս արու զավակ ուներ և սպասում էր հինգերորդին, որը, հավատացած էր, աղջիկ է լինելու, անունն էլ՝ Ջարուկ: Իսկ ինչո՞ւ - Ջարուկ: Հըբա ի՞նչ,- զարմացավ նա, և ավելի շփոթվեց ու զարմացավ կինը, բայց ձայն չհանեց: Նանե: Իսկ ինչո՞ւ Նանե: Կինը բարձրացրեց աչքերը, որ խոնարհված էին ձեռագործին, և անհանգիստ նայեց ամուսնուն: Նրանք իրենց դստերը չէին պատկերացնում մեկ ուրիշ անունով: Որտեղի՞ց գիտեք՝ աղջիկ է ծնվելու: Սուրբ Մարիամը խոստացել է,- վստահաբար ասաց ամուսինը: Կինը շիկնեց և ավելի գեղեցկացավ իր երջանկությունից: Այդ կողմերում Սուրբ Մարիամի մատուռն էր, որին ուխտ էին գնում հատկապես կանայք և աղոթում իրենց հարազատների առողջության համար: Հաճախ տղա կամ աղջիկ զավակ էին խնդրում նրանից՝ համապատասխանաբար զոհ բերելով տնային թռչունների արուն կամ էգը, և բարի Սուրբ Մարիամը հուսախաբ չէր անում նրանց: Ջարուկն էլ չկա,- մտածեց Ներսեսը:- Նրանք սպանեցին նրան, ձեռքները չդողացին, սիրտը չխղճահարվեց, նրանք սառն ու անտարբեր սպանեցին այն կնոջ երջանկությունը:

Խրճիթի դուռը կիսաբաց էր, և երբ նա մտավ լեռ քարերով ցանկապատված տափարակը, դուռը զգուշորեն ճռռալով փակվեց: Մերոնցից են,- անցավ Ներսեսի մտքով, և նա մի քամի վայրկյան վարանեց՝ ներս մտնի՞, թե՞ ոչ: Այդ պահին գոմից լսելի եղավ ոչխարի մայունը, և սև ու փռչոտ զամփռը, ասես գետնի տակից բուսնելով, թշնամական ու կատաղի հաչոցով վրա վազեց նրան:

– Մխո՛,– Ներսեսի ուղեղում իսկույն արթնացավ տանտիրոջ անունը,– շունդ ետ պահիր:

Դռան մեջ հայտնվեց մի մարդ և սպառնաց շանը, որն իսկույն սսկվեց:

Դա Մխոն չէր:

– Ո՞վ ես:

– Քո թուրք եղբայրը,– խոնարհ ժպիտով պատասխանեց մարդը:– Ներս արի, եղբայր, հյուրը աստծունն է, մի կտոր հաց կհսենք:

Ընդարձակ սենյակի կիսամթում Ներսեսը տեսավ հատակին տարածված փսիաթին ոտքերը տակն արած թուրքի կնոջը՝ թխական հավի պես շրջապատված մանր երեխաներով: Նա հիշեց Մխոյի, նրա կնոջ ու երեխաների դեմքն ու ձայները այդ նույն հարկի ներքո, կարծես երեկ էր ու հազար տարի առաջ, և դարձյալ Ջարուկին հիշեց ամենայն մանրամասնությամբ, որին չէր տեսել:

Թուրքն զգաց, որ նրա սիրտը տանջող մտքերի մեջ է, անհանգստացավ, սառը վախ սողոսկեց մաշկի տակ, բայց նույն կիւ-հնազանդ ժպիտը դեմքին ասաց.

– Իմ ընտանիքն է, եղբայր... Սա Իսմայիլն է,– մատնացույց արեց երեխաներից ամենափոքրին, որ ճանճի նման կուշ էր եկել մոր պարարտ ու մեծափոր գրկում:– Սա էլ է Իսմայիլը: Սա էլ է Իսմայիլ: Իսմայիլն է: Իսմայիլ: Իսմայիլ: Իսմայիլ: Իսմայիլ: Իսմայիլ: Իսմայիլ: Մատը կանգ առավ երեխաներից մեկի վրա, անո՞ւնը մոռացավ, թե՞ լեզուն քարկապվեց:– Իսմայիլն է: Իսմայիլ: Իսմայիլ: Մեծ Իսմայիլ:– Նայեց կնոջ թխական փորին:– Շուտով նոր Իսմայիլ կծնվի:

– Իսկ քո անունն ի՞նչ է,– մտայլ հարցրեց Ներսես Ալթունյանը:

– Իսմայիլ, սիրելի եղբայր:

– Դու եկվոր ես:

– Մեր գյուղը սարի հետևն է: Էստեղ ավելի լավ է անասունի համար, խոտը առատ, ջրերը սառն ու քաղցրահամ, արևը մոտիկ:

Թուրքը լռեց:

Լուռ էր մահ Ներսեսը:

Ամեն մեկը լուռ էր յուրովի, ոչ մի նմանություն և ընդհանուր եզր չկար նրանց լռության միջև:

Լռությունը երկարեց այնքան, մինչև սենյակում կատարյալ մթություն եղավ:

– Նստիր, եղբայր, ինչո՞ւ ես կանգնել, մստիր,– մթում լավեց քուրքի ձայնը, որի մեջ և՛ անհանգստություն կար, և՛ հյուրընկալության շունչ ու զգացմունք, և՛ ինչ-որ չարամենձ նպատակի կայծ, որը միայն իր հոգում էր գաղտնաբար լույս տալիս:

Սակայն Ներսեսը շրջվեց և առանց որևէ բառ ասելու ելավ տնից:

Երկինքը աստղել էր, և ցուրտ շաղ էր մաղում գյուղի վրա:

Թուրքը շեմին կանգնած նայում էր նրա հեռացող թիկունքին և ոչ ոք, իրենից բացի, չգիտեր՝ ինչ է մտածում, և մտածո՞ւմ է արդյոք, թե՞ ոչ: Նա նայում էր Ներսեսին նույնիսկ այն ժամանակ, երբ վերջինս արդեն չէր երևում, ձուլվել էր խավարին, և չէին լավում ոտնաձայներն անգամ: Նա շատ զգուշորեն, որ ձայն դուրս չգա, վրա բերեց դուռը, վերադարձավ սենյակ և մեկնվեց կնոջ տաք մարմնի կողքին: Կատարվեց այն, ինչ տեղի էր ունենում իր ամուսնական կյանքում ամեն գիշեր, որից հետո նա անմիջապես քնում էր խոր ու անզգա քնով մինչև լուսաբաց: Բայց

այս անգամ քունը աչքերին մոտ չեկավ: Աչքերը փայլում էին կույր մթության մեջ, գնում մինչև դուռը, ետ գալիս ու դարձյալ պառկում գետնին, հետո նորից շարժվում դռան կողմը, դուռը բացում-փակում, դուրս գալիս ու ներս մտնում, անվերջ ներս ու դուրս անում բորենու նենգ զգուշավորությամբ:

Հոգնած լռություն էր բոլոր խրճիթներում:

Ներսեսը գիշերապահներին խստորեն կարգադրեց լինել զգոն, քուն մտնել փոխնիփոխ, բայց չասաց, որ գլուղում թուրք կա՝ չարթնացնելու նրանց վրիժառությունը:

Ժամ ու ժամանակ անցավ:

Աստղերը խամրեցին:

Լիալուսինը ելավ սարի թիկունքից և կաթնագույն լույս սփռեց չորս բոլորը:

Հաչեց-կողկոնձաց շունը: Ներսեսը ճանաչեց, թուրք շունն էր:

Մեկը երգում էր մեղմ ու տխուր.

Լուսինգա, լուսրդ շաղնա,

Իմ յարին գյանքը մեզնա,

Աս գիշեր յարիս կերթամ,

Լուս փուր, օ, շիղագ էթամ:

Ներսեսը զնաց ձայնի ուղղությամբ: Այդ բառերը երգնկայի երիտասարդ աղջիկները հաճախ էին երգում, երբ ծագում էր լուսինը: Ամեն տղայի թվում էր, թե նրանք հալումաշ են լինում իր համար: Բայց դա այդպես չէր: Իրականում սիրահարված աղջկա շուրթերից այդ երգը հազվադեպ էր հնչում, սովորաբար նա լռում էր, շիկնում և փակ սրտին պահ տալիս իր զգացմունքը: Մեծ մասամբ երգում էին նրանք, ում հոգու մեջ ծաղկում էր սերը, ինչ-

պես ծաղիկն է արթնանում գարնանային բնության գրկում անխուսափելիորեն, և չգիտեին՝ արդյո՞ք մի օր հասնելու են իրենց երազանքին, թե՞ նա չի գալու երբևիցե:

Տներից մեկի պատի տակ, վերմակով փաթաթված, նստել էր մի աղջիկ: Նա էր երգում: Նկատելով Ներսեսին՝ օտար ձայնից վախեցած թռչնակի նման լնեց, շփոթահար ոտքի ելավ և ասաց.

– Բարի երեկո, հրամանատար:

– Կեսգիշեր է արդեն, ինչո՞ւ քնած չես:

– Լուսինն ալ քնած չէ:

Պատասխանը Ներսեսին շատ դուր եկավ:

– Անունդ ի՞նչ է:

– Նանե:

Տխրությունն ու ժպիտը խայտացին Ներսեսի սրտում, նա անկնկալի եկավ և չհավատաց ու կասկածեց՝ արդյոք ճի՞շտ է լսել անունը նրա...

– Ի՞նչ...

– Նանե, հրամանատար,– ասաց աղջիկը,– անունս չե՞ս հավնեի:

– Հիանալի անուն է,– ասաց Ներսեսը:– Եթե դու էլ քու անվան պես բարի ես ու գեղեցիկ, ուրեմն պատիվ է մեր քարավանին:

Շիկնանքն ու հուզմունքը մի պահ լուսազարդեցին աղջկա դեմքը, և Ներսեսը այդ լույսն զգաց իր աչքերի վրա ու այնքան հոգեմոտ:

– Ես կմնամ այստեղ, որ դու չվախենաս,– ասաց նա և նստեց քարին՝ աղջկա դիմացը, որովհետև ինքը, ինքը վախեցավ Նանեի կյանքի համար, որին, իրեն թվաց, սպառնում էին թուրք մարդը և թուրք շունը:

Նրանք նստել էին դեմառդեմ՝ Նանեն, ինչպես քիչ առաջ, վերմակը վտիտ ուսերին, իսկ Ներսեսը՝ մոսինին հենված:

– Ես քեզ առաջին անգամ կտեսնեմ:

– Իսկ ես քեզ լավ կճանչնամ, դու Ներսես Ալթունն ես: Երբ ես սովորում էի Քրիստինյան վարժարանում, դու մեզ երգեցողություն էիր դասավանդում, դու մեզ սորվեցրիր Աղբյուր Սերոբի և Գևորգ Չաուշի երգերը, դու ասացիր՝ ամեն հայ երիտասարդ, տղա թե աղջիկ, պիտի իմանա ու երգի այդ երգերը: Դու ասացիր, դիմելով մեզ, այդ երգերը պիտի դառնան ձեր հոգու այբ-գիմը, մոռցե՞ր եք, պարոն Ալթունյան:

Ներսեսը հիշեց 1912 թվականը, երբ, ընդամենը մի քանի ամիս, երգ-երաժշտության դասատու եղավ Քրիստինյանում՝ նախապատրաստելու վարժարանի հիմնադրման քսանհինգամյակի հանդիսավոր ցերեկություն աղջիկների երգչախմբի ելույթը:

– Դու երկար հյուսքով, սկիիկ ու չարածճի այն աղջիկը չե՞ս...

– Այո, ուսուցիչ:

– Քո հայրը Թովմասն էր, նպարեղենի փոքրիկ խանութ ունեւր ժամուն բակի աջ թե ձախ անկյունը, մորդ անունը՝ Սառա, գեղեցիկ կին էր մայրդ, դու նման ես անոր:

– Շնորհակալություն, ուսուցիչ, որ չես մոռցեր իմ ծնողաց անունը:

– Դու Նանեն ես:

– Այո, ուսուցիչ:

– Ինչքա՞ն ես մեծացել, Նանե, հիմա մորդ չափ գեղեցիկ ես և դեռ առավել:

– Նա ավելի գեղեցիկ էր, նա ամենագեղեցիկն էր աշխարհում:

– Դու հիանալի ծայն ունեիր, սակայն շատ բարձր էիր երգում և խաթարում խմբերգի ներդաշնակությունը: Ես քեզ անվերջ նկատողություն էի անում, իսկ դու համառորեն շարունակում էիր բոլորից բարձր երգաբանել, ամենաբարձրը:

– Որքա՜ն լավ կհիշես, ուսուցիչ:

– Ինչո՞ւ էիր այդպես երգում, իսկ քիչ առաջ, ես լսեցի, ծայնդ տխուր էր ու մեղմանուշ:

– Այն ատեն մենք ուրախ էինք ու երջանիկ, հիմա ամեն տեղ սուգ է ու ավերակ:

– Կհիշե՞ս, ես քեզ փրկեցի Եփրատում խեղդվելուց: Ամռան մի շոգ ու հեղձուցիչ օր ես բոլոր աղջիկներին տարա գետեզերքի գոլ այգիները: Առանց ինձ զգուշացնելու, դու մտար ջուրը, որտեղ գետը խորն էր ու արագահոս, և քիչ մնաց խեղդվելիք: Ես տաքատով մետվեցի քո հետևից և քեզ ափ հանեցի:

– Իզուր փրկեցիր իմ կյանքը, ուսուցիչ, երանի խեղդված ըլլալի այն օրը և աչքերս չտեսնեին մեր ահավոր-ահավոր չարչարանքները:

Նանեն կուչ եկավ վերմակի տակ և հեկեկաց:

Ներսես Ալթունյանը, չնայած տղամարդ էր ու զինվոր, փխրուն հոգի ուներ: Երանելի անցյալն ու դառը իրականությունը կպան նրա սրտին, արյունը տակնուվրա եղավ հակընդդեմ զգացմունքներից, և նա կոկորդում ու աչքերի մեջ հազիվ խեղդեց արցունքները:

Հաչեց այն մույն շունը: Այս անգամ նա իր և լուսնի վրա չէր հաչում թշնամի կաղկանձյունով, այլ ասես լսեց լուռ, զգույշ, թաքուն մի ոտնաձայն և, կեսգիշերային մրափից բացելով աչքը, բարեկամորեն ծայնեց իր տիրոջը կամ ծանոթին:

– Հիմա ո՞ր եմ ծնողքդ, դու միայնա՞կ ես այստեղ...

Աղջիկն անմիջապես չպատասխանեց, բայց քիչ հետո, երբ լացն անցավ սրտի խորքը, ասաց թույլ ձայնով.

– Ես միս-մենակ եմ:

Անպ իջավ գյուղի վրա: Մռայլվեց երկնքի դեմքը: Կաթկթեց անձրևը: Փչեց քամին: Գիշերն ավելի ցրտեց: Թվաց՝ լռությունը չունի սկիզբ և անվերջ է ու անվերջանալի:

– Դու միայնակ չես, քեզ հետ է քո ուսուցիչը:

– Ինձ զենք տուր, ուսուցիչ:

Ներսեսի աչքերը հիացմունքից պայծառացան:

– Ինձ զենք տուր,– կրկնեց իր խնդրանքը Նանեն:– Ես կուզեմ կռվիլ:

– Չենքը կայրի քո ձեռքերը, դու ստեղծված ես ծաղիկներ ժողվելու համար:

– Չինվորը մարդուս մարմինը չէ, այլ զգացմունքը, սիրտը, նրա մեջ ապրող անքուն վրեժը, հոգին, ատելության ձայնը: Սիրտն է կռվում թշնամու դեմ, և սիրտն է հաղթում ու մեռնում իրեն ծնած հողին վրա:

– Մենք պիտի ապրենք,– ասաց Ներսեսը մի հաստատակամությամբ, որ այդ պահին ծագեց անհույս ապագայի տագնապից:

– Ես մեռնելու եմ, և դա ցավ չէ ինձ անճնապես:

– Մեզ խաղաղությունն է սպասում, որին երազել ենք դար ու դարեր, մենք շարժվում ենք խաղաղության կողմը:

– Երբեք չի լինի խաղաղություն մեզի համար, մահատակների հիշատակը անթիվ տարիներ այրելու է մեր ու հետնորդներիս

հոգիները, մինչև աշխարհի վերջը հիշողության ցավեն պիտի տապակվինք ազգովին, եթե հրաշքով ողջ մնանք:

– Ես շնորհակալ եմ Աստծուն և երջանիկ, որ մի կարճ ժամանակ քեզի ուսուցիչ եղա:

Նանեի սրտին ուրախություն պատճառեց Ներսես Ալթունյանի այդ խոստովանությունը, նա ուզում էր իր համանման զգացմունքներն ու տրամադրությունը փոխադարձել նրան, բայց համարձակություն չգտավ իր մեջ և կարկամեց ներքին հովանուքից:

– Մի երգ ասա,– խնդրեց Ներսեսը:

– Ի՞նչ երգ:

– Որ քիչ առաջ կերգեիր:

– Չէ, ուսուցիչ,– ասաց Նանեն:– Մարդիկ քնած են:

– Ո՞ւմ համար էիր երգում «Լուսինգան»:

Ներսեսն անմիջապես զգաց, որ հարցը կպավ աղջկա սրտին, որովհետև նա շփոթվեց ու շիկնեց այնպես, կարծես տեսել էին իր խոր ու անզին գաղտնիքը:

– Լուսինի:

– Լուսինը կարոտ չէ մեր երգին, նրա համար երգում են աստղերը:

– Ասում են՝ նա ողջ չէ արդեն... բայց ես չեմ հավատար...

– Երբեք չհավատաս:

– Մի՛ հարցրու անոր անունը:

– Չեմ հարցնում:

– Տարիներ են անցել, բայց կարծես երեկ էր, երբ նա ասաց ինձ կսիրե:

– Իսկ դու ինչո՞ւ նրան չխոստովանեցիր քո սերը:

– Որտեղե՞ն գիտես:

– Աղջիկները ժլատ են սիրո խոստովանություններում:

– Ես ասացի միտքիս մեջ, ներիր, ուսուցիչ, երանի բարձրա-
ձայն ասեի, և նա լսեր:

– Մտքի՞նն էլ է լսելի:

– Ուրե՞մն նա լսե՞լ է...

– Իհարկե:

– Նա սպանվեց լեռներում, ջանֆիտայի էր քեզի նման, ես
հասկացա նրա մահը իր ծնողներեն. նրանք սև հազան-կապե-
ցին:

– Բոլոր մեռածները ողջ են:

– Իրա՞վ...

– Հավատա ի՞նձի:

– Ես քեզ կհավատամ:

– Հայրենիքի համար զոհվածները կապրեն հավիտենորեն:
Վաղը ես զենք կտասմ քեզի, իսկ հիմա քնիր, վաղը ավելի դժվար
կլինի մեր ճամփան:

Ներսես Ալթունյանը ոտքի ելավ և գնաց գլխերապահների
կողմը: Երբ լուսինը պատռեց ամպե վերմակը, Ներսեսի սիրտը
խաղաց. այնպե՛ս կուզեր լինել այն տղան, որին այժմ լուսինը
տեսնում է, մեռներ ու անէանար նրա պես, և Նանեն իրեն հիշեր
այդքան ազնիվ ու գեղեցիկ հոգեկան տվայտանքով:

Քիչ ներքև, հսկա ընկուզենու մոտ նա հանդիպեց Վահրա-
մին:

– Բարի երեկո, Վահրամ:

– Չլսեցի՞ր, աքաղաղը կանչեց, շուտով կլուսանա, – ասաց
Վահրամը:

– Հայերե՞ն կանչեց...

– Չեմ գիտեր...

– Պարտավոր ես գիտնալ:

– Չուբուրյան Կարապետ աղան գնաց,– ասաց Վահրամը սև բոթ հայտնելու պես:– Ահա այն փլատակեն մեկ ժամ ամառ էլ լավ ու գնաց, ես նրան ուղեկցեցի մինչև մեծ ճամփան:

– Ո՞ր գնաց,– չհասկացավ Ներսեսը, որովհետև դեռևս այնտեղ էին իր մտքերը, որտեղ Նանեն էր, լուսինը, անանուն տղան և թուրքը:

– Գնաց Երզնկա:

– Ինչո՞ւ:

– Չեմ կրնար քնանալ ծննդավայրես դուրս,– ասաց և հոնգուր-հոնգուր լաց եղավ:– Կուգեմ մերհններուն ոգիին քով ըլլալ:

– Թող այդ ըլլա կյանքիդ վերջին սխալը, Վահրամ,– խիստ ծայնով կշտամբեց Ներսեսը:– Կարգելեմ որևէ մեկի վերադարձը Երզնկա: Կըմբռնե՞ս, մենք իրավունք չունենք ժողովուրդը ցիրուցան ընելու:

Նա կարգադրեց ոտքի հանել մարդկանց, չպատահի հանկարծ մեկը քնով մնա, և իրենք գնան, հաշվառել յուրաքանչյուրի ներկայությունն անուն ամ անուն:

Շուտով ծայներ լավեցին, վաղորդյան սառը մթի մեջ կանչում էին իրար, շտապեցնում, հավաքում լծկան կենդանիներին, որոնց երբեք այնպես խանդաղատալի չէին սիրել, ինչպես այժմ:

Երբ լուսացավ, քարավանն արդեն հեռացել էր Բզուամից:

Ամպի մռայլ քուլաները պատել էին լեռները, իսկ հովիտներում ու ձորակներում թանձր մշուշ էր:

Մև ջրի վերին հոսանքը քանդել էր փայտե կամրջակը և փրփրաբերան վազում էր դեպի Եփրատ: Ամեն գարուն կանուրջը

վերաշինում էին առաջին ճանփորդները: Այս անգամ դա նրանց էր վիճակվել: Տղամարդիկ իսկույն գործի անցան, մոտակայքից քաշեցին-բերին ծառաբներ, կապկպեցին հաստ պարաններով և պատրաստի տախտակամածը կանգնեցնելով դիքշիտակ՝ գլուխը դանդաղ իջեցրին գետակի հանդիպակաց ափը: Երբ քարավանի վերջին մարդն ու կենդանին անցան, Ներսեսը, ի զարմանս իր օգնականների, կարգադրություն արեց կամուրջը քանդել կամ շուտ տալ ջրի մեջ: «Այն մեզանից ոչ մեկին արդեն հարկավոր չէ, — նայելով գետի հորձանքին կուլ գնացող տախտակամածին՝ մտածեց նա և դարձյալ մտասուզվեց, — թող ոչ ոք մեր հետևից չգա»:

Երկրորդ անգամ Ներսես Ալթունյանը սխալվեց:

Հագիվ էր քարավանը մոտ երեք ժամվա ճանապարհ կտրել՝ դուրս գալով Վասկերտի լուսավոր հովիտը, երբ լսվեց Եփրեմի տազնապահար աղաղակը.

— Զյուրդե՛րը...

Ոչ, թուրքերն էին:

Չորս տասնյակի չափ ձիավոր թուրքեր՝ զինված հրացաններով ու յաթաղաններով, կարճակոթ բահերով, սրածայր երկաթներով, բլունդներով ու կացիներով, մի այնպիսի արյունախում կատաղությամբ հարձակվեցին քարավանի վրա, որ միամիտ ու անտեղյակ մարդուն կարող էր թվալ վրեժ են ուզում առնել փոքր ու մեծից, ողջ ու մեռածից, որոնք քիչ առաջ, անցած գիշեր լվել են իրենց անմեղներին, այրել տուն-տեղը, խլել հողը, պղծել հիշատակները: Իրսկանում՝ ատելության, գազանության, բռնության, մարդատյացության ծովից ելած ցեղի արյունն էր հեղեղի նման խոյացել քարավանի վրա, և Ներսես Ալթունյանը, ամեն հայ մարդ լավ գիտեր, որ դա յաթաղանից ավելի ահավոր է, կա-

րիճի, օձի, սարդի թունոտ խայթոցից քստմնելի, ժանտախտից առավել չարանենգ:

Խաղաղ ու անվրդով հովտում պայթեցին հրացանները:

Քարավանում սկսվեց իրարանցում-խուճապ. փախչում էին ուր պատահի, կանայք ճշում էին, երեխաները լաց էին լինում վախեցած ու աղիտղորմ, ինչ-որ մեկը խոշտանգված բղավեց. դա մահվան ձայնն էր, որ մի պահ վեր բարձրացավ ընդհանուր շփոթ աղմուկից, իրար խառնվեցին թուրք վայրահաչոցն ու հայ լեզուն, որոնք այնքան տարբեր էին և՛ արտահայտման կերպով, և՛ էությամբ՝ մեկը խոսում էր սատանայի հետ, մյուսը՝ Աստծո, մի ձի, տաք ու արյունոտ փորտոտիքը քաշկոտելով, լուռ վարգում էր սարն ի վեր՝ կանաչ հեռուներում հանդիպելու իր երանելի մահին:

Անակնկալ հարձակումն ու առաջին թուպների շփոթմունքը ծանր եղավ քարավանի համար: Բայց շուտով, որ թվաց մի ամբողջ անվերջանալի ժամանակ, հայ մարտիկներին հաջողվեց ճեղք բանալ թուրքերի ու ժողովրդի միջև և երես առ երես, կրծքով կանգնել հրոսակի դեմ-հանդիման:

Քարավանը, ինքնապահպանության բնագորով, որ այդ իրավիճակում արթնացավ ամեն մարդու մեջ, քաշվեց մի կողմ և, առանց ետ նայելու, գործադրելով ամբողջ ուժերը, արագ գնաց դեպի հարավ, որտեղ Սև ջրի ընդարձակ, ճահճոտ, բարձր եղեգներով պատված գետաբերանն էր և այնուհետև՝ Եփրատը:

Թուրքերը շատ էին հայերից, բայց վերջիններս բոլորն էլ հրացան բռնեին և առատ փամփուշտ, իսկ նրանք մեծ մասամբ զինված էին սառը զենքով: Նրանք փորձում էին մոտենալ, ձեռնամարտի նետվել, մոտենալ՝ գործարկելու կացին ու յաթաղան, ատամի տակ պահված մահաբեր թույնը, որ գիրկընդխառն գո-

տեմարտելիս, հաճախ խրում էին գոհի կոկորդը, իսկ հայերի հնարավոր հաջողությունը, կասկած չկար, պայմանավորված էր հեռահար ու դիպուկ կրակոցներով: Դա հեշտ չէր իրագործել թուրքի գազանային ու գիշատիչ վարքի ներկայությամբ:

Եթե մենք սպանվենք այս կովում, նրանք կհարձակվեն բոլորովին անգեն քարավանի վրա և կհռչոտեն նրան, կխեղդեն ճահիճներում, կնետեն Եփրատը, — սարսռաց Ներսես Ալթունյանը, — կվերանա ժողովուրդը, կամայանա երկիրը, կավարտվի պատմությունը, որ իրենց ամենամեծ ու թանկ հարստությունն է:

Պիտի մաքառենք՝ միայն հաղթելու համար:

Ներսեսը հրամայեց խմբովին ետ քաշվել, ձիերն ազատ արձակել՝ չվտանգելու նրանց կյանքը, որ իրենց դեռ շատ անհրաժեշտ կլինի, և հարմար դիրքեր գրավել հովտի քարքարուտներում:

Շիկացած գնդակները թափվում էին երկու կողմերի վրա: Հայերն ավելի դիպուկ էին կրակում, և դա Ներսեսին հույս էր տալիս. իրենք ընտրեցին կովելու միակ ճիշտ գործելակերպը, և ամեն ինչ անհուտրեն կորած չէ տակավին:

Մի քանի թուրք, ձիերը խթանելով, յաթաղաններն առաջ պարզած, արյան ծարավի աչքերով խոյացան դեպի դիրքերը, բայց գլորվեցին կես ճանապարհին վիրավոր ու շանսատակ: Նրանց օրինակը անհաբեկեց մնացածներին՝ մղելով զգույշ և աշտուրջ գործողությունների:

Շուտով Ներսեսը թուրքերի խառնակ շարքերում նկատեց մեկին, որը ցեղակիցների ուշադրությունն էր սրում իր վրա, քսի տալիս նրանց, հրահրում իր դեմ: Գնդակները սկսեցին հաճախակի թռչել իր կողմը, իսկ մեկ-երկուսը քիչ մնաց կայեին գլխին: Ռ՞վ է...

Կրակելու կարճ դադարներին մա հայացքն ուղղում էր նրան:

Թուրք է: Հապա էլ ո՞վ կարող է լինել... Նրա արձակած գնդակը դիպավ ձիավոր թուրքերից մեկին և գետին տապալեց: Դարձյալ շրջվեց այն կողմ, ո՞վ է, նայեց ավելի լարված և ուշադիր. կարծես մի ժամանակ ինչ-որ տեղ տեսել է նրան, թե՞ իրեն թվում է... Այդ պահին միանգամից բազմաթիվ գնդակներ շող եկան Ներսեսի շուրջը, և եթե գլուխն ու ամբողջ մարմինը վայրկենապես չկծկեր քարի հետևը, պիտի սպանվեր անխուսափելիորեն: Ո՞վ է այդ թուրքը...

Հանկարծ նա ճանաչեց՝ Իսմայիլն է, և ամեն ինչ հասկացավ:

Իսմայիլն էր, հենց նա՝ բզուանցի Մխոյի տան թուրքը: Նա է դավել իրենց և ոհմակը այստեղ բերել՝ հռչոտելու անմեղ մարդկանց:

Ես նրան կսպանենմ,- Ներսես Ալթունյանի ատամները սեղմվեցին հոգու ցավից, վիրավորանքից, խաբվածությունից, վրեժից,- ես շանսատակ կանենք եզ:

Նա հրացանին փարվեց, պառկած ոտք ու ձեռքերը ձգվեցին, կանգ առավ շունչը, ուշադիր ու երկար նշան բռնեց Իսմայիլին, արյունը հորդաց սրտի մեջ, ողնաշարը գալարվեց ու քարացավ միանգամից, աչքի շանթը թռավ դեպի թշնամին, և նա ատելությամբ քաշեց ձգանը:

Հեռու էր շուն շանորդին, գնդակը կպավ նրա մոտ գտնվող մեկ այլ շան ծիծ կերածի և, ըստ երևույթին, ընդամենը մի թեթև վիրավորեց: Ներսեսը պարզ տեսավ, թե ինչպես նա բռնեց ուսը և հայեոյամբ վնգստաց:

Ներսես Ալթունյանը՝ հրացանից դժգոհ և դժգոհ իրենից, քար ու թփերի միջով սողեսող առաջ գնաց՝ մոտենալու Իսմայիլին, մո-

տենալու, ավելի մոտենալու, որպեսզի իր կրակոցն այս անգամ մահ և գերեզման դառնա նրան:

Սակայն արյան հոտն առած և, մանավանդ, վիրավոր գազանի մարմնում խլանում է զգուշավորության բնական ձայնը, և նա կուրորեն նետվում է իր գոհի ու թշնամու վրա: Հանկարծ թուրքերը գոռում-գոչյունով հարձակման անցան կովի ամբողջ ճակատով, և Ներսեսի հայացքը այդ խառնաշփոթության մեջ կորցրեց Իսմայիլին:

Միայն թուրքն է կռվում, որ աչք հանի, ողնաշար ջարդի, լեզու պոկի, ուղեղ ու սիրտ հոշոտի, ոսկոր ծամի, մորթազերծ անի, արյուն լավի: Չազիր ու ահավոր միջոցներով սպանելը նրա կռվի բուն խնդիրն է, ոգևորիչ նպատակը, զգացմունքի ու մտքի վերին բավականությունը: Քանի՞-քանի անգամ էր Ներսեսը ներկա գտնվել այդ բավականության խելահեղ գործողությանը և միշտ, կյանքի ու մահվան ծայրահեղ լարված գոտեմարտում, չէր հավատացել աչքին, թվում էր՝ սարսափելի պատրանք է, որ մարդը, աստծո որդին, միակ բանական արարածը ի վիճակի է այդքան գազանանալու: Բայց ներս ու դրսից, ոտ ու գլխով պատրանք էր հենց այդ պատրանքը: Գազանից ավելի գազան էր նա: Հրեշից էլ հրեշ: Կոկորդիլոսից էլ կոկորդիլոս: Յաթադանից էլ յաթադան: Քարից էլ քարսիրտ: Խորշակից ավելի ու առավել խորշակ: Եվ, ինչպես հաճախ էր պատահել վերջին տարիներին, նա անհիժեց իր հորը՝ Աստծուն, որ նա իրեն՝ իր որդուն դատապարտել էր մի դժխեմ ու վայրագ հարևանության և, օ՛, ճակատագիր, հավիտյանս ու հավիտյանս հավիտենից:

Ներսեսը դարձյալ հրամայեց ետ քաշվել, թշնամուն պահել հրացանագարկի տարածության վրա, բայց այս անգամ դա նրանց չհաջողվեց:

Թուրքը ճակատով խրվեց հայերի դիրքերը:

Չիերն ու մարդիկ հայտնվեցին մի ընդհանուր շրջանակում, որ գնալով նեղանում էր՝ սպառնալով դառնալ անքակտելի գունդկծիկ, որտեղ մաքառում էին մահն ու կյանքը, և մահը ավելի գործնական էր, ջերմեանդ ու հարձակողական:

Բախվեցին կացիներն ու հրացանակոթերը: Յաթաղան ու դաշույն կրակ ցայտեցնելով լիզեցին իրար: Չարկվեցին քար ու երկաթ: Չեռքերը կատաղի նյարդայնությամբ ձգվեցին դեպի հակառակորդի աչքը, կոկորդը, քիթ ու բերանը, փորը, ամորձիքը՝ կեռված մատներով դուրս բերելու նրանց մեջ տրոփող տաք արյունը:

Հրացանները շլեցին. դիմահար կրակով խոցում էին, ցավատանջում, դռ ու թունդ հանում, սպանում:

Չարհուրած աչքերով ձիերը ծառս էին լինում, խրխնջում, գալարվում-ջղածովում էին վերքերից:

Ո՞վ էր ճշում:

Բզկտվում:

Հող չանգռում:

Սարսափով հրաժեշտ տալիս կյանքին, բնությանը, արևին, որ այդ ժամանակ արդեն փայլում էր պայծառորեն:

Ցնորվում՝ տեսնելով սեփական արյան լիքղացումը:

Լեզուն ծանում:

Շնչահեղձ լինում:

Խռխռում:

Գրկում իր խոշտանգված մարմինը:

Քոռանում:

Լակվում:

Խուլ դառնում:

Մեռնում, մեռնում, մեռնում ու չէր մեռնում...

Խումբը, կոիվ տալով, դարձյալ նահանջեց: Բայց այլևս տեղ չկար: Հետևում, քիչ ներքևները՝ քարավանն էր:

• Թուրքերի ձեռքը փորձում էր երկարել և հասնել քարավանին՝ կատարելու իր ջարդը, եղեմագործությունը, նախճիրը:

– Այլևս ոչ մեկ քայլ ետ, – լսվեց Ներսես Ալթունյանի տագնապալից ձայնը, որը հրաման լինելուց ավելի՝ ճակատագրի հորդոր էր ու պարտադրանք, – պիտի մեռնենք այստեղ:

Եվ, այդ նոր իրադրությունում, նա, բարձրացնելով երկսայրի սուրը, առաջինը մարտի նետվեց՝ ցանկանալով ցույց տալ, թե ինչպես կարելի է մեռնել:

Նրա օրինակը վարակիչ եղավ յուրայիններին, որոնք անհապաղ հետևեցին նրան: Ունանց ձեռքին յաթաղան ու կացին կար, որ կռվի ընթացքում խլել էին վիրավոր թուրքերից, և հիմա այդ ամբողջ անմարդկային զենքն ուղղվեց նրանց դեմ:

Երբ ցատունը, անիրավությունը ծովանում են, Աստծո պատվախնդիր զավակի մեջ զարթնում է առյուծի ազնիվ ու հերոսական սիրտը: Մի քանի բռպետում հայերը նոր կերարանք առան, ձայն ձայնի տալով, հուժկու բռունցքի նման վեր ելան և հարված, հարված, հարված զարկեցին դարավոր ոստիսի մարմնին:

Հրացանները լռել էին:

Պողպատն էր թնդում ու շառաչում՝ փայլելով արյուն շիթեթով: Կյանքն ու մահը գիշատիչ ճանկերով կրծոտում, խեղդամահ էին անում միմյանց, և կարծես չկար, չկար փրկություն նրանցից

որևէ մեկի համար: Ահ ու սարսափից ծռվել ու այլանդակվել էին աչքերը:

Հանկարծ թուրքը կոնակ դարձրեց. պատճառն ամենևին էլ կասկածանքն ու անվստահությունը չէին իր հաջողության նկատմամբ, այլ՝ սրտոդողը, վախը, զարհուրանքը, որ ի սկզբանե, ցեղագրությամբ անբաժան էր նրա գազանային բնավորությունից:

Հայերը ոգևորված և նոր ուժով սկսեցին հալածել նրանց՝ սրագարկ անել, ջարդ-ջարդ տալ, հողին խառնել: Մի թուրք էր սարսափած, կաղկղալով փախչում՝ ազատելու գլուխը վերահաս մահից: Սևավերակցի Դանիելը հասավ նրան և իր վիթխարի մարմնի տակն առավ՝ խեղդում էր, խեղդում, հետո, մագերից բռնած, գլուխը շուռ տվեց, որ վեր հանած դաշույնը թափով մխրճի կոկորդը: Մոտ գտնվող Ներսես Ալթունյանը փշաքաղվեց. Իսմայիլն էր.

– Չսպանես,– խնդրեց ու որոտաց Ներսեսը,– չսպանես... նա երեխաներ ունի...

Դանիելը ապշած ու խիստ անբավական ետ քաշեց դաշույնը և ծանր հեալով ոտքի ելավ:

Իսմայիլը սողաց, չորեքթաթ արեց, դժվարությամբ բարձրացավ գետնից և վիրավոր, ծեծված շան նման, ստեպ-ստեպ ետ նայելով՝ զնաց իր փախչող ոհմակի հետևից:

– Ներսես Ալթունյան, բացատրիր արարմունքդ,– մեղադրելու պես ասաց Դանիելը:

Ներսեսը չպատասխանեց:

Այսուհետև այդ հարցը ինքը կտա իրեն հաճախակի, քանի դեռ Աստծո ու ճակատագրի ողորմածությամբ ապրում է, կավայտվեն միտքը, հոգին, զգացմունքը կասկածների ցանցում,

և խոսք չի գտնի ասելու, որովհետև պատասխանը մշտապես կլինի ճիշտ և սխալ:

Հովտում ծանր ու դժվար լռություն իջավ՝ խոշտանգված դիակների ցիրուցան տեսարանով:

Շուտով Սև ջրի գետաբերանից սկսեցին մի առ մի, հետո փոքր ու մեծ խմբերով գալ, հավաքվել արյունոտ սարահարթում, և բերան-բերան մղկտացին, լաց եղան, ողբացին հարագատների ու մերձավորների կորստյան ցավը:

– Քանի՞սն են,– Ներսեսի լեզուն չպտտվեց արտաբերելու սպանվել, վախճանվել, նահատակվել բառերից և ոչ մեկը:

– Երեսունչորսը,– ասաց Վահրամը:

– Որտե՞ղ է Հեթումը, ես նրան չեմ տեսնում...

– Նահատակված է:

– Արա՞մը...

– Նահատակված է:

– Մամիկո՞նը...

– Նահատակ է:

– Ադանացի Ղազարո՞սը...

– Նահատակ է:

– Հակո՞բը...

– Վիրավոր է, Ներսես Ալթուն:

– Ղուկա՞սը...

– Ծանր վիրավոր է:

– Գալշո՞ն... Ո՞ր է Գալշոն, ո՞ր է Գալշոն...

Վահրամը չպատասխանեց, որովհետև գիտեր, թե Ներսեսը որքան էր սիրում ու զնահատում նրան:

– Շավա՞րը...

- Ծանր վիրավոր է:
- Պետո՞ն...
- Վիրավոր է:
- Գրիգո՞րը...
- Նահատակված է:
- Մինա՞սը...
- Նահատակ է:
- Ժիրայր և Գեղամ եղբայրնե՞րը...
- Վահրամը սեղմեց ատամները, որպեսզի չխոսի:
- Ժողովրդի մեջ կա՞ն վիրավորներ...
- Ավելի շատ:
- Այն փոքրիկ տղան, որ իր պես չալպատորիկ շուն ուներ...
- Ողջ է:
- Կիրակոսյան ընտանի՞քը...
- Բոլորը ողջ են:
- Մանգաղ ու փոցխ ուսած Մամփրե՞ն...
- Ողջ է, ողջ է:
- Տեր և տիկին Սիրունյաննե՞րը...
- Էրիզը չկա այլևս:
- Սառա՞ն...
- Ծանր վիրավոր է, չի ապրի:
- Հովակի՞մը...
- Ողջ է:
- Տաճա՞տը...
- Հոգեվարքի մեջ է:
- Վարդանո՞ւշը...
- Կարծես ողջ է:

- Կասպա՞րը...
- Նահատակ է:
- Իսկուհի՞ն...
- Նահատակված է:
- Մարգիս ճանճապանյա՞նը...
- Նահատակ է:
- Քեռի Հմայա՞կը...
- Նահատակված է:
- Շահե՞նը...
- Նահատակված է:
- Սեդրո՞սը...
- Նահատակված է:
- Էվգիենե՞ն...
- Նահատակված է:
- Երվանդ Իկիլիկյա՞նը...
- Նահատակ է:

Ներսես Ալբույանի զգացմունքները դողացին՝ լռի, նոր ամուն չտաս, լռի:

- Էլի կա՞ն...
- Քեզ ո՞վ է հետաքրքրում...

Ներսեսը սարսռաց այդ հարցից և չպատասխանեց: Ահավոր սոսկումից պտտվեց գլուխը, ահավոր-ահավոր սոսկումից սիրտը կարծես մաղ դարձավ, ահավոր սոսկումից հոգին խենթանում էր: Ինչո՞ւ է հարցնում: Ինչո՞ւ այդպես հարցրեց:

Նա հայացք դարձրեց ցիրուցան ժողովրդին: Եվ որոնում էր, և վախենում էր գտնել, և որոնում էր սրտի երկյուղով:

Ոտքերը առաջ-առաջ եղան: Կանգնեց: Դարձյալ գնաց մեկ այս, մեկ այն կողմ: Նա է... Ոչ, նա չէ... Մոտենում էր խումբ-խումբ հավաքվածներին, առանձին մարդկանց և նայում ու չէր նայում, անցնում էր, նայում ու չէր ուզում տեսնել: Աչքերը հատկապես դիերից էին երկյուղում, ինչպես կայծակից. նրանք պառկած էին երեսնիվայր կամ մեջքի վրա՝ ծածկված սառն ու կարմիր լուրթյամբ: Սիրտն ու միտքն ասում էին՝ չնայես, հանկարծ չնայես, հեռացիր, գնա, հեռացիր... Այդուամենայնիվ, բերանքսիվայր քնած դիակներից մեկի մոտ նա կանգնեց, ոտքերը կորացան, սիրտը պապանձվեց, աչքերը սառեցին, նա ծնկի եկավ և դողդոջուն ձեռքերով գիրկն առնելով նահատակի մարմինը՝ դեմքը զգուշորեն, անասարտու սպասումով ու հուսահատ շրջեց իրեն:

Իսկուհին էր:

Ներսես Աթուրյանը բարձրացավ-կանգնեց: Թուլացած ոտքերը, թուլացած սիրտը, թուլացած աչքերը շարժվեցին այս ու այն ուղղությամբ: Ետ եկան: Մոլոր գնացին խմբից խումբ: Նորից անցան դիերի մոտով: Ոչ մեկին չէր հարցնում՝ դու տեսե՞լ ես նրան: Լուռ էին: Հա՛մբ-համբ: Արյունն էր ճշում, գալարվում, բզկտվում, այրվում-այրվում հուսահատության ցավից: Եվ դա, իրեն թվում էր, տեսնում է, զգում, լսում միայն ինքը, միայն ինքը:

– Ես այստեղ եմ, ուսուցիչ...

Լսե՞ց, թե՞ իրեն թվաց:

Մղձավանջից արթնացածի պէս նա դանդաղ ու վարանքով շրջվեց. տեսի՞լ է, թե՞ իրականություն:

– Ես եմ, ուսուցիչ...

– Նանե...– շշմուշակ Ներսեսը և ավելի ցածր, որ ինացավ լոկ իր սիրտը, ասաց.– ողջ ես, ողջ ես...

Արևն արդեն ջերմացրել էր հովիտը՝ տխրամած կանաչությունը, արյունոտ քարերը, սգավոր օդը:

Ներսեսը իր մոտ կանչեց Վահրամին.

– Հրացան տուր Նանեին, թող մեզ հետ միասին ինքն էլ պաշտպանե իր կյանքը:

– Ամենքիս կյանքը, – ասաց Նանեն:

– Մի մեծ փոս փորեցին, հայ նահատակ մարմիններն ամփոփեցին այնտեղ և ծածկեցին հողով:

Ներսեսի ցանկությանը՝ Գալշոյին դամբանեցին առանձնակի, բարձր բլրի վրա և Մգրոն հայրուկի երգով կնքեց նրա անմեռ հիշատակը:

Ջարավանը ճամփա ելավ:

Թուրք դիակները թողին անթաղ, անգղներին կերակուր, որոնք արդեն թևածում էին երկնքում՝ ծանր ու զիշատիչ պտույտներ գործելով:

– Մարդիրոս...

– Ի՞նչ կուզես ինձմե...

– Այբ-բենը գիտե՞ս...

– Այբն ավետիս ազատության, բենն է բողոք դեմ բռնության...

– Ո՞վ սորվեցուց...

– Դպրոցը...

– Կարդալ-գրե՞լ ալ գիտես, ախպերիկ...

- Ամեն բան ալ գիտեմ և կհասկնամ...
- Աֆերիմ, Մարդիրոս...
- Ի՞նչ կուզես ինձմե...
- Կուզեմ ինձի եղբայր ըլլաս...
- Ինձ կսիրե՞ս...
- Զեզ շատ պիտի սիրեմ...

* * *

Մորեներկ մի ձի էր սլանում քարավանի հետքով: Բաշը այրված էր: Հետևի ոտքերը վարից վեր այրված էին և երևում էր խանձված մաշկը: Պռչը այրված էր ամբողջապես: Մեջքին այրուցքներ կային, որոնցից մեկում դողում էր ածխացած կոնքոսկրը: Միայն աչքերն էին փրկվել կրակից, որոնք մարմնի ցավերից խոշորացել և աղաղակում էին անձայն: Եվ սիրտը, սիրտը: Մակայն այդ լուռ աղաղակի, ճիչի, գոչունի, մոնչոցի, խրխինջի մեջ միայն մարմնական կծու տվայտանքը չէր, որ սեղմում էր շնչափողը, այլև այն, ինչ տեսան աչքերը, երբ եղավ լույս առավոտ: Չտեսան: Ահավոր տեսարանից խելագարվեցին: Լցվեցին արյուն-արցունքով: Շանթահարվեցին: Համրացան: Հող ու քար չանգռեցին: Ծառս եղան, պտտվեցին՝ լլկված ոտքերի վրա և փախան... հեռու, հեռու:

Նա դիվահար խրխնջոցով վարձեց քաղաքի փողոցներով և մի տեղ՝ Իզգեթ փաշա ճամփսիի մո՞տ էր, թե՞ Սերայի հրապարակում, ոտքի տակ առավ չադբայով գեղեցիկ դեմքը ծածկած, հպարտ ու տիրակաճորեն անցնող թրքուհուն: Հետևից կրակե-

ցին: Նա չզգաց գնդակի պատճառած ցավը, որովհետև ամբողջ մարմինը ցավում էր: Շուկայի կողքով անցնելիս նրան վրա քշեցին շները, որոնցից մեկը՝ հսկա մի գայլաշուն, առջևի թաթերով կառչեց գավակից և ժանիքը խրեց լերդացած վերքի մեջ: Մարսափելի ցավից թե պաշտպանության բնագողով նա գավակը կտրուկ վերուվարեց և արացիով գետին տապալեց շանը: Շան ոռնոցին խուլ ու անտեղյակ՝ նա մի քանի փողոց ու հրապարակ էլ կրնկակոխ արեց և դուրս ելավ բաց դաշտ:

Նրա դեմքը շոյեց զարման արևոտ ու ձյունաշունչ քամին: Նա վազում էր դաշտի միջով մեկ այս, մեկ այն կողմ, վազում էին աչքերը, վազում էր սիրտը: Հանկարծ ուղիղ դիմացը երևաց Եփրատը՝ ծովի չափ մեծ ու խոռվահույզ: Իր մանկության գետն է: Չիական զգացմունքները սարսառացին՝ իր սկիզբն է և իր վերջը: Որքան կանք և դեռևս ուժ կար հալածական մարմնի մեջ՝ նա սլացավ առաջ. եթե մեռնելու է՝ ուրեմն միայն այնտեղ, եղնգնուտի հետևը, այն ապառաժի մոտ, նրա գրկում: Եղեգները չանգռում էին մարմինը, երբ քառատրոփ անցնում էր նրանց միջով: Նա ժայռը մագլցեց դժվարությամբ՝ սայթաքելով, ողնաշարը գալարելով, վերքերը քսելով սուր և անզգա քարերին: Հասնելով ապառաժի գլուխը՝ նա բարձր խրխիհնջ արձակեց, հետո պրկեց չորս ոտքը, պարանոցը ձգեց վեր, ինչքան հնարավոր էր, թեքեց գլուխը, բացեց սպիտակ ատամնաշարը և ահուդող ռուկներով դարձյալ վրնջաց, կարծես ցանկանալով ճանաչել իրեն և վերջին անգամ լսել իր ձայնը:

Սիրտն ու աչքերը առան մարմինը և ժայռից նետեցին Եփրատի մեջ:

Պղտոր հորձանքը գրկեց նրան և քաշեց իր անդունդը, որտեղ մութ էր՝ ինչպես երազի անկողնում: Ուտքերը ջղածիզ եղան: Մարմինը թուլացավ և պառկեց հատակին: Գլուխը հենվեց քարին: Դունչը հանեց լեզուն և լպստեց ջրիմուռը, որը քաղցրահամ էր: Մի ցուրտ հուզմունք բախեց սիրտը՝ սա վերջ է ու վախճան, և նա ինքն իր մեջ խրխնջաց:

Նա առաջին անգամ հասկացավ, որ ժամանակը անվախճան է, իսկ մինչ այդ անվախճան էին դաշտը, Եփրատը և արևը: Այդ միտքը դանդաղ փոխանցվեց մկաններից, արյանը, երակներից, և մի երանելի զգացմունք, որն անուն չուներ, թեթև ու փափուկ վերմակի պես ծածկեց նրան:

Նա զգաց, որ մահանում է, բայց որևէ փորձ չարեց ապրելու համար: Երբ ջրահորձանքը հառակից խլեց նրան և շրջշրջելով քաշեց վեր, նա նույնիսկ չարացավ ու դժգոհեց, որ ալեկոծ փրփուրների միջից կրկին տեսավ իր արևը, իր Եփրատը և իր կանաչ-կապույտ դաշտը:

Եփրատը նրան խոչ ու խութերին զարկելով արագ տարավ հոսանքն ի վար: Հետո կողերը քսեց առափնյա քարերին, սեղմեց-սեղմեց, կարծես ուզում էր նրանից քանել արյան վերջին կաթիլները: Նրա մտքով չանցավ վրնջալ, թեև բաց-խուփ արեց բերանը, դողացրեց ռունգերը և խրտնած աչքերից կայծ թափեց: Վերջապես կարողացավ փոքր-ինչ շրջել մարմինը, ուտքերին ուժ տալ և նետվել գետի միջին հոսանքը, որ համեմատաբար խաղաղ էր ու ապահով: Մեկ-երկու անգամ նա կարող էր ափ դուրս գալ և մեռնել դաշտում, պայծառ արևի տակ, բայց արյան ձայնը շշմուշոց՝ դա թող կատարվի Եփրատի մեջ:

Նա ծալեց ոտքերը, պարանոցը քաշեց ներս, կծկեց մարմինը, աչքերը կողպեց և զգաց՝ սուզվում է: Բայց այս անգամ նրան վիճակված չէր հասնելու գետի հատակին: Տղմոտ հոսանքը նրան հրեց վերև: Քիչ հետո նա երկրորդ փորձն արեց սուզվելու: Եվ՝ դարձյալ անհաջող: Նա լայն բացեց բերանը, որպեսզի ջուրը խուժի ներս, տիրանա մարմնին, զբաղեցնի իր մեջ դեռևս ապրող կապույտ երկնքի տեղը, ծանրացնի, քարացնի և քարի նման կլլի, կուլ տա իրեն: Մյուս և հաջորդ պահերին նա խոխոաց: Բերանից փրփուր, տիղմ ու արյուն ժայթքեց: Նա զայրացավ ու գարշեց իր մարմնից, որ չի կարողանում խորասուզվել հատակը և ոտները ձգել, գլուխը վայր դնել, սրտի թելը կտրել, շունչը փչել, ոսկորները հանգստացնել, մեռնել-դիհանալ այնտեղ:

Եփրատը նրան քշում էր մի ափից մյուսը, խփո՛ւմ ստորջրյա քարերին, խեղդում հորձանապտույտի մեջ, խլացնում, սեղմում, ոլորում, ջարդում կողոսկրները, հալածում, շնչահեղձ անում, տանջում, խաչ հանում, կարծես ուզում էր նրանից խլել ինքնակամ մեռնելու հնարավորությունն ու իրավունքը...

Երբ նա աչքերի վրայից ծանր կոպերը հեռացրեց, պառկած էր տիղմի մեջ, և Եփրատը լիզում էր իր ոտքերը: Առաջին զգացողությունն այն եղավ, որ մարմնի հրդեհը մարել է:

Հրդեհը մարել էր՝ ավերակված մարմնին կապելով բութ ցավով տնքացող մի մրմուռ:

Եթե նա ձի չլիներ, այդ պահին կարելի էր նրան շփոթել ցանկացած կենդանու հետ՝ արժանապատվությունը նվաստացնելով: Բայց նա ձի էր, և սրտի մեջ ու երակներում տրոփում էր ձիական արյունը, որ զարդարված էր ոսկե հիշողությամբ:

Երբ նա աշխարհում աչք բացեց և Եփրատի մեջ առաջին անգամ տեսավ իր դեմքը, ժպտաց և փորձեց խրխնջալ ուրախությունից, ինքն այնքան նման էր իր հորը և՛ առավել պապին, որին իր կապույտ աչքերը չեն տեսել և չեն հիշում: Դաշտը ծաղիկ էր ու կանաչ, կարկաչում էին զմրուխտ առվակները, ձյուն ու մանուշակ էր լեռնագլուխներին, երգում էին թռչունները: Նա տրտինգ էր տալիս իր անսանձ երամի հետևից՝ շիկավուն աղվամագերն ու կարճ պոչը մեղմանուշ քամուն տված: Պապը նման է եղել հորը և իր պապին, որ իր ապուպապն է: Նա խրխնջաց երեխայի ձայնով, և կուրծքը լցվեց առաջին հպարտությամբ: Ապուպապը շիկավուն ձի էր, կապույտ աչքերով՝ ինչպես իր նախնիք, որոնք սաղմնավորվել էին Աստծո ձեռքով ստեղծված Բարձր Հայքի հող ու ջրից, քամուց, լույս ու արևից, և անհիշելի ժամանակներից ի վեր, երբ աշխարհը դեռևս աշխարհ չէր, անհոգ վարգուս էին այս հեքիաթային դաշտում, Եփրատի ափերին, լեռնահովիտներում, խրխնջում էին արծաթաձայն, ծառս գալիս, կաքավում, սիրում իրար, ինչպես կարող է սիրել միայն ձին, ծիծաղում ուռուցիկ ու շողշողուն աչքերով, լռում, լռում, որի ժամանակ ողորկ մաշկի տակից լսվում էր արյան խտղտացնող սոսափյունը, իսկ գիշերները ծածկվում էին երկնքի աստղազարդ վերմակով և ծնվում էին նոր շիկավուն ու կապտաչյա ձիեր:

Ապուպապը լավ գիտեր իր ցեղի կենսագրությունը և խրխնջալով պատմում էր բուրբին՝ իբրև երգ ու վիպասք, որ ոչ սկիզբ ունի, ոչ վերջ:

Այդ նախապատմական ժամանակներում իրենք պաշտում էին Արեգակը, Եփրատը և Լուսինը: Եփրատը ամենահարազատն էր, ամենամոտիկը, ամենասիրելին, նրա հետ էր իրենցից

յուրաքանչյուրի կյանքը՝ հրաշք ծնունդից մինչև առասպելական մահ: Նա իրենց ոգևորում էր, ապրեցնում, ուժ տալիս արյանն ու մկաններին, գեղեցկացնում առավել, պատսպարում՝ երբ բարկացած աստվածները շանթ ու որոտ էին թափում երկնքից:

Նա դանդաղ ձգեց-երկարեցրեց հետևի ոտքերը, որպեսզի վիրավոր ծնկները խորասուզվեն ջրի մեջ և չմղկտան:

Հագարավոր տարիներ, ամեն գարուն, բրաբիոն ծաղկի արթնացման օրը իրենք ձի էին զոհաբերում Եփրատին: Գիշերը լինում էր մութ և աստղազարդ: Երկինքը ցող էր մաղում: Տիեզերքի անճանաչ հեռուներից ձայներ էին գալիս, որոնք նման էին սրբազան ու խորհրդավոր զանգակների: Չայները կախարդում էին նրանց, շշուկով թափանցում մաշկի տակ և հալվում արյան մեջ: Արյունը սարսռում էր, ինչպես մահվան կամ ծննդի համբույրից: Սարսռում էին աչքերն ու սիրտը և Եփրատի սիրուց ու նրան շուտով զոհաբերվելու հուզմունքից դողում: Դա քաղցր դող էր, մոտիկ ու հարազատ, արցունքի պես վճիտ, որին իրենք արյան անհմանալի զգացողությանը սպասում էին ամբողջ տարին: Կեսգիշերից հետո մի պայծառ ասուպ էր կորագծով ընկնում ներքև և, դաշտին չհասած, հանգչում: Պատմում էին՝ Եփրատը կանգ էր առնում մի քանի ակնթարթ և պահում շունչը: Գիշերը տնքում էր վաղորդյան երազի մեջ: Եվ այդ ժամանակ մեղմիկ շրշալով բացվում էր բրաբիոն կարմիր-սև ծաղիկը:

Արթնանում էր օրը:

Ծագում էր արևը:

Դաշտը ժպտում էր իր օրվան և արևին:

Չիերի երամակը կրճտացնում էր ատամները, կրակոտ աչքերով նայում մոտիկ ու հեռու տարածություններին, մեկ այս, մեկ

այն ուտքով դոփում գետինը և խրխնջալով վարգում: Այդ խրխինջը հրճվանք էր, տխրություն, մորմոք, տազնապ, վիշտ, հաղթանակ, ոգեշնչվածություն, հույս և հուսահատություն, զարմանք, քախիծ, անձկություն, տենդ, հիացմունք, ուրախություն, տեսիլք:

Ականջները սրած՝ վազում էին դաշտի երկայնությամբ, Եփրատի ոլործուն ասիերով: Փողփողում էին քաշերն ու պոչերը: Բերանները շեփորում էին սրտի ալեկոծությունը: Ուտքերը խուլ ու ծանր քնդացնում էին գետինը: Երբ մարմինը քրտնում էր, և քաղցր-աղի կաթիլներն ուլունքաշար էին դառնում վզի շուրջը, հպարտորեն վեր պարզած ճակատին, նրանք նետվում էին գետի զովասուն ալիքների մեջ, որոնք նրանց գրկում էին զավակին կարոտած ծնողի խելահեղ սիրով՝ փրփրում, ծառս գալիս, շառայում: Լողը տևում էր երկար՝ մինչև իրիկնադեմ, երբ լեռների կապույտ ստվերները ծածկում էին դաշտը, և արևը մարում էր: Նրանք, դժվար շնչելով, ելնում էին ասի և շարան-շարան, գլխիկոր հեռանում Եփրատի զոհասեղանից, դանդաղ ձուլվում հետզհետե թանձրացող աղջամուղջին: Գետի ծոցում մնում էր իրենցից մեկը, որին այլևս ոչ ոք չէր տեսնելու, բայց արյան խորքերում, մինչև խոր ծերության հոգեվարքը, պիտի հիշեին նրա կապույտ աչքերը, նրա ձայնը, նրա կաքավաքայլը. նա իրենց մեջ ամենահրաշքն էր, մի զարմանալի ու տարօրինակ էակ, ոչ ոք Եփրատին այնպես նվիրված չէր, ինչպես նա: Եվ նրա մասին շուտով երգ էին հողինելու, չքնաղ մի մեղեդի, որ պետք է հնչեր իբրև հավերժական խրխինջ:

Նա թեթևակի ցնցեց մարմինը և զգաց ուտքերի ներկայությունը, գլխի, մեջքի, սրտի, կրծքի, գավակի, որոնք հառաչեցին խուլ ցավից: Նա դժկամորեն հասկացավ, որ ինքը դեռ կա:

Ինքն ապրում էր, և կար ձիերի իր ցեղի հիշողությունը: Այդ հիշողությունը՝ ապուպապը, կապույտ աչքերով շիկավուն ձիւն, պատմում էր իր որդուն: Նա էլ իր որդուն էր գրուցում: Սա էլ պատմեց իր զավակին, որ իրեն պապ էր զալիս և շատ մման էր կապտաշյա շիկավունին: Իսկ սա իր որդուն պատմեց, որպեսզի նա էլ իմանա իրենց ով և ինչ լինելը և այդ ամենը փոխանցի մի օր աշխարհ եկող իր որդուն: Նա թռչկոտում, վազ էր տալիս իր հոր կողքից՝ ականջը նրա բերանին քսելով, և լսում ոսկե ձիու մասին պատմությունը, որն այնքան իրական էր, կարծես երբեք չէր եղել:

Երբ հազարամյակներ բոլորեցին, ոչ ոք չի կարող ստույգ ասել, թե քանի անգամ ծաղկեց բնությունը, ինչքան երկրաշարժ ու հրաբուխ եղավ, քանի անգամ Եփրատը ողողեց Երզնկայի դաշտը, նրանք մի ոսկե ձի պատրաստեցին՝ իրենցից ամենահերեղենի կերպարանքով, և կանգնեցրին բարձր ժայռի վրա: Սեպուհ լեռը նրան թիկունք էր, իսկ հայացքի առջև հարատև ու անդադրում ընթանում էր Եփրատը: Նրան կարելի էր տեսնել ամեն կողմից, եթե նույնիսկ չէր երևում, թռչչի պատրաստ ազդրերը պրկած, նուրբ ու երկար պարանոցով, լայնկեկ կրծքում կապույտ երկինքը, աչքերի մեջ և բերանում խրխինջի ղողանջներ, որոնք հորդում էին հուզմունքից ձգված մարմնի խորքերից: Շուրջը, մտտիկ ու հեռու, Արամազդի, Միերի, Տիր աստծո, Անահիտի, Վահագնի ու Աստղիկի պաշտելի անդրիններն էին, որոնք, ի տարբերություն ոսկե ձիու, ոչինչ չէին տեսնում, ոչինչ չէին լսում, ոչինչ չէին զգում, այլ լուռ, երկնային ինքնահաճությամբ նայում էին իրենց ներսը: Ոսկե ձիւն Եփրատին էր նվիրված, Երզնկայի դաշտի պատվին էր, ամբողջ Բարձր Հայքի, որն իրեն շրջապատող մշուշապատ լեռնաշղթաների, անդնդախոր ձորերի, փրփաբաշ ջրվեժների, ծաղ-

կավետ հովիտների հետ արդեն կոչվում էր Հայաստան արտասովոր ու զարմանալի անունով: Այստեղ ապրող թռչունները, ձիերը, գազանները, մարդիկ հայ էին: Արեգակը, աստղերն ու լուսինը՝ նույնպես: Հայ էին քարերը, ծաղիկները, հողն ու երկինքը, ձյունն ու անձրևը, գետերը, ամպերը: Բոլորը խոսում էին հայերեն: Ի սկզբանե էր բանը և բանն էր հանճարեղ: Հայերեն էր խրխինջը, որոտը, կարկաչը, մռնչյունը, լացը, աղաղակը, մայունը, դայլալը, ծիծաղը, հառաչանքը, սոսափյունը, շառաչը:

Ոսկե ձիւն ոչնչով չէր տարբերվում իսկական ձիուց. նրանց պես բոցեղեն էր՝ կրակ ու բոց էին աչքերը, թվում էր՝ հիմա կառկվի ժայռից, կխրխնջա և կվարգի դաշտով: Ավելին. ոչ թե նա էր նման իրենց, այլ իրենք էին նման նրան: Եվ որքան դարերը գալիս, անցնում էին, այնքան խորանում էր այդ նմանակերպությունն անբավ աշխարհի, անեզր ժամանակի տեսողության առջև:

Հետո եղավ մեծ երկրաշարժ և հրաբխություն: Ճեղքվեց հողը: Փլվեցին-փռչացան լեռների գագաթները և ծնվեցին նոր կիրճեր, քարափներ, անդունդներ: Եփրատը մահացու խայթածի պես դողաց, տակն ի վեր դարձավ և փռխեց հունը: Գետնի ընդերքն անցան շնչավոր և անշունչ էակները, նաև՝ ոսկե ձիւն: Պատմում են՝ կատաղի անձրևն ու չար ամպրոպը յոթ օր ու գիշեր մտրակեցին Երզնկայի դաշտը: Հաջորդ պահին սգավոր լուսնուն տիրեց ամեն կողմ: Կարծես ամեն ինչ մեռավ: Վերջ: Բայց շուտով երգեց թռչունը, խրխնջաց ձիւն, շարժվեց խոտը մեղմ ու հարազատ շրշյունով: Դա նոր սկիզբ էր, որ արդեն գնում էր իր վախճանին:

Հեռու անապատներից, որտեղ աշխարհի օձերն ու կարիճներն էին բույն դքել, հոտոտելով, սողեսող, նենգորեն եկան

նրանց ժառանգները՝ գորշ գայլերի և շերտավոր բորենիների ցեղերը: Նրանք թունավոր խայթոցներով հալածում էին ձիերին, հոշոտում, փորձում նրանց հոգում տնկել իրենց պաշտամունքը՝ ատելության ու չարության ծառը, որի պտուղը եթե ճաշակում էիր, արյունդ իսկույն որակափոխվում էր. նախանձի թույնը, բարբառոսությունը, դաժանությունը, խարդավանքը, անգթությունը, չարադավությունը, արյան ծարավն էր համակում քեզ: Աչքերդ գազանանում էին: Միրտդ անմեղ զոհ էր որոնում: Երակներդ լցվում-հագեցնում էին օձի լեղիով: Դու դառնում էիր գայլ՝ հաճախ ավելի գորշագույն, քան գորշ գայլը: Շատ ձիեր վերածվեցին գայլ ու բորենու և խառնվեցծին նրանց ռեմակներին: Մեծամասնությունը, սակայն, մնաց ձի՝ ինչպես Աստված նրանց ստեղծել էր: Ոսկե ձին վաղուց չկար այլևս, բայց ապրում էր նրա առասպելը:

Նա շարժեց մարմինը, ոտքերը քաշեց Եփրատի շուրթից, վիզը ձգեց-գալարեց և լեզվի ծայրով հասավ իրեն ժպտացող հոտավետ դեղնածաղկին:

Բարձրահասակ, գեղեցիկ դեմքով, արագուշարժ մի երիտասարդ կար, որ վայրի ձիեր էր որսում, ստրկացնում սանձ ու թամբին և վաճառում մարդկանց: Նա ամբողջ ամառը հետապնդեց իրեն. մեկ իր կապտասև վարգաձիուն հեծած՝ սլանում էր կրնկակոխ, ջանալով օձագալար պարանի օղակը գցել վզին, մեկ ծուղակ էր լարում, մեկ կտրում էր ճանապարհը և մեղմ ու քաղցր խոսքերով փորձում մտերմանալ, բայց իրեն միշտ հաջողվում էր փախչել-ազատվել նրանից: Իրեն թվում էր՝ դա զվարճալի խաղ է: Մի անգամ, լավ հիշում է, նա նույնիսկ թռավ իր մեջքին և ուզեց բերանին սանձ դնել: Ինքը խրխնջալով ծառս եղավ, պտույտ եկավ

հետևի ոտքերին և ընդոստնելով նրան գետին տապալեց: «Հրեղեն է»,— լսեց իր հետևից նրա ցասկոտ ու հիացական խոսքը:

Իր հրեղեն ժամանակն էր: Աչքերը կապույտ բոց էին: Արյունը եռ էր գալիս շիկավուն, ողորկ մաշկի տակ: Մկանները թրթռում էին յուրաքանչյուր քայլափոխի հետ: Նա կարող էր առանց շնչահեղձ լինելու վարգել դաշտի մի ծայրից մյուսը, Եփրատին դեմընթաց լողալ, թռչել Սև անդունդի վրայով, երբ ուրիշները գահավիժում էին և նրա զարհուրելի երախում գտնում իրենց մահը: Նրա խրխիհնջը նման էր գարնան ամպրոպի:

Այդ օրը, երևի, նա հաստատ որոշել էր սանձահարել իրեն:

Գիշերը անձրև եկավ, իսկ առավոտյան ամբողջ դաշտը թանձր մշուշի մեջ էր: Նույնիսկ արևը չկարողացավ մշուշները ցրել: Այդ օրը արևը չերևաց: Կեսօրին սարերից խիտ ամպեր իջան, և երկինք-գետինը ավելի մթնեց: Լռություն էր ամեն կողմ: Նա, դանդաղ փոխելով ոտնաքայլերը, դունչը ստեպ-ստեպ քսելով խոտ ու ծաղիկներին, գնաց դեպի Եփրատը, որը մոր ձայնի պես անուշ խշշում էր ականջներում: Եղեգնուտի մոտ զգաց, որ օձակերպ մի բան սուլեց ուղիղ աչքերի առջև և արագ փաթաթվեց պարանոցին: Նա դիվոտած ծառու եղավ և ետ-ետ գնաց՝ ազատվելու այդ օձից, բայց օձն ավելի ամուր սեղմեց վիզը: Գեղեցիկ տղան էր կանգնած իր առջև, պարանը երկու ձեռքով ամուր բռնած, և ցնծալից, հաղթական ծիծաղում էր: Իր ներսում ճողփաց ատելության այլքը տղայի հանդեպ, ոչ միայն այն պատճառով, որ նա կապել է իրեն, այլև նրա համար, որ դա արեց այդպիսի խարդախությանը՝ նենգորեն դարանակալելով, գաղտագողի սպասելով մի հարմար պահի, ստորաբար օգտվելով ամպ ու մշուշից՝ ինչպես գայլը: Մի՞թե կարելի է խաղն այդպես փչացնել:

Նա չափ ընկավ այս ու այն կողմ՝ ուր մշուշոտ աչքը կտրում էր: Սկզբում պարանի օղակը չէր սեղմում վիզը, որովհետև տղան վազում էր իր կողքից: Երբ նա հոգնեց ու հետզհետե ետ մնաց, օղակը սկսեց ցավեցնել: Շուտով ցավը դարձավ սուր ու տանջալից, ասես սրոցում էին պարանոցը, բայց նա կանգ չառավ, գիտեր, որ փրկվելու համար պետք է վազել: Քիչ հետո նա լայն բացեց բերանը, քթանցքները ծռռեց, շատ ուզեց խրխնջալ՝ դուրս ածելու մարմնի ներսում կուտակված արդարացի, բնական ու անմեղ մոլեգնությունը, բայց միայն ծանր ու անկապ խռնչոց ելավ: Տղան ուժասպառ ընկավ գետնին, բայց պարանը ձեռքից բաց չթողեց: Այնքան մեծ էր հաղթելու տենչանքը, որ նրանցից ամեն մեկը դրա համար պատրաստ էր մեռնել: Պարանոցի երակները տաժանորեն պրկած՝ նա քաշում էր ժառի պես ծանր տղայի մարմինը դաշտի միջով: Արդեն չէր վազում, քայլում էր՝ ապավինած պարանոցում տրոփող տաք արյանը և վերջին շնչին: Նա մի անասելի ցավ և մահացու խեղդուկ զգաց կոկորդում: Թեև սիրտը չէր ուզում՝ կանգ առավ: Սկզբում առջևի ձախ ոտքը ծալվեց, հետո՝ մյուսները: Եվ նա փուլ եկավ կողքի վրա:

Աղջամուղջ էր, երբ բացեց աչքերը: Օղակը պարանոցին էր, բայց արդեն ցավ չէր պատճառում: Գեղեցիկ դեմքով տղան շոյում էր մեջքը, ճակատը՝ մեղավորի սիրով ու խղճահարությամբ: Ինքը հսուկացավ, որ պետք է կանգնի և գնա նրա հետևից ի քաղաքն Երզնկա, որ մեկ-երկու անգամ տեսել էր շատ հեռվից և երբեք չէր եղել այնտեղ: Նա տակավին չգիտեր՝ դա ինչ է նշանակում, միանտաքար կարծում էր, թե խաղի շարունակությունն է:

Նա կուլ տվեց քաղցր դեղնածաղիկը և, գլուխը բարձրացնելով, նայեց դաշտին ու լեռներն ի վեր:

Տղան ներս տարավ նրան ընդարձակ ախոռը, որ գերաններով բաժանված էր մի քանի մեկուսարանների, և թեթևակի, ասես ներողություն խնդրելով, հրեց դրանցից մեկի մեջ: Քիչ հետո բերեց չոր խոտ, մի դույլ ջուր և գնաց: Պարանի օղակը դեռ վզին էր, իսկ ծայրն արդեն կապված էր հաստ, կանգուն գերանին: Խոտն անհամ էր, այնտեղ չկար իր սիրած ծաղիկներից և ոչ մեկը: Ջուրը դառն էր ու ճահճոտ, և նա այրող պապակ զգաց Եփրատի կարոտից: Ախոռում ձիեր կային, բայց ինքն ուշադրություն չդարձրեց նրանց վրա:

Դա իր առաջին անսովոր գիշերն էր: Ամեն ինչ խորթ էր, սառն ու օտարոտի: Մի ձի փռնչում էր: Մյուսները լուռ էին, հաշտ ու խոնարհ իրենց ճորտական վիճակին: Նա զայրալի դոփոփեց գետինը բոլոր ոտքերով, ըմբոստորեն խրխնջաց, բայց ոչ ոք չարձագանքեց նրան: Իր և երկնքի միջև առաստաղի գերաններն էին և խիտ հյուսված եղեգնատանիքը: Այդ եղեգները նա ինչ-որ տեղ տեսել էր կարծես, լսել նրանց շնկշնկոցը վաղորդյան մեղմ քամուց: Որտե՞ղ էր տեսել, ե՞րբ, որտե՞ղ, երբ... Անձրև էր գալիս, որը նրան հիշեցնում էր հարազատ դաշտը:

Տղան եկավ առավոտյան և, առանց մյուսներին նայելու, մոտեցավ իրեն: Որքան տխուր էր ինքը, այնքան նա ուրախ էր: Ոգևորված շոյեց բաշը, տաք ձեռքով թփթփացրեց մեջքին, մույնիսկ ջերմեանդ համբուրեց ճակատը, բայց պարանի օղակը վզից չհանեց: Նա անվերջ խոսում էր, որից ինքը ոչինչ չէր հասկանում: Այդ բառերը դեռ օտար էին իրեն և նման չէին իրենց՝ ձիերի լեզվին:

Մոռացիր դաշտդ, լեռներդ ու գետդ, - ասում էր տղան, - հրաժեշտ տուր խենթությանդ, սերերիդ, ազատությանդ: Ջաղա-

քակրթվիր, նմանվիր սրանց, դարձիր բեռնածի: Մոտեցիր մարդկանց, հաշտվիր նրանց հետ, ծառայիր նրանց կարիքներին: Ես քեզ կտվորեցնեմ ինչպես դա պիտի անել: Նախ և առաջ քո մեջ խեղդիր, խլացրու-խլացրու, սպանիր վայրենաբարոյությունը: Ես քեզ կօգնեմ, եթե դրա համար անհրաժեշտ լինի քեզ ձողկել, մեջքդ փորից կակուղ դարձնել, մտրակահարել, մի՛ նեղացիր, խնդրում եմ, քո շահը այդպես է պահանջում: Զո շահը պահանջում է նոռանալ անցյալը և վերադառնալ ներկային: Եվ որքան շուտ՝ այնքան լավ երկուսիս համար: Ես քեզ վաղուց էի նկատել երամակի մեջ և արդեն սիրահարված էի քեզ,– ասում էր նա:– Ես քեզ սիրում եմ, դու երիտասարդ ես, գեղեցիկ, ուժեղ, երեկ քիչ մնաց ինձ սպանեիր, բայց ես չեմ նեղանում, ես քեզ իրավ սիրում եմ: Բայց եթե պետք լինի, եթե ինձ ստիպես, ես քեզ կծեծեմ, հասկանո՞ւմ ես, կհասցնեմ մահվան դուռը և ետ կբերեմ, դու դեռ չգիտես ինչ է դա նշանակում: Մենք պիտի ջանանք արագ և առանց իրար նեղացնելու անցնել այս օրերը, դա քեզանից է կախված, միայն քեզանից: Հետո ես մեջքիդ թամբ կդնեմ, թամբը թեթևացնում է բռնը և մեջքը պաշտպանում կոշտ շփումներից, որոնք ամնկատելի քայքայում են մաշկը և երբեմն շատ ցավոտ վերքեր առաջացնում: Դու կսկսես ծամել սանձի երկաթե լկամը: Սկզբում դառնություն և խիստ անհարմարություն կլինի, սակայն ատենոք, կանաց-կամաց, քաղցրություն կզգաս, երբ լկամը կծածկվի լեզվիդ փրփուրներով: Մի՛ շտապիր, սմբակներդ կնալենք ավելի ուշ, այդ երանելի օրն էլ կզա: Ի՞նչ ես ուզում դառնալ... բեռնածի՞, կրկեսի՞ ձի, թե՞ վարզածի... Լավ, դա թող որոշի իմ քավոր Արմենակ Սեփեճյանը, ես քեզ նրա համար եմ որսացել: Երեկ գիշեր ես նրան հայտնեցի, որ դու արդեն այստեղ ես: Արմենակը շատ

պատվական և առաքինի մարդ է, նա տենչում է քեզ նման մի ձի, որը կհսով չափ լինի նաև հեքիաթ, ոսկե ձի կամ տեսիլք: Դու հենց այդպիսին ես էությամբ:

Ինքը խածնելու չարացած շարժում արեց:

Դե՛, դե՛... Տղան ետ-ետ գնաց, նույնիսկ վախեցավ:

Նա ախոռի ձիերը քչեց բակ: Իր հետևի ոտքերը, կոճերից քիչ վերև, շոթայի զարկեց, գերանից քանդեց պարանը և իրեն էլ քաշեց-տարավ դուրս:

Իր արևն էր ծագել: Նա բացեց բերանը և զիլ ու պայծառ դողանջներով խրխնջաց արևին ու նրա համար:

Բակի մեջտեղում երկաթե սյուն կար, և տղան պարանի ծայրը քարկապ արեց նրան: Բակն ընդարձակ էր՝ շրջափակված հաստ գերաններից շինված հասակաչափ պարսպով: Իրեն անսահման զարմանք պատճառեց, իր ձիական սիրտը մինչև իսկ զայրացավ, ատամները կրճտացին, որ առանց պարանի, ոտքերին շոթա չունեցող ձիերը հաշտ ու խաղաղ կանգնել կամ քայլում են ծուլորեն, չեն թռչում պարսպի վրայով դեպի իրենց դաշտը, իրենց լեռները, դեպի իրենց Եփրատը, որի ձայնը թեև չի լսվում, բայց օդի մեջ կա, թրթռում է նրա շունչը: Բերանը պատռվելու աստիճան բացվեց, քթանցքները լայնացան, կուրծքը մեծացավ, և նա զգաց, ինչպես այդ շունչը դուրեկան տաք ու հով արեց թոքերին:

Նա ազատ ոտքերով քայլ-քայլ էր անում, իսկ շոթայվածներով՝ ցատկոտում, և դա, ծիծաղելի լինելուց առավել, ցավալի էր ու նվաստացուցիչ: Այդպես՝ երկու թե երեք շրջան գծեց պարսպի հարևանությամբ: Արյան թելադրա՞նքն էր, թե՞ սրտի պահանջը. նա բարձրացրեց աջակի ոտքերը, հետևի ոտքերից ուժ առավ և

վեր-վեր ոստնեց: Պարանի օղակը սուր ցավ պատճառելով ետ քաշեց վիզը: Նա կրծքով խփվեց պարսպին և վայր ընկավ:

Տղան, որ հեռվից հետևում էր իրեն, քահ-քահ ծիծաղեց:

Բարձրանալիս՝ նա մեջքին և ազդրերի վրա զգաց մտրակի կծու խայթոցը:

Նա ժամանակը իմանում էր տարվա եղանակներից. երբ հարվում էին ձյուները, և դաշտը կանաչ ու ծաղիկ էր հագնում, լինում էր շոգ ամառ և քաղցրանում էր Եփրատը, հետո ամեն կողմ տարածվում էր մեղմ ու բարի աշունը, որ իր ամենասիրելին էր, ապա երկինք-գետինը դարձյալ ծածկվում էին ձյան վերնակով, և ցուրտ ու տխուր մենակությունն էր տիրում իրեն: Իսկ հիմա նա չիմացավ, թե քանի շաբաթ ու օրեր եկան-գնացին:

Նա այն ձիերից չէր, որոնք հեշտությամբ գլուխ են խոնարհում ուժի առջև ու հաշտվում ստրկության հետ: Տղան դա շուտով հասկացավ և սկսեց նրան խարազանել, որ երբեմն, հատկապես կատաղության պահերին, հասնում էր ինքնանոռաց ու կույր դաժանության: Նա պարանի օղակը վզից հանեց, բայց շղթայեց նաև առջևի ոտքերը:

Մեջքին արդեն թամբ կար, իսկ լեզվի վրա՝ սանձի լկամը: Նա այնպես ուժեղ էր սանձը ձիգ տալիս, որ բերանը քիչ էր մնում պատռվեր: Նա իրեն ստիպում էր դանդաղ ու հնազանդ քայլել բակում, հետևից քաշ տալ ծանր սայլը, որը լցված էր անպետք իրերով: Դանդաղ-ը բավականին լավ ստացվում էր, դրան օգնում էին ուղի շղթաները, որոնք թույլ չէին տալիս արագ ու լրիվ քայլ զգել, սակայն իրեն ոչ մի կերպ չէր հաջողվում խոնարհություն ցույց տալ: Թեև զայրանում էր, մռայլվում, դողում ամբողջ մարմնով, բայց գոհ էր իր հպարտությունից: Նա վրնջում էր ցասումով

լի, խաժնում ողորմելի ձիերին՝ արտահայտելով իր ատելությունը նրանց հանդեպ, մի անգամ նույնիսկ շուռ տվեց սայլը, որի համար տղան իրեն գանահարեց անխղճորեն: Իսկ այդ դեպքից ութ օրեր հետո ինքը նրան թամբից տապալեց գետին, ուզեց ոտքերի ու շոթաների տակն առնել, սակայն նա վերջին ակնթարթին կարողացավ շուռուճուռ գալով դուրս պրծնել իր տակից:

Նրա վիրավոր մարմինը կանգնեց դաշտում, օդի մեջ զգաց քարավանի հոտը և Եփրատից դանդաղ ու մոլորված շուռ եկավ: Զարավանը կանչեց նրան:

Կեսօր էր, երբ տղայի ուղեկցությամբ բակ մտավ մի մարդ: Ինքը ենթադրություն արեց, որ դա Արմենակ Սեփեճյանն է և եկել է իր հետևից: Եվ չսխալվեց: Դեռ հեռվից Արմենակի աչքերը փայլեցին, դեմքը զարմանք-հիացմունքից երկարեց, երբ տեսավ իրեն:

– Օհո՛, սովորական ձի չէ կարծես թե...

Նա, հայացքը իրենից չկտրելով, մոտեցավ, մի քանի անգամ սլտտվեց շուրջը, ձեռքը հուզաթաթավ սահեցրեց մարմնի վրայով, խառնեց բաշը, ինչպես սիրած երեխայի գանգուրներն են խճճում, շոյեց կուրծքն ու ազդրերը՝ իր ամեն քայլն ու շարժումն ուղեկցելով զմայլական բացականչություններով:

– Ծո տղա, նկարագրածիդ հազարապատիկն է անտարակույս, ինչպե՞ս կարողացար ձեռք օգել աս ոսկե ձին, ճիշտ իմ տեսածն է, ճիշտ և իրավ երազանքս է: Ինչպե՞ս, ինչպե՞ս ձեռք օգեցիր, մաշալա: Որքա՞ն վճարելու եմ...

– Մրտիդ չափով:

– Միրտս աշխարհ կկռես, սակայն չպիտի զոջամ բնավ, սանքի աս ձին ոսկուց ալ անգին է և անկռելի:

Նա քսակն ամբողջությամբ դատարկեց տղայի բռան մեջ:

– Հույս ունեն մեկ-երկու շաբաթեն առողջ-փառող հանձնել քեզի:

– Ո՛չ, հիմակ կտանեն:

– Վտանգավոր է, կփախչի:

– Եթե փախչելու է՝ Աստծո կամքն է: Քակիր շղթաները:

– Լավ մտածե, քավոր:

– Ինձի խեղճ կտրվեցնես:

– Կզգուշացնեն իբրև հարազատ:

– Ատանկ խոսք մտիկ ընելու ախորժակ չունիմ:

– Ինքդ քակե, այս պահեն սկսյալ ձին քոնն է:

– Փողերեդ կվախնաս, անիրավ,– զվարթ ասաց Արմենակ Սեփեճյանը,– և աս ոսկե հոգին շղթաներու մեջ կպահես:– Նա ծնկի իջավ և քանդեց նախ առջևի, հետո հետևի ոտքերի շղթաները:– Անիծվի ան օրը, երբ քեզի քավոր կարգվեցա:

Շղթաների ստրկությունից ազատվելով՝ ինքը դոփոփեց գետինը, ծառս գալով խրխնջաց և ուրախ ու թճթև վարգեց ցանկապատի շուրջբուլորը՝ հիացմունքի նոր ալիք առաջացնելով Արմենակ Սեփեճյանի հոգում:

– Կկարծեի հայ քրիստոնյա ես, բայց գազան ես, գազանեն ալ վատթար, որ ասանկ հրաշքը կտանջեիր բիրտ շղթաներուն մեջ, հիմակ կտեսնիմ ինչ ծնունդ ըլլալդ: Երկաթե վանդակ մը պիտի շինել տամ, քեզի անոր մեջ ամփոփիմ ցկյանս, դռնակը ծանր փականքով զմտսելու եմ, բանալին ալ միշտ խոր գրպանս պի ըլլա, սանքի դուն անչափ վտանգավոր ու սադայնլական երևույթ մըն ես ձիրերուն ու մարդոց համար:

Չին խլտացրեց ականջները, մարմինը եռեփ եկավ, և ցառկեց ցանկապատից անդին:

– Ամա՛ն...

– Կտրե ստոր ձայնդ, ան քեզնե կփախչե...

Նրանք վազեցին դուրս: Չին շփոթված կանգնել էր փողոցի մեջտեղում և մեկ այս, մեկ այն սմբակով, հուզմունքից խռովված, ճանկառում էր հողը:

Արմենակ Սեփեճյանը մոտ գնաց և չգարմացավ, որ ձիւն փախչելու որևէ շարժում չարեց:

– Կուգես գնա քո դաշտը, ձերիմներուն քով,– ձիւն ճակատն ու պարանոցը շոյելով շշուջաց նա,– ինքդ ընտրե սեփական ճակատագիրդ: Արդեն ես երջանիկ եմ, որ քեզի նորեն տեսա:

Նա շրջվեց և հեռացավ:

Ինքը հետևեց նրան:

Նա չբանտարկեց իրեն մութ ախոռի մեջ:

Վզին պարանի օղակ չհագցրեց:

Չշոթայեց:

Բեղանը չդառնացրեց լկամով: Նույնիսկ թամբ չդրեց մեջքին:

Ինքը մի անդամն էր նրա ընտանիքի՝ ինչպես մեծ մայրիկը, մեկ-երկու-երեք աղջիկները, կինը, որի անունը Աստղիկ էր:

... Այդ պատմությունը նա իմացավ ավելի ուշ: Մի քանի տարի առաջ Արմենակ Սեփեճյանը գնաց Սեպուհի անտառուտները՝ վայրի խոզ որսալու: Խաղաղ ու պայծառ ժամ էր: Բայց, անսպասելի, աշխարհը շրջվեց: Ուժեղ քամի բարձրացավ: Հսկա ծառերը ճարճատեցին: Երկինքը մթնեց օր ցերեկով: Ըանթեցին կայծակները: Խփեց տեղափոխարարի անձրև: Մամր քարեր զլորելով՝ գոռգոռացին հեղեղները: Բնության ահեղ ու անսամձ տարերքից ա-

գատվելու համար նա վազեց զառիվայրներով՝ չիմանալով որ կողմ և դեպի ուր:

Հանկարծ ոտքերի տակ գետինը պատռվեց, և նա ընկավ խոր փոսի մեջ: Աչքերին չհավատաց՝ երազ էր, խաբկանք, ձի էր իր կողքին: Չեռքերը դողողալով շոշափեցին առաջ ու վեր մեկնված ոտքերը, գլուխը, կուրծքը, մյուս ոտքերը, որոնք մինչև ծնկները թաղված էին հողում, վախվորած անցան ողորկ մեջքի վրայով, որը սառն էր: Չին մեռած էր, բայց շողում էր ոսկու փայլով: Արձա՞ն է, թե՞ ձի, իրականություն՞ն է արդյոք, թե՞ առասպել, գուցե աստվածային տեսի՞լք, զառանցա՞նք, հիվանդ երևակայության ակնթարթային բռնկո՞ւմ, ամպ ու մշո՞ւշ՝ բնության արկրկնելի ու խենթ տարերքի շարունակությունը, որ մի պահ հետո ցնդելու է և այլևս գոյություն չի ունենալու երբեք: Մի՞թե ոսկի է,– կայծակեց Արմենակ Սեփեճյանի գլխում, աչքերի մեջ, սրտի պատին, որը, թվաց, ճաք տվեց հուզմունքից: Նա հանեց որսորդական դանակը, որ կախված էր կաշեգոտուց, և սուր ծայրով փորձեց ձիու պոչից մի փոքրիկ կտոր փրցնել: Նա աշխատեց երկար ու անդադրում: Փոթորիկը շարունակվում էր նոր ուժգնությամբ: Հետո քարձրացավ փոսից, աչքերով մտքում դրոշմեց շրջակայքը և ուժասպառ ու թրջված վերադարձավ քաղաք, երբ մութ գիշեր էր արդեն:

Պատմում էին, ինչպե՞ս չհավատալ, Արմենակ Սեփեճյանը ծանր հիվանդացավ և օր ու գիշերներ զառանցեց. ա՛խ, ձի... ա՛խ, ձի... ա՛խ, ձի... Եվ հրաշք էր, որ չմեռավ, Աստված պահեց նրան իր մոր ու հարազատների համար:

Երբ ապաքինվեց, առաջին գործը եղավ զնալ շուկա, բարեկամ ոսկերիչի մոտ, որի փորձառությանը հավատում էր անսահմանորեն:

Օննիկը ձեռքն առավ փայտուն մետաղը, կծեց սեղանատամներով, տաքացրեց ու սառեցրեց, չափեց ու կշռեց, ասեղով մի քանի զիծ քաշեց վրան, խորասուզեց ինչ-որ հեղուկի մեջ, սնդիկ քսեց, մաքրեց անմիջապես, ուշադիր զննեց խոշորացույց ակնոցով և գոհ-երջանիկ ժպտաց:

– Ասքան որակյալ օսկի կյանքիս մեջ տեսած չեմ: Բացարձակապես անխառնուրդ է և ազնիվ: Ուրդեղե՞ն ձեռքդ անցավ:

– Քեզի ի՞նչ:

– Չքնաղ մադնի պի շինեմ քեզի համար:

– Չեմ ուզեր:

– Է, ծախե ինձի:

– Շատ լավ կգիտակցիմ աղվես ըլլալդ:

Նույն օրն իսկ Արմենակն ուսով արեց հրացանը, իբրև թե որսի է զնում, առավ դրկից հորեղբորորդու բեռնաձին և արագ քշեց անտառ: Լուռ էր անտառը: Կապույտ էր երկինքը: Ճավողում էին անտես թռչունները: Ծիծաղում էր արևը: Ծաղկաբույրով էր լցված օդը: Սեպուռի անտառուտը և զառիթափերը դրախտ էին հիշեցնում, կարծես ընդամենը մի քանի օր առաջ բնությունը չէր ալեկոծվել, երբեք չէր եղել սոսկալի փոթորիկը և երբևիցե չէր լինելու: Բավականին մոտ խոնչաց ու փախավ վայրի խոզը, բայց նա ուշադրություն չդարձրեց: Քարերը, ծառերի արմատները, կածանները, ձորակները, ապառաժները, մասրենու թփերը, ամեն-ամեն բան, ինչ կար երկրիս երեսին, նայում էին հազարամյակների խորքից՝ իրենց անսասանելի, կայուն ու հավերժական

դիրքով: Ոչ մի նշան չկար, որ հիշեցներ ծանոթ տեղանքը: Հրաշք փոսը չէր հայտնվում: Չկար ոսկե ձին:

Այդ օրը նա գիշերեց անտառում և տուն վերադարձավ միայն հաջորդ երեկոյան՝ հոգնած, մռայլ ու հուսաբեկ:

Սակայն հետևյալ առավոտյան նա կրկին գնաց այնտեղ և թափառեց ամբողջ օրը՝ որոնելով իր հիշողության մեջ դրոշմված գոնե մեկ պատկեր, որը նրան կմտտեցներ ոսկե ձիու կացարանին:

Շաբաթ անցավ: Անցան շատ օրեր: Ոսկե ձին անհետացել էր այնպես, ինչպես որ մի ժամանակ հանկարծակի հայտնվել էր: Հեղե՞ղը քար ու տիղմով ծածկեց նրան, ի՞նչ եղավ, շունչ ու ոգի առնելով ո՞ր գնաց: Եվ մի հարց հետզհետե ավելի ու ավելի էր տանջում Արմենակ Մեփեճյանի միտքը, քաշքշում զգացմունքները, տառապեցնում կյանքը. ներկայումս նա կա՞, թե՞ չկա, ցնդել-անչացե՞լ է, գոյություն չունի՞ արդեն:

Նա շարունակեց որոնումները մինչև դեկտեմբեր, երբ ճամփաները ծածկվեցին խոր ու անանցանելի ձյուներով:

Գիշերները նա հաճախ երազ էր տեսնում և երազի մեջ ձայն տալիս. ա՛խ, ձին... ա՛խ, ոսկե ձին... ա՛խ, ձին...

Գարունը ոչ մի նորություն չբերեց, ինչպես նաև՝ շոգ ու երկար ամառը: Նրա ալեկոծված հոգին կամաց-կամաց խաղաղվեց, քայց ոսկե ձիուն չմոռացավ:

Որտեղ նստում, վեր էր կենում, պատեհ-անպատեհ ամեն ժամանակ պատմում էր ձիու մասին մի այնպիսի ոգևորվածությամբ, կարծես ընդամենը մի քանի բռպե առաջ կամ երեկ էր տեսել նրան: Չայնը դողում էր հուզմունքից, աչքերը երջանկորեն փայլում էին, երևակայությունը նրան պատկերելու հասար փնտրում էր ամենազեղեցիկ ու արտակարգ հատկանիշները և

գտնում էր միշտ: Շատերը հավատում էին, որ ինչ-որ տեղ ապրում է ոսկե ձին և խրխնջում, ծառս գալիս, հողմի պես սուրում Եփրատի ափերով: Իսկ շար ու շարակամ մարդիկ, մախանձները, բանսարկուները, հոգով աղքատները, տգեղները, օձի կծածները, ապերախտները, պատվից զրկվածները, քինախնդիրները, շան կաշի երեսները, բթամիտները, հացկատակները ձեռ էին առնում նրան և լեզու-բերան ծռնալով: Նրանց վրա որևէ տպավորություն չէր թողնում նույնիսկ ոսկե մասունքը, որը նա հանում էր գրպանից և ցույց տալիս իբրև պատմության վկայություն ու փաստարկ:

Նա կարող էր խենթանալ այդ մարդկանց վերաբերմունքից, եթե արդեն խենթ չլիներ ոսկե ձիու սիրուց:

Այդ ժամանակ էլ նա իր սանիկին պատվիրեց մի հրեղեն ձի որսալ, որը «աս անբախտ աշխարքիս վերա» փոխարինի իր հոգում ապրող ոսկե ձիու պատկերին:

Ինքն այդ հրեղենն էր:

Արմենակ Սեփեճյանն ուր որ գնում էր՝ իրեն տանում էր հետը: Մի քանի շաբաթից ամբողջ Երզնկան տեսավ ու ճանաչեց իրեն: Բոլոր նրանք, ովքեր կոչվում էին մարդ, զմայլվում էին իրենով: Երբ նա անցնում էր փողոցով, մարդիկ կանգնում էին և հիացած ասում. ոսկե ձին է: Շուտով իրեն սիրահարվեց բովանդակ Եկեղյաց գավառը: Գալիս էին մոտիկ-հեռու բնակավայրերից և Արմենակին խնդրում-աղաչում վաճառել ձին, առաջարկում էին բերքատու այգիներ, առատ ոսկի, տնային կենդանիներ: Արմենակը երջանիկ ժպտում էր.

– Միրտը կծախվի՞, աչքերը կծախվե՞ն, ջիգյարը կծախվի՞:

Տեսները համառում էին.

– Կծախավի, ինչո՞ւ ոչ:

Այդ խոսքի վրա Արմենակ Սեփեճյանը բղավում էր.

– Սեր չունեցող մարդը էջ է, կհասկնա՞ս, ես իշու մը ձի ծախող չեմ:

Քանի՜-քանի անգամներ փորձեցին իրեն հափշտակել:

Մի գիշեր դյուրական երա՞զ տեսավ, ապուպապի կապույտ աչքե՞րը կանչեցին, զինու պես թունդ արյո՞ւնը եռաց, ցեղի զրնգուն ձայնե՞րը կախարդեցին հեռվից. նա մռռացավ իրեն, խրխնջաց, ծառս եղավ, վրնջաց խենթորեն և վարզեց դեպի իր կարոտի դաշտը: Ամայություն էր ամենուրեք, ոչ մի կենդանի շունչ, գորշ գայլերն անցել էին այդտեղից: Տխուր էր դաշտը, և ավելի Եփրատն էր տխուր ու մեմակ:

Մեկ-երկու օր հետո նա վերադարձավ տուն:

Լավ հիշում է, մի հարևան թուրք կար, մսագործ, որը հաճախակի ասում էր.

– Ոսկե ձին տուր ինձ:

– Ինչո՞ւ:

– Լավն է:

– Նորություն չըսիր:

– Այլահը վկա, տունդ կվառեն, ընտանիքդ ջարդ-փշուր կանեն, ձին կսպանեն, կաշին կքերթեն, միսն ու փորոտիքը շներին կտամ:

Արմենակ Սեփեճյանը ծիծաղում էր՝ կարծելով կառակ է:

Երբ ինքն ու նա հասկացան, որ թուրքը չի կատակում, արդեն շատ ուշ էր, շատ սարսափելի, շատ մութ և անհույս:

Կեսգիշերից հետո, երբ իրենք արդեն պատրաստ էին գնալու Սուրբ Փրկիչ եկեղեցու բակը, անսպասելիորեն ներս խուժեցին

գայլի դեմքով մարդիկ՝ հարևան թուրքի գլխավորությամբ: Իրեն կողպեցին ախոռում: Նա ոչինչ չէր տեսնում, բայց ձայներից հասկացավ, թե ինչ է կատարվում տան մեջ: Մեծ մայրիկը միայն մեկ անգամ խուլ ու ցավազին ճչաց: Արմենակ Մեփեճյանը խելագարի ձայներ էր հանում՝ կարծես մաս-մաս պոկում էին սիրտը, աչքերը քաշում դուրս, ողնաշարը ջարդում: Նրա կինն անդադար բղավում էր, մինչև որ լռեց: Առավել զարհուրելի էին մանուշակի նման նուրբ ու լուսերես աղջիկների աղաղակները...

Հետո հրդեհն էր:

Եփրատից բաժանվելու երկրորդ օրվա երեկոյան կողմն էր, երբ նա հեռվում՝ լերկ ու ցուրտ ձորի մեջ, տեսավ ծանր ու դանդաղ շարժվող քարավանը:

Հրդեհի կրակ լեզուները լափլիզում էին ախոռի գերանները, դուռը, պատերը և մարմինը ցավեցնում, այրում, խորովում: Աչքերը հեկեկում էին թանձր և կծու ծխից: Նա չէր հիշում ինչպես դուրս փախավ: Տան շենին դիակ կար, որը նրան հիշեցրեց ժամանակներ առաջ լեռներում գայլերի կողմից հռչոտված աշխետ զամբիկին: Դա Արմենակ Մեփեճյանն էր:

Քարավանում իրարանցում սկսվեց, երբ նկատեցին սրարշավ մոտեցող ձիուն, կարծեցին նոր հարձակում է: Չին հավասարվեց նրանց, խրխնջալով առաջ անցավ և կանգնեց: Չարմացումի, ծանր լռության ու տարակուսանքի պահ էր: Բոլորը քաղաքան կենդանու աներևակայելիորեն չարչրկված տեսքից, որը նրա ցեղային պատկանելությունը գրեթե անճանաչելի էր դարձրել:

– Ո՞վ է...

..

– Չիու կնմանի...

– Զիչ մը...

- Ժամանակով ձի եղած է...
- Հիմակ ալ ձի է կկարծեն...
- Փախստական է մեզի պես...

Ներսես Արքունյանը մոտեցավ, պտտվեց ձիու շուրջը, որը չէր շարժվում, ասես արձան էր կտրել: Միայն աչքերում կապույտ ու թրթռուն լույս կար: Ներսեսը երկար նայեց այդ աչքերին, որոնք պաշտպանություն, սեր, կարեկցանք էին աղերսում նրանից:

- Դուն ոսկե ձին ես,- փշաքաղվեց Ներսեսը:- Այս ինչ դժբախտության մեջ ես, ոսկե ձի:

Չին իսկույն աշխուժացավ մարդկային ջերմ ու գթասիրտ խոսքից, կափկափեց ծնոտները, վերքերով ծածկված մաշկը դողդողաց, ոտքերը ճանկռեցին գետինը, նա մի զվարթ-թախծոտ խրխնջյուն արձակեց:

- Ոսկե ձին է,- իրար ասում էին մարդիկ:- Մե՛ղք, մե՛ղք, մե՛ղք...

Տեղի ունեցավ զարմանալի ու տարօրինակ մի բան, որ կարող է պատահել միայն սարսափելի տառապանք ապրող մարդու հետ և մեկ էլ՝ երզնկացու: Քարավանում ամեն ոք մոռացավ իր դժբախտությունը, ցավը, տանջանքը, ահավոր-ահավոր կորուստները, վախը, հուսահատությունը, փորձանքը և սկսեց անհանգստանալ ու մտահոգվել միայն ձիու մասին՝ կարծես նրա գոյությամբ էր պայմանավորված մայր երկրի լինելը, չլինելը, կյանքը, մահը, կան ու չկան:

- Չի մեռնես հանկարծ, նայիր, որքան քիչ մնացեր ենք:
- Ապրիլ, ապրիլ պարտավորված ես:
- Միրտդ ի՞նչ կզգա, ոսկե ձի:
- Միտքդ ի՞նչ կխորհի:

– Ես մեռնիմ, դուն ապրես:

– Ոտքերդ համբուրեմ:

– Ցավդ ինձ տուր:

Լուս էր ծին, շփոթված, անշարժ, սգավոր:

– Աչքերդ ի՞նչ տեսան, ոսկե ձի,– հուզված հարցրեց Ներսես Ալթունյանը՝ նայելով նրա կապույտ աչքերի մեջ:

Արմենակ Սեփեճյանի ընտանիքը գոյություն չունի այլևս, տունն այրված է:

Փառանձեմ տուտուի մարմինն ընկած է Եփրատի ափին, գիշանգող հոշոտում է նրան:

Ղահֆեճի Արամին, կնոջը, երեխաներին ծեծելով տարան մզկիթ, ստիպեցին կրոնափոխ լինել, երբ կտրականապես հրաժարվեցին, նրանց մերկացրին, ծաղր ու ծանակ անելով քաղեցրին փողոցներով և սուր-սուր երկաթներով սպանեցին Սերայի հրապարակում: Մարաջախտի հրամանն էր՝ դիերը չթաղել, թող փողոցի շների կերակուր դառնան: Ինքը տեսավ, ինչպես մի շուն ժանիքներով փորփրում-քաշքշում էր ղահֆեճի մարմինը:

Տեր-Մարությանը, Սիրարփին, Արտավազը Հովեյանը՝ թռնիկի հետ, և էլի մի քանիսը տանջահար սպանվեցին բերդի բարձր պարսպի առջև:

– Իսկ խենթ Ենո՞քը...

Նա ողջ է, փողոցաշրջիկ է դարձել, գոռում է, լաց լինում, երգ ասում, մազերը փետում:

Աննա և Սոֆի քույրերը քաղաք չհասան, մյուսների պես սարսափելի եղավ նրանց ճակատագիրը:

Ժամագործ Գալուստ աղան և իր Չարուեի կինը սպանված են:

Էվան սպանված է, դիակը տեսա և չճանաչեցի:

Մեղրակը, Տաճատոս Ռուբինյանը և Վաղարշակը կախա-
ղան հանվեցան շուկայի մեջ:

Ավետիսը քար ու երկաթներով ջախջախվեց:

Շուշոյին մերկացրին, վրան քարյուղ ցրեցին և այրեցին:

– Ո՞վ զարկեց Սուրբ Փրկիչ՝ եկեղեցու զանգը,– հարցրեց
Ներսեսը և զգաց, թե ինչպես են իր սրտի արցունքները գլորվում
աչքերից:

Չանգը ոչ ոք չի զարկել: Չանգը լուռ էր:

– Ես լսեցի: Խենթ Ենոքը լսեց և գնաց ձայնի կողմը: Բոլորը
լսեցին:

Պատրանք է եղել: Թվացել է: Երազ է եղել:

Ջարավանը լռեց:

Չիու աչքերը լռեցին:

Գիշեր իջավ:

* * *

Երեք լույս օր նրանք գրեթե անդադար կքայլեն Քեշիշ Տաղ
լեռնաշղթայի հարավային դժվարանց լանջերով և դուրս կգան
Դերջան գավառի Աղկալայի դաշտը, որտեղ նորից կհանդիպեն
մայր Եփրատին: Այդ ճանապարհին հիվանդություններից կմա-
հանան երկու մանուկ և չորս հասակավոր կանայք, ինչպես նաև
մեկ զինվոր՝ Վասկերտի կռվում ստացած վերքերից: Ջարավա-
նում կմնա 137 մարդ՝ իրենց մալ ու կայքով, և ոսկե ձին: Կլիմի
ցուրտ քամի: Արևը դաշտի ձյուններին զարկվելով՝ կկուրացնի

նրանց: Մեծ-փոքր սպասումով ու հուսահատ կնայեն իրար և դեպի սպիտակ ու ամայի հեռուները: Կռոնա քաղցած գայլը: Նրանց կթվա՝ Եփրատը տակավին սառցակալած իր ափերն է լիզում դավադիր և իրենց օտար է, օտար, օտար ու թշնամի: Չմեռը կարծես կգա ետ և կթափանցի նրանց մարմինների մեջ՝ անամոք համաճարակի դաժանությամբ: Արծակ ու անկենդան դաշտում մեկը աղիոդորմ կրդավի՝ Երզնկա՛, Երզնկա՛ ... Չալպատուրիկ շունը կուչ կգա փոքրիկ տղայի գրկում, և նրանք կտաքացնեն իրար: Բուրի հոգում կողոպ կասկածանքը, հույսը, երկյուղը՝ չվերադառնա՞ն քաղաքն ու ծննդավայրն իրենց, քանի դեռ շատ ուշ չէ: Մակայն կշարունակեն քայլել, ոտքերը կզնան առաջ, իսկ միտքն ու աչքերը՝ ետ, և շուտով կհասնեն Փիրիչ՝ ժամանակով շեն ու աղմկոտ, այժմ համր ու ավերակ գյուղը: Այստեղ կառնեն առաջին երկար դադարը՝ ապաքինվելու անցած ճանապարհի տառապանքներից: Հաջորդ իսկ օրը, վաղ առավոտյան, ոսկե ձին կանհետանա մույնքան անսպասելիորեն, ինչպես որ հայտնվել էր: Նրա սրտին կհասնեն խորհրդավոր ու հմայիչ հնչյուններ, ձայն կտան, կկանչեն հեռուներից, և նա եկած ճանապարհով կվարգի ետ՝ դեպի Երզնկայի դաշտը, որտեղ իր սկիզբն ու արմատն են: Նրանք դա կհասկանան, երբ նա վերադառնա: Մոմիկյանները կմնան Փիրիչում և արդեն չեն խոսի ոչ մի հայերեն բառ: Յերեկները կծնկեն նամագի, իսկ մութ գիշերին, ամուր փակված դռան հետևում դողդոջուն շուրթերով կհամբուրեն սնդուկի խորքերից հանված իրենց խաչ-ավետարանը: Կանցնեն շատ-շատ տարիներ, կգա խոր ծերություն, նրանք կկորցնեն ժամանակի հաշվել-շիռը և տխուր ու ցավագին միտք կանեն, որ այլևս չկա հայ և Հա-

յաստան: Եվ գաղտնի ու գաղտնապահ արցունք կթափեն այդ ծանր, ճակատագրական մենակությունից:

* * *

Նա գնում էր դանդաղ՝ ամեն քայլն զգույշ դնելով հողին, վտխոսուտերը քիչ ետ էին քաշվել, իսկ ծաղկավոր լաչակով շրջանակված դեմքը և խոշոր, սև աչքերը ամոթխածորեն խոնարհվել էին կրծքի վրա, որի ներքևում ծանրած փորն էր: Երկար ժամանակ նա իր փորը, որ մեծանում էր կարծես ոչ թե օրավուր, այլ ժամ առ ժամ, խնամքով թաքցնում էր մարդկանցից: Բայց երբ տաքերն ընկան և լայնկեկ կապան այլևս անտանելի բեռ դարձավ, նա հայտնվեց աշխարհում, ինչպես սկզբում իրեն թվաց, մորեներկ և անօգնական ու միայնակ՝ խուլ, անորոշ ու մութ անդունդի առջև, որը չգիտես ինչ բախտ էր նախասահմանել իրեն: Այդ անորոշությունը երկյուղով էր լցնում սիրտը: Լինում էին պահեր, երբ մարմինը նվաղում էր, աչքերը մթնում էին վախի ազդեցությամբ և իր փոխարեն նա էր քայլում: Ինչպիսի երջանկություն էր, երբ նա առաջին անգամ դա զգաց: Հետո նա հաճախ էր թուլացնում մկանները, սիրտը թեթևացնելու համար աչքերը փակում, հանգստացնում ոտքերը, մի կարճ ժամանակ անջատվում անքուն չարչարանքից՝ համոզված, որ եթե ընկնի էլ, նա փոքրիկ ձեռքերով կգրկի-կրսւրձրացնի իրեն, չի թողնի ամայի, օտար ճանապարհի փոշիներում, և իրենք կշարունակեն միասին քայլել: Նա գիտեր, որ ինքը վերադարձ չունի, Աստված իրեն, հիշողության ու կենդանի օրվա բոլոր տառապանքներից բացի, նաև անդունդի մութն է բուժին հանել և

արդեն անխուսափելի է չիջնել նրա հատակը: Նա մտքով ծանր ու զգուշորեն իջնում էր, պատկերացնում այն սարսափը, որ իրեն դարանակալած սպասում է այնտեղ: Անափ հուսահատության գրկում հանկարծ երևում էր լույսի մի թրթռան շող, որ, կասկած չկար, գալիս էր նրանից: Նա շրջըջվում էր, խտուտ ածում իրեն, ծիծաղում մանուշակի ժպիտով ու անուշահոտությամբ: Նրա ձայնով էր լցվում իր ամբողջ ներսը: Այդ պահին փորը թվում էր երկնքի չափ անհուն և կապույտ: Նա թաքուն, շփոթված ու ամոթխածորեն էր սիրում նրան, որ իր փրկությունն էր, կյանքը, պահապան հրեշտակը, ճակատագիրը, ազատությունը, ապագայի հուստ աստղը խավար հորիզոնում:

Նրա անունը Սուսան էր, կլիներ հազիվ տասնութ տարեկան, ծնվել-մեծացել էր Կեչուտիկ գյուղում և մի քանի ամիս առաջ հարս եկել էրզնկա: Շատերի պես նա էլ քարավանում չուներ ոչ մի բարեկամ և արյունակից հարազատ. բոլորը փախան այս ու այն կողմ, գաղթեցին հեռու քաղաքներ, սպասվեցին ամենազագրելի եղանակներով, խառնվեցին հող ու քարին կամ անհայտ կորան: Միայն նա էր իր հետ, իր արյան մեջ, իր հոգում, և մեկ էլ՝ ամուսնու մտապատկերը: Նրանք միասին եղան կարճ ժամանակ՝ մեկ աշուն ընդամենը, նույնիսկ չհասցրին ճանաչել միմյանց բնավորություն և սովորույթ, չհաղթահարեցին իրենց ամոթխածությունն անգամ, երբ գիշերը պառկում էին քնելու նույն վերնակի տակ: Իսկ այժմ նրան թվում էր, որ իրենք ապրել են մի ամբողջ երկաշ կյանք, անսկիզբ ու անվերջանալի, ինչպես Եփրատի հոսքը:

Քարավանով շշուկ անցավ, երբ առաջին անգամ նկատեցին նրա փորը, հատկապես աշխուժացան կանայք, բայց ոչ մեկի լեզ-

վին չհայտնվեց ծուռ կամ չարամիտ որևէ խոսք: Ժպտացին: Կարծես արև ծագեց և հրեշտակ իջավ նրանց վրա: Խաչակնքեցին:

– Աստվածային բան է:

– Աստված արևդ երկարե:

– Աստված քեզ զորավիզ:

– Ախ, յավրում, որչա՛փ գեղեցիկ ես:

– Աստված իմ կյանքից կտրե և ձերի վրա ավեցնե:

– Աստված լինի քու օգնականը:

– Աստված հասնի:

– Ախ, յավրում, որչա՛փ գեղեցիկ ես:

– Աստված չար աչքից պահի:

– Աստծո ճանապարհ անցնիս:

– Աստված օրհնե:

– Ախ, յավրում, որչա՛փ գեղեցիկ ես:

Նա ժպտաց, ինչպես ծաղիկն է ժպտում իրենով հիացող աչքերին:

Այդ մարդքանքները, որ այնուհետև կրկնվում էին հաճախակի և սովորական բառեր չէին, այլ հոգու նվագներ, թեթևացնում էին նրա տառապանքը, վախը, ծանր անհայտությունը, հույս տալիս, ուժ ներարկում ոտքերին, ապագա խոստանում:

Շուտով նա դարձավ ամբողջ քարավանի ուշադրության կենտրոնը: Ոչ ոք՝ կին թե տղամարդ, անտարբեր չէին նրա հանդեպ: Կարճ ժամանակում նա բարեշքեց շատերի զգացմունքային աշխարհը՝ իր անքուն, բողբոջի պես պայթող, լուսեղեն ներկայությամբ նրանց հույս ու հավատ ներշնչելով: Կարծես ամենատես ու ողորմած Տերը նրան ուղարկեց, որպեսզի իրենք սեփական չարչարանքները քաղդատեն նրա մարմնական ու հոգևոր տառա-

պանքի հետ, և մխիթարություն լինի: Ամեն ինչ նրա համար էր՝ բարի խոսքը, ժպիտը, սերը, համեղ պատառը, որ, իբրև սև օրվա դեղու դարձան, դեռ պահպանվում էր ոմանց մոտ, սրտաբաց հոգածությունը, քաջալերանքը, աղոթքը: Հանկարծ նրան մի վատ բան չպատահի, աշխարհը չար է և խառնակ, ազգի գլխին կամար է կապել սեփ-սև ծիածանը, իրենց ճանապարհը մութ է և անեզերք: Նա կանթեղ էր, որ գիշեր-ցերեկ լույս էր տալիս նրանց, հարկավոր էր նրան պատասպարել իրենց համընթաց գնացող հիվանդություններից, չար ոգուց, խորշակներից:

Նրան պատասպարելով՝ նրանք պահում-պահպանում էին նրա մեջ ապրող երեխային, արդեն համոզված, որ նա է իրենց ճակատագիրը: Ինչ երջանկություն էր մտածել, որ նա ծնվելու է իրենց պատկերով, իրենց նիստուկացով, իրենց բարբառով: Եվ սարսափելի էր մտքով անցկացնելն անգամ, որ նա չի լինի հանկարծ. նա էր ներկան և անցյալը, կան ու չկան, երկիրը և ժողովուրդը: Կշարունակվենք նրա հետ, նրա շնորհիվ, նրա օգնությամբ միայն, և չենք լինի, հող կդառնանք, փռշի, ամպ ու մշուշ, կկորչենք հավիտյանս հավիտենից, եթե նա աշխարհ չգա, լքի մեզ՝ իր հարազատներին: Այս հակընդդեմ զգացմունքները տանջում էին նրանց շոգի, անձրևի ու քամիների, սուլի ու հիվանդությունների, ցրտի հետ, որը հատկապես գիշեր ժամանակ որդի պես սողոսկում էր մաշկի տակ և սրտերը դողացնում:

Մուսանը նրանց այդ ապրումները տեսնում էր և շփոթվում, տառապում անվերջ, տրամադրությամբ ու մարմնով ծանրանում առավել, մտահոգվում, հուսահատություն էր գալիս վրան, ամբողջ էությանը փափագում այն պահը, երբ նրանց սպասումները ի կատար կածվեն՝ թեկուզև իր կյանքի գնով, որ հավասար է

մահվան: Նա ենթադրում էր, որ դա կլինի երջանիկ մահ, բայց, մտածում էր հուզված, ավելի քաղցր ու երջանիկ կարող է լինել կյանքը՝ նրա կողքին և նրա հետ:

– Կմտածե՞ք, ինչ պիտի դառնա մեր զավակը:

– Խահֆեճի:

– Ամա՛ն, խահֆեճությունն ալ արեհ՞ստ կսեպես, արդեն ամեն մարդ իր տանը մեջ խահֆեճի է:

– Դերձակություն թող ստրվե:

– Գեշ չէ:

– Կոշկակարություն:

– Վազ անցիր:

– Փոստատար թող ըլլա:

– Ինչո՞ւ ...

– Աղպես կուզեմ:

– Ես ալ կուզեմ մսագործություն ընե:

– Ատ թուրքի զբաղմունք է, մենք բարի ենք և՛ մարդոց, և՛ կենդանիներու հանդեպ:

– Համետագործի վրա ի՞նչ կխորհեք:

– Պատվաբեր չէ:

– Ինչո՞ւ ցածր արհեստներու կողմը կնայեք, բանաստեղծ, բանաստեղծ թող ըլլա, ազգը լուսավորե:

– Վճռաբար կառարկիմ, մեղք է չոջուխը, թուրքը բանաստեղծներուն մոլեռանդ ատելությամբ կվերաբերե, քարով կջախջախե անոնց պայծառ գլուխները, կաղաչեմ խենթ և անհեռատես առաջարկություններ չընել:

– Ժամագործի մը աշկերտ տանք:

– Բնավ գեշ չէ:

– Միքայելյան սեաթչի հաճի Ավետիսը իմ հորեղբոր միջնեկ որդին է, ան ողջ է, այժմ Ամերիկա, Տիթրոյթ քաղաքը կրնակվի, մեկ սրտալից նամակով քովը դրկենք, արհեստի տակն ու վրան սորվե, նշանավոր հայրենակից մըն ալ ունենանք:

– Ախպար, չոջուխը հեռու և օտար երկրներ ճամփելու մտադրություն բնավ չունիմ, ան մեզ հետ և մեր ներսը ապրելու է:

– Կկարծեն ոսկերչությանը ոչ մեկ մարդ հակառակ չէ, Գույումճյան եղբայրքը կհիշե՞ք, ինչ ճարտար ձեռքեր ունեին, հարկավ կհիշեք, մոռանալո՞ւ բան է, բոլորդ ալ երբևէ ոսկիի գործ բռնած եք անոնց հետ:

– Շատ կցավիմ, սիրտս կտոր-կտոր կըլլա, սակայն անոնք ավագակ նահատակվեցան Թուաֆիե շուկային մեջ, արդեն բոլոր ոսկերիչներն ալ խաբեբա են և կեղծարար, ես մեր զավակին համար ազնիվ արհեստ կերազեմ, որ սիրտը միշտ մաքուր պահե, լեզուն և մտորումը միշտ արդար ըլլան:

– Զուլագործությունը մոռցար:

– Զոջուխը հնոցի բերա՞նը նետել կուզես:

– Կհիշե՞ք քեպապճի Տնպըրը, ինչ համեղ կըկարմրցներ ոչ-խարի մսին փափուկ տեղերը:

– Ի՞նչ կուզես ըսել:

– Ջանըմ, բան մը չըսի, բայց տղան վերջ ի վերջո մեկ արհեստ սորվելո՞ւ է:

– Բրուտություն:

– Շատ աղեկ է:

– Աստված ալ բրուտագործ էր:

– Վեր նայենք նե, վարն ալ կկորսանցնենք:

– Երզնկայի մեջ Դանիելյաններուն ներկատունեն գատ ուրիշը կա՞ր:

– Ներկարարները սկերես են, անոնց աղջիկ տվողն ալ քիչ կըլլա:

– Լուսահողի հայրս՝ Աբրիբազ աղան, հացթուխ էր, մոռցա՞ք:

– Մեկ այլ պատճառաբանություն ունե՞ս:

– Հացագործությունը մեր ազգի ոգին կկազմեն, ուրիշներ յաթաղան կծուլեն, իսկ մենք հաց կուտանք մարդոց:

– Անշուշտ, հաց շինելը պատիվ է:

– Ես ալ աշոպես կկարծեմ:

– Մայրը ի՞նչ կմտածե, մորը կարծիքը ինչո՞ւ հաշվի չեք առներ:

– Կուզե՞ս գավակդ փոնջություն ընես:

Սուսանը ժպտաց, գլուխը խոնարհեց կրծքին և ասաց.

– Ֆիդայի կուզեմ ըլլա, ինչպես իր հայրը:

Բոլորը լռեցին: Ծանր էր այդ լռությունը, ցավատանջ, տառապեցնող, անհույս, ողբերգական: Բոլորը հասկացան, որ նա ցանկացավ ամենակենդանի ու կարևոր զբաղմունքը, որ սկիզբ և վերջ չունի հայոց մեջ:

– Աստծու կամոք ֆիդայի թող դառնա,– ուրախ և ոգևորված ասաց Ներսես Աթունյանը, որ մինչ այդ լուռ լսում էր նրանց, և արագ առաջ քայլեց, աջ ու ձախ հորդորելով մարդկանց՝ ճամփա դուրս գալ:

Ճանապարհը գնում էր Էրզրում, բայց այն դեռ հեռու էր, օրեր էին հարկավոր՝ նրան մոտենալու համար, մանավանդ իրենք, որպեսզի թշնամու աչքին անտես մնան, շարժվում էին երկրոր-

դական, մեծ ու փոքր խութերով լի, մանվածապատ ուղիներով, որոնք ճանապարհը կարծես անսահմանորեն ձգում էին և, ի վերջո, ոչ մի մխիթարիչ հանգրվանի չէին հասցնում: Ամեն օրը, արևածագից մինչև մայրամուտ, կարճ էր և երկար: Երբ մի տեղ կանգ էին առնում գիշերելու, թվում էր՝ ոչ թե առաջ են գնացել, այլ՝ ետ, անվերջ պտտվել իրենց շուրջը և միայն ծանր ու մղձավանջային հոգնություն վաստակել:

Արդեն երկրորդ ամիսն էր վերջանում, ինչ Երզնկայից հեռացել էին, նրանց և քաղաքի միջև ժամանակն ավելի մեծ էր, քան տարածությունը, և ամեն պահ մտածում էին ու հավատում, որ կարելի է շուտ գալ՝ անտառների, լեռների հետևում տեսնելու նրան, հետո անցնել մի քանի փողոցներով և մտնել իրենց տունը: Մակայն ոչ ոք արդեն չէր շրջվում՝ վախը հալածում, իսկ հույսը տանում էր նրանց իր հետևից:

Մև քառակուսի կարմիր անապատում:

Աչքերը խամրել էին: Այտուկները դուրս էին ցցվել հիվանդ գունատությամբ, ծովել-կռացել էին ուսերը: Ուտքերը ծանր ու դանդաղ քարշ էին գալիս ճանապարհով: Զգեստները նրանց վրա կախվել էին՝ երկար գործածությունից մաշված, գորշ ու փոշոտ պարկերի նման: Նույնիսկ ձիերի մարմիններն էին հոգնատանջ ու փլուզված, և այժմ նրանք թվում էին ավելի զառամյալ, քան իրենց սիրտն էր ու արյունը:

Քաղցը, սոված գայլի պես ողնաշարը ծռած, չորուցամաք փորը հողերին քսելով, լուռ ու դարանակալ շարժվում էր քարավանի հետևից և արդեն հեռու չէր այն օրը, երբ կհասներ նրանց:

Շաա ժամանակ էր անցել այն գիշերից, երբ Ներսես Աթուրյանը և Նանեն հիշեցին խաղաղ ու երջանիկ օրերը Քրիստիոյան

վարժարանում, և երկուսի հոգում շուտով բողբոջեց իրենց էլ աննշմարելի, բայց գայթակղիչ մեղեդու մնան հեռու-հեռուներից դեպի իրեն ձգող մի զգացմունք, որը տակավին անուն չունեի և մինչև անգամ՝ դեմք ու կերպարանք: Հաճելի էր գաղտնաբար, սրտով ականջ դնել այդ ձայնին, որ աղբյուրի պես մեղմ կարկաչում էր ցերեկ թե գիշեր, երբեմն կեսգիշերի մեջ վերածվելով դաժան իրականության հետ ոչ մի առնչություն չունեցող քաղցրալուր երազի: Աչքերի փակ վարագույրի հետևը, հոգու տաք գրկում ընդամենը մի քանի ակնթարթ էր տևում այդ երազը, սակայն թվում էր մի ամբողջ կյանք, երկնքում թռչող պայծառ ասուպի ճանապարհի չափ երկար ու անսահման:

Երբ այդ զգացմունքը, վերջապես, իր էությանը հարազատ անուն ձեռք բերեց, վախն ու շփոթմունքը պատեցին նրանց, բայց այնպիսի մի վախ, որից ոչ թե փախչում էիր, հեռանում, այլ սրտատրոփ տենչում էիր ավելի մոտենալ, սուզվել նրա խորքը, անվերջ մոտենալ և նրա հետ գրկախառնվել:

Ներսես Աթուրյանի հուզաշխարհը տակնուվրա եղավ այդ զգացմունքի գիտակցումից՝ ինչպես գարնան երկինքն է խառնվում կայծակ-ամպրոպների ժամանակ, մեկ մթնում սևագգեստ ու մռայլադեմ ամպերով, մեկ էլ, հանկարծ ճեղքվելով, աջ ու ձախ շող տալիս այլևս ոսկին: Ե՞րբ սկսվեց և ինչո՞ւ: Մի՞թե այն լուսինգա գիշերը՝ սիրագեղ երգի և նրա տրտում ու գեղեցիկ ներկայության ազդեցությամբ: Թե՞ ավելի վաղ, հսգար տարի առաջ, այն ողբերգական ու երջանիկ օրը, երբ ինքը՝ նրան փրկեց Եփրատում խեղդվելուց: Գուցե ավելի ո՞ւշ, Վասկերտի արյունոտ հովտում, որտեղ մտերիմ ու հարազատ դիակների մեջ որոնում էր նրան, լուռ խելագարվում, կուրանում, պապանձվում, խլանում և,

բոլոր ահավոր սպասումներին հակառակ, նրան գտավ ողջ ու առողջ և մինչև իսկ՝ առավել սքանչելի, որ կարծես երկրայինին չէր պատկանում, այլ Աստծուն ու կուսական բնությանը:

Նա չիմացավ սկիզբն ու պատճառը և ամեն ինչ, ի վերջո, վերագրեց ճակատագրի խաղին, որ ահա քանի տարի հանգիստ չի տալիս իրեն, հետապնդում է ու հալածում, տառապեցնում, քաշքշում իր զգացմունքները, պատեպատ խփում, փորձում ծնկի բերել- ստրկացնել, ինքնությունը խլել, իսկ ինքը չի ուզում ստրուկ դառնալ՝ լինի թուրքինը, Աստծունը թե ճակատագրինը... Սիրտն ու միտքը կանգ առան նրա երագային անվան վրա, և հոգում ալեկոծ լռություն տիրեց:

Ներսեսը յուրաքանչյուր քայլափոխի և ամեն պահ տեսնում էր նրան, եթե նույնիսկ չէր նայում: Նա իր սրտի, աչքերի, մտքի մեջ էր՝ սրինգի նման նուրբ կազմվածքով: Շրջագգեստը, մեջքն ամուր գրկած, ծածկում էր նրան ամբողջապես: Նվագում էր սրինգը: Երգում էր շրջագգեստը: Գլուխը փաթաթել էր մետաքսե կապույտ շորով, որի ծայրերը գոտևորվում էին երկար պարանոցին և հանգուցվում ծոծրակի վրա: Կապույտը Երզնկայի աղջիկների ամենասիրած գույնն էր, ինչ էլ հագնեին՝ կապույտը անբաժանելի էր նրանցից: Քարավանում նա երևում էր կապույտ ծաղկի պես: Կապույտը և նա ծնվել էին մեկտեղ՝ իբրև մի սիրտ ու հոգի: Հրացանը միշտ նրա հետ էր, նրանից անբաժան, կարծես նրա մարմնի մի մասը լիներ, ինչպես կապույտ գլխաշորը: Նա իր ցուլերով գեղեցկացնում էր հրացանը, նրբացնում, շնչավորում մարդկային բարությանը, իսկ էրացանը, իր հերթին, նրա ներսում խառնում ու բորբոքում էր վրեժի ու հայրենասիրության կրակը, բոցավառում նրա աչքերն այդ կրակներով, որոնք, այդպես

կրակված, այնքան քանկ ու սիրելի էին Ներսեսին: Մի՞թե ամեն ինչ սկսվեց այն նույն գիշերը, նրա շուրթերից, որոնք զենք էին խնդրում և ասում. «Ձինվորը մարդու մարմինը չէ, այլ զգացմունքը, սիրտը, նրա մեջ ապրող անքուն վրեժը, հոգին, ատելության ձայնը»: Հետո շուրթերն ասացին. «Միրտն է կռվում թշնամու դեմ և սիրտն է հաղթում ու մեռնում-նահատակվում իրեն ծնած հողի վրայ»: Ոչ մի Եվայի թոռ այդպես խոսել չէր կարող, և, ամեն անգամ այդ բառերը հիշելիս, Ներսեսին թվում էր՝ սխալ է լսել, երբեք չեն եղել դրանք, պատրանք են, իր երազի կախարդիչ ու անհրակահան ձայները:

Ներսես Ալթունյանն ամեն կերպ խուսափում էր նրան հանդիպելուց, սակայն դա անհնարին էր փոքրիկ քարավանի միապաղաղ ու զրեթե անփոփոխ ամօրյայում: Գիտակցությունը թելադրում էր ու հրամայում՝ չմոտենաս, շուտ արի, հեռացիր, այնինչ սիրտը, ձեռ ու ոտ եղած, իրեն անվերջ հրում էր այնտեղ, որտեղ նա էր լույս և գիշեր օրվա այդ պահին:

Թեև նա լարում էր կամքը՝ խիստ և անտարբեր երևալու, բայց իրականում երեխայի նման շփոթվում էր նրան երես ամ երես պատահելիս: Աչքերն իզուր որոնում էին այնպիսի մի անկյուն, որտեղ իրեն ոչ ոք չտեսնի: Ներքին հուզմունքից շառագունում էր դեմքը: Միայն սիրտն էր թունդ ելնում և տրոփում, թվում էր՝ ձիեր են վարգում իր մեջ:

Արդյոք զգո՞ւմ էր Նանեն, թե ինչ է կատարվում նրա հոգու դաշտում: Ոչ ոք չէր կարող ասել: Երբ նա ժպտում էր՝ ի պատասխան իր լռությանը և շփոթմունքին, Ներսեսին թվում էր՝ նա արդեն թափանցել է իր ներսը կանացի բնագոյով և ամեն ինչ տես-

նում, հասկանում է, քննում: Իր համար դա հոգեկան ամենալար-
ված և ծանր պահն էր:

Ներսեսի կյանքում սկսվեցին տագնապալի, զգացմունքա-
յին ալեկոծության ու տվայտանքի դժվարին օրեր, որոնք ոչ մի
րոպե քուն չէին մտնում՝ մի կարճ ժամանակ խաղաղություն, ե-
րանելի անդորր, լուսություն բերելու հոգուն:

Անապատի շիկացած ավազներից ելավ և նրա աչքերի
առջև ասես կենդանի շունչ ու կերպարանքով կանգնեց նահա-
տակ կինը՝ Լուսինե Սրապյանը: Եվ ինչքա՛ն գեղեցիկ էր: Նրանք
նորից գտան միմյանց և ողջագուրվեցին սիրազեղ կարոտի ար-
ցունքներով: Կռահո՞ւմ էր Լուսինը, որ իր սիրտը մեջտեղից նռան
պես ճեղքվել է և այժմ, տաք արյուն հեղելով, բարախում է իր և
նաև ուրիշի՝ նրա համար:

Ներիր: Անտեսիր ինձ: Մի՛ նայիր այդպես: Թողություն արա
մեղքիս: Հաշտվիր: Պաղատում եմ: Պատժիր ամենածանր չար-
չարանքներով: Խորթացիր ու պարսավիր: Մռռացիր: Հրամայիր
մեռնեմ: Մի՛ գնա: Անպատվիր: Ջրկիր լույսից: Ապավեն եղիր:
Սթափեցրու Աստծու անունով: Սպասիր: Քեզ երկրպագում եմ:
Դու ամենագեղեցիկն ես: Դու՝ ամենամայր: Դու՝ ամենաքույր:
Դու՝ ամենամարդ: Առ սիրտս: Եվ առ աչքերս, որ ուրիշին տեսան:
Խոսիր: Ինչո՞ւ ես լում: Արհամարհիր: Շնորհիր հույս քավուք-
յան: Անունիդ մեռնեմ: Իմ խիղճ: Եվ հոգի: Եվ անմարելի տառա-
պանք: Իմ եղեճ: Չոհաքերություն: Սկիզբ և վերջ: Աստվածամոր
պատկեր: Մեղա՛: Թույլ տուր դիպչեմ քեզ: Նեղացիր, ինչպես
միայն լու կարող ես նեղանալ: Սրտի խռտտովանանք: Խաչ, բան
հանքուրելի և աղոթք: Ազգ սիրատուն: Չայն հավիտյանս հավի-
տենից: Քաղցր լեզու: Մոտեցիր: Ավելի մոտեցիր: Հիմա կխելա-

գարվեմ: Դե, մի խոսք ասա: Ժպտա քո անմնան աչքերով:
Կանգնեցրու խելագարությունս: Ինձ ստորահողի ասա և դարձ-
յալ կրկնիր: Իմ երեխաների մայր: Դաժան հարազատ, որ չա-
րության պատասխանում ես բարությանը: Խոնարհություն և
միամտություն, քաղցրություն և օրհնություն: Ցավդ առնեմ: Ես
մեռնեմ, դու ապրես: Դու մեծ, ես չնչին ու փոքրոզի: Գետինը
պատռվի, մտնեմ մեջը: Քեզ չտեսնեմ: Քեզնով չհիանամ և
չհպարտանամ այլև: Քեզ կորցնեմ՝ իբրև ահավոր ցավ մնացած
օրերիս: Աստված կյանք տա ինձ՝ քո կարոտից տապակվեմ:
Միրտս կրակների մեջ թող խորովվի: Օր-արև չունենամ: Ատիր և
ատիր: Աստված երեսդ թող մայի: Հոգիդ արքայություն գնա: Կո-
խած տեղդ վարդ բուսնի: Իմ միակ: Անձկալի գոյություն: Մաք-
րություն և լույս: Նշխար անարժանիս: Ամենայն ինչ: Ավետարան
պսակի և սիրո: Համբերություն: Բազմագույն և օրհնյալ: Ամեն ա-
սեմ քեզ: Եթե ներես թյուրիմացաբար, չեմ լինի ես, և չես լինի դու:

– Բարև, հրամանատար:

Ներսես Ալթունյանը շրջվեց:

Նանեն էր իր առջև:

– Դու երկու օր չես տեսել ինձի, ինչո՞վ եմ շարժել զայրույթդ,
հիմա էլ չես առներ բարևս:

Թույլ ժպիտ իջավ Ներսեսի դեմքին, որովհետև նա ժպտաց,
բայց իսկույն խոժոռվեց:

– Ինչո՞ւ առանց իմ համաձայնության գնացիր Վահրամի
խմբի հետ:

– Եթե քեզ հայտնեի, չէիր թույլատրի: Մենք բավականաչափ
պարեն հավաքեցինք:

– Գիտեմ:

– Զրդերը հարձակվեցին մեզ վրա, իսկական մարտ եղավ, ես յոթ փամփուշտ արձակեցի, որոնցից մեկը վիրավորեց քրդին, այնպես կուզեի, որ նա թուրք լիներ:

– Տեղյակ եմ,– ավելի խոժոռադեմ ասար Ներսեսը:

– Ես արդեն զինվոր եմ, նայիր ինձ իբրև զինվորի:

– Քեզի խստապես կարգելեմ քարավանից հեռանալ:

– Իմ կյանքը թա՞նկ է քեզ, հրամանատար,– շշջաց Նանեն և շփոթվեց իր հարցից:

– Բոլորի կյանքը թանկ է ինձի, տես որքան քիչ ենք,– ասաց Ներսեսը, սակայն այդ պահին հոգում ուրիշ բաներ էին:

– Ես արդեն չեմ ուզեր մեռնիլ: Կյանքը թանկ է նաև ինձի համար: Ես կուզեմ ապրիլ երկար:

– Ինչո՞ւ...

– Չեմ գիտեր...

Ներսեսը նրա շիկնանքը չտեսավ, որովհետև լսում էր իր սրտի հուզված բաբախյունը և ավելի շատ ինքն էր շիկնել:

– Սուսանը ինչպե՞ս է...

– Լավ է, հրամանատար...

– Իսկ փոքրիկ տղան և չալպատորիկ շո՞ւնը...

– Լավ են...

– Դու ինձ ինչ-որ բան կուզեիր ասել:

– Գարուն է:

– Հիմա գարուն է ամենուրեք:

– Երզնկայո՞ւմ ալ:

– Երզնկայում, Մեքաստրայում, Դիարբեքիրում, Եփրատի անձայր ափերին, Մուշում, Բիքլիսում, Սասունում, մեր սրտերի մեջ, Էրզրումում, Վանում, Մալաթիայում, ամեն տեղ և ամեն տեղ:

- Ես տխուր եմ, հրամանատար:
- Բոլորս տխուր ենք:
- Բայց ես շատ տխուր եմ:
- Երբ գալիս է գարունը, տխրությունը շատանում է:
- Ինչո՞ւ:
- Որովհետև ինչ-որ բան վերջանում է և ինչ-որ բան սկսվում
առաջին անգամ:
- Ի՞նչն է առաջին անգամ սկսվում:
- Չգիտեմ:
- Իսկ ես գիտեմ:
- Ասա:
- Ծաղիկն է սկսվում: Սկսվում եմ ես: Արտույտն է սկսվում:
- Արտույտն ինչպե՞ս է սկսվում:
- Ամեն գարուն նա կգեղգեղա մոր երգ:
- Ես դա չեմ նկատել:
- Դու շատ բան չես նկատում, հրամանատար:
- Ի՞նչ չեմ նկատում:
- Դե, ասա, ո՞ւմ համար կդողանջես իմ սիրտը:
- Գիտեմ:
- Ո՞ւմ:
- Նրա: Դու ամունը ինձ չասացիր:
- Ինչո՞ւ միայն նրա:
- Հապա էլ ո՞ւմ:
- Կդողանջես բոլոր նրանց համար, ում մեջ նա կապրե:
- Ինչ մեծ սիրտ ունես, - հիացավ Ներսես Ալթունյանը:
- Իսկ քո սիրտը կդողանջե՞:
- Ոչ, լուռ է, ինչպես քարը:

– Ոչ մեկ սիրտ լուռ չէ:

– Իմը լուռ է, և ես դժբախտ եմ:

– Եթե կզգաս լուռ է, եթե կզգաս դժբախտությունդ, ուրեմն լուռ չէ ամենևին:

– Մի՛ խոսիր այլևս,– ասաց Ներսեսը շփոթված և խստությամբ՝ կարծելով, որ նա թափանցել է իր ներսը և ամեն ինչ տեսնում է այնպես մերկ ու անաղարտ, ինչպես կա:

Նանեն տխրեց, և Ներսեսը դա տեսավ: Նա տխրեց այնպես, ինչպես այն չքնաղ ու զզխիչ ծաղիկը, որի կողքով անցնում են անհոգ, ծիծաղելով, անտարբեր, և չեն նայում: Բայց այդ տխրությունից բազմապատկվում է նրա հմայքը, և նա դառնում է առավել գեղեցիկ:

Տաք կեսօր էր: Ճանապարհի խորդուրդություններից ճռճում էին երկանիվ ու քառանիվ սայլերը, թվում էր, հիմա ճաղերը կքանդվեն, անիվները դուրս կգան առնուց և ամեն ինչ կփլվի: Մակայն գլորվում էին՝ կոնքերը աջ ու ձախ շարժելով: Լծկանները շնչահատ ձգում-քաշում էին բեռը: Առաջ դա սայլատիրոջն էր միայն, իսկ այժմ այնտեղ կիտված էր բոլորի վերջին ունեցվածքը: Քարավանը գնում էր այնքան դանդաղ՝ կարծես չէր շարժվում:

– Մամփրե՛...– ձայն տվեց Ներսեսը:

Մամփրեն ուշադրություն չդարձրեց կամ ականջը խուլ մնաց ձայնին և շարունակեց հնձել ճամփեզրին քարձրացած խոտը:

– Ի՞նչ ես անում, Մամփրե...

– Կհնձեմ:

– Հո չե՞ս խելագարվել:

– Խելքս տակավին տեղն է, ձեռք-ոտքս ալ առողջ, Ներսես Ալթուն,– ասաց ծերունին՝ աջ-ձախ տարրուրերելով մանգաղի կո-

թը, կրծքի ամբողջ օղը ամեն անգամ խռայոտ և հատու շաչելով դուրս:

– Ո՞ւմ համար կհնձես...

– Ազնիվ կենդանիներու և բարի մարդոց, տղաս:

Ներսեսը ախուր ժպտաց ծերունու խոսքի վրա և սիրեց նրան:

– Պան սըն ալ ըսեմ, շնոռնաս մինչև էրկան կյանքիդ վերջը:

– Ասա, Մամփրե:

– Մանգաղը աշխատելով կփայլի, նմանապես բաեը, խոփը, փոցիսը: Երբ խոտը հասակ կառնե, ան պիտի հնձես, այլապես ամոր մեջքը կծռվե, ոտքերը կսկսին ցավիլ, արյունը կսառչե, եթե գազան չես, խիղճդ կխոսե, մարդ ես մարդավայել, պի հնձես, որ մեծնա նորեն և առողջ ըլլա: Աս է հայերուս, մերիններուն, երզնկացիներուս հողը և աստված:

– Ի՞նչ կսիրես, Մամփրե:

– Ջեզի կսիրեմ: Բնություն կսիրեմ, աշխատանք և աղոթք:

Կսիրեմ մեր Երզնկան և Եփրատը:

– Ինձ ինչո՞ւ կսիրես...

– Դուն կուզես մենք ապրինք և չես խնայեր կյանքդ:

– Կապրե՞մք, Մամփրե...

Ծերունին երկու ձեռքով կոթնեց մանգաղի կոթին, գլուխը խոնարհեց, մեջքը կորացավ, լռեց ծանր ու երկար և չպատասխանեց: Ներսես Ալթունյանը քայլում էր ձիու սանձը բռնած, նայում այս ու այն կողմ, մեկ առաջ ընկնում բոլորից, ետ գալիս, խառնվում թափորին. մեկ էլ հայտնվում էր քարավանի պոչում, և որքան շարձարվում էր, զգացմունքներով խռովված դիտում քարծաղիկ, սար ու դաշտ, խորասուզվում մտածմունքների գիրկը,

ինքն էլ չէր գտնում այդ հարցի պատասխանը: Հարցը կար՝ դա-
ժան պարզությամբ, չկար պատասխան:

Պատասխանի բացակայությունը պատասխան է,- հան-
կարծ մտածեց Ներսեսը և սարսռաց:

Հեռվում՝ գորշ ու մռայլ, համրաշարժ բազմության մեջ նա
տեսավ Նանեի կապույտ գլխաշորը:

Չիերից մեկը խրխնջաց:

Բարձր երկնքում հանդարտ ու տիրականորեն թևածում էր
մոխրագույն և խոշոր ճանկերով Ազպապա անգղը:

Նա ետ նայեց. Մամփրեն հնձում էր:

Անձրևի մի քանի կաթիլ ընկավ հողին:

Պտտահողմ անցավ քարավանով:

Նա փակեց աչքերը և դարձյալ տեսավ կապույտ գլխաշորը,
որը արձակվել և մագերիի հետ ծածանվում էր քամուց:

Ներսեսի գիտակցությունը թշնամացել էր զգացմունքին, իսկ
զգացմունքը՝ ծայրաստիճան լարվել գիտակցության դեմ, կար-
ծես մեկը հավատացյալ էր, մյուսը՝ անհավատ կամ այլադավան
և, թվում էր, արդեն կազմ-պատրաստ են ոչնչացնելու իրար վերջ-
նականապես: Առաջին անգամ էր նա հայտնվում այդ վիճակում՝
երկու հակառակ ուժերի միջև, որոնցից յուրաքանչյուրը փորձում
էր իրեն քաշել մի կողմ, շուտ տալ, դարձնել պաշտպան ու համա-
խոհ: Ներսեսի համար շատ դժվար էր, եթե ոչ՝ անկարելի, ընտ-
րություն կատարել. ո՞ւմ հետ է ինքը՝ իր մարմինը, իր էությունը,
իր ես-ը, իր կյանքը, իր արմատը: Հատկապես արմատը, որը
զգեստ չէ, որ փոխես, պատմություն չէ, որ մոռանաս, գայթակ-
զություն չէ, որ հրաժարվես, ապրող արյուն է քո մեջ, Կենաց ծառ,

Քրիստոսի խաչն ու խաչփայտը, Անահիտ աստվածուհու ճակատը զարդարող պսակ, բո հոգին:

Պատահում էր, և հաճախ, նա իր զգացմունքների հետ մնում էր առանձին, երես առ երես: Այդ պահերին գիտակցությունը հեռվից խոշտանգում էր, հալածում նրան, իսկ երբ գիտակցության կողքին էր, ինքն ու նա իրար մեջ, զգացմունքն էր տանջում մարմինը, և դա ավելի ծանր էր, բայց և ահավոր քաղցր:

Նրա բոլոր ջանքերը՝ իր ներսում հաշտեցնելու նրանց, ավարտվեցին կատարյալ անհաջողությամբ: Եվ նրա տառապանքը շարունակվում էր, ինչպես քարավանի ճամփան՝ դարուփոս, անհույս, քաղցած, ոլորապտույտ, ծարավ, ցուրտ ու շոգ, ուժասպառ, լուռ, հիվանդ, ցնորամիտ, անբավ ու անեզերք, ինչպես մեռյալ անապատի փոշին ու ավազը:

Լուսինե Մրապյանի տեսիլքը հետևում էր նրան ամեն օր ու ժամ, մտնում սրտի խորքը, ուղեղի խորշերը, անդուլ շրջում-թափառում արյան մեջ, գերում հոգին. աչքերը լցնում իրմով, դառնում երգ, որ պիտի երգեիր, աղոթք, որ պիտի աղոթեիր, երդում, որ պիտի երդվեիր անցյալի, ներկա օրվա և անբարեհույս ապագայի համար:

Երզնկացիները ջերմեամոլության աստիճանի հավատարիմ էին իրենց ամուսնական առագաստին՝ լինել այն ողջ-առողջ թե դժբախտությամբ կամ մահվան սև ուժով խորտակված: Վերջին պարագայում ապրող ամուսինը մինչև խոր ծերություն սրբորեն պահում-պահպանում էր իր արևը մարած կողակցի սերն ու հիշատակը, ամեն կիրակի եկեղեցում մոմ վառում նրա համար և իր աստծո անունից միշտ ողորմի տալիս նրա լույս հոգուն: Ներսեսը դավաճանության միայն մի դեպք է լսել՝ Սեպուհ Շարամյա-

նի և Եվգինեի պատմությունը: Նրանք դրկիցներ էին, բուրդից
գաղտնի սիրահետեցին իրար, քանդեցին ընտանիքը, ուրացան
մեծ ու փոքր հարազատներին և մի գիշեր միասին փախան Պո-
լիս: Ասում էին, աստված նրանց նոր երեխա չպարգևեց, ապրում
էին միս-մենակ և կարոտում տնեցիների ձայներն ու Երզնկան,
հետո տեղափոխվեցին սուրբ քաղաք Երուսաղեմ՝ իրենց մեղքին
թողություն անելու: Ուրիշը չի եղել իրենց երկնքի տակ: Եթե պա-
տահեր՝ կիմանար: Եթե չի լսել՝ ուրեմն չի եղել այլևս:

Ներսեսն արդեն հասկանում էր, որ իր վիճակն ավելի ծանր
է ու անսփոփելի, քան առհասարակ լինում է նման դեպքում: Որ-
քան իրենից վաճում էր այս գիտակցությունը, այն առավել ամուր
էր կառչում նրան: Ինքը կրկնապատիկ մեղանչանք ունի հոգուն
ու սրտին. բավական չի երես է դարձրել իր ձյունաճերմակ առա-
գաստից՝ հրապուրվել է նաև մի էակով, որը սիրում է մեռած-ողջ
Ֆիզայու:

Իրենց հայրուկյան պատմությունը չունի օրինակ, ըստ որի՝
զինվորն աչք զարկած լինի իր զինակցի կնոջը կամ սիրած աղջ-
կան: Անկարելի է երևակայել իսկ: Իրողություն է ակներև, կի-
մարմատները սակավաթիվ էին իրենց դժվար կյանքում. քարից
կարծր պիտի լինես, որ տոկաս, և բոլորը, անխտիր, շրջապատ-
ված էին տղամարդոց անչափ հարգանքով ու ակնածությամբ:
Ո՞ւմ մտքով կանցներ սատանայի ճանապարհ մտնել: Ազնիվ էր
միտքը, և սիրտը՝ մաքուր ու միամիտ, լեզուն՝ բարի, աչքը՝ քաղցր
ու հարազատ: Կողք-կողքի կովում էին չարի դեմ և արդարության
համար, ուս-ուսի, շունչ-շնչի, իրար մեջ կիսում չոր հացի վերջին
պատառը, գլուխը հանգստացնում նույն ապառաժին, կապում-
դարմանում միմյանց վերք, ջուր խմում միևնույն գավից, երգում

իրենց ազատատենչ հոգու, վրիժառու զգացմունքների, հայրենյաց սիրո նույն երգերը, ոգևորում իրար, հույս տալիս, օրնիրուն, մութ-մութ գիշերներ, քամուն թե անձրևին սար ու ձոր ընկած համատեղ գնում՝ ժողովրդի փրկության զոհասեղանին միախառնելու իրենց կապույտ ու բոց արյունը: Ավելի խոր սեր, անկեղծություն, հավատ չկա, քան արյունների ողջագորարանքը, և չկա ավելի մեծ սրբություն, քան հիշատակը նրանց:

Իրենց համար նրանք մայր էին և քույր: Այդ ավանդույթի արմատը Աղբյուր Սերոբն էր և նրա կին Սոսեն, նրանք էին ծաղկեցրել իրենց բարոյականությունը: Ո՞ւմ միտքը պղտորվեց Սոսեի չքնաղ տեսքից, ո՞վ նրան աչքով արեց, ո՞ւմ սրտում բողբոջեց դավադիր զգացմունքը,– մտածում-մտածում էր Ներսեղ և չէր մխիթարվում պատասխանից:– Առյուծ Ավա՞զը. ոչ: Փալաբեղ Կարապե՞տը. ոչ: Ջուլումաթ Օհաննե՞սը. ոչ: Կայծակ Անդրեա՞սը. ոչ: Լուր Հաջի՞ն. ոչ: Կարկուտ Թադե՞ն. ոչ: Ոչ, Ներսես Այթուն,– ասաց նա՝ ինքն իրեն պարսավելով:– Չի եղել, չկա, չի լինի:

Ո՞վ է, որին Նանեն հանձնեց իր սիրտը, ի՞նչ է անունը, ո՞ր քարի կողքին նա ընկավ ու հավիտյան փակեց աչքերը: Բայց դա ի՞նչ նշանակություն ունի, մի՞թե կարևոր է՝ ինքը դեմք-անունով ճանաչո՞ւմ է նրան, թե՞ ոչ. եղբայր է նա իրեն և անբաժանելի հարազատ, բախտի լծակից, նպատակի համախոռ, միևնույն իդձեռի կրողը, զենքի բարեկամ, երդումի ընկեր:

Ի՞նչ տեսան նրա մահամերձ աչքերը վերջին, ամենավերջին շնչում: Իհարկե՝ Երզնկան: Իր մորը: Եփրատը: Լեռնաշղթայի թիկունքից յուրաքանչյուր առավոտ ծագող արևը: Ներսեսը չէր կասկածում՝ նաև Նանեին:

Նա եիշեց Ղևոնդ Անթափյանի՝ Չայրույթ Ղևոնդի մահը, որ տեղի ունեցավ 1914-ի ուշ աշնանը, Սխտորքար լեռան ստորոտում, Բաթմանա գետի ժայռոտ ափին: «Շատ բարև կուտաք և ջերմ համբույրներ իմ աննման Արաքսի Իփեքյանին»,— այս եղան նրա վերջին խոսքերը: Նամեին ի՞նչ ասաց նա՝ մեռնելիս: Ո՞վ լսեց. մա՞րդը, քամի՞ն, հո՞ղը, գա՞յլը, դա՞շտը, մո՞լթը, քա՞րը: Ո՞վ տեսավ և լսեց: Նամեն եթե իր հեռվից նույնիսկ չլսեց, իմացավ անտարակույս, չէր կարող չիմանալ, գեփյուռը շնջաց նրան: Այժմ լսեց Ներսեսը, որովհետև ձայները չեն մեռնում, այլ, քափառելով օդի մեջ, դառնում են ծաղիկ և ապրում հավերժորեն, սիրտն ու միտքը լսեցին, և ներսում ցավի, հուսահատության, մեղքի ալեկոծություն եղավ:

Նա քայլեց Նամեի կողմը, թեև դա հակառակ էր իր կամքին:

Լեռներում սև սմպ էր ու անձրև, իսկ քարավանի ճանապարհին՝ միջօրեի արևն ու անդորրը:

Մամփրեն չէր երևում:

Փոքրիկ տղան ուրախ վազվզում էր շալպտուրիկ շան հետևից:

Չիերը երբեմն կանգ էին առնում՝ արածելու ճամփեզրի կանաչ ու անուշաբույր խոտը:

Մուսանը շարժվում էր ծանր ու դժվար՝ Մարտիրոսին թելադրելով իր հերթական նամակը ամուսնուն:

— Ավելի ու ավելի կհեռանանք մեր երկրեն, բայց երկիրն ալ անոր ծառ ու ծաղիկը, քարաուտանները, ջուրերը, ձորերուն արձագանքը, հովիտները, քամիները, անոր աչքն ու ոտքը, կհասկնա՞ս, կքալեն, կուզան, կքալեն մեր ետևեն, և մենք միասին ենք տակավին:

– Տակավին,– կրկնեց Մարտիրոսը:

– Սակայն հեռու չէ այն դժբախտ օրը, երբ մենք կբաժանվինք, խոր, անանցանելի և մութ վիհ կըլլա մեր միջև, ես կմնամ այդ վիհին մեկ ափը, դուն՝ մյուս ափին վրա, և մեր աչքերն իսկ չեն գտներ իրար, ձայները չեն գուրգուրեր զմեզ, դուն՝ անխիղճ և հեռավոր, ամենասիրելի ամուսինս, ձայն մը տուր չարչարված սրտիս, ժպիտ տուր աչքերուս, հույս տուր հուսաբեկ մարմնիս, որ կարողանամ քալել ու հասնիլ երկուքիս սուրբ և անմեղ նպատակին, որ արդեն շատ անհանգիստ կսպասե մեզի:

– Ո՞վ կսպասե,– հարցրեց Մարտիրոսը:

– Ծո, տղա, քեզի կխնդրեն ավելորդ հարցում մըներ, կաղաչին գրես յուրաքանչյուր խոսքս, հանկարծ բան մը չմոռնաս:

– Գրում եմ. իմ հրեղեն, իմ բնություն, իմ աստված:

– Ուրկե՞ լսեցիր...

– Նամակներուդ մեջ աս բառերը միշտ կօգտագործես:

– Աֆերիմ, ախպերիկ, լավ հիշողություն ունիս, նորեն գրե, մեկ անգամ ևս գրե, դարձյալ գրե՝ իմ հրեղեն, իմ բնություն, իմ աստված, ես քու շուքին տակ, դուն ինձմե վերև,– Սուսանը կանգնեց շունչ առնելու:– Ամիսներ անցան, ինչ դու հեռացեր ես իզմե, անոնք երկար ու անհատնում տարիներ կթվան ինձի, կչարչարեն, կհոգնեցնեն, մենակության և անտերության կմատնեն, կվախեցնեն, կհուսահատեցնեն: Աս ինչ սև բախտ է, քանկազինս և անփոխարինելիս: Դուն ըսիր, զնամ հայրենիքիս պաշտպան ըլլամ, ժողովուրդի մնացորդը փրկեմ և ետ դառնամ: Աղպես ըսիր, բառերդ ականջներս կայրեն տակավին: Ինչո՞ւ չես վերադառնում: Ինչո՞ւ: Ինչո՞ւ: Որտե՞ղ ես այժմ: Կլսե՞ս ձայնս: Ինչո՞ւ դրժեցիր խոստումդ, որին հավատացի ավելի, քան աղոթքին: Որ-

տե՞ղ կգտնես ինձի, ո՞ղջ պիտի ըլլամ, թե՞ արդեն մեռած: Ա՛խ, այնքան կցանկանամ ողջ ըլլալ և երեսդ նայել, ողջ ըլլալ և ձայնդ լսել, ողջ ըլլալ և գրկել քեզի, ողջ ըլլալ և մեռնել քեզի համար:

– Մեռնելը չեմ գրի,– ասաց Մարտիրոսը:

– Կկասկածե՞ս անկեղծությամբ...

– Չեմ ուզեր մեռնիս:

– Ինչո՞ւ:

– Դուն լավն ես:

– Եթե մեռնիմ, բոլոր մամակները հոս են, ծոցիս մեջ, աչքերդ կփակես և ծոցիս խորքեն կհանես բոլոր մամակները և կայրես: Նա հեռուներեն կտեսնե ծուխը և ինձի կտեսնե:

– Աչքերս չեմ փակեր:

– Անամոք:

– Չեմ վառեր:

– Ինչո՞ւ

– Դուն շատ աղվոր ես:

– Աղվորներն ալ կմեռնին:

– Եթե մեռնիս, ես լաց կլինեմ:

– Մարդիքուս, ախպերիկ, ինչո՞ւ կտանջես ինձի:

– Մեռնելդ թուղթին չեմ հանձներ:

– Ան, ինչ սրտեն կբխես, արժանի է գիր դառնալու, որքան էլ դաժան ըլլա,– ասաց Սուսանը՝ շարունակելով քայլափոխել:– Իմ աստված և իմ բնություն, մի՞թե դուն հայրենիքը ավելի կսիրես, քան ինձի, մի՞թե դուն ժողովուրդը ավելի կսիրես, քան ինձի, արևդ համբուրեմ, իմ հպարտություն, մի՞թե ես քո սրտին մեջ մեր հայրենիքը և ժողովուրդը չեմ, հապա ի՞նչ եմ, ձայն հանիր, ասա, խոսիր, եթե չես կրնար խոսիլ՝ աչքերովդ ասա, ես կհասկնամ, աչ-

քերիդ լուրջունով պատմիր, ես կլսեմ և կհասկնամ ամեն բան, աչքերիդ ձայնը մի՛ խնայիր ինձի, աչքերովդ փարատիր իմ կասկածանքները, վերացրու մեռնելուս ցանկությունը, քեզ մոտեցրու ինձ, մեռնենք մեկտեղ, ապրինք, ապրինք մեկտեղ և միասին... ծո, Մարդիրոս, ինչո՞ւ չես գրեր, մոռցա՞ր սուրբ Մեսրոպին գիրերը, ինչո՞ւ գրիչդ վար առիր թուղթեն:

- Արդեն գրած եմ մեկ քանի օր առաջ:

- Իրա՞վ...

- Ծոցիդ նամակներուն մեջ անոնք կան:

- Մարդիրոս,- սրտնեղեց և թուլացավ Մուսանը,- ճշմարիտ զգացումի, ցավի և տառապանքի, սրտի խորքերից եկող բաղձանքների կրկնումը, կկարծեմ, երբեք ավելորդ չէ: Կխնդրեմ նորեն գրի առնիս, կաղաչեմ, ախպերիկ, մի՛ զլանար կրկնելու ձայնս և սիրտս: Իմ հրեղեն և իմ բնություն, իմ ծառ, իմ արև, չեմ ուզեր երբևէ իմանաս քաշածներս, լսես անոնց մասին ականատեսներու բերանեն, տեսնաս զույգ աչքովդ, աչքերդ թող կույր ըլլան իմ չարչարանքներուն վրա, գրիչով չի նկարագրվիր այն ամենը, ինչ սրտիս տառապանքն է, մարմնիս ծանր ու տանջալից հոգնությունը, միտքիս տազնապները լեզվով չի պատմվիր, բաները խեղճ ու տկար են արտահայտելու անոնց էությունը: Ահա ամիս եղավ ծանր կքալեմ և օր օրի առավել կդժվարանա և կծանրանա կյանքս: Թեև քարավանի մարդիկը հարազատի պես կնային ինձի, սակայն քո բացակայությունը սուզ է հոգուս, չարչարանք մարմնիս, կարոտ աչքերուս, տխրություն սրտիս...

- Վաղուց գրել եմ,- ընդմիջեց Մարտիրոսը:

- Ախպերիկ, իմ սիրուն, իմ խոստովանահայր, իմ սևուիկ, իմ աղավնի...

– Իմ խոստովանահայր...

– Մի՛ գրեր, քեզի կըսեն, կգրեն անոր, ով շատ հեռու է և չի լսեր:

– Գիծ մը քաշեն վրան:

– Վա՛յ, սխալ տեղ չքաշես...

– Երեխա՞ եմ:

– Շուտ արի, թշունի թևեր առ, ձիու ոտքերով վազիր, շուտ արի և մխիթարիր ինձ, հագեցրու պապակ կարոտս, դարմանիր ցավերս, քաղցր խոսք ասա սրտիս, անուշ ժպիտ տուր իմ ներսի քո մանուկին: Ծո, տղա, չե՞ս ամչնար, ինչո՞ւ աղպես կչափես ինձի:

– Փորդ մեծ է,– ասաց Մարտիրոսը իբրև արդարացում:

– Մեծ չէ:

– Ո՞վ կա ներսդ:

– Զո եղբայրը, ախպերիկ:

– Ի՞նչ է անում իմ եղբայրը:

– Ան ֆիդայի է:

– Բեղ-մորուք ունի՞:

– Հարկավ:

– Երբ ես ալ մեծնամ, ունենամ քեղեր, պիտ դառնամ ես ալ զինվոր անվեհեր:

– Աֆերիմ: Աստված քեզի ջուրի չափ երկար կյանք տա,– - Մուսանը գերովալից շոյեց Մարտիրոսի գլուխը:– Օրը իրիկուն կերթա, նամակս կես մնաց: Գրիր... Իմ հող և արև, կզգա՞ս հեռու-հեռուներեն, թե որչափ վոխված եմ հոգիով, մարմնապես և միտքով: Ինձ այնպես կթվա՝ տարիներով ապրեցանք միասին, մի քանի կյանք ապրեցանք և չհագեցանք իրարմե, հազար տարի ապրեցանք, ես դարձա դուռ, իսկ դուռ դարձար ես, օ՛խ, ինչ երջան-

կություն է այսքան սուտ մտածել: Ուտքերս կհոգնեն, կայրվեն կրակներուն մեջ, դժվարությամբ առաջ կերթան, կուզեն ծունկի գալ, փլվիլ մարմնիս ծանրութենեն, որ ժամ առ ժամ անտանելի կդառնա, թշնամի, մարմինս ինձ թշնամի, ախոյան, չար թշնամի: Շատ ատեն, բարի ու զգայուն մարդոց ստիպմամբ, ես սայլով կերթայի գաղթի ճամփան, բայց վերջերս ի վիճակի չեմ սայլ նստելու, ան իր ամեն ցնցումին ցավ և վախ կպատճառե ինձի, հոգիս կհաննե, շունչս կբռնե խեղդելու չափ, դժոխսային մեքենայի մման կուզե մարմինս քանդել, ինձ քեզմե բաժանել, կտոր-կտոր ընել: Կքալեմ այլևս: Սոված կքալեմ: Ծարավ կքալեմ: Շոգ ու ցուրտին կքալեմ: Քամի-անձրևին ալ կքալեմ անվերջ: Կայծակին: Հեղեղներուն: Ցավերս աշխարհից մեծ են, անչափելի և անկշռելի: Ցավերով կերթամ անհայտության երախը: Լույս պատկերդ աչքերուս մեջ կերթամ: Սիրտս իմ ներսի քո մանուկին փարած կերթամ: Շատ կվախնամ քարավանը հեռանա, ես մնամ, մեր մանուկը և ես ընկնինք ճամփուն վրա, խառնվինք փռշիներուն, հալվինք փռշիներու մեջ, ձուլվինք փռշիներուն, փռշի դառնանք, գերեզման չունենանք, քամին սփռե մեր փռշիները աշխարհի չորս կողմը, մեր սրտերու, մեր արյան, մեր աչքերու փռխարեն մութ փռշի ըլլա, գերեզման չունենանք և դուն փռշիներու մեջ չգտնես, չճանաչես, չգուրգուրես մեզի: Մարդիրոս...

– Ի՞նչ...

– Ինձ մի՛ նայե աղպես, կխնդրեմ, ախպերիկ, երբ աղպես կնայես, ես շատ կամչնամ:

– Ես քեզի չեմ նայեր, դուն ինձի հետաքրքիր չես, ես անոր երեսը կնայեմ, որ քո մեջ է:

– Ան և ես նույնն ենք, երբ աչքերիդ փայլատակումով կնայես մեզի, կամչնանք, վրաս ամոթի նեղություն կուգա:

– Ան սարին նայե՞մ:

– Սարին նայե, տես որքան գեղեցիկ է:

– Պահ մըն ալ քեզի նայեմ:

– Բայց ոչ ավելի:

Սուսանը դարձյալ կանգ առավ, մեծ ու խոր շունչ քաշեց և մի քանի ակնթարթ երանելի թեթևություն զգաց:

– Շարունակե գրել... Իմ ծառ ու արև, որտե՞ղ ես այժմ, թանկագին, միակ-միակ, անփոխարինելի ամուսինս, ինչո՞ւ չես գալիս: Մոսկալի է մտածելն անգամ, որ դուն մոռցեր ես մեզի, չես հիշեր, չես կարոտեր, ուժ չունիմ, որ պռռամ, ձայնս լսես: Երագիս մեջ քեզի կտեսնեմ: Արթմնի քեզի կտեսնեմ: Յավի մեջ քեզի կտեսնեմ: Հուսահատության գրկում քեզի կտեսնեմ: Իսկ դուն, իսկ դուն, իսկ դուն չես տեսներ ինձի: Ինձի կսպանես, անոր խնայե: Ինձի կարհամարհես, անոր սիրե: Ինձի կլքես, անոր գուրգուրե: Ան արդեն կկանչե քեզի: Ես կտեսնեմ, կզգամ մարմնիս յուրաքանչյուր բջիջով, կլսեմ գիշեր-ցերեկ, թե ան ինչպես քեզի ձայն կուտա: Ինչպես քեզի կալվի իր մետաքս թաթիկներով: Ինչպես անունիդ վրա կժպտա: Կխնդրեմ, կպարտադրեմ, կաղաչեմ, կիրամայեմ պաշտպանես անոր աշխարհի անարդարություններեն, հանցագործություններեն, տառապանքներեն, խաբեություններեն, բռնություններեն, անապատներեն ու խորշակ քամիներեն, յաթաղաններեն, արսուրներեն, արյուններեն, հրդեհներեն, սև օձ-վիշապներեն: Արդարության և ճշմարտության մեջ ապրի: Ցավերեն և դավթերեն հեռու ըլլա: Սեր և խաղաղություն վայելե: Մուրբ հոգով զորանա: Ամեն:

– Միրելի կինդ,– շտապեց ասել Մարտիրոսը:

– Ոչ, ախպերիկ,– Մուսանը մի պահ դժվար մքի գիրկն ընկավ, որոնում էր այնպիսի վերջաբան, որ նախորդ նամակներում չկար, և արտահայտեր այդ օրվա իր հուզմունքը:– Կինդ մինչ ի մահ:

Մարտիրոսը արագ ծալծլեց նամակը և մեկնեց նրան: Իսկ նա թաքուն համբուրեց թուղթը և պահ տվեց ծոցին:

– Երեկոն էր իջնում սարերից:

Մոտենում էին Օձնի վանքին, որ համանուն գյուղից հեռու չէր: Այստեղ նրանց սպասում էր գիշերը: Վանքի շրջակայքում խավրժիլ կա, քաղցրահյութ արմատներ, եղինջ, սառնորակ աղբյուր: Պաշար կանեն հետագա օրերի համար:

Մոտալուտ հանգիստը քարավանին շունչ և թև էր տվել: Ոչ ոք չէր խոսում, բոլորն անհամբեր շարժվում էին դեպի վանքը:

Արևն անցավ անտառոտ լեռան թիկունքը, և երկիրը ծածկվեց կապույտով:

Չով խաղաց:

Վանքի հողերում էին արդեն, երբ խրխինջ լսվեց՝ արձագանքելով անծայր բնության գրկում:

Բոլորը սարսուռով կանգ առան և ետ նայեցին:

Ոսկե ձին էր վերադարձել:

Ներսես Աթուրյանը վերջին անգամ վանքը տեսել էր նախանցյալ աշնանը, երբ իրենց խումբը ծանր ու դժվարին կոիվներ էր մղում Բաբերդ-Էրզրում ճանապարհին և հարավ տարածվող

հողերում: Որքան թանկ եղբայրներ իրենց կյանքը վայր դրեցին հերոսաբար: Այն ժամանակ ցուրտ ու խավար գիշեր էր, երբ, օթևան փնտրելով, հասան 1859-ի մեծ երկրաշարժից ավերված վանքի խարխուլ ու կիսաքանդ պատերին: Իսկ առավոտյան սկսեց ձյուն գալ՝ առաջին ձյունը, օտար ձյունը, քաղցած ձյունը, թշնամի ձյունը: Սար, անտառ ու դաշտ ծածկվեցին ձյան հաստ շերտով: Չյունը փակեց ճանապարհներն ու կածանները: Համասփյուռ ձյուն էր աշխարհում և ամեն տեղ: Մի քանի օրից, երբ ձյան հեղեղը դադար առավ, Մուրադը կարգադրեց ամեն մարդ գնա իր տունը, փայլեցնի զենքերը, ուժ հավաքի, հանգստանա, ամպաքինի վերքերը՝ մինչև զարուն բացվի և իրենք հավաքվեն Խաչկավանքում, որ հեռու է ոսոխի աչքից և ապահով դիրք ունի բարձրանիստ անտառների մեջ: Տղաներից շատերին Ներսեսն այլևս չտեսավ:

Այժմ չքնաղ օրեր էին Օձնի վանքում և նրա շուրջը: Ոմանք տեղավորվել էին պատերի մոտ, ներսի խորշերում, իսկ շատերը՝ փարթամորեն աճած խոտերի վրա: Արև էր, ծաղիկ ու կանաչություն և մաքուր երկինք: Վաղ առավոտյան Ներսեսը մի քանի տղաներ ուղարկեց համանուն գյուղը՝ իմանալու մարդ-մարդասանք կա՞ այնտեղ, թե՞ ոչ: Վերադարձան, ասացին՝ կենդանի շունչ չկա, փակ են բոլոր դռները, շատ տանիքներ՝ փլված, տատասկ ու մոլախոտ է պատել գյուղին, խրճիթները անտեր գերեզմանաքմբի են մման, լռություն է, մողեսներն են վազվզում քարերին, բծավոր, գորշ բուն է թառել հսկա ընկուզենու կատարին և իր խոշոր, անշարժ աչքերով նայում է մեզ, ճանապարհին մի արջառ տեսան, որ մոլորված արածում էր, քշել-բերել են հետները:

Ներսեսը հանձնարարեց արջառը մորթել և ճաշ տալ քարավանին: Վաղուց չկային հավերն ու կարմրակատար աքաղաղները, նրանք մեռան, որպեսզի մարդիկ ապրեն: Ջոհասեղանին պառկեցին լծկաններից մի քանիսը: Բոլոր գառները, սևաչ գառները, գանգրահեր գառները, զվարթ ու չարածճի գառները լուռ ու հոժարակամ մահատակ եղան մարդկանց: Օսանը չթողեց իր Աթլաս կովը մորթեն: «Ինձի մորթեք անոր փոխարեն»: Եվ Աթլասը շարունակեց քարավանի հետ ապրել՝ իր ճոխ կրծքով, մեծ ու պարարտ մարմնով, կեռճյուղ կոտոշներով, որոնցից Օսանը միմի զանգուլակ էր կախել: Ծանր ու երերուն, ամրակուռ ոտքերը հաստատորեն դնելով հողին, քայլում էր Աթլասը, և մեղմ երգում էին զանգուլակները: Մինչև ե՞րբ, — նրան նայելով, վերջերս տխուր մտածում էր Ներսեսը, և սիրտը ցավում, կուչ էր գալիս խղճահարությունից, նաև խղճում, փոքր եղբոր նման սիրում, կարեկցում էր Օսանին, որի կնճիռներով շրջանակված աչքերում միշտ անհանգստություն, վախ ու կասկածանք կար: Ամեն երեկո, երբ մի տեղ կանգ էին առնում գիշերելու, Օսանը կթում էր Աթլասին ջերմ ու հարազատ խոսքերով և կաթը, մինչև վերջին պուտը, բաժանում մարդկանց: Ինքը չէր խմում: Արդեն կուշտ ու երջանիկ էր, որ Աթլասը այդ օրն էլ ապրեց: Գիշերը Օսանը կծկվում էր նրա ծալապատիկ չորս ոտքերի արանքը, փորի տակ, և նրանք տաքացնում էին իրար, ինչպես մայր ու աղջիկ, և դժվար էր որոշել, թե նրանցից ով ով է:

— Ներսես Աթուն, ժողովուրդը կխնդրե մեկ քանի օր մնանք այստեղ, հոգնած են շատ, հիվանդներ կան, սայլերը նորոգվելու են, անասունն էլ հանգստանալու պետք ունի:

– Մեկ քանին անորոշ թիվ է, Վահրամ, – ասաց Ներսեսը: – Երեք օր կմնանք, ոչ ավելի: Այնուհետև անկանգառ կքայլենք մինչև Էրզրում:

– Գիշերն ալ:

– Խե՞նք ես:

– Ապրես, Ներսես Աթուն, – ուրախացավ Վահրամը:

– Դու էլ ես արդեն հոգնած:

– Ես հոգնած չեմ, ես հուսալքված եմ, – Վահրամը միանգամից տխրեց: – Եվ չգիտեմ, բախտ կունենա՞մ տեսնելու մեր Նոյ Նահապետին տապանը Մասիսի ձյուներուն գլուխը:

– Պետք է տեսնես:

– Համոզվա՞ծ ես:

– Պարտավոր ես տեսնել:

– Երանի:

– Բոլորս տեսնելու ենք:

– Ի՞նչ երանելի օր է լինելու:

Մակայն Վահրամը հասկացավ, որ ընկերը կորովի, ուրախ է ձևանում, որպեսզի ինքը վերջնականապես հուսարեկ և թևաթափ չդառնա այն ամենից, ինչ ապրեց ժողովուրդը. ինչն այսօր նրա իրականությունն է՝ ավելի մեռած, քան կենդանի, ինչ սպասվում է նրան դժխեմ գալիքի մեջ:

– Դու ևս վիստոված ես, Ներսես:

– Ես հուսով եմ:

– Ինչի՞ վրա է հույսդ:

– Ամեն մեկիս և բոլորիս միասին: Մենք դուրս կգանք այս դժոխքեն: Ասացի՝ դժոխք, և սարսռաց մարմինս: Կպատկերացնե՞ս, Վահրամ, հայրենիքը դժոխք մեզի՝ իր զավակներուն համար:

– Կսիրեն այդ դժոխքը:

– Լռիր, մի՛ խոսիր, լռիր:

Մի քանի տղամարդ և կին մոտեցան:

– Ինչո՞ւ լռեցիք, մենք հայ չե՞նք:

– Վահրամին կտանջե այն միտքը, թե ինչ է անելու մեր նոր հայրենիքին մեջ,– ուրախություն ցուցադրելով, ասաց Ներսեսը:

– Կարևոր մտածմունք է:

– Ի՞նչ պիտի ընես, Վահրամ:

– Ուսուցչություն,– իսկույն պատասխանեց Վահրամը,– Արդեն քանի տարի կերազեն:

– Չարմայր ճերմակյանին գործը կուզե շարունակել:

– Աֆերիմ, Վահրամ:

– Առանց դպրոցի և ուսուցչության ազգ մը չի կրնար առաջադիմել:

– Իսկ դու-ինչո՞վ պիտի զբաղվես,– հարցրեց Ներսեսը Գալշոյի մահից հետո լռակյաց և մռայլ, դեմքը ասես սև-մութ ամպով ծածկած Մգրոյին:

– Կովելու եմ, Ներսես:

– Ո՞ւմ դեմ:

– Իմ դեմ պետք է կովիմ:

Ներսեսի սիրտը ալեկոծ եղավ՝ դաժան էր պատասխանը և շանթի պես անսպասելի: Մռայլը իր դեմքն էլ պատեց, կոկորդը մի պահ քարացավ, հետո, խոր շունչ քաշելով, հարցրեց մեկ ուրիշի.

– Դո՞ւ...

– Ապրելու եմ, եթե ողջ մնամ,– ասաց Նազարեթը:

– Ես պիտի նստիմ և միտքս բերեմ Երզնկան, հարազատներու դեմքերը մեկիկ-մեկիկ, անոնց ձայնը, ծիծաղը, ուրախութ-

յունները, լացը, անոնց հետ քիշեր-ցերեկ խոսելու եմ, – ասաց մեծ
Կիրակոսյանը:

– Տուն պի շինեմ, ճիշտ և նման Երզնկայի մեր տունին
պատկերով, – ասաց Հակոբը:

– Իսկ դո՞ւ, Վարդանուշ...

– Ես պիտի նորեն ամուսնանամ, մեզի երեխաներ պետք
չե՞ն, նորեն մայր կուզեմ ըլլալ, – հուզված ասաց Վարդանուշը և
լուռ արտասպեց:

– Ծիրանի կորիզներս դնելու եմ մեր նոր հողին գիրկը և պի-
տի ուրախնամ անչափ, երբ անոնք ճյուղեր տան ու ծաղկին, – աս-
աց Մարգար Քեշիշյանը, որի ծիրանի այգին ամենանշանա-
վորն էր Եփրատի հովտում:

– Ջորավարիս անունով աղբյուր մը շինելու եմ Երևանին
մեջ, ով խմե՛ փառք տա անոր, – ասաց Հաբեթը:

– Երբեք չպիտի թողնեմ սուրս ժանգ կապե, պիտի մեռնեմ
անոր հետ, – ասաց Եփրեմը:

– Աստված քեզ պահի, տղաս:

– Իսկ դու, Ներսես Ալթուն, դու ի՞նչ որոշած ես, – հարցրեց
ներկաներից մեկը:

Ներսեսն անմիջապես չպատասխանեց: Տխրության ստվեր
անցավ դեմքով: Հայացքը դարձրեց նրանցից:

– Ան արդեն ուսուցիչ է:

Լուռ էր Ներսեսը: Եվ նրանք սպասում էին այդ լռությանը
պայմանավորված մի անտվոր պատասխանի:

– Երբ բոլորս տեղ հասնենք, ես այս նույն ճամփով կվերա-
դառնամ երկիր, – վերջապես ասաց նա: – Մուրադի խնդրանքն է և

հրամանը, փրկության նոր քարավան եմ կազմելու, ոչ մի հայ չափտի մնա գազանի բերանը, ուրիշ ծրագիր չունենք այսուհետև:

Լռությամբ քարի պես ծանրացավ յուրաքանչյուրի աչքերին և սրտի վրա:

– Էրգիրը մնա գազանի թաթերուն տա՛կ,– ծառս եղավ Մզրոյի ձայնը,– ո՞վ կփրկե էրգիրը:

– Դու, Մզրո,– դարձյալ երկար լռելով, ասաց Ներսեսը:– Եփրենը կփրկե, Հաբեթը կփրկե, Կարոն, սևավերակցի Դանիելը, Վահրամը, ակնցի Խաչատուրը, Գալշոն:

– Ան մեռած է:

– Անոր հոգին է ողջ: Մեր պողիկները կփրկեն, երբ մեծման: Մենք կփրկենք, և ուրիշ ոչ ոք, միայն մեր բազուկները կփրկեն: Մակայն դա հեռու, գուցե և շատ հեռավոր ապագայի իրականություն է:

Մզրոյի դեմքն ավելի սևացավ:

– Ես կուզամ քեզի հետ,– ասաց Եփրենը:

– Ես ալ,– ասաց Հաբեթը:– Ջորավարիս աղբյուրը հետո կշինեն, ան ջուրեն քաղցր է և հավերժական, ժողովուրդը կշինե:

– Ես ալ կուզամ,– ասաց Մզրոն:

– Ես ձեզի հետ եմ,– ասաց Դանիելը:

Ներսեսը ժպտալով և շնորհակալությամբ նայեց նրանց:

Մարդիկ ցրվել էին վանքի շուրջը և խումբ-խումբ, առանձին իրենց կենցաղային հոգսերն էին քաշում կամ էլ կանաչներին թիկնած վայելում մեղմ ու արև օրը: Ձգեստ ու ոտնաման էին կարկատում: Լվացքով էին զբաղված: Վերանորոգվում էին սայլերը, անրացվում ձիերի, ջորիների մաշված փոկերը, բանջար ու արմատներ էին հավաքում տոպրակների մեջ: Օգնում իրար՝

թեթևանալու ճանապարհի հոգնությունից: Ուշադիր ու խնամքով մաքրում էին հրագենի փողերը: Սրբում դաշույնների ժանգն ու փոշին: Երեք մեծ կաթսաներում եփվում էր միսը՝ կափարիչների շուրթերից ախորժ գուլորշի արձակելով: Մանփրեն հեսանաքարով սրում, փայլեցնում, սրում էր մանգաղի շեղբը: Ներսեսը հեռվում, երիցուկների դեղնասպիտակ դաշտում տեսավ իրար գլխի հավաքված մի քանի կանանց ու աղջիկների: Ինչի՞ մասին են նրանք քիթ քքի գրուցում այդքան հետաքրքրասիրությամբ:

Կրակոց պայթեց խաղաղ օդում: Բուրրի սիրտը վեր ելավ: Տազնապի ալիքը անցավ ցիրուցան քարավանով: Մեկ-երկու ռուպեից հայտնվեց ուրֆացի Համբարձումը՝ մի ձեռքին հրացան, մյուսում՝ սպանված վայրի աղավնի: Ներսեսը խիստ բարկացավ նրա անգոռուշությունից, որ կարող էր հրավիրել այդ կողմերում ապաստանած թուրքի կամ քրդի ուշադրությունը, և զինյալ պահակներ կարգեց վանքամոտ բոլոր ճանապարհների վրա:

Բժավոր, գորշ բուն հեռու էր, բլուրների հետևը ծվարած գյուղի ընկուզենու կատարին, և, հասկանալի է ու բնական, չէր երևում, բայց Ներսես Ալթունյանը երևակայությամբ տեսնում էր նրան: Իր ցեղի մեջ ամենամեծն է: Աջ ու ձախ լայնորեն տարածված են փետրավոր թևերը՝ կարծես պատրաստվում է թռիչքի, սակայն անցնում են ռուպեներ, և նա չի թռչում, քարի պես կանգնել է իր ժամանակի ու տարածության մեջ: Կտուցը կարճ է, նման կեռ դաշույնի: Ոտքերին սուր-սուր ճիրաններ կան: Կլոր, անշարժ, խոշոր աչքերով իր լույս ու մութ գիշերվա խորքից նայում է քեզ, քարավանին, ամեն մարդու, ավերակված երկրին: Հայացքում մշտնջենավոր վախն է, որով վախեցնում է մարդկանց, զարմանքը, որով զարմացնում է, չարությունը, որով չարացնում է,

կախարդանքը, որով կախարդում է, հուսահատությունը, որով հուսահատեցնում է, կասկածը, որով կասկածի տակ է առնում կան ու չկան, ճշմարտությունը և սուտը, կյանքն ու մահը: Ի՞նչ է կանխագգում, աչքերով գուշակում նա իրենց համար:

Բուն իրենց երկրում ապրող այն թռչունը չէ, որին կարելի է հանդիպել յուրաքանչյուր օր, նույնիսկ ամեն ամիս դժվար է տեսնել նրան, կարող են մինչև անգամ տարիներ անցնել, և նա չի հայտնվի քեզ իր մութ ու չարագուշակ լռությամբ: Երբ այդպես լռելյայն գալիս է բուն և անշարժ աչքերով թափանցում քո հոգու ներսը, ուրեմն դու հանդիպել ես քո ճակատագրին, որից արդեն չես կարող փախչել, հեռանալ, ազատվել: Դա նման է կարկուտի, որ պետք է ծեծի քեզ, փոթորիկի, որ պետք է տապալի, կայծակի, որ պետք է շանթահարի ու սևացնի, հեղեղի, որ պետք է ոսկորներդ ջարդելով քշի քեզ դեպի անհայտություն, երկրաշարժի, որ պետք է հիմնահատակ ցնցի և հողին հավասարեցնի ամբողջ կյանքը: Բուն կարող է նաև արեգակ ծագեցնել զլխիդ վերև, բայց դա լինում է հազար տարին մեկ անգամ, հետևապես՝ երբեք ու ոչ մի ժամանակ չի լինում:

Ներսես Ալթունյանը պարզ տեսավ ու գիտակցեց, որ եկել է բուն: Գիտակցությունն ավելի ուժեղ էր, քան տեսողությունը: Բուն իր սուր մագիլներով դուրս ու ներսից կարծես ճանկռում, ուտում, ծամում էր նրա ուղեղը: Բայց ուղեղը չէր ցավում, թեև տառապում էր: Անցավ տառապում էր մարմինը: Տառապում էր նաև սիրտը: Դա ցավից առավել ծանր էր և ճնշիչ:

Բուի մեջ ապրում են բարին ու չարը: Նրա աչքերը, խոշոր, սառը, բոլորակ, անշարժ աչքերն անվերջ ուզում են, կեռ կտուցը լծակ դարձրած, հավասարակշռել նրանց, կանգնեցնել նույն ար-

դարամիտ հարթության վրա, բայց դա երբեք չի հաջողվում: Միշտ չարն ավելի բարձր է կանգնում, քան բարին, և բարին՝ առավել բարձր, քան չարը: Դրա համար էլ բուի աչքերը ծննդյան օրից մինչև մահ մի քիչ շիլ են:

Ո՞վ գիտե, թե բուն ինչքան է ապրում, նա ապրում է աշխարհի ու մարդկանց հետ, և բանի դեռ կան նրանք, կա նաև բուի կոնչյունը, որ կանչում է ոչ թե իրեն, ոչ թե որևէ թռչունի կամ գազանի, ոչ թե իր նմանին՝ ինչպես բոլոր թռչունները և կենդանիները, այլ մարդուն: Կանչում է, որ դժբախտացնի վերջնականապես: Կանչում է, որ իր հետևից տանի նրան երջանկության հովիտը: Մահ տա և ծնունդ: Լույս: խավար՝ իր աչքերի և հոգու խավարը: Մոլորեցնի: Ծվատի: Վախեցնի: Խելագարեցնի: Դարձնի իմաստուն: Համբերատար: Խաչակիր: Նահատակ տառապանքի և ծանր փորձության: Հավասարման կնիք դնի մահվան ու ծննդի միջև: Ի սկզբանե են և անխուսափելի ինչպես ծնունդը, այնպես էլ մահը: Նրանք քաղցր են և դառն ու լեղի՝ հավասարաչափ: Իր աչքերով նրան ասի, որ նա ծնվել է մահվան համար: Դա ահավոր և ահարկու գեղեցկություն է, որ կանգնեցնում է սիրտը: Իր կոնչյունով և աչքերով նրա մեջ հաշտեցնի լույսն ու խավարը, մահն ու ծնունդը, գոյությունն ու դատարկությունը: Լինի նրան թշնամի ու բարեկամ, սիրելի և ատելի, մոտիկ ու հեռու: Նրա հավատը, կասկածանքը և անհավատությունը: Գիշը: Լուսնոտությունը, որ ամեն ինչ տեսնում է և ոչինչ չի տեսնում: Նրան մարդուց վերածի իր պես բուի, որ երբեք չի քնում և ամեն պահ հսկում է չար ու բարի աշխարհին:

Բուն եկել-մոտեցել էր իրենց, և Ներսեսը արդեն լսում էր նրա ձայնը:

Գուցե նա վաղուց է եկել, հենց սկզբից, շատ վաղուց: Երբ ինքը ծնվեց քսանյոթ տարի առաջ: Երբ ծնվել են իր հայրը և մայրը: Ավելի վաղ: Երբ ստեղծվեց Երզնկան, որ մանուկ հասակում կոչվում էր Երեզ, հետո՝ Երիզա, ավելի ուշ՝ Երիզավան: Շատ ավելի վաղ ժամանակներում: Երբ լեռները բարձրացան երկինք, և Եփրատը խոր հուն բացեց իր համար: Գուցե վերջերս: Երբ եղավ անծայր կոտորած, անծայր մահ ու ավեր, անծայր անապատ: Ե՞րբ է եկել: Գուցե միշտ եղել է իրենց կողքին, իրենց հետ, իրենց մեջ:

Ինչո՞ւ է այդպես: Ճակատագրի այդ ի՞նչ խաղ է: Հենց իր և իրենց ներսում պետք է բնակվի բուն: Ուրիշ տեղ չկա՞: Հնարավո՞ր է նրանից ազատվել:

Թեկուզև պայծառ արև ծագեցնի իրենց գլխավերևում, որ դարերն էլ չեն տեսել երևի, հարկավոր է փախչել նրանից: Թեկուզև իրենց խոստանա երջանկության ծաղկավետ հուփտը՝ իբրև հայրենի երկիր, որտեղ ոչ մի օձ ու գազան մուտք չի գործելու, դարձյալ պետք է, ամեն ջանք կիրառելով, նրանից հեռանալ: Թող մնա ինքն իր հետ՝ սուզված իր չարագուշակ կոնյունի, գիշերային հոգու, մութ աչքերի, քար լուծյան, դավադիր զգացմունքի ճահիճը:

Նա ատեց բուին՝ ինչպես մենք, հոգին սատանային ծախած, խարդախ թշնամուն: Դա զզվանք էր, սարսեցուցիչ անվստահություն, բայց ամենից ավելի՝ վախ:

Ներսեսին թվաց՝ ինչ-որ մեկը հետևից անձայն մոտեցավ իրեն և կանգնեց: Նա չուզեց շրջվել: Երբ քիչ հետո, հակառակ իր կամքին, շուռ եկավ, ոչ ոք չկար: Մոտակա բարդու կանաչ ճյուղերը խշշացին: Նա մայեց ներքևից վերև: Գրեթե ամենավերևում նստած էր բուն: Նա չհավատաց իր աչքերին և ավելի ուշադիր

նայեց: Բուն էր: Երբ նրա աչքերը հուզմունքից ծայրաստիճան լարվեցին՝ բարդու կատարին ավելի պարզ ու որոշ տեսնելու նրան, բուն այնտեղ չէր:

Իտրականք եղավ, — մտածեց Ներսեսը, — զգայարաններս մոլորեցրին ինձ: Ճակատին՝ սառը քրտինք: Սիրտը միանգամից վետվեաւ: Չկա բուն: Հեռու է: Չի տեսնում իրեն: Թշվառական բու: Մահադեղ: Ջադու: Լեշ:

Նա գիտակցեց, որ այդ ամբողջ տեսլապատկերը ելնում էր իր ներսում արդեն բավականին երկար ժամանակ խոր արմատներ արձակած քարավանի ցավոտ ճակատագրից: Ցավը ամեն պահ և անդադար տրոփում է՝ սրտի պատին, երակներում, ուղեղի վրա, բունքերի շուրջը: Վեր ու վար պտույտ գործում մարմնի մեջ, տնքում, կծկվում, շուռ ու մուռ գալիս, ձգվում, պայթում: Եվ դեղդեղամիջոց չկա: Մխիթարանք: Հույս:

Կրկին ու դարձյալ նրա առջև ամբողջ մերկությանը կանգնեց ճակատագրական հարցը. կփրկվե՞ն, կհասնե՞ն Արաքսին, կտեսնե՞ն Մասյաց հավերժական ու պայծառ ճյուղերը, դաշում Արարատյան, Սուրբ Էջմիածինը, կապրե՞ն, կգոյատևե՞ն ժողովուրդը և երկիրը, թե՞, Բաբելոնի և Ասորիքի նսան, իրենք էլ կդառնան մի ցնորք դառն ու դաժան աշխարհի հիշողության հեռաստաններում:

Ներսես Աթուրյանը ծանր հուսահատության զրկում էր, որ բոլոր կողմերից սեղմում էր նրան, ճնշում, շնչառեղձ անում, պատում հոգին թանձր մութ ու մռայլով: Այդ ե՞րբ էր և ո՞ւմ հարցրեց՝ կապրե՞նք արդյոք: Եվ պատասխանը համր լռությունը եղավ: Ինքն իրավունք չունեի հարցնելու: Բոլորն ունեն, բացի իրենից: Նա պետք է ժպտա՝ հակառակ իր մռայլ տրամադրությանն ու

մտքերին, խաբի, ինչպես լարախաղացության ժամանակ ծաղրածուն է ծիծաղելով, ուրախ ցատկոտելով, հռռալով թաքցնում իր սրտի տխրությունը, հույս և ուժ տա մարդկանց, որ տակավին ամեն ինչ կորած չէ, և կգան լույս ու բարի օրեր:

Կար մի անճաման խեղկատակ-ծաղրածու՝ արաբկիրցի Թաթոսը, որ տարին մեկ-երկու անգամ լարախաղացի, տավուլ-գուռնայի հետ գալիս էր Երզնկա և եկեղեցու հրապարակում՝ հայոց թաղի ճիշտ կենտրոնը, բազմամարդ և ուրախ ներկայացում տալիս: Տարեց ու պատվական հայերը մատում էին այդ օրվա համար շինված, ժամանակավոր փայտամածներին, տնից իրենց հետ բերած կարպետի կամ փափուկ մինդարների վրա, իսկ հասարակ ժողովուրդը, երիտասարդ ու մանուկ, ծալապատիկ տեղավորվում էին գետնին՝ անքակտելի, հոծ շղթա կազմելով հրապարակի շուրջը: Հենց որ Թաթոսը ասպարեզ էր մտնում, ժողովուրդը ալեկոծվում էր, ոչ ոք չէր կարողանում զսպել իր սրտաբուխ ծիծաղը, ուրախությունը չափ ու սահման չունեի, նրա յուրաքանչյուր ծամածռությունը, ուրախ կատակները, ճարտար զլուխկոնծին արժանանում էին անզուսպ քրքջոցի ու ծափահարության: Հեռվից նրան դիտող թուրքերը նախանձից պայթում էին, իրենց մեջ՝ ծովից ծով բռնագրավված երկրում, չկար ոչ մի լարախաղաց և ոչ մի ծաղրածու: Թաթոսի դեմքն ահավոր տզեղ էր. աչքերը՝ սատանայի, քիթը՝ մեծ ու կարմիր, բերանը սևով ներկել, հասցրել էր ականջներին, այտերը՝ մուգ կապույտ, ծնոտը՝ նրկայնաձիգ, որ ավարավում էր երկու ցից ու շեղ մազափնջով: Սակայն իրականում այնքան գեղեցիկ էր՝ Քրիստոսի պատկերք: Հաջորդ օրը, տներում առատ ու սրտաբաց հյուրասիրություններից հետո, երբ նա մեկնում էր, մի քանի շաբաթ հիացմունքն ու

խոսքը չէին դադարում նրա մասին: Շուկաներում, ընտանիքներում, խանութներում, ամեն տեղ նա էր բոլորի շուրթերին: Բայց վերջին անգամ նա հրաժարվեց ամեն կարգի հյուրամեծարանքից: Հանկարծ հայտնի դարձավ, որ ընդամենը մեկ ամիս առաջ նա թաղել է իր միակ որդուն: Բոլորը շատ վշտացան: Կարծես իրենց հարազատին էին կորցրել: Դա վերաբերմունք էր ուրախ դեմքով սզավոր հոր նկատմամբ:

Որտե՞ղ ես այժմ, Թաթոս: Դու հիշո՞ւմ ես մեզ:

Ներսեսը համոզված էր, որ ոչ ոք չի հիշում իրենց, որովհետև հետևում ամայություն է, իսկ առջևում՝ անորոշ ու մթին ճակատագրի դաշտը: Ինչպե՞ս պետք է անցնեն հիվանդությունների, քաղցի, փորձանքների այդ դաշտով, որտեղ թուրքն է, բուն և քուրդը: Ընեն անգամ, երբ Ներսեսն ուշադիր նայում էր քարավանին, այս կամ այն տղամարդուն, երեխային, կնոջը, սիրտը կույ էր գալիս հուսահատության ցավից, աչքերը տխրում-տխրում էին, գիտակցությունը որոնում և չէր գտնում ոչ մի մխիթարիչ պատկեր: Երբեք հուսալքությունը նրա էության մեջ չէր թափանցել այն չափով, որքան այժմ: Նույնիսկ երբ սպանվեցին ծնողները, ինչքան էլ վիշտն անփարատելի էր, նա չկորցրեց իրեն, մինչև անգամ սիրելի կնոջ ու երեխաների նահատակությունը խավար գիշեր չդարձավ նրան, թեև ահարկու էր, խեղդապարանի պես այրող, անողոք, մղձավանջային, դժնդակ ու անհատելի: Իսկ հիմա իրականությունը նրա համար մի անդնդախոր ու վիթխարի սև քառակուսի էր կարմիր անապատում:

Նա հաճախ մոռանում էր, որ այդ քառակուսու մեջ կա նաև իր սև ճակատագրի դեմքը:

Սուսանը կհասնի՞ փրկարար Մասիսին: Այնքան կարևոր է, որ նա իր մանուկի հետ հասնի այնտեղ: Շատ կարևոր է լինի մեկը, որի աչքերը տեսած չլինեն գաղթ ու կոտորած, սիրտը քաթախված չլինի իրենց ազգային ողբերգության ծովում, հոգու քելերը բզկտված չլինեն անօրինակ ցավից, հիշողությունը լույս լինի, առավոտ և նոր սկիզբ, գոնե մեկը, որը քեզ նայի, քեզ գրկի, քեզ համբուրի գարնան ծաղկազարդ ժպիտով:

Պետոն կհասնի՞... Վասկերտի կովից հետո նա վար ու վեր ճանապարհներով, ճահճոտ հողերի, փշոտ անտառների, քարուքոտ ձորերի միջով քարշ է տալիս իր անքուն վերքերը:

Կիրակոսյանները կհասնե՞ն... Եթե ոչ բոլորի, ապա մեկ-երկուսի համար հույս կա, հո չի կարող ամբողջ ընտանիքը գոհ դառնալ:

Նազարեթը կհասնի՞...

Սեդրոսը կհասնի՞... Որքան նիհարցած է նա, կաշի-ոսկոր:

Փոքրիկ տղան և իր չալպտուրիկ շունը կհասնե՞ն... Մեծ անարդարություն կլինի, եթե հանկարծ մնան ճանապարհին:

Մարտիրոսը կհասնի՞... Աղամի որդի Մարտիրոսը, որք Մարտիրոսը, Սուսանի գաղտնիքների պահապան Մարտիրոսը:

Հեթունը կհասնի՞... Արդեն քանի օր է՝ ոչ ուտում է, ոչ խմում. «Ինձ ետ տարեք իմ քաղաքը, կխնդրեմ, ինձ ետ տարեք իմ քաղաքը, ինձ ետ տվեք իմ գետը, կաղաչեմ, ինձ ետ տվեք իմ գետը»:

Օսանը և իր Աթլաս կովը կհասնե՞ն...

Վահրամը կհասնի՞... Պաշտավոր ես հասնել, Վահրամ: Իրավունք չունես մեռնելու:

Մամփրեն կհասնի՞... Նրա մանգաղն ու փոցխը շատ են անհրաժեշտ ժողովրդին, մեր էությունն են, առանց նրան ինչպե՞ս

ապրենք: Ինչո՞ւ չապրենք: Ինչո՞ւ մեռնենք: Ո՞ր մեղքի համար: Ի սեր ո՞ւմ: Այս ի՞նչ ահարկու-զարհուրելի հարցական է:

Ծեր կանայք ու տղամարդիկ կհասնե՞ն... Իսկ ո՞վ, ո՞վ պիտի ականատեսի սրտով, ականատեսի աչքերով, ականատեսի հոգով պատմի դեռևս չծնվածներին իրենց նախնյաց երկրի հոգեվարքը:

Վարդանուշը կհասնի՞... Կհասնի՞ իր երազին, իր նոր երեսաներին, իր անծանոթ ամուսնուն՝ նրանց մեջ վերականգնելու իր անմոռաց կորուստները, շարունակելու նրանց, փայփայելու, սիրելու, աղոթելու նրանց կենդանի գոյության համար:

Մգրոն կհասնի՞... Պետք է գնաս-հասնես, իմ քաջ եղբայր, Դավթի սիրտ, Դավթի արյուն, Դավթի խիղճ ու հոգի, առանց քեզ չի եղել, չկա, չի լինի Հայաստան:

Քարավանը՝ իր մարդկանցով, սայլ ու անասուններով տեղ կհասնի՞... Նոյ նահապետի տապանի պատմությունը կկրկնվի՞, արդյոք, թե՞ այս գույումն ավելի կործանարար է, քան համաշխարհային ջոհեղեղը:

Ես կհասնե՞մ, լսեց Ներսեսը իր ձայնը, իր, որ իսկույն սուզվեց-խլացավ-լուծվեց արյան մեջ, և արյունը սառույց դարձավ պատասխանի բացակայությունից:

Սարգիս Դուշյանը փորլուծությունից մեռավ անցյալ շաբաթ: Փորհարիները սողոսկել էր քարավան, և արդեն շատերին էր տանջում ստամոքսի ու աղիքների սուր, գալարվող ցավը: Քարավանում բժիշկ, դեղորայք չկար: Ներսեսը մեղադրում էր իրեն, որ ժամանակին չի մտածել այդ մասին: Բժիշկ լինե՞ր՝ իրենք կարող էին ծնկի չգալ որոշ դժբախտությունների առջև: Անթառամ տուտուն, ծեր, սակայն իր անվան պես տակավին աշխույժ ու տա-

կուն մի կին, ոտ ու ձեռ ընկած, արյունախոտի արմատներով, խոզակաղնու կամ փշասալորի կեղևով, սպիտակ ճագոմի տերևներով ու մատղաշ ընձյուղներով փորձում էր բուժել հիվանդներին, բայց այդ միջոցները դեռևս զգալի արդյունք չէին տալիս: Դեղաբույսերը ոմանց սակավ-ինչ օգնում էին, թեթևացնում ցավը, մարմինն ուժեղացնում, այդուամենայնիվ, նենգ հիվանդությունը շուտով էլ կրկնվում էր, արագ փոխանցվում ուրիշներին, որովհետև տարրական պայմաններ չկային կյանքի բնականոն զործունեության համար: Ուտում էին՝ ինչ պատահի: Հաճախ՝ հում կամ կիսաեփ վիճակում: Որքան շարժվում էին դեպի արևելք, զարունն այնքան շատանում ու փարթամանում էր: Ծամում էին ճանապարհի քաղցր խոտ ու ծաղիկը, որոնցից ոչ բույրն էին մարդուս օգտակար ու պիտանի: Երզնկայի մաքուր և բարեկիրթ կենցաղը, որ պահպանվում էր մինչև վերջերս, արագ փոխարինվեց ճայռտ առօրյայով, որը զիջերը պառկում, առավոտյան արթնանում էր մարդկանց ներս ու վրան դուրս տված թարախակալ վերքերի մռայլությամբ:

Հարություն Փազարյանը մեռավ: Նա երիտասարդ չէր թեև, բայց այնքան էլ ծեր չէր, որ Գաբրիել հրեշտակապետը այցելություն աներ նրան: Նա կարող էր դեռ երկար ապրել, քանի որ իր անմիջական արմատը՝ Մատթեոս աղան, ի տեր հանգավ 127 տարեկանում և մեծ պատիվներով հանձնվեց Սուրբ Նշան եկեղեցու հողին:

Օրիորդ Բերկրուսի Ազնավուրյանը մեռավ: Նա միանձնուհի էր և ազոթքով ու պահեցողությամբ մանեց իր կյանքի թելը: Եվ երջանիկ էր: Եվ հավատում էր վաղվա բարի օրվան: «Ասաված մեծ է և արդար»: Այս էր նրա վերջին խոսքը: Նա մեղմ ու փա-

փուկ գոցեց աչքերը: Դենքը խաղաղ էր: Շուրթերը խաղաղ էին: Կարծես նա գոհ էր, որ ամեն ինչ այդպես վերջացավ:

Մեռավ նաև Ճան Միլիտոնյանը, քսանամյա մի երիտասարդ, որ առաջին քայլերն էր անում լուսանկարչության մարզում: Նրա հետ անկացան դեռևս ողջերի դենքերը՝ չհասցնելով ժպտալ նրա հրաշք գործիքին, դեռևս չծնվածները, որ կտարված ժպիտով պիտի ժպտան իզուր տեղ, մեր քայլ առ քայլ նահանջող բնությունը՝ իր քար ու ծաղիկով, գյուղերը, լեռները, հովիտները, մեզ ընդառաջ եկող բնաշխարհը, որ պետք է որոնի ու չգտնի նրան:

Մեռավ նաև Արտաշես Թորիկյանը: Ոչինչ չասաց: Ոչ մեկի երեսին չնայեց: Մեռավ անձայն: Տխուր: Բուլբրից նեղացած, նույնիսկ՝ իրենից: Աչքերը փակ: Ինքն իր հետ:

Ոսկե ձին վրնջաց: Նա անհանգիստ էր: Հետևի ծախս ոտքով դոփում էր գետինը և ճանկառում: Պարանոցը երկարացրեց, նյարդայնորեն խլշտացրեց ականջները և կրակված աչքերով աջ ու ահյակ նայեց հեռուներին:

– Գնալ-գալուդ ճանապարհին ի՞նչ տեսար, ոսկե ձի:

Ներսես Ալթունյանին թվաց՝ բնության զրկում իրենք երկուսով են՝ չկան ո՛չ վանքի պատերը և ո՛չ էլ մարդիկ, իրենց արանքում լռության սոսափյունն է և կանաչ սարալանջը:

Ոսկե ձիու մարմինը թուլացավ: Գլուխը խոնարհվեց: Հիմա նա բացարձակապես անշարժ էր: Այդ դիրքով նա նման էր արևի տակ կանգնած ձիու կապույտ ստվերի:

Տեսա Մեպուհ լեռան ձյունոտ գագաթը վաղ արշալույսին: Չորերը դեռևս կիսամթի մեջ էին: Իսկ Մեպուհի ճերմակ թազը արդեն շողում էր արևի լույսից:

Տեսա կայծակնահար մի ծառ,- քիչ անց լսեց Ներսեսը ոսկե ձիու ձայնը:- Մեծ ու հսկայական էր ծառն այդ՝ երկինք հասնող ճյուղերով, հազար մարդ ձեռք-ձեռքի տված չէր կարող գրկել նրա բունը: Կարծես լեռներից էլ բարձր էր, դաշտերից ընդարձակ: Եվ կայծակնահար էր եղել: Այրվել-մեռել էր: Մնացել էր առեղիվ, կանգուն, անթաղ կմախքը:

Տեսա Ավերակված վանքեր ու գյուղեր:

Տեսա մի գունեղ արտույտ:

Լեռների կուրծքը կանաչել է:

Անտառները կանաչ են հագել:

Եփրատը խաղաղության մեջ է այժմ՝ համեմատած այն հեռավոր օրվա հետ, երբ իր ծոցում ուզում էր խեղդել ինձ:

Մեր դաշտում ծաղկել են ծառերը:

Ես երջանիկ էի: Վարզում էի և ծառս գալիս: Խրխնջում էի ուրախությունից:

Ես մտա քաղաք: Ոչ ոք ինձ չճանաչեց:

Տեսա Ենոքին: Նա չէր բղավում: Երգ չէր ասում: Չէր արտասվում: Նա լուռ էր: Համր: Խեղճ ու աղքատ: Սարսափելի իր և ինձ համար: Ես մոտեցա նրան: Նա նայեց ինձ, նայեց երկար և անձայն քլքլաց՝ աչք ու բերանը ծամածռելով: Նրա ծիծաղից ես տխրեցի և վախեցա:

Տեսա Սուրբ Փրկիչ եկեղեցու փակ դուռը և զանգակատան գլխի խաչը:

Տեսա շուկան՝ խանութներն ու արհեստանոցները կողոպտված, այրված, փլատակված:

Տեսա շատ շներ, որոնք փողոցների ու հրապարակների աղբանոցներում ուտելիք էին փորփրում:

Տեսա երեք թե չորս թուրքի, որոնք մի ոտքը քիչ բարձրացրած՝ ինչպես շունը, կողք-կողքի միգում էին Չատրճի բաղնիքի պատին: Ես խրխնջացի, բայց նրանք ուշադրություն չդարձրին ինձ վրա:

Տեսա մի քանի թուրքեր՝ չաղրայով կին, երեսը բաց ու անվա տղամարդիկ: Գալիս էին մզկիթից: Նրանցից մեկը ոսկոր էր կրծում:

Տեսա մեր տունը: Մի փլատակ ու մոխրացած դիակ էր պառկել թոնրատան մուտքի առջև:— Դարձյալ լսեց Ներսեսը ոսկե ձիու ձայնը:— Դա Արմենակ Սեփեճյանն էր: Ես նրան ճանաչեցի իր քստիկներից, որոնք չէին այրվել:

Ես երկու ցերեկ և մեկ գիշեր ապրեցի մեր բակում՝ Արմենակ Սեփեճյանի հետ: Նա ինձ ոչինչ չասաց: Ոչ մի քաղցր ու սիրալիր խոսք: Մեջքս չշոյեց: Շաքար չդրեց լեզվիս: Եվ ես նեղացած շրջվեցի ու հեռացա:

Չին շարունակեց իր տեսածը տեսնել՝ այս անգամ հետդարձի աչքերով:

Տեսա մի քանի թուրքեր՝ երեսը բաց ու անվա տղամարդիկ և չաղրայով կինարմատ: Նրանցից մեկը ոսկոր էր կրծում, — կրկին ու դարձյալ լսեց Ներսեսը ոսկե ձիու ձայնը:— Հետո տեսա երեք թե չորս թուրքի, որոնք մի ոտքը շան մնան բարձրացրած, միգում էին Չատրճի բաղնիքի պատին:

Տեսա շատ շներ, որոնք հրապարակների ու փողոցների աղբանոցներում ուտելիք էին փնտրում: Շուկայի խանութներն ու արհեստանոցները կողոպտված էին և փլատակված: Եվ Սուրբ Փրկիչ եկեղեցու զանգակատան գլխի խաչը տեսա ու փակ դուռը:

Եվ տեսա Ենոքին: Նա լուռ էր: Ես մոտեցա նրան: Նա մայեց ինձ և աչք ու բերանը ծամածռելով համր ու լուռ ծիծաղեց: Ես խրտմնեցի ու փախա քաղաքից:

Երջանիկ և տխուր վարգուս էի մեր դաշտում, որտեղ ծնվել, ապրել ու մեռել էին իմ հայրը, իմ պապը և շիկավուն, կապույտ աչքերով ապուպապը: Կարկաչում էին զմրուխտ առվակները: Դաշտը ծաղկել էր և բուրում էր հարբեցնող անուշահոտությամբ:

Եփրատը խաղաղ է այժմ՝ ոչ այն հեռու-հեռավոր օրվա պես, երբ ուզում էր ինձ խեղդել, ջարդել ոսկորներս իր քարերին, նահատակել:

Անտառները կանաչ են հագել: Լեռների կուրծքը կանաչել է:
Տեսա մի գույնզգույն արտույտ: Նա չէր երգում:

Տեսա ավերակված գյուղեր ու վանքեր:

Կայծակնահար մի ծառ տեսա: Մեծ ու հսկայական էր ծառն այդ՝ երկինք հասնող ճյուղերով, հազար մարդ ձեռք-ձեռքի տված չէին կարող գրկել նրա բունը: Կարծես լեռներից սռավել բարձր էր, դաշտերից ընդարձակ և կայծակվել էր: Այրվել, մեռել: Մնացել էր ահռելի, կանգուն, անթաղ կմախքը:

Տեսա Մեպուհ լեռան ձյունոտ գագաթը արևամուտից առաջ: Հովիտներն արդեն կիսամթի մեջ էին, իսկ Մեպուհի ճերմակ թագը դեռ շողում էր արևի ոսկուց:

Ես չորս ոտքս չափ զցած վազում-վազում էի առաջ և ետ նայում: Աչքերիս մեջ լցված ամբողջ բնությունը մահվան պես լուռ էր: Ես էի ու իմ սիրտը, որ ոչ մի անգամ կանգ չառավ: Նա էլ էր սլանում առաջ՝ ետ-ետ նայելով: Նա մեկ ոտնացատկ առաջ էր, և ես անընդհատ վազում էի նրա հետևից:

Հետո տեսա քարավանը և բարձր ու զիլ խրխնջացի:

Ոսկե ձին դուրս ելավ իր կապույտ ստվերից: Վիզը դարձյալ երկարեց: Խշտացող ականջները որսացին հարազատ ձայներ: Կայծ ու կրակ հայացքը հեռուներում երևի տեսավ այն, ինչ չէր երևում:

Կյանքը, սերը, մահը Ներսես Աթուրյանին առել էին իրենց եռանկյունի գիրկը և պատեպատ էին զարկում: Ո՞ր պատն էր ավելի բարձր, դաժան և անհաղթահարելի: Նա չգիտեր: Երեքն էլ թշմանի էին իրեն և մրցում էին միմյանց հետ այդ անհոգի ու վայրագ թշմանության զուգահեռականում: Կյանքի՞ պատը. նա խոյ էր, կույր՝ ինչպես բուն և սառն ու մահաշունչ: Սիրո պատը նրան լույս էր խոստանում, բայց քաշում դեպի խավար անդունդները, որտեղից վերադարձի ոչ մի ճանապարհ չկար: Մահվա՞ն պատը. նա կարծես պատսպարում էր իրեն, հանգստացնում-հանգստացնում, կարծես համոզում, որ նա է իր փրկությունը, իր հետ նա կապրի հավերժական ժամանակի մեջ, և այդ համր ու սևադեմ, խաբեական և նենգավոր խաղը ահասարսուռ էր ամենից ավելի՝ ահից թուլանում էին ոտքերը, կծկվում, ցավում էր սիրտը, մթնում էին աչքերը: Ամեն անգամ, երբ նա խփվում-զարկվում-խփվում էր կյանքի պատին, երանելի էին դառնում սիրո և մահվան պատերը: Երբ սիրո պատին էր զարկվում, աչքերի առջև կյանքի պատն էր, և մանավանդ՝ մահվան պատը, որը, տեսնում ու հավատում էր, կարող է ազատել իրեն հոգեկան խորտակիչ ալեկոծումներից: Իսկ երբ մահվան պատին էր խփվում-զարկվում-խփվում, սիրո և կյանքի պատերը թվում էին փրկության հեռավոր, մշուշապատ ափեր, որոնց անհնար է հասնել, շատ ուշ է արդեն, և նա լուռ ճշում էր:

Իրենց հավատքն ասում է՝ հարթիր մահին և հայրություն առ: Ասում է՝ սիրիր մարդուն, բնությունը, գազաններին և քաշուններին,

չարծուճը, կյանքը, արշալույսը: Մի՞թե բարին անուժ է դարձել և արդեն չարն է տիրում հավիտյանս հավիտենից, նենգությունը, նախանձը, օծությունը: Այո: Ոչ: Մի՞թե հավատքն այդ, երկու հազար տարի ապրելուց հետո, մեռել է աշխարհում և մարդոց հոգիներում, իսկ ինքն անտեղյակ է, քնով է անցել, խոր թմրության ու երազի մեջ է: Ինչպե՞ս հաղթել մահին: Ինչպե՞ս հարություն առնել: Ինչպե՞ս սիրել: Ինչպե՞ս ապրել: Ներսեսը հանկարծ դաժանացավ, ինքն իրենից օտարվեց, դարձավ իր խորթությունը, իր թշնամին, իր թույնը, ինքնասպանության դանակ, որ պիտի մխրճի սիրտը, ինքնասպանության կախադան, որով պետք է խեղդի պարանոցը, ինքնասպանության չարչարանք, որ խաչելով, տառապեցնելով, խոշտանգելով պիտի վրեժ լուծի իրենից՝ այսքան տարի ծուռ ու սխալ ապրելու համր: Հավատքն ասում է և արյունն է ասում՝ «սպանություն մի՛ ըներ»: Սպանելու է: «Շնություն ու գողություն մի՛ ըներ» Պետք է անի: «Քո դրացիիդ տունը մի՛ ցանկար, քո դրացիիդ կնոջը, կամ ան:ր ծառային, կամ անոր աղախինին, կամ անոր ձիուն, կամ անոր եզին, կամ անոր իշուն և քո դրացիիդ ողև մեկ բանին մի՛ ցանկար»: Պիտի ցանկանա, պետք է տիրի ամեն միջոցով, չխորշելով մինչև իսկ զազրելի սպանությունից: «Սուտ խոսքեն հեռու կեցիր և անմեղն ու արդարը մի՛ մեռցներ»: Մեռցնելու են: Մի՛ սպանեք գերիները, զոհերուն սրբությունը մի՛ պղծեք, պահպանեք արդարության օրենքները, արեք խաղաղության պատարագ, խոստովանեք մեղքերը, սիրեք զմիմյանս, մի՛ խորամանկեք և մի՛ եղեք կույր ու անտարբեր: Ընիշտ հակառակ ճանփան պետք է բռնեն այսուհետև: Եղեք համբերատար: Քանի՞ դար ու դարեր: «Եթե իմ պատվիրանքներս պահեք, խաղաղություն պիտի տամ երկրին ու հանգիստ պիտի պատկիք և վախցնող մը պիտի

ըլլա ու երկրին չար գազանները պիտի հատցնեն և ձեր երկրեն սուր պիտի չանցնի»։ Սուտ ես ասում, խաբում ես, սուտ ես խոսում։ «Չեր ուռքին ամեն կոխած տեղը ձերը պիտի ըլլա, ձեր սահմանը Եփրատ գետեն մինչև արևմտյան ծովը պիտի ըլլա»։ Ռ՞ր է, ո՞ր է, ո՞ր է։ «Երանի հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը»։ Երանի, հազար երանի անհնազանդներին։ «Չարին հակառակ մի՛ կենար, հապա եթե մեկը ապտակ մը զարնե աջ ծնոտիդ, դարձուր անոր մյուսն ալ»։ Ո՛չ, բավ է, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, վատությունը ավելի մեծ վատությամբ, չարիքը ավելի մեծ չարիքով կտրել։ «Միրեցեք ձեր թշնամիները, օրհնեցեք ձեր անհիծողները, բարիք ըրեք անոնց, որ ձեզ կատեն և աղոթք ըրեք անոնց համար, որ ձեզ կչարչարեն և կհալածեն»։ Ներսես Ալթունյանը վիրավորված ցատումով լի, դաժանորեն ծիծաղեց։

Ծիծաղը խելոդում էր կոկորդը՝ դառն արցունք բերելով աչքերին։ Վիրավորանքը, ցատումը, դաժանությունը ներծծվում էին արյան մեջ, սևացնում տրամադրությունը, գազանացնում զգացմունքները, ավերում միտքը, և նա գոհ էր իր այդ ալլակերպումից։

Նա չգիտակցեց՝ որքան ժամանակ անցավ։ Երեկոն էր իջնում արդեն։ Չով էր ու խաղաղություն։ Հեռու չէր գիշերը։ Ինչ-որ թռչուն կռնչաց։ Բուն էր կամ բուն չէր։

Չորակի կողմից, որտեղից լսելի էր գետակի խոխոջյունը, գալիս էր Նանեն։ Չեռքին ծաղիկներ էին և հրացանը։ Նա իրեն էր մոտենում։

– Բարի երեկո, հրամանատար։

Ներսեսի սիրտը թախծեց, և թախծի կայծն ընկավ դեմքին։

– Ինչո՞ւ տխուր ես, հրամանատար։

– Ճիշտ նկատեցիր, տխուր եմ և չգիտեմ ինչու։

– Ես քեզի համար ծաղկեփունջ կապեցի,– Նանեն ծաղիկները մեկնեց նրան:

– Հիանալի ծաղիկներ են,– հոտոտելով ասաց Ներսեսը:– Որքան զանազանակերպ են ու գույնզգույն:– Կրկին հոտ առավ մեկ այս, մեկ այն ծաղկից և էլի ու դարձյալ հոտ քաշեց:

Նանեն գոհ և ուրախ ժպտաց: Ինչ լավ է, որ ծաղիկները նրան դուր են գալիս: Ինքը փորձեց գունդներից ընտրել ամենագունեղը, գեղեցիկներից՝ ամենագեղեցիկն ու արտակարգը:

– Ես էի քեզ ծաղիկներ նվիրելու,– մեղավոր ժպտաց Ներսեսը:

– Մի օր նվիրիր, – շջջաց Նանեն և ծաղկեփունջի դեղնակարմիր կակաչի պես շիկնեց:

– Սա ինչ է, գիտե՞ս:

– Դեղին նարգիզ:

– Իսկ սա՞:

– Երեքնուկ: Սա մանուշակն է:

– Շատ գեղեցիկ է:

– Ապրիմ-մեռնիմ:

– Անունը տխուր է, բայց ինքը որքան գեղեցիկ է ու կատարյալ, – ասաց Ներսեսը:

– Ամմեռուկ:

– Ապրում է երկար և չի ծերանում:

– Այս մեկը չգիտեմ ինչ է: Սրանից ոչ մի տեղ չկա, ո՛չ անտառում, ո՛չ ձորակի մեջ, ո՛չ դաշտում, պատահաբար հանդիպեցի և պոկեցի: Կկարծես չպե՞տք է պոկեի...

– Նանե,– շփոթվեց, զարմացավ, հուզվեց Ներսեսը, – սա բրաբիոնն է:

– Բրաբիոն...

– Այո, բրաբիոնն է, երջանկության ծաղիկը:

– Երջանկության ծաղի՞կը...

– Շատ քչերն են նրան տեսել, որովհետև նա ծաղկում է հազվադեպ և մարդկանցից հեռու, բնության խորհրդավոր անկյուններում: Ես էլ եմ տեսնում առաջին անգամ:

– Եթե չես ճանչնար, ինչ գիտես բրաբիոնն է:

– Արաբոն է տեսել Խլաթի սարերում և պատմել Ադրյուր Սերոբին: Սա էլ պատմեց Գևորգ Չաուշին: Գևորգ Չաուշն էլ պատմեց Քեռիին: Քեռին էլ պատմեց մեծ հայդուկին: Մեծ հայդուկ Անդրանիկն էլ մի օր պատմեց սեբաստացի Մուրադին: Ինձ պատմել է Մուրադը:

Բրաբիոնը կարմիր էր, սև սրտատեղքով և շնչառությունը նման չէր ոչ մի ծաղկի բույրին: Ներսեսը ծաղկեփնջից զգուշորեն, դողացող մատներով հանեց բրաբիոնը, մոտեցրեց աչքերին, հոտ քաշեց և մեկնեց աղջկան:

– Վերցրու, քո ծաղիկն է, դու ես գտել, քո բրաբիոնն է...

Քարավանը Օձնի վանքում մնաց նախատեսվածից ավելի երկար: Մի գիշեր, երբ Ներսեսը պահակակետերն էր ստուգում, հեռվից նրա ականջին հասավ Նանեի ձայնը՝ «Լուսինգա, լուսը շաղնա...»: Լուսինը չկար: Մութ էր երկինքը: Չէր երևում և ոչ մի աստղ: «Նա չի մոռանում իր սիրածին և երգում է նրա համար», – մտածեց Ներսեսը: Հետո ամպի պես տխրություն եկավ, և խանդ կաթեց սրտի վրա:

ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

Մարիամ: Տասնապետ Նազիմ:

Արարայր: Մորս:

Արևը վաղուց ծագել էր, և շրջակայքն այժմ ողողված էր լույսով ու ջերմությամբ:

Ամեն ինչ երևում էր այնքան պարզ, որ թվում էր՝ կարելի է շոշափել, մինչև իսկ՝ կապուտակ լեռնաշղթայի կնճիռները, որոնցից մի քանիսը ծռնովելով հասնում էին ձյունների սահմանին:

Այդ առավոտ բնությունն ասես ոչինչ չէր ուզում թաքցնել մարդուց:

Ճանապարհի փոշին բարձրացնելով՝ նրանք սլանում էին դեպի Սեպուհ լեռան արևմտյան ստորոտները: Առջևից գնում էր Մոթոյի ձիւն՝ շնչահատ ու քրտնած, հետո գալիս էին տասնապետ Նազիմը և իր տղաները՝ թվով տասնհինգ զինվոր: Տասնապետը Մոթոյին շտապեցնում էր՝ խումբը բույն առաջ տեղ հասցնել:

Ասում էին՝ Մոթոն քուրդ չէ, այլ թուրք: Նաև լուրեր էին պտտվում, թե հայ է, բայց արդեն քանի տարի հեռացել է տուն ու տեղից, ընկերացել գավազանին ու հրացանին:

Մոթոն հին հաշիվներ ուներ Մուրադի հետ:

Մի անգամ Մոթոն հայի ոչխարներ էր հափշտակել և առաջն արած քշում էր Մամախաթուն գյուղաքաղաքը՝ թուրքերին ծախելու, երբ ամայի վայրում, ասես գետնի տակից, Մուրադն իր առջև ելավ: Ինքը մինչև իսկ չհասցրեց հրացանն ուսից իջեցնել: Մուրադը խլեց հրացանը. սպառնաց, որ շանսատակ կանի, եթե

խեղճ մարդկանց ունեցվածքը մի անգամ էլ փորձի գողանալ, ապա հրամայեց՝ ոչխարները վերադարձնել տերերին:

Մոթոն քշում էր ձին, և վրիժառության հիշողությունները ներսից ճանկում էին նրան:

Մարիամը... Այն ժամանակ Մարիամը Եկեղյաց գավառի ամենագեղեցիկ աղջիկն էր: Մոթոն հո լավ է հիշում: Երկար հյուսքերից մեկը ետ էր գցում, իսկ մյուսը բաց թողնում առջևը՝ կրծքի վրա, իրանը դյուրաթեք էր, ինչպես Եփրատի շամբուտներից քաղված եղեգը, և Մոթոյին երբեմն այնպես էր թվում, թե այդ եղեգը նվագում է իր հրալիր աչքերով, եղջերվածազի քայլվածքով, լեռնային աղբրակի նման պղպջուն կրծքերով, որոնք նրան, պահեր էին լինում, խելագարեցնում էին ու քշում սարերը:

Հին մի դեպք գրեթե միշտ նրա հետ էր. տարիների մշուշը մեկ էլ ցրվում էր, և այդ անցյալը դառնում էր ներկա, հառաչանքի ձայներ հանելով նրա կրծքից:

Իրիկնադեմ էր: Աղջիկների երանը ծաղկաքաղից վերադառնում էր գյուղ: Հեռվից Մոթոն լսում էր նրանց մեղմօրոր երգը, որ հաճախ ընդհատվում էր վարակիչ ու անզուսպ ծիծաղով: Տղան զայրացկոտ մտածում էր, որ նրանք տեսել են իրեն ու ծաղրում են:

Մարիամը բավականին ետ էր մնացել ընկերուհիներից և աղբյուրի մոտ ծաղիկներ էր փնջում, ջուր ցանում վրաները: Ի՛նչ հրաշք աղբյուր էր, ի՛նչ սառնություն: Փորսոդ տալով, քարերի հետևում պահված, ոստմելով թփից թուփ՝ Մոթոն ամբողջ ժամանակ աննկատ նրան էր հետևել: Այժմ ամենահարմար պահն էր: Նա դանդաղ դուրս սողաց-թաքստոցից, մի քանի վայրկյան կանգնեց փոքր-ինչ ճկված, ասես պատրաստվում էր ցատկել, ապա անձայն սլացավ դեպի աղբյուրը: Աղջիկը դեռ իր ծաղիկնե-

րով էր հմայված, երբ հասավ ու նրան հետևից գրկեց: Հետո շրջեց ձեռքերի օղակի մեջ, էլ ավելի սեղմեց մեջքը... «Մարիամ»... ուզեց շուրթերը համբուրել, դեմքը, պարանոցը... Մռթոն զգաց դիմադրության ահռելի ճիգը. աղջկա մարմինը կեռումեռ եղավ, նա դուրս պրծավ իր գրկից և, ծաղկեփունջը վայր գցելով, փախուստի դիմեց: Թափված ծաղիկները կարծես բռնեցին ոտքերը: Երբ շփոթմունքը անցավ, ծաղիկները ոտնակոխ անելով, քթի տակ հայեռյելով, նա մի քանի քայլ գցեց, նայեց կանաչ սարավանջով արագ իջնող Մարիամին, ասես ուզում էր հայացքով հասնել նրան:

Մռթոն երկար ժամանակ թաքնված էր ապրում: Ներքին գործերի նախարարության հատուկ ցուցակներում նա դասվում էր Թուրքիայի ամենից վտանգավոր հանցագործների շարքը. նրա «գործը» բովանդակում էր մի քանի սպանություն և բազմաթիվ կողոպուտներ: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին քրեականների հետապնդումը գրեթե վերացավ. նրանց չէին ներել, բայց և չէին հետապնդում: Եվ դա ավելին էր, քան ներում շնորհելը:

Լեռներում մենակյաց կյանքը Մռթոյին ավելի էր վայրենացրել: Երբ զգաց, որ անպատիժ է մնալու և իջավ ներքև՝ բանուկ ճանապարհներն ու գյուղերը, գազանի պես էր՝ դյուրաբորբոք ու արյունոտ աչքերով: Ոչ մի պաշտոնական ձեռք նրան չկանգնեցրեց, և նա նույնիսկ մտավ Երզնկա՝ իր մանկության քաղաքը: Հասարակ ժողովուրդը վախենում էր նրանից. մեծից փոքր բոլորը գիտեին, որ նա Մռթոն է՝ սպանում է ու թալանում:

Այդ ժամանակ ճանապարհը նրան տարավ Կարմրի, որտեղ կարմիր էր հողը, և աճում էր ճերմակ լոբի ու մանր կորիզներով

ձմերուկ: Գյուղ մտնելուց հետո միայն նա պարզ հասկացավ, որ Մարիամի մասին հիշողություններն են իրեն այդտեղ բերել:

Գյուղն ամայի էր: Ամեն ինչից երևում էր, որ այդտեղից անցել է թուրանական գորշ գայլերի ոհմակը: Հրդեհված տան ավերակներին նստել էր մի պառավ կին, թվում էր՝ ոչ թե նստել է, այլ ածխացել: Նրանից Մոթոն իմացավ, որ Մարիամի բոլոր հարազատներին սպանել են՝ որին զցել ձորը, որին սրախողխող արել: Իսկ մինչ այդ, Մարիամը պսակվել էր ու մեկնել գյուղից: Պառավը չգիտեր, թե որտեղ է գտնվում, ո՞րջ է, թե՞ մեռած:

Մոթոն Մարիամին մեռած համարեց, որովհետև Ղարաքիլիսայով, Տաճրակով, Էրկանով և գավառի ուրիշ շատ գյուղերով նույնպես անցել էին գորշ գայլերը, բայց նրա սրտում բույն դրեց կենդանի, օրըստօրե խորացուլ մի վիրավորանք:

Կրնկելով ձիու կողերը, ատամները կրճտացնելով՝ Մոթոն այժմ էլ էր մտածում, որ Մարիամը կարող էր իր հարճը լինել, պատկաներ իրեն: Մուրադը չթողեց: «Ինչ ստոր ես,- ասաց,- դու չես կարող նրան ընկեր դառնալ»: Այս բառերը տարիների հեռավորությունից վերադարձան և նորից աղմուկով լցվեցին ականջները, Մարիամը նրա սիրտը ասես նորից կրակ տվեց, և նա արդեն որերորդ անգամ անաստվածաբար ճիպտաահարեց ձիուն:

Ճանապարհի աջ և ձախ կողմերում կանաչուտներ էին: Երբեմն-երբեմն ձիերի դոփյուններից վախեցած ինչ-որ թռչուն ծվծվոցով օդ էր բարձրանում և կորչում հեռվում: Ծաղիկները անդոմ քանուց օրորում էին գլխիկները: Չյուններից առուներ էին գալիս՝ մեկ կարկաչում քարերին, մեկ էլ պահ մտնում խոտերի մեջ ու լռում: Լրկի շողերում թևածում էին պես-պես քիթոններ:

«Չէր երևում միայն մարդը»:

Ոչ, այժմ Մոթոն չէր սիրում Մարիամին: Այդ զգացմունքը երևի նախկինում էլ խոր արմատներ չուներ նրա հոգու մեջ: Ի-հարկե, եղավ մի շրջան, երբ ինքն այդ աղջկան կարծես սիրում էր, բայց նույն ժամանակ էլ կարող էր և սպանել նրան: Մուրադի խոսքում չափազանցություն չկար: Եվ դրանից նա ավելի էր կատաղում: Կատաղությունը երբեմն հասնում էր այն աստիճանի, որ նա փորձում էր ապացուցել ոչ այլ ինչ, քան իր գազանությունն ու ստորությունը, և դրա համար ամեն բան անում էր:

Մոթոն նայեց ետ. Նազինը և մյուսներն ընդհուպ մոտեցել էին իրեն: Ոչ ոք չէր խոսում: Հետո նայեց լեռներին, որոնք տեղ-տեղ ծածկված էին անտառով, և նրա գլուխը հիշողություններից դատարկվեց: Բայց դա տևեց ընդամենը մի քանի րոպե: Հաջորդ պահին Մուրադը նորից արթնացավ նրա մտքում՝ փանփշտակալները կրծքի վրա խաչածեղծ, հաստ, սև բեղով, երացանն ուսից կախ, իսկ ձեռքը միշտ կաշեփուկի վրա՝ պատրաստ ամեն վայրկյան զենքը կրակային դիրքի բերելու:

Մուրադի կերպարանքում, ամբողջ գործունեության մեջ չկար մի բան, որ Մոթոյին դուր գար: Որոշ տարածություն էլ անցնելով, նա հասկացավ, որ ինքը նախանձում է նրան՝ նրա խիզախությանը, շիտակությանը, նվիրվածությանը լեռներին, աղբյուրներից, այդտեղի մարդկանց, դաշտերին, անտառներին: Նրան թվաց, թե այդ ամենը, որ երկիր են կազմում, իրենց հերթին՝ սիրում են նրան, համարում Մուրադին իրենց հարազատը, իրենց որդին: Մոթոն սաստիկ չարացավ. նսխանձը ավելի ցավոտ զգացմունք էր, քան ատելությունը, քան նրանից վրեժ լուծելու կիրքը, որ շատ վաղուց ի վեր ապրում էր իր մարմնի մեջ:

Նա բարձրացրեց մտրակն ու թափով իջեցրեց, և տակի սևաթույր ձին նոր ուժով սլացավ առաջ: Մոթոն խթանում էր ձիու փորը, հետո հրացանի կոթով սկսեց խփել գավակին: Հանկարծ մտածեց, որ ինքը գուցե սխալ է անում՝ Մուրադին զգելով թուրք գայլերի երախը, գուցե պիտի վրեժը լուծի անձամբ՝ իր ձեռքով, իր հրացանով, իր դաշույնով, ինչպես վայել է իսկական տղամարդուն, կամ գուցե ավելի ճիշտ կլինի՝ նրանից հեռու մնալ... Կասկածը սողոսկեց նրա մաշկի տակ: Նա սարսափաց: Կասկածը կատաղության նոր ալիք առաջ բերեց նրա ներսում: Մոթոն շարունակ կրնկում էր ու խփում, չէր վազեցնում ձիուն, այլ ծեծում էր: Չին խրխնջաց: Ծանր շնչելով՝ Մոթոն շարունակում էր ծեծել, կարծես ուզում էր դուրս տալ իր մարմնի ամբողջ զորությունը. ձին շրջեց գլուխը և նայեց նրան. աչքերում ողբալի զարմանք կար, իսկ բերանի մեջ՝ սպիտակ փրփուր: Մոթոն ճիպուտը շեշտակի իջեցրեց ձիու դեմքին՝ աչքերի ու բերանի միջև: Չին որոշ տեղ էլ զնաց՝ նույն ողբերգական հայացքը դարձրած նրան, և՛ վրնջալով ծառս եղավ: Մոթոն սանձը հավաքեց բուռն ու շնչասպառ հարվածներ էր հասցնում. մեկ հարված, երկու, երեք, չորս... Հերթական հարվածին իսկուն հաջորդում էր նորը՝ նաև վրեժի, ատելության, նախանձի հետզհետե կուտակվող խառը մի զգացմունք էր դնում յուրաքանչյուրի մեջ:

– Ի՞նչ է պատահել, – հասնելով նրան և սանձելով իր ձին՝ հարցրեց Նազիմը:

Մոթոյի ներսում կրկին խլրտաց քիչ առաջվա կասկածը, մի-գուցե այդ գայլերին չտանի Կարմրի, որտեղ Մուրադն է, տանի ուրիշ գյուղ, մոլորեցնի այս լեռների մեջ: Նա ասաց.

– Չիերը հոգնել են: Լավ կլինի հանգստանանք:

– Ոչ մի դեպքում,– խստությամբ ընդդիմացավ Նազիմը:–
Դեռ շա՞տ ենք գնալու:

Չիու փորքաշն ուղղելու նպատակով Մոթոն շրջվեց, որ նրա խուզարկու հայացքի տակ չընկնի: Ապա զգալով, որ Նազիմը պատասխան է սպասում, կամաց գցեց.

– Շատ:

– Առավել ևս պիտի շտապել: Ոչ մի բույե դանդաղելու իրավունք չունենք:

Նազիմը ասպանդակեց ձին: Թուրք զինվորները, որոնք մույնպես կանգ էին առել, հետևեցին նրան:

Մոթոն իջել և ձիու կրծքանդն էր ձգում, որ թուլացել էր քիչ առաջվա մոլեզվին վազքի ժամանակ: Պնդավուն կաշեզոտու ծայրը անցկացնելով ճարմանդի միջով, նա մտամոլոր քաշեց մի կողմ, և թեև հայացքն ուղղված էր զինվորներին, որոնց ձիերը ճանապարհի փոշին արդեն վեր էին հանել, զգաց, թե ինչպես երկաթազանը մտավ գոտու անցքի մեջ:

Մտքերը օձերի նման խճճվել էին նրա գլխում:

Երեք անգամ կրակեցին. Մոթոյին շտապեցնում էին՝ հասնել իրենց:

– Բուլան... – շոյելով ձիու ճակատը, որտեղ մտրակը նկատելի խարան էր թողել, ասաց Մոթոն:

Նա ոտքը դրեց ասպանդակին, և մինչև մյուսը կանցկացնել ձիու գավակով, ականջին մորից հրացանի ձայն հասավ: Այդ կրակոցը ցրիվ տվեց նրա մտքերի կծիկը: Նա նայեց ետ՝ իր անցած ճանապարհին, հետո՝ առաջ: Ճանապարհը գնում էր դեպի քարափը՝ մարդու կերպարանքով ահռելի մի ժայռ, ժայռե հսկա, որի ծեր ու իմաստուն հայացքը կարծես ասում էր՝ ամբողջ բնութ-

յունն իմն է: Այն հեռու կողմերում, Մոթոն լավ գիտեր, գտնվում էր սառն ու վճիտ Ջարա լճակը: Ամռանը լճակի ջուրը այնքան հաճելի է շոգած մարմնին: Որ լճակը անցար, մինչև Կարմրի մնում է քիչ տարածություն. հարկավոր էր շրջանցել Սեպուհի անտառոտ լանջը և գնալ վերև, միշտ վերև՝ ծաղկաշատ արոտավայրերի կողմը: Մոթոն նորից ետ նայեց, բայց այս անգամ՝ մտքով: Մտքով նա ձին քշեց եկած ճանապարհով, և սիրտը անհանգիստ էր մի տեսակ, կարծես մազից էր կախված:

– Դե լավ, էլի, Բուլան, – ասաց նա, թփթփացնելով ձիու վիզը, – դե լավ, էլի...

Չին հնազանդորեն քայլեց առաջ: Մի քիչ գնալով՝ ծռեց վիզն ու ճամփեզրից մի երկար խոտ պոկեց: Մոթոն տեսավ, որ նրա աչքերն արդեն խաղաղվել են: Բուլանը առանց մտրակի սկսեց վազել: Ինչ-որ ուրախ տրամադրություն էր թափանցել արյան մեջ:

Մոթոն զգաց, որ ձին ներել է իրեն, և նեղվեց, կուչ եկավ թամբի վրա:

Նազիմի տղաները խառնիխոտն կերպով կծկում էին ճանապարհը: Մերթ ընդ մերթ որևէ մեկը անջատվուս էր խմբից և անցնում առաջ, իսկ հետո՝ աստիճանաբար ետ ընկնում, իր դիրքը զիջելով ուրիշին: Չիերին պարտադրված արագությունը, որ նրանց ուժասպառ էր անում, պայտերի դոփյունը, մռայլ, ասես կացնով տաշած դեմքերով հեծյալները, որոնք, փոքր-ինչ կռացած, ամուր բռնել էին սանձերից, նրանց անդդովելիությունը՝ այդ ամենը անհամատեղելի էր ողորմած բնության անդորրին, որտեղ հողը, ամբողջ բուսականությունը, որ արևի շարժման հետ շարունակ նոր ու նոր գույներ էր հագնում, երկինքն ու ջուրը՝ ամեն-ամեն բան հաստատում էր կյանքի մաքուր և լուսավոր սկիզբը:

Բուլանը արագացրեց վագրը, կռահելով, որ պետք է հասնել առջևից ընթացող ցեղակիցներին: Այնպես թեթև ու ազատ էր գնում, կարծես նոր էր ճանապարհ ընկել ու բոլորովին հոգնած չէր:

Չիու ներողամտությունը Մոթոյին դուր չէկավ: Ինչո՞ւ է մոռանում քիչ առաջվա ծեծը: Ի՞նչ է, հիմա էլ սա՞ է ուզում իր ստորությունը ապացուցել: Իրեն ինչո՞ւ թամբից չի գցում: Նա ձիավարի քացի տվեց Բուլանի փորին, հետո մտրակով դաղեց ազդրը: Բայց ձին չներացավ, թեև հետևի ձախ ոտքը, հոգնածությունի՞ց էր, թե՞ այդ վերջին հարվածից, ցավագին ձգվեց. նա կարծեց, թե տերն ուզում է, որ ինքը ավելի արագ վագի, և զրնգուն մի խրխիսնջ արձակելով, սլացավ առաջ:

«Ո՛նց որ մարդ լինի», - աչքերը շեղվով ձիու վրա, չարացավ Մոթոն, թունուովեց: Թքոտելով աջ ձեռքի ափը, որ մտրակի կոթը ձեռքից դուրս չթոչի, նա մի քանի անգամ մտրակը պտտեց օշում ու խփեց ձիու դեմքին: Այդ հարվածի մեջ ներդրեց այնքան ուժ, որ ձեռքը, մտրակի հետ, թուլացած կախ ընկավ:

Նագիմը շրջեց գլուխը և նշանացի հասկացրեց Մոթոյին, որ իրենցից առաջ անցնի:

Մոթոն երբորդ անգամ էր հանդիպում Նագիմին: Նա իր ցեղակիցների նման սակավախոս էր ու մռայլ: Նրա լռությունը, սակայն, միշտ ունեւր թաքնված իմաստ, կոշտ ու բթամիտ չէր մյուսների պես: Թվում էր՝ նա ամեն բույն ինչ-որ բան է ծանրութեթև

անում, աչքերը, դեմքի մկաններն անվերջ խաղում էին, և դա երկ-
յուղալի էր:

Երկնքում գիշանգոյներ երևացին: Օդը լցվեց գորշ ու վիթխա-
րի թևաբախումներով: Մոթոն ինը գիշանգո հաշվեց, հետո դրանց
ավելացան ևս չորսը: Օդում տասներեք գիշանգոյներ էին
պտտվում՝ մռայլ կոնչումներով, անշտապ, ասես ուսումնասիրե-
լով ներքևում գտնվող յուրաքանչյուր կետ: Շուտով դրանց թիվը
հասավ քսանմեկի, իսկ այնուհետև արդեն անհնարին էր հաշվել՝
բոլոր կողմերից գալիս էին ու խառնվում իրար: Վերջին ժամա-
նակները այդ թռչունները շատացել էին: Առաջ Մոթոն դրանց
հանդիպում էր միայն բարձր լեռներում, այն էլ՝ ոչ միշտ, գի-
շանգոյները այնքան էլ չեն սիրում մարդկանց աչքին երևալ, իսկ
այժմ դրանց կարելի է տեսնել գետահովիտներում, ձորերի
վերևում, դաշտերում, մինչև անգամ քաղաքների երկնքում՝ ավելի
ցածր թռչելիս, քան իրենց սովորությունն է:

Խառնիխուռն պտույտներ գործելուց հետո գիշանգոյները
սկսեցին մաս-մաս ցրիվ գալ: Հեռանալով՝ ավելի ու ավելի էին իջ-
նում, և կասկած չկար, որ, արյան ծարավ ճիրանները պարզած,
իջնում էին ծովից ծով հողերի վրա:

Խուսմբն այժմ գնում էր լճակի ափով: Ջարայի ջրերում ար-
տացուլվում էր գիշանգոյների թևերից ազատված երկինքը: Եվ
լճակը, որ սովորաբար ծաղկադաշտի նման կանաչերանգ էր,
այդ պահին կապույտ էր թվում: Մոթոն սիրում էր կանգնել Ջա-
րայի ափին և նայել, թե ինչպես են ջրերը ճողփում քարերի վրա,
ինչպես է իր դեմքը արտացոլվում այնտեղ: Իսկ այժմ նա հայաց-
քը այդ գեղեցիկ տեսարանից փախցրել էր հեռուները և իրակա-
նում չէր տեսնում ոչ մի բան՝ ոչ ձիու ոտքերի առջև բացվող ճա-

նապարհը, ոչ լեռները, ոչ երկինքն ու գետինը, որը ասես բուռն հուզմունքից մեկ բարձրանում էր՝ դիզվում-սարանում, մեկ էլ թուլացած փռվում՝ դառնում հարթավայր:

Գիշանգոյները տխրություն էին ներարկել Մոթոյի արյան մեջ:

Մտովի նա տեսնում էր, թե ինչպես սև ու ահռելի մի գիշանգո ռսանում է դիակից դիակ, փնտրում ինչ-որ բան, միգուցե՝ իր մարմինը, որ դեռ կենդանի է: Մոթոն իր բախտին հավատում էր՝ ինչ գրված է ճակատին, բայց չի երևում, և երբեմն-երբեմն մի տեսակ էր նայում եկող օրվան, մարդկանց, նույնիսկ բնությանը: Հիմա նրա հոգում թերահավատության ժամանակն էր: Թվում էր՝ Նազիմի տղաները հետապնդում են իրեն, իսկ ինքը փախչում է: Եվ այստեղ մտրակը վրա-վրա խայթեց ձիուն:

Արդեն մոտեցել էին Սեպուհ լեռան ստորոտին:

Առջևում խիտ անտառ էր: Մոթոն գիտեր, որ այնտեղ արևի հատուկեմտ շողեր են գետնին հասնում, և կեսօրից անմիջապես հետո մութն սկսում է ընկնել: Անտառը այդտեղից տարածվում է հեռու-հեռուները: Վերևներում քարայրներ կան, լեռան կուրծքը վերքի պես մխրճված խորխորատներ, որոնք քեզ կախարդելով քաշում են դեպի իրենց խորքը: Որ կողմ նայում ես՝ լեռներ են, կարծես աշխարհը լեռնաստան լինի: Ո՞վ ում կարող է գտնել այդ վայրի ու անծայրածիր բնության մեջ:

Մի մրտք էր շարժվում Մոթոյի գլխում, գուցե իսկապես թեքի ճամփան, փախչի անտառ ու կաշին փրկի, ի՞նչ գործ ունի թուրքերի հետ, ուզում են Մուրադին բռնել, ինքն էլ է ուզում, ավելի շատ... թող առանց իր օգնության զնան բռնեն... Բայց այդ միտքը շարժվում էր ավելի դանդաղ, քան իր ձին:

Պայտերի դոփյունը արձագանք էր գտնում նրա գլխի մեջ: Նրան թվում էր, թե Բուլանը արշավում է իր գլխի ներսում գտնվող ինչ-որ ճանապարհներով:

Այդպես սլանալով, Մոթոն կորցրեց թուրք զինվորներից խույս տալու մի քանի հարմար պահեր: Անտառի փեշերը արդեն քաշվել էին: Տեղանքը բաց էր ու արևաշող: Փախուստի փորձը հիմա կարող էր թանկ արժենալ նրան, ո՞վ գիտե, գուցե՝ ծանր պատիժ, բանտարկություն կամ նույնիսկ օր ու արև:

Մի գիշանգո էլ երևաց երկնքում, պտույտ գործեց և գնաց դեպի հարավ՝ Եփրատի կողմերը:

Սև քառակուսի կարմիր անապատում:

Մոթոն երկու կրակի արանքում էր՝ Մուրադի ու հետևից եկող թուրքերի, և այժմ դա շատ ավելի լավ էր գիտակցում: Նա սեփական նախաձեռնությամբ էր ընկել այդ փորձանքի մեջ, ոչ ոք նրան չէր հրել այնտեղ: Երգնկայի կառավարիչը հարյուր օսմանյան հնչուն ոսկի էր խոստացել այն մարդուն, որը Մուրադի գլուխը կհանձներ իրեն: Երեք շաբաթ էր, ինչ հայտարարությունը փակցված էր սերայի, կառավարչատան, զորանոցի և պաշտոնական ուրիշ շենքերի պատերին: Անցած երեկոյան Ճեմինից քաղաք վերադառնալիս Մոթոն հեռվում նկատել էր Մուրադին՝ երկու իր նման ֆիդայիների հետ, ձին կապել էր ծառից ու գաղտնի հետևել նրանց: Մուրադը կաղում էր, ընկերները թևանցուկ էին արել, երկի վիրավորված էր: Նրանք հասել էին Կարմրի և թաքնվել Մարիամենց անտեղ-անտիրական տանը: Մոթոյի հոգում նորից զարթնել էր վերժխնդիր անցյալը, ոսկին զրնգացել էր ականջների մեջ ու ամբողջ մարմնում: Եվ նա առավոտյան կողմ, քրտինքն աչքերին, հասել էր Երգնկա...

Հոգնությունից, ցավից ու ոգևորությունից բթացած՝ Բուլանը բաց էր թողել իր ոտքերի ամբողջ արագությունը: Մոթոն քաշեց սանձերը, և տասնհինգ հեծյալները աստիճանաբար մոտեցան նրան, որոշ տարածություն գնացին մեկտեղ, հետո անցան առաջ: Ճանապարհն արդեն ինքն էր տանում Նազիմի խումբը՝ ժապավենի պես ոլոր տալով Սեպուհի լանջն ի վեր: Այդտեղից չքնաղ տեսարաններ էին երևում, և մի պահ կարելի էր կարծել, թե աշխարհում ամեն ինչ լավ է ու գեղեցիկ:

Նրանց միջև տարածությունը հետզհետե մեծանում էր, երկարում, և Մոթոն մտածում էր, որ դա գլուխն ազատելու ամենավերջին հնարավորությունն է:

Ծանոթ-անծանոթ մի հարց տնկվեց նրա առջև. ումի՞ց: Բուլանի ուժասպառ վազքի հետ հարցն ավելի ու ավելի էր տանջում Մոթոյի մարմինը, որ մտքերից, անքնությունից, տագնապներից արդեն խելագարվում էր:

Մոթոն գիտեր, որ Մուրադի հետ հաշիվ մաքրելը հեշտ գործ չէ. նրա հետևում ժողովուրդ կա, նա շատ ընկերներ ունի, որոնք կարող են իրենից վրեժ առնել, եթե իմանան... Իսկ արյունը... իր երակներում հայի արյուն է... մի՞թե հայի է... գուցե՝ քրդի, թուրքի, հույնի... Ինքը կարող է թքել արյան վրա, - թքելով շարունակեց մտածել Մոթոն,- զարհուրելիմ մենակությունն է, մենակ մեռնելն է՝ լուռ քարի կողքին, լուռ անտառում, հետո կգա արջն ու կսկսի հռչոտել, պատառ-պատառ անել իր մարմինը, լափել, կամ կհայտնվի մի գիշանգղ այն գիշանգղներից...

Նրա միտքը տենդորեն որոնում էր այնպիսի հենարան, որի վրա կարելի լիներ ապահով կանգնել:

Իսկ Նազիմը, իսկ թուրքերը... Մոթոն փշաքաղվեց: Նրանք գիտեն սպանել այնպես, ինչպես ուրիշ ոչ ոք՝ չարչարելով սպանել, մաս-մաս: Հողը նրանց ձեռքին է, ամբողջ բնությունը, մարդկային ամբողջ կատաղությունը նրանցն է, զենքը, նենգությունը, ձիերը... Մոթոյի ուղեղը սաստիկ լարվել էր և չափուձևում էր այնպիսի մտքեր, որոնք այնքան էլ հաշտ չէին նրա ծանրամիտ էության հետ: Ըստ երևույթին, շարժվում էր ոչ այնքան ուղեղը, որքան՝ մի ներքին զգացողություն, որ բնագոյաբար ելք էր փնտրում՝ դուրս պրծնելու այդ վտանգավոր դրությունից. «Նրանք կառավարություն են, բարձրաձայն, ասես իրեն վստահեցնելու համար ասաց Մոթոն, օրենքը, իրավունքը նրանց ձեռքին է»: Օրենքի տերը տերն է աշխարհի, հայացքը թափառում էր բնության մի անկյունից մյուսը, – այս քարերը, խոտը, ծաղիկները, այն ամուն, որ, նոր ջրեր հավաքելով, վազում է ներքև, նրանը չեն, բայց ահա նրանն են, ամեն-ամեն ինչ նրանն են, ինքն էլ է ոտից գլուխ նրանը, ուր որ գնա՝ նրանն է, թեկուզ լեռ քարի մեջ մտնի, հաստաբուն ծառի արմատի տակ, թեկուզ հող կամ ջուր դառնա: Մուրադի հանդեպ վախը դատարկ բան է այդ սարսափի մոտ, ի՞նչ վախ է դա... ինքը բոլորովին էլ չի վախենում նրանից, այլ ատում է, այստեղ վրեժ կա, – նա այ ձեռքը դրեց կրծքին, վրեժ, ատելություն... Հիմա ավելի ձեռնտու է վրեժ լուծելով Մուրադից գլուխն ազատել, քան թշնամանալ թուրքերին: Նա ժպտաց, կարծեց Նազիմը կանգնած է իր առջև ու նորից ժպտաց, հետո ուզեց հլու-հնազանդ վերաբերմունք ցույց տալ, տպավորել իր համերաշխությունն ու հավատարմությունը, և ժպտաց երրորդ անգամ: «Ուզեն՝ սևը սպիտակ կանեն, – քթի տակ ասաց Մոթոն, և դենքը թորչմած էր, ժպտուն ու դալուկ, – մի ստոր արարածի՝ կարգին

մարդ»։ Նա կառչեց վերջին մտքից. օրենքի պաշտպանությունը իրեն շատ է հարկավոր... Նա քիչ մտածեց ու ասաց. «Կյանքի չափ»։ Օրենքը կարող է իրեն նոր կյանք տալ, իրավունքներ։ Նա այլևս չի վախենա։ Գիշերները սարսափելի պատկերներ են գալիս աչքին։ Այն որսորդը, որին նախանցյալ տարի կողոպտեց, սպանեց ու քաղեց անտառում, երբեմն-երբեմն սողալով մոտենում է և ուզում կրծոտել իրեն։ Սարսափելի այդ մտապատկերն արագացրեց Մոթոյի խորհրդածությունների ընթացքը։ Հիմա դեմքը ավելի գունատ էր, մի տեսակ՝ ժանգոտ։ Նրանք կներեն իր չարագործությունները։ «Արդեն ներել են», - զգուշորեն շուրջը նայելով, շնչաց նա։ Թալանելու իրավունք էլ կտան, ինչո՞ւ չէ, սպանելու էլ, եթե... Մոթոն այնքան հուզված էր, որ անմիջապես չկարողացավ իմանալ, թե ինչ է այդ «եթե»-ն։ Հետո գլխի ընկավ ու շարունակեց, եթե այս գործը հաջողությամբ վերջանա՝ Մուրադին, ողջ կամ մեռած, Մեմտուհ Մալթա կառավարչին հանձնեն։ Հապա ոսկի՞ն... Մոթոն այդքան ոսկի մինչև իսկ երազում չէր կարող ունենալ։ Նրա ձեռքը ամենաշատը յոթ ոսկի էր անցել։ Դա տարիներ առաջ էր՝ գողացված անասուն էր ծախել քաղաքում։ Ոչ, յոթ չէր, ութ ոսկի, ութ դեղին ու զնգուն ոսկիներ։

Մոթոն չզգաց, թե ինչպես հասավ Նազիմի խմբին և նույնիսկ առաջ արշավեց։

«Մուրադը... ահա թե ումից է հարկավոր գլուխն ազատել», - մեկ անգամ ևս մտմտաց նա, ասես ուզում էր ուղեղում ամրապնդել իր որոշումը։

Հիմա թեթև ու ազատ էր շնչում։

Մոթոյի ներսում հանկարծ վառվեցին ուրախության կայծեր, որից և երեսը պայծառացավ. նա հիշեց շատ հին մի դեպք,

որ նոր թույն էր կաթեցնում իր և Մուրադի թշնամանքին: Եվ իսկույն էլ սիրեց այդ դեպքը:

Անռան շոգերին Երզնկայի փոքրերը սովորություն ունեին լողանալ Եփրատում՝ հին ու փլատակ կամուրջի մոտ: Մի տղա կար, հայոց թաղից, որին բոլորը «գիժ Նեստ» էին ասում: Զչախոս էր, նիհար, հիվանդոտ աչքերով և չափազանց բարի ու հնազանդ...

Մռթոյի գլխում կենդանացավ հեռվում մնացած այդ օրը՝ իր մանրամասներով, և նա ձիու փորը եռանդազին կրնկահարեց...

Ուռենու ճյուղով օղը թրատելով՝ Մռթոն մոտեցավ գետին: Տասնյակ տղաներ՝ վարտիքով ու անվարտիք, մողեսների պես մեկնվել էին գետեզերքի տաք քարերին ու անշարժացել: Այդտեղ էր և «գիժ Նեստն»: Ճյուղը շարտելով գետը՝ Մռթոն նրան կոշտ ու կոպիտ հրամայեց բերել: Նեստն իսկույն նետվեց ջուրը և, շատ չանցած, ճյուղը ձեռքին վերադարձավ: Երկրորդ անգամ Մռթոն ճյուղը գցեց ավելի հեռու, և Նեստյին դեպի գետը հրեց: Տղաները հետաքրքրությամբ նրանց էին նայում: Մռթոն լայիրշությունից ուռել էր: Երբ Նեստն ծանր շնչելով հասավ ափ ու նրան հանձնեց ուռենու ճյուղը, նա թափ առավ և փայտը շարտեց շատ հեռու, գրեթե մինչև գետի մեջտեղը, որտեղ, ստորջրյա խութերի պատճառով, ջուրը կոհակ-կոհակ էր լինում: «Գիժ, գնա բեր»,— ասաց նա, հետո թունոտ ժպտալով գոռաց. «Դե շո՛ւտ»: Ոչ ոք չէր համարձակվում միջամտել այդ ծաղրածանակին: Նեստն իրեն նորից գցեց ջուրը: Գետամիջի աշխույժ հոսանքը փայտը բշուժ տանում էր ներքև՝ գետի վտանգավոր նասերը: Նա հոգնած էր, ափ ելնելիս ոտքերը զարկվել էին քարեղին և ցավում էին, բայց լարեց մնացած ուժերն ու լողաց դեպի ջրերի խորքը: Բոլոր տղա-

ները արդեն ուրի էին կանգնել և զարմացած ու հիացմունքով նայում էին իրենց «զիժ Նեսոյին», որովհետև մինչ այդ պահը ոչ ոք չգիտեր, որ նա այդքան լավ լողորդ է: Երբ նա, ճյուղը ատամներով բռնած, դանդաղ, ուժասպառ մտատենում էր ավիին, բոլորը, Մոթոյին աչքաթող արած, արձակեցին ուրախ բացականչություններ, իսկ մի քանիսը վեր-վեր թռնելով ծափ զարկեցին: Նեսոն ջրից դուրս ելավ և, շնչահեղձ լինալով, կապտած, բայց երջանկությամբ ժպտալով քայլեց դեպի Մոթոն...

Բուլանը կրծքին այրուցք զգաց, հասկացավ՝ տիրոջ մտրակից էր: Այնուհետև մտրակը աջ ու ձախ դադում էր ձիուն, ասես գրառելով Մոթոյի այդ պահի զայրույթը. «զիժ Նեսոն» Մոթոյի մտապատկերներում շարունակում էր ժպտալ, տղաները գոռում-գոչումով ծափ էին տալիս, և նա այդքան տարիներից հետո թթվում էր ու փրփրում...

Մոթոն ճոթոցով թքեց ատամների արանքից: «Գնա բեր», ուռենու ճյուղը չորրորդ անգամ զցելով գետը, ասաց նա և նորից ճոթացրեց: Նեսոն խեղճ-խեղճ նայեց Եփրատին, հետո տղաների կողմը: Ժպիտը կոտրվել էր, որից և դեմքը ծռնուված էր թվում: Նա մի քանի քայլ արեց դեպի գետը, կանգ առավ, կիսաշրջվեց: Այժմ դեմքը գունատ էր ու տխուր: Ճպտոտ աչքերը նայում էին այնպես սառն ու մտացիր, որ կարելի էր կարծել, թե ոչինչ չեն տեսնում, ոչինչ չեն լսում, ոչինչ չեն զգում արդեն: Հետո մի քիչ էլ մտտեցավ ջրին, նույն ցրված հայացքով որոնեց ուռենու ճյուղը և ուտերը էլի առաջ տարավ: Ներկաներից շատերը հասկացան, որ նա ուժ չունի լող տալու:

Ժողովրդի մեջ տարածված հավատալիք էր՝ ամեն տարի մեկը պիտի գոհ գնա Եփրատին: Բոլորը վախից քարացան. կարծեցին՝ այս անգամ «գոհը» «գիժ Նեսուն» է:

«Նեսուն, գիժ, կանգնիր»: Բղավողը Մուրադն էր: Քարերի վրայով ոստոստալով նա հասավ Նեսունին, որ արդեն ուզում էր իրեն ջուրը զցել, և ետ քաշեց: «Թող դրան», - հոխորտաց Մոթոն և Նեսունին հրեց դեպի գետը: «Ինչի՞ ես ուզում խեղդվի»: «Հենց այնպես», - Մոթոն իր ձևով քթեց: Նա չէր սպասում, որ Մուրադը կխսփի. ետ-ետ գնաց, կծկվեց ցավից, ապա կրունկը դեմ առավ քարին, փռվեց ջրի մեջ...

Բուլանի երակները պրկվել էին, և նա անդադար վրճջում էր: Չայնի մեջ աղաչանք կար, հուսահատություն և բողոք: Բայց Մոթոն այդ ամենը չէր նկատում՝ այնքան որ զգայարանները ենթարկվել էին հիշողության ընթացքին: Շոշափեց դեմքը. թվաց, թե արյունը քիթ-բերանից դեռ թափվում էր: Արյուն չկար, կրծքի տակ կատաղության հասնող վրեժի հեքն էր...

Ուշքի գալով, նա լողաց դեպի ուռենու ճյուղը, որ դրանով Մուրադի ճաշը եփի: Գետափին լարվածությունը մեծացավ, սպառնալիքներ տեղալով՝ Մոթոն արդեն ետ էր դառնում և հենց ելավ ջրից՝ վրա քշեց նրան: Հարվածը դիպավ ուսին և այրող ցավ պատճառեց, բայց երկրորդը մնաց օդում՝ Մուրադը բռնեց նրա դաստակը, փորձում էր ոլորել: Հետո... գիրկընդհառն ընկան և իրար ոտք, մեջք և թև էին ծռում: Մուրադից պոկ գալով՝ Մոթոն չորեքթաթ հասավ մի որձաքարի. մտքով անցել էր քիթ ու բերանը մեկ անել, նրա կյանքին վերջ տալ: Քարը գիրկն առած շրջվեց, բայց Մուրադը պատկած տեղից մեկ էլ քացով տվեց փորին, և նա քարի հետ ծանր-ծանր ընկավ ջուրը...

Հիմա աղիքներում զարթնել էր այդ հին ցավը, այնքան իրական, որ նա կուչ եկավ թամբին, կարծես Մուրադը հենց նոր էր խփել: Աչքերի առջև կանգնեցին տղաները, գծագրվեց ամբողջ գետահովիտը, բայց՝ մշուշների մեջ ու բավականաչափ ձևափոխված: Երա՞գ էր, թե՞ իրականություն: Ցավի, մշուշների, երազի մեջ նա՛ լսեց Բուլանի խռպոտ վրճոցը: Թվում էր՝ ձայնը գալիս է հեռուներից, կարծես ուրիշ ձի էր, օտար ձի: Եվ նա, վերջին րոպեների ընթացքում արդեն քանիերորդ անգամ, խարազանեց ձիու կուրծքը, ազդրերը, փորը՝ ուր որ մտրակի շիկացած ու թունոտ ոլորքները հասնում էին...

Ուռենու ճյուղը գետնին էր: Մուրադը վերցրեց, մեկ ուզեց ազդրին ծռելով կտտրել, բայց չկտտրեց ու շարտեց գետը: «Դե, հիմա գնա բե՛ր»: Մոթոն նույնիսկ շուտ չեկավ՝ տեսնելու, թե որտեղ է ճյուղն ընկել, գետաբերանի քարերին կպած՝ նա շունչը հազիվ տեղն էր գցում:

«Բե՛ր...»,– հենց որ ջրից ելավ՝ գոռաց Մուրադը և նրան ետ հրեց:

«Դե, գնա՛...»,– ոտքով զարկեց Մոթոյի կյծքին, և նա չորբորդ անգամ ընկավ գետը:

Ջրից դուրս էր սողում թե չէ՝ Մուրադը մեկ-երկու հարվածով նրան ետ էր շարտում: Մոթոն սկսեց բխկբխկալ: Վերջապես, ծանր շնչելով կանգնեց ափին, մի պահ չգիտեր ինչ անել, ապա լուռ ու դանդաղ հեռացավ: Գնում էր ծեծված շան նման և ստեպստեպ նայում էր ետ, մինչև որ չքվեց գետախորշի թավուտներում...

Մոթոն իրեն հայիոյեց այն բանի համար, որ գլխից հանել էր այդքան կարևոր մի դեպք: Սրտի հուզմունքները հասել էին

դենքին. արյունը աչքերն էր կոխել, շրթունքները դողդողում էին, յուրաքանչյուր մկան արտահայտում էր աշխարհում ամեն ինչ ուրանալու վճռականությունը:

* * *

Արևը ահագին ճանապարհ էր անցել: Լեռնահովիտներում ստվերները կարճացել էին: Հողը աստիճանաբար ջերմանում էր: Մարգագետիններից ցողերը ելնում էին վեր և անհետանում երկնքի կապույտում:

Հանկարծ Մոթոն վախեցավ. օրն արդեն կես էր լինում, չլինի՞ Մուրադը դուրս գա այդ տնից, աներևույթանա...

Նա նորից ու նորից խփեց ձիուն: Բուլանը ձգել-երկարացրել էր վիզը, գլուխը՝ բարձր ու փոքր-ինչ թեք, իսկ բերանը՝ ծայրաստիճան բացազատ. նա արդեն ճշում էր, բայց ճիշ չկար, վրնջյուն չկար, նրա ամբողջ մարմինը համապարփակ լռություն էր՝ ոսկեփայլ մշուշում լողացող դաշտերի ու լեռների մեծ, ահագրու, խորհրդավոր լռության մասը:

Վերջապես գյուղը երևաց: Մի քանի թուպեից նրանք հասան առաջին տանը: Ծառերը ծաղկել էին, խոխոջում էր առուն: Իսկ հյուղակները խուլ էին ու հանր: Երեկ Մոթոն չէր զգացել այդ խուլ-համրության ամբողջ ծանրությունը: Հիմա մարմինը փշաքաղվեց: Դա այդքան նոր վախ էր. թվում էր լռությունը իրեն տանում է մահվան ցուրտ ու խավար գիրկը, որտեղից վերադարձի ոչ մի ճանապարհ չկա:

Մոթոն ձգեց սանձերը և, չսպասելով, որ Բուլանը կանգ առնի՝ ցած բռավ:

Քիչ հետո տեղ հասան նաև մյուսները:

Մոթոն մտրակով լռելյայն ցույց տվեց միայնակ խորճիթը, և դենքը այդքան գունատ երբեք չէր եղել:

– Տունը շրջապատեք,– հրամայեց Նազիմը,– պիտի ողջ-ողջ բռնենք:

– Այստեղ, տան ուղիղ հետևում անդունդն է,– դողացող ձայնով բացատրեց Մոթոն,– նա փախուստի ոչ մի ճանապարհ չունի:

– Ասա...

– Ի՞նչ...

– Ասա թող դուրս գա, հանձնի զենքը, մենք բարի նպատակով ենք եկել,– դենքին խորամանկ մի ժպիտ դրոշմելով, տասնապետը ցուցամատով սղալեց բեղը,– ասա Մենտոուի Մալթան մեծահոգի է, եկել ենք հաշտվելու, մենք գլխի վրա ենք պահում իսկական հերոսներին... Հասկացա՞ր:

– Շատ լավ հասկացա,– Մոթոն ծուռ ժպտաց, որը և՛ վախ էր արտահայտում, և՛ հնազանդություն:

Նազիմը ձեռքի կտրուկ շարժումով նրան հրամայեց մոտենալ խորճիթին:

Թուրքերը շոշափեցին հրացաններն ու յաթաղանները:

Մոթոն դանդաղ, զգուշորեն առաջ գնաց և ծաղկած խնձորենու տակ կանգ առավ: Երեկ գիշեր նա հասել է մինչև այդ ծառը... Հիմա նա ահաբեկվեց, որ մեն-մենակ եղել է Մուրադին այդքան մոտիկ:

– Է՛յ...

Վախի՞ց էր, թե՞ հուզմունքից՝ Մոթոյի ձայնը խզվեց: Աչքերը կամաց գնացին խրճիթի պատով, թեքվեցին, հասան ձորաբերանին, ապառաժներից կառչած՝ մտքով իջան ձորի հատակն ու քարձրացան, պտտվեցին տան շուրջը, եկան ետ, մի պահ կանգ առան ավեր գոմի մոտ, հետո մտեցան ու քսվեցին անհանգիստ սպասումից չարացած զինվորներին, քայլեցին ավելի հեռու և ներքև՝ դեպի կանաչ մարգագետինը, ուր ազատ արձակված, հոգնատանջ ձիերի երամակն էր: Մոթոյի աչքերը նույն ճանապարհով ետ-ետ եկան և դարձյալ կանգնեցին խրճիթի պատին, որտեղ ծանրկեկ մի դուռ կար՝ ճկիկը վրան, և երկու նեղլիկ լուսամուտ: Լուսամուտների ապակիները մաքուր էին, նույնիսկ՝ պսպղուն: Նրա աչքերը ճեղք գտան, մտքի թելերով ներս գնացին և սենյակի կիսամթում նշմարեցին նրան:

– Է՛յ... Մուրա՛դ..

Մտելային լռություն իջավ ամեն ինչի վրա՝ մարդկանց, խրճիթի, որ այդ պահին ավելի խեղճ ու միայնակ էր թվում, ծաղկած ծառերի: Ապա մեղմ շնկշնկոց լսվեց. զեփյուռն էր խաղում ծառերի մատների հետ: Խնձորենուց մի ծաղկաթերթիկ պոկ եկավ և դողդողաց օդի մեջ:

Մոթոն մի քանի քայլ էլ առաջ գնաց, գլուխը շրջելով՝ հանդիպեց Նազիմի լուրջ ու խոժոռ հայացքին, և այն վայրկյանին, երբ աչքերը նորից դարձան տանը, նրան թվաց, թե դռան փեղկը թեթևակի շարժվում է, նույնիսկ ականջին ինչ-որ չիսկոց հասավ՝ կարծես մեկը ներսից դուռը լինգով փակեց:

– Մուրա՛դ... Լսո՞ւմ ես.. Է՛յ... դուրս արի,– գոռաց Մոթոն:– Ես գիտեմ, այդտեղ ես, դուրս արի, հո շուն ու գել չենք, ինչի՞ց ես ան քաշում... դուրս արի մի քիչ խոսք ու զրույց անենք...

Նա որոնում էր «մեծահոգի» բառը, որով Նազիմը քիչ առաջ բնորոշել էր Երզնկայի կառավարիչ Մեմտուհ Մալթային, բայց չէր գտնում՝ մեկ մոտենում էր, մեկ էլ հեռանում, և հիշողության այդ լարումը նեղում-չարչարում էր նրա մարմինը: Վերջապես մի բառ նրա հիշողության խորքից եկավ ու կանգնեց լեզվի ծայրին, կարծես հենց այդ բառն էր.

– Տասնապետ Նազիմը բարի է, լսո՞ւմ ես, դուրս արի... տասնապետ Նազիմի հոգին մեծ է... մե՛ծ...

Մոթոյին թվաց, թե մի ամբողջ ժամ անդադար խոսել է ու բղավել: Ըունչը կտրվում էր: Նայեց ետ: Նազիմի դեմքը գոհունակություն էր արտահայտում: Մոթոն խոր շունչ քաշեց և նորից գոռաց.

– Մուրա՛ղ... Է՛յ... գոնե մի ձայն հանիր... Մուրա՛ղ...

Նազիմը հավանության նշան արեց գլխով, որից Մոթոն սրտապնդվեց:

– Փաշաները, լսո՞ւմ ես, ներել են բոլորին... մարդասպաններին, թալանչիներին... հասկացա՞ր... ներել են... ներե՛լ... թալանչիներին, ով անասուն է ալան-թալան արել, հարստություն, տունտեղ... Է՛յ... մարդասպաններին էլ... Կյանք ու արև փաշաներին... Երկար կյանք... ներել են... կյանք ու արև փաշաներին... ներել են... ներել են... ներել են... Ըա՛տ երկար կյանք ու արև...

Մոթոյի ձայնը կրկին խզվեց, բայց այս անգամ վախը չէր պատճառը: Մի պահ ինքն էլ հավատաց, թե իշխանությունը հանցագործներին ներելու գրավոր կարգադրություն է արել, և ուրախությունից կարծես շունչը կանգ առավ:

Շարունակելով նայել խրճիթին, Մոթոն մտածեց, որ սխալ է թույլ տվել, սակայն չգիտեր՝ որտեղ և ինչ: Հետո այդ միտքն ուժով

հեռացրեց իրենից: Երբ մտածումքը, ասես խրճիթի պատին
զարկվելով, նորից եկավ ու դողացրեց նրա մարմինը, նա պարզո-
րոշ լսեց լուսքյան ձայնը: Դա զարհուրելի ձայն էր. թվում էր՝ մի-
լիոնավոր կատաղած շներ ուզում են վնաստալ, բայց չեն կարողա-
նում և դառնում են ավելի արյունարբու: Նա դանդաղ, զգուշորեն
շրջվեց և տեսավ, որ թուրքերի աչք-ունքից ժանգեր են կախվել:

– Արև... կյանք... փաշաներին...– ժպտալով գույնը թոցրեց
Մոթոն:

Կարծես արձաններ էին: Մոթոն չզիտես ինչու, հաշվեց
նրանց և մեկ անգամ ևս համոզվեց, որ տասնհինգ հոգի են: Նա
փորձեց մի նոր ժպիտ խաղացնել դեմքին, բայց միայն վերին
շրթունքը ցնցվեց: Թվում էր՝ արձանները հրամայում են սև աշ-
խարհի գնալ: Նա այնքան էր ուզում ապրել, որ պատրաստ էր ոչ
միայն Մուրադին այդ տասնհինգ մարդկանց հանձնել, այլև լեռ-
ներն ու երկինքը՝ ամեն-ամեն ինչ, որ արևի տակ աշխարհ են
կազմում:

– Ո՞ր է Մուրադը:

Մոթոն ասես սարսափելի մի երազի մեջ էր ու հանկարծ ուշ-
քի եկավ: Տասնապետ Նազիմի ձայնն էր: Իրենց դեմքի գծերով
նույնն էին հարցնում մակ մնացածները՝ «ո՞ր է Մուրադը»:

– Մուրադը չկա,– Նազիմը ետադարձ հայացքով տեսավ ի-
րենց անցած ամբողջ ճանապարհը՝ խորդուրդուրդությունները, փո-
շին, որ շաղախվում էր իրենց ու ձիերի քրտինքին, քարերը... և
նոր միայն զգաց, թե որքան է հոգնել:– Տանը մարդ չկա, ոչ զբ:

Բառերը հնչեցին ծանր մեղադրանքի նման: Մոթոն ահու-
սարսափով միտք արեց, որ գուցե տանը, իրոք, մարդ արարած
չկա, և անմիջապես էլ պատկերացրեց դրա հեռևանքը... Թուրքե-

ըը իրեն չեն ների... և արյունով, նյարդերով, աչքերով, սրտով հավատաց, թե Մուրադն այնտեղ է... ինքը կարող է բռնել նրան, կարող է սպանել... Նրա ամբողջ մարմինը զգաց հույսի շարժումը, որ մեկ արագանում էր, մեկ էլ դասնդադում՝ դառնալով գրեթե ոչինչ:

– Նա տանն է... Երեկ գիշեր եմ տեսել... Նա վիրավոր էր, հազիվ էր քայլում... Իմ այս աչքերով եմ տեսել, այս աչքերով... Նա չի կարող ճղել, ո՞ր պիտի գնա, ոչ մի տեղ էլ չի կարող գնալ...

Մոթոն ոտքերի ու ձեռքերի ջղածիզ շարժումներով փորձում էր ամրապնդել իր խոսքի հավաստիությունը: Հետո էլ ավելի մտտեցավ խրճիթին և այնքան էր հուզված, որ արդեն ուշադրություն չդարձրեց՝ շա՞տ է առաջ գնացել, թե՞ քիչ:

– Է՛յ, հիմա՞ էլ ես քո վատությունը անում, ուզում ես սրանք ինձ ջարդեն, քիթ ու բերանս մեկ անեն, հա՞... Մուրա՛դ... Տնից դուրս արի, է՛... Քեզ փրկություն չկա, ոչ մի փրկություն... Թե ուզում ես կյանքդ մի օրով երկարի՝ մինչև կախադանդ, սուսուփուս դուրս արի տնից, լսո՞ւմ ես, թե չէ տունը հիմա կրակի կտամ: Քեզ կախելու եմ, լսո՞ւմ ես, քեզ դա էլ քիչ է, ցից եմ հանելու... Դուռը բաց արա, դուրս արի... Հիմա տունը կվառեն, մոխիրներից ոսկորներիդ կհանեն ու կտանեն Մեմտուհ Մալթային... Է՛յ... սևացած ոսկորներդ, գանգդ, սևացած գանգդ, ոսկորներդ...

Խրճիթից կրակեցին: Մոթոն ընկավ գետնին, չոքեչոք արագ ետ քաշվեց և, հասնելով խնձորենուն, որտեղ իր հրացանն էր, պատկած դիրքից երկու գնդակ արձակեց տան վրա, հետո անմիջապես պահ մտավ բնի հետևը: Խրճիթից կրակեցին երկրորդ

անգամ: Երկու դեպքում էլ նշան էին բռնել իրեն, և նրա մարմնով դող անցավ:

Նազիմը հրամայեց չկրակել, բայց անակնկալի եկած զինվորները, դիրքեր բռնելով, գնդակ գնդակի հետևից էին արձակում:

Պատուհանների բոլոր ապակիները փշրվեցին, իսկ ծառերից սալիտակ ու կապույտ ծաղկաթերթեր ընկան ներքև:

– Նա այնտեղ է... է-է՛յ... Մուրա՛դ... ասում էի, չէ՞, նա այնտեղ է, է՛յ...– չարանենգ հրճվանքով գոռաց Մոթոն և իրար հետևից երեք գնդակ արձակեց դեպի ծայրի պատուհանը, որտեղից, ըստ նրա ենթադրության, կրակել էին իր վրա:– Նա այնտեղ է, բա ո՞ր պիտի գնար, այնտեղ է... է՛յ... աղոթք արա... է՛յ... կաշիդ քերթելու եմ, տիկ եմ հանելու, տիկ... այնտեղ է...

– Չսպանեք,– իր հերթին բղավեց Նազիմը,– ողջ-առողջ պիտի հասցնենք Երզնկա, Մեմտուհ Մալթան է այդպես ուզում:

Շեր խնձորենու բնի տակ բերանքսիվայր պառկած Մոթոն ժպտում էր երանությունից, քիչ առաջվա մարմնական ծանր տազնապներն արդեն խաբկանք էին քվում՝ հեռավոր ու անհրապական: Միրտը ծիծաղեց, ոտքերի մկանները խթխթացին, մեջքը բոր եկավ: Նա ծռնեց թիկունքը, որ բորն անցնի, և ախորժալի գրգիռ զգաց:

Երբ ամեն ինչ այդպես բարեհաջող էր դասավորվել՝ Մուրադը թակարդում էր, ինքը՝ ողջ և առողջ, թուրքերը՝ իրենից գոհ ու շնորհակալ, նա միայն այժմ նկատեց այն տեղը, ուր քիչ առաջ կանգնած՝ ճիգ ու ջանք էր թափում, որ Մուրադին տևից դուրս հանի: Դա բացազատ տեղ էր, խրճիթից հրացանի գնդակի մի հասողությունից շատ պակաս հեռավորության վրա: Մոթոն հաս-

կացավ, թե ինքն ինչ փորձանքից է ազատվել, և ճակատը պատվեց սառը քրտինքով: Մուրադի ձեռքը երբեք չի դողում, դիպուկ հրաձիգ է, դեռ տարիներ առաջ նրա գնդակը չէր վրիպում, իսկ հիմա, երևի, ավելի շեշտակի է դարձել, ո՞նց տեղնուտեղը չի գնդակել իրեն... Անսահման էր Մաթոյի զարմանքն ու տարակույսը: Մի՞թե Մուրադի աչքերը այդ պահին պղտորվել էին կամ դողացել էր ձեռքը, հրացանի նշանահատիկը ծռվել... Նշանահատիկը ծռվել կարո՞ղ է, — մտքում հարցրեց նա և, պատասխան չգտնելով, ավելի ապշահար եղավ: Հետո դեմքը լուսավորվեց. բախտը բերել է, բախտը, աստված իր հետ է եղել...

Խրճիթից դարձյալ կրակեցին, և գնդակը կպավ խնձորեմուն: Մոթոն վերջնականապես հանդգնեց, որ Մուրադն ուզում է նախ և առաջ իր արևը սևացնել, բայց նրան ինչ-որ բան խանգարում է: Մոթոն նենգ ու ծաղրական բռբռաց, որ նրա երեք փորձից և ոչ մեկը նպատակին չի հասել: Նա զգուշորեն ոտքի ելավ և, կրակ մաղելով պատուհաններին, ծառից ետ քաշվեց դեպի թուրքերի դիրքերը, որտեղ ավելի ապահով էր:

Արևը կիսել էր երկինքը: Հողից գաղջ խոնավություն էր բարձրանում, օդը թրթռում էր: Ինչ-որ տեղ ճկճկում էր արտոյտը:

— Ինչքա՞ն աչք պահենք, — ասաց առաջին թուրքը, — տունը կրակ գցենք՝ պրծնի գնա:

— Թող խորովվի կրակի մեջ, — ասաց երկրորդ թուրքը:

— Դիշտ է, թող կաշիները պճպճան, միսը ծուխ անի, մնան ոսկորները, — ասաց երրորդ թուրքը:

— Աչքերը փորենք, լեզուն կտրենք, ականջները քյալփաթի-նով պոկենք, — ասաց չորրորդ թուրքը:

– Կաշին քերթենք,– ասաց հինգերորդ թուրքը:– Կաշին քերթենք, չորացնենք, տանենք տանք փաշաներին:

– Չէ, իր հրացանի վրա գցենք,– ասաց վեցերորդ թուրքը:

Տկլորացնենք, իշամեղուներն ուտեն,– ասաց յոթերորդ թուրքը:

– Ծեծ ու ջարդ տանք՝ մեռնի, աղիները թափենք,– ասաց ութերորդ թուրքը:

– Երկու ուժեղ ճյուղ կորացնենք,– ասաց իններորդ թուրքը,– ոտքերը կապ տանք ճյուղերին, հետո ճյուղերը բաց թողնենք, թող ճղվի, երկու կես լինի:

– Գցենք ձորը, քարշ տանք ձիու հետևից, ուղեղ-մուղեղը ցրիվ գա, ոտքերից կախենք թեժ թոնրի մեջ,– ասաց տասներորդ թուրքը:

– Մեծ պղինձը սառը ջուր լցնենք, նրան ողջ-առողջ գցենք մեջը, դնենք կրակին, թող կամաց-կամաց եփվի,– ասաց տասնմեկերորդ թուրքը:

– Չեռքերը կացնահարենք, նա էրգ է սիրում, մենք՝ արյուն, նրա արյունը խմենք, օխա՛յ...– ասաց տասներկուերորդ թուրքը:

– Մազերը պոկոտենք, քիթը կտրենք, ձեռքերը ջարդենք,– ասաց տասներեքերորդ թուրքը,– ոտքերը ջարդենք, աչքերը փորենք-հանենք, լեզուն խանձենք:

– Ատամները մեկ-մեկ քաշենք, եղունգների տակ ասեղներ խոթենք, թող ցավերից գոռգոռա, գլուխը տանք քարին, ջարդենք վիզը, ոտքերով տափակեցնենք՝ հավասարվի հողին,– ասաց տասնչորսերորդ թուրքը:

Մի մեծ քարի հետևում դախանած՝ տասնապետ Նազիմը լուռ և աչքերը փակ լսեց այդ խոսքերը: Արտույտը դեռ դալալում

եր: Դասլայլը և մահավճիռները գարնանային ջինջ ու արևոտ օրում ասես խփվում էին իրար և սարսուռներ դարձած իջնում հողին: Նազիմի կոպերը դանդաղ բացվեցին, կանաչ աչքերի հայացքը սահեց զինվորների մարմիններով, գնաց ետ, հետո եկավ առաջ, էլի ետ գնաց և կանգ առավ տասնմեկերորդի վրա: Դա Խալիդն էր՝ միջահասակ, իր ցեղին հատուկ հավկթածն գլխով, ամրակազմ մի արու, որ Ամատուլիայի բորենիների ոհմակից էր, Եփրատի ափերին էր եղել, Դեր-Չորում, և միայն վերջերս էր տեղափոխվել արևելյան հողեր: Տասնմեկերորդին Նազիմը, կկոցելով աչքերը, բերանի ծայրով թեթևակի ժպտաց:

– Կրկնում եմ, – նշան բռնելով ասաց նա, – պարտավոր եմք ողջ-ողջ տանել քաղաք, իսկ եթե ինքը չուզի, եթե համառի, եթե դիմադրի՝ կսպանենք:

Նազիմի հրացանը տրաքտրաքվեց: Պատուհանի երկաթե վանդակորմից ձգվող թուկի վրայի լաթը, որ երեխայի վարտիքի էր մնան, վայր ընկավ:

Խրճիթից կրկին մի գնդակ սուրաց և, անցնելով դիրքերի վրայով, կպավ թիթեղե տաշտակին, որ ծուռումուռ ու ժանգոտ ընկած էր անցյալ տարվանից մնացած չոփ-չոր լոբաժաղիկների մեջ: Զիչ անց լավեց մի կրակահերթ՝ հինգ-վեց գնդակներ, փոքր ընդմիջումներով, ծակծկեցին օդը: Ըստ երևույթին, կրակում էին տարբեր կետերից: Այնուհետև մեկ-երկու բռպե լռություն եղավ: Նորից, քայքայ անգամ մեկ ուրիշ տեղ, ծլվլաց արտույտը, որ կրակոցների ժամանակ ձայնը քաշել էր: Լսվեց նոր կրակոց, և քիչ էր մնում գնդակը կայներ տասնապետի գլխին:

Տասնապետ Նազիմի հրացանից գնդակներ թռան դեպի խրճիթ: Նրա օրինակին հետևեցին մնացածները:

– Ինձ են ուզում խփել, ինձ,– մոլտաց Նազիմը և շարունակեց կրակել պատուհանների վրա:– Երևում է, նրանք շատ են:

– Շատ չեն, Մուրադը և երկու ֆիդայիներ,– ասաց Մոթոն, որ նրանից քիչ հեռու էր դիրք բռնել:

– Ի՞նչ գիտես:

– Գիշերն են հաշվել, երեկ գիշեր:

– Երեկ գիշեր երեկ գիշեր էր, իսկ այսօր այսօր է:

Հրացանները պայթում էին մեկը մյուսի հետևից կամ փոքր ու մեծ խմբերով: Խրճիթից ոչ մի գնդակ չէր գալիս: Վերջապես բուրքերը դադարեցին կրակը և լռեցյալն մայեցին իրար:

– Սպանվեցի՞ն...– հարցրեց մեկը:

Ոչ ոք ձայն չհանեց:

Նորից լսվեց արտույտի գեղգեղանքը: Այժմ նա շատ հեռավոր էր՝ մասրենիների մոտ, որոնք անվար, տեղ-տեղ կորեկի ծիլեր արձակած արտը բաժանում էին սարալանջի քարքարոտ տարածություններից:

– Սպանեցինք...– ասաց մեկ ուրիշը:

Նրանց աչքերում ուրախություն կար, ինչպես նաև՝ մաղձոտ ափսոսանք, որ ֆիդայիները ազատվել են իրենց հոգու դատաստանից: Նրանք ուզում էին, որ խրճիթից կրակոցներ լսվեն, թեկուզև իրենցից մեկը կամ մի քանիսը վիրավորվեն կամ նույնիսկ սպանվեն... Բայց հակառակորդը կենդանության որևէ նշան ցույց չէր տալիս:

– Տեսեք սպանվե՞լ են,– կարգադրեց Նազիմը և արևունկներով կոթնեց քարին: Երևում է՝ սպանել ենք:

Մի քանի զինվորներ տարբեր կողմերից սողեսող մուտեցան խրճիթին: Հաստապինդ դուռը ներսից փակ էր:

– Այնտեղ զարհուրելի ձոր է,– գռռաց մեկը:

– Ելումուտի ուրիշ ճանապարհ չկա, միայն այս դուռն է,–
հայտնեց մեկ ուրիշը, որը հասցրել էր տան դրսի բուլոբ ծակուծու-
կերն ուսումնասիրել:

– Պատուհանից նայեք, պատուհանից:

– Մեկ էլ տեսար խփեցին:

– Կամ մեռած են, կամ էլ՝ ողջ:

– Իհարկե, հաստագլուխ,– փնթփնթաց Նազիմը,– եթե մե-
ռած չեն՝ ուրեմն ողջ են, իսկ եթե ողջ են՝ ուրեմն մեռած չեն, անա-
սընը ավրադընը սիքին:

Արևը սկսեց շարժվել դեպի հորիզոնը: Դաշտերում և լեռնե-
րում ոսկե մշուշը խտացավ: Հանկարծ, մեկ այս կողմում, մեկ
այնտեղ, մշուշը ցրվում էր, ոսկե վարագույրի ծայրը ասես գնում
էր ետ, և երևում էր կապույտ երկիրը:

Նազիմը հազաց ու ծիծաղեց: Ծիծաղում էր ու հազում: Հազն
ու ծիծաղը աակնուվրա էին անում նրա կուրծքը և թափվում բե-
րանից, աչքերից, քթից: Վերջապես, տաք ու կարմիր ճակնդեղի
նման իր դեմքը նա դարձրեց Մոթոյին: Ծիծաղի ու հազի փոխա-
րեն դեմքին աստիճանաբար դրոշմվում էր ինչ-որ օձություն:
Նկատելով օձային այդ գծերը, որ ստվերի պես դանդաղ ու զգու-
շորեն քսվում էին իրար, Մոթոյի մարմնով դող անցավ, և ճակա-
տին քրտինքի կաթիլները սառեցին:

– Գնա դուռը ջարդիր,– ասաց տասնուպետը նրան:

Մոթոն կռացած վազեց դեպի խրճիթը և, ուսը դռանը դեմ
տալով, սկսեց հրել: Նրան միացան չորս թուրքեր: Դուռը ճռճաց,
բայց չբացվեց նույնիսկ այն բանից հետո, երբ նկատելիորեն

զնաց ներս: Այդ վայրկյանին հենց գոյացած ճեղքից մուխ ու կրակ թռավ:

Բոլորը փախան ետ:

Փոխհրածգությունը վերսկսվեց:

Գնդակների կարկուտը խրվում էր դռան հաստ տախտակների մեջ: Քիչ անց խրճիթից արդեն չէին կրակում:

Արտույտի երզը լռությունն ավելի բացարձակ դարձրեց: Պայծառ ու ընդարձակ լռություն էր: Երգի ելևէջները հողից դուրս եկած ծիլերի նման էին:

– Հը՞... – Մոթոյին նայելով նեղսրտեց Նազիմը:

– Ի՞նչ...

– Ծաի ձայնը կտրի՞ր,-- ասաց նա:

Մոթոն արագ քայլեց դեպի ձայնը, կանգ առավ, հետո զգուշորեն առաջ զնաց ու, մասրենիներին չհասած, կրակեց: Օդում ու լռված նրա հայացքից բոլորը հասկացան, որ վրիպել է:

Այժմ արտուտիկը խրճիթի առջև, սանդի վրա էր: Իր ձայնի պես նագելի, գույնզգույն մի թռչնակ, փոքրիկ-փոքրիկ, ինչպես խաղալիքը, և անհավատալի էր, որ նրա մեջ շունչ կա, կան այն բոլոր բաները, որոնք հարկավոր են ապրելու համար:

Տասնվեց հրացանների փողերն ուղղվեցին այնտեղ: Արտույտը ճովողում էր: Հանկարծ զեփյուռը քսվեց նրա փետուրների, և նա, համազարկից ակնթարթ առաջ, թռավ: Զգաններն արդեն ետ էին քաշվել, շիկացած գնդակները կպան սանդին և ցաք ու ցրիվ եղան:

Թուրքերը հայեղեցին խրճիթում պատսպարված հայերին, կարծես նրանք էին այդ անհաջողության մեղավորները, իսկ երբ արտույտի անհոգ ու զվարթ ձայնը եկավ ձորի կողմերից, ու բոլո-

ըը մի ավելորդ անգամ համոզվեցին, որ նա կենդանի է, նույնիսկ չի էլ վիրավորվել, հայերի նկատմամբ նրանց արյունարբու կատաղությունն ավելի բորբոքվեց:

– Տունը կրակ գցենք, ո՞ւմ ենք սպասում:

– Արևն իջնում է, շուտով մութ կլինի:

– Է՛յ, Մուրադ, լավ է քո ոտքով դուրս գաս... է՛յ... Լսո՞ւմ ես...:

Քե չէ մոխիրդ դուրս կհանենք,– գոռաց Մոթոն:

– Տան հետ թող վառվի, դրանից էլ լավ պատի՞ժ:

– Մենտոնի Մալթային կասենք մութն ընկնում էր, տունը կրակ տվինք, սրանք էլ, ահա, մոխիրներն ու ոսկորները:

Բոլորը լռեցին, որովհետև տասնապետ Նազիմը ոչինչ չասաց, նույնիսկ չնայեց նրանց վրա:

Ուշադիր աչքը նրա քունքին կարող էր տեսնել, թե ինչպես է աշխատում զարկերակը: Դա արյան հասարակ շարժում չէր, այլ մի խփխփոց, որ առաջանում է լարված մտածմունքից: Նրա գլխում խճճվել էին բազմաթիվ հարցերի թելեր. ո՞վ է «եայ»-ը, Մոթոն ինչո՞ւ է դավաճանում իր հայրենակիցներին, ի՞նչ բան է, վերջ ի վերջո, կոտորածը, ի՞նչ է դավաճանությունը... իսկ հայրենասիրությունը, խի՞ղճը... դավաճանին ինչպե՞ս են պատժում, թե՞ նա մնում է անպատիժ, ինչ է պատերազմը, ինչ է սերը... Դրանցից և ոչ մեկի պատասխանը չգտնելով, նա լուռ ու մունջ տառապում էր: Նույնիսկ չգիտեր՝ ո՞ր սերն է ելք որոնում իր մեջ՝ կնո՞ջ նկատմամբ սերը, հայրենիքի՞, թե՞ բնության: Հարցերը այնպես էին եփվում, որ գլուխը ցավում էր, պտույտ գալիս, և աչքերը, ցավի՞ց, թե՞ կատաղությունից, պղտորվում էին:

Կարելի էր ենթադրել, թե տասնապետի հոգում շարժվում է խիղճը կամ նման մի բան, բայց դա բոլորովին էլ այդպես չէր:

Մանկության օրերին, ձնռան գիշերները նա գողեգող բարձրանում էր ծառերի վրա և հավաքում քնած ճնճողուկներին, հետո ցուցամատով ու միջնամատով պոկում գլուխները: Ծնճողուկները նա փետրում էր, քաշում շշին ու խորովում: Իսկ այժմ՝ կոտորածների ու քալանի ժամանակ, մարդկային ամենածանր տառապանքներին անգամ նա նայում էր սառն ու անտարբեր, կարծես ապակե աչքերով: Միայն մի բան կար Նազիմի ներսում՝ մտածելու հատկությունը, որով նա տարբերվում էր շատ ցեղակիցներից: Նա մտածում էր, դատողություններ անում, և դա գնահատվեց. գորակոչվելուց կարճ ժամանակ հետո նա արդեն տասնապետ էր: Այդ բարձրացման մասին նա նամակով հայտնեց հորը և նրանից բավականին տարօրինակ պատասխան ստացավ: Հայրը գրում էր, որ ինքը գերադասում է հողագործությունը, քան՝ ծառայել բանակում, որ լավ կլինի Նազիմը շուտ գա տուն և իրեն թև ու թիկունք դառնա: Նազիմը երկրորդ նամակն ուղարկեց. նախանձում էր փաշաներին, ուզում նրանց ճանապարհով գնալ, այդպես էլ գրել էր՝ «նրանց ճանապարհով դեպի վերև»:

Հիշե՞ց Նազիմը այդ նամակները, դժվար է ասել, սակայն նրա ներսում խլրտաց ինչ-որ բան: Դա հոր կարոտն էր, որ նա զգաց, բայց չգիտակցեց:

Վերջապես, իրեն տանջող հարցերի կծիկը նա հանեց գլխից: Իսկապես, ինչո՞ւ տունը չվառենք, — արդին մտածում էր նա, — վառենք, քանի դեռ մեզանից որևէ մեկը չի խփվել:

Հանկարծ լսվեց լացաձայն մլավոց:

— Կատո՞ւն, — բռավեցին այս ու այն կողմից:

Մեծ ու բրդոտ մի կատու էր կուչ եկել խրճիթի դռան վերևի քիվին:

- Թողեք,- գոռաց Նազիմը,- ես եմ խփելու...

Նա այնպես հանգամանորեն, ատամները կրճտացնելով էր նշան բռնում, կարծես ուզում էր սպանել ոչ միայն կատվին, այլև արտույտին, որի նվազը ձորից հասնում էր նրանց, այլև Մուրադին, նրա ընկերներին, ազգակիցներին, կարծես ուզում էր ամբողջ Արևմտյան Հայաստանը մի տրաքոցով մաքրել հայերից ու բուսական, կենդանական աշխարհից, այո, նաև բուսական, որովհետև հանկարծ նա ատեց խնձորենիների ծաղկած գեղեցկությունը, զգաց, որ դա գեղեցիկ է, և բարկացավ: Վերջապես կրակեց: Կատուն ցավից ոլոր-մոլոր եղավ և, հասնելով քիվի եզրին, թրմփաց դռան առջև: Գետնին նա մի քանի ջղածիզ շարժումներ էլ արեց ու, տնկելով ոտքերը, կողքի վրա անշնչացավ:

Հաղթական բացականչություններին հետևեց լռությունը: Բոլորը գիտակցեցին, որ այդտեղ գալու իրենց նպատակը կատվին սպանելը չէր, և դա նրանց մեջ նյարդային նոր շարժում առաջ բերեց:

Խրճիթն էր, կատվի դիակը, Նազիմն իր զինվորներով և Մոթոն:

Արտույտի երզն այլևս չէր լսվում: Գուցե նա ձորի խորքերում էր, որտեղ հոսում էր լեռնային ձյուններից ծնվող Չմրուխտ գետակը:

Եվ այդ պահին կատարվեց տարօրինակ, կարելի է ասել՝ խորհրդավոր մի բան. կատուն չէր շարժվում, շունչը փչել էր, բայց չափազանց պարզորոշ, նույնիսկ ավելի լեցուն ու ամբողջական հնչեղությամբ լսվեց քիչ առաջվա լացածայն մլավոցը: Բոլորը տարակուսանքով իբար նայեցին:

– Վառե՛լ... – կիսապառկած դիրքում, ձեռքը դեպի խրճիթը մեկնելով, հանկարծ բղավեց Նազիմը:– Վառե՛ք... Խանդավառված, գոռում-գոչումով նրանք սկսեցին չոր ճյուղեր, այստեղ-այնտեղ թափփված անցյալ տարվա խոտը տեղափոխել խրճիթի կողքերն ու հետևը՝ պատերի տակ:

– Շո՛ւտ, շո՛ւտ... արևը գնում է, ահագին ճանապարհ ենք կտրելու,– գոռոզում էր Նազիմը:

Արևի շողերն արդեն ծածկում էին լեռների գագաթները: Լեռնոտ հորիզոնը կարծես ուղտերի քարավան էր՝ արևի մեծ ու հրաշեկ գունդը մեջքին: Հիմա լեռները կապույտի ու ոսկու երանգներով էին ներկված:

Մի քանիսը վազեցին մոտակա ամառի տները՝ վառելիքի նոր խրճեր բերելու:

Ամեն ինչ պատրաստ էր. խրճիթը երեք կողմից շրջապատված էր չոր խոտով ու ճյուղերով, թիթեղե տաշտակում բորբոքվում էր կրակը, որ պիտի մոտեցնեին վառելիքին:

Այդ ժամանակ ինչ-որ բան չրխկաց, ապա խրճիթի դուռը անսպասելիորեն բացվեց: Դռան բացվածքում ոչ ոք չկար: Երեկոյան քանին կապվ դռանը, և այն ճռռալով ավելի ներս գնաց:

Բոլորի թուրը չորացավ: Կախարդվածների նման անշարժացան իրենց տեղերում:

Տասնապետ Նազիմը կրակեց դռանը, ստուգելու՝ մութ բացվածքում մարդ կա՞, թե՞ ոչ:

Կրակոցից թուրքերը սթափվեցին և մեկ անգամ ևս պարզ տեսան, որ դուռը բաց է: Եվ մեռյուններով խուժեցին ներս:

Մի պահ Մաթոն այգում մենակ մնաց: Ասես մոլորվել էր: Հետո հոգնած, ինչ-որ թախիժ կրծքում, դանդաղ քայլեց դեպի խրճիթը:

Մտնելով սենյակ՝ Մոթոն ամբողջ մարմնով ցնցվեց: Թախտին կուչ էր եկել Մարիամը և երեխային ծիծ էր տալիս: Մոթոյի հոգում վայրկենապես կենդանացավ Մարիամի հանդեպ իր հին ու հեռավոր զգացմունքը, և դա այնքան մրմռալի էր, որ կարծես աղ լցրին բացված վերքի վրա:

– Ո՞ր է Մուրադը,– հարցրեց Նազինը, որ մի պահ նույնպես շփոթվել էր:

Մարիամը չպատասխանեց: Երեխային ամուր սեղմել էր կրծքին և դողում էր:

– Բոլոր ծակուծուկները ստուգեք,– կարգադրեց Նազինը:

Սենյակը բավականին ընդարձակ էր: Անկյունում մեկ ոտք բարձրությամբ սեղան կար՝ վրան փայտե գդալներ, պղնձե մի բաժակ՝ մանուշակներով, երեք կավե ամսն, որոնցում թանապուր էր եղել: Թարեքի վերին դարակները դատարկ էին, իսկ ցածի լայն մասում կային երկու կուժ և երեք կաթսա: Վեցհարվածյան հրացանը, որով մի քանի ժամ շարունակ կրակել էին, իբրև մի անպետք իր ընկած էր գետնին՝ սենյակի մեջտեղը: Ծայրում՝ պատի մեկ այլ խորշում, խցկված էր մեկ-երկու ձեռք անկողին: Առաստաղի գերանից կախված էր ճոճը, որը թեթևակի օրորվում էր: Միջանցքի տախտակե հատակի տակ նկուղն էր, բայց այն թաքստոց չուներ և ոչ էլ փախուստի որևէ անցք:

– Ո՞ր է Մուրադը,– արդեն փրփրած կրկնեց Նազինն իր հարցը:– Ո՞ր է:

– Չեր գալուց առաջ զացին:

– Դու նրա ի՞նչն ես:

– Կինը:

– Ո՞վ էր կրակում մեզ վրա...

– Ես,– շարունակելով դողացնել՝ ասաց Մարիամը:

Թուրքերն իրար երեսի նայեցին: Անսահման էր նրանց ապշանքն ու շփոթմունքը:

– Մեզ էջի տեղ է դնում,– այս ու այն կողմից վրա տվին նրանք:

– Սրանո՞վ էիր կրակում:

Մարիամը դրականորեն շարժեց գլուխը:

– Շարունակեիր կրակել,– նենգ ժպիտ խաղացնելով դեմքին՝ ասաց Նազիմը:– Շարունակեիր, ինչո՞ւ չշարունակեցիր, շարունակեիր,– բարկությունից աչքերը խոշորացան:– Կարող է, ով գիտե, մեկ էլ տեսար, գնդակը կպներ, սպաներ մեկնումեկիս,– և նա այնպես վայրագորեն ծիծաղեց, որ նույնիսկ թուրքերը սարսռածին:

– Փանփուշտները վերջացան,– ասաց Մարիամը:

Դուռը բացեցիր, որովհետև փանփուշտ չկա՞ր, բացեցիր, որ ներե՞նք:

– Չէ,– ասաց Մարիամը:– Դուք կուզեիք տունը վառել, ես տեսա: Սա ծնողացս տունն է, նրանք են շինել: Ինձ սպանեք, բայց տունը թող ապրի:

– Ծնողներդ որտե՞ղ են:

– Սպանեցին:

– Առանց մարդ արարածի տունն ո՞ւմ է պետք:

– Տո՞ւնը... Տունը մեզ կկապե հողին,– դողացող ձայնով ասաց Մարիամը:

– Առանց ժողովրդի ի՞նչ հող, ի՞նչ բան,– ասաց տասնապետը, զայրույթի շեշտը դնելով «հող»-ի և «բան»-ի վրա:

– Հողը հայրենիք է:

Տասնապետ Նազիմն ուզում էր գոռալ՝ շան քած, բայց վերջին ակնթարթին խոսքը կուլ տվեց, որովհետև ապշած էր կնոջ զգացմունքներից և նաև հիացած, ամոթ չէ՞ր իր համար՝ պատվազրկել նրան:

– Այստեղ մի փամփուշտ է մնացել,– հրացանի փամփուշտատուփը ակամա բացելով՝ ասաց Նազիմը:

Մարիամի դեմքին երևաց ցավոտ մի ափսոսանք: Մտածում էր՝ գուցե այդ փամփուշտը պիտի կատարեր իր ցանկությունը՝ սպաներ Մոթոյին: Նայեց նրան, որ միայնակ կանգնել էր պատուհանի մոտ, և զգաց, որ սրտի կռվներից ինչ-որ հեկեկոց բարձրանում է դեպի կոկորդը:

Նազիմն էլ նայեց Մոթոյին:

Բոլորը նայեցին նրան:

– Շուտով ոչ մի հայ չի լինի,– Նազիմը ծլփացրեց լեզուն:– Տես, Մոթոն թրքացել է:

– Անտառ չկա, որ իր գայլը չունենա,– ասաց Մարիամը դողացնելով:– Ստոր մարդ, ստոր... ազգի դավաճան...

Որքան էլ Մոթոն գիտեր, որ ինքը դավաճան է, բայց և այնպես այդ բաները սաստիկ խոցեցին նրան: Նա ձեռքը տարավ մեջքակապին, որ դաշույնը քաշի, բայց տասնապետ Նազիմը նրան հայացքով սաստեց:

– Թրքություն ընդունիր,– ասաց նա:

Մարիամը հեկեկաց:

– Աչքերդ թրքուիտ աչքերի պես սիրուն են, թրքացիր, որ ապրես:

– Չէ:

Շրջվելով՝ Նազիմը հանդիպեց կնոջն ուղղված զինվորների վավաշոտ նայվածքներին, և իր արյունն էլ եփ եկավ:

—Կլինես մեր կնիկը... երեխաներ կծնես, լսո՞ւմ ես, երեխաներ կծնես մեզանից, շա՛տ երեխաներ կծնես...

Նազիմը մոտ գնաց նրան:

Սրբիչը, որի տակ Մարիամը երեխային էր կերակրում, փոքր-ինչ տեղաշարժվել էր. Նազիմը տեսավ, թե ինչպես է երեխան մոր ծծակը բերանով քաշում, և մարմինը հուզվեց տուփուտության հեշտալի գրգռներից:

— Դե՛ ...

Տեսնելով, թե Նազիմն ինչ ցանկություններ ունի, Մոթոն մռացավ իր վիրավորանքը: Եթե նա Մարիամին մի քայլ էլ մոտենա, — ձեռքը դաշույնի կոթին՝ մտածում էր Մոթոն, — ես նրա աղիները կթափեմ: Մոթոյի ներսում շարժվեց այն հի՛ն-հինը, բայց այս անգամ ի՛նչ արտակարգ բերկրանք էր ու քնքշություն: Նրան թվաց՝ հնարավոր չէ ապրել առանց Մարիամի, որ Մարիամի համար նույնիսկ կարող է մեռնել՝ թողնել արևը, լեռներն ու գետերը, բուսականությունը, ամեն-ամեն ինչ:

— Դե՛... — կրկնեց Նազիմը, հայացքը երեխայի բերանից չկտրելով:

— Մուրադի մազը չեմ փոխեր բոլորիդ հետ, — հեծկլտոցից խեղդվող ձայնով խոսեց Մարիամը: — Սպանեք զիս...

— Շան քա՛ծ, — այնուամենայնիվ ասաց Նազիմը: — Հիմա շանսատակ կանեն...

Մոթոյի սիրտը զցեց, մկանները պրկվեցին,: Սրբիչն աննկատելիորեն սահեց ներքև, մերկացնելով Մարիամի ծանր ու լիք կուրծքը: Երեխան ցնցվեց աղմուկից և, մոր ծծակը բաց թողնե-

լով, ուլունք աչքերով ժպտուն նայեց Նազիմին: Կարմրոտ ծծակից մի քանի սպիտակ կաթիլներ ընկան: Երեխան չփչփացրեց բերանը և, ոչինչ չգտնելով, մլավելու պես լաց եղավ: Մարիամը նոր միայն տեսավ, որ սրբիչն ընկել է, շփոթվեց ու ամոթ զգաց և, երեխայի գլուխը դարձնելով իրեն, հապճեպ ծածկվեց:

– Չեմ ուզում քեզ սպանել,– ցանկամոլությունից Նազիմի աչքերը խոշորացան ու փայլվեցին,– բայց կսպանեն, տես, կսպանեն, եթե հենց հիմա ազգդ չուրանաս:

– Սպանիր,– արցունքների միջից երկյուղած նայելով նրան՝ ասաց Մարիամը:

– Ո՞ւմ համար ես ապրելու:

– Մերիններուն:

– Ձերոնք չկան, վերջացել են:

– Սպանիր:

– Ո՞ւմ համար ես մարմինդ պահում, մարմինդ, մարմինդ...

– Սպանիր,– կրկնեց Մարիամը:– Մենք մորից աշխարհ կուզանք: Հողից կծնվենք, հողը մեր մեծ մայրն է, ծաղկից, ամպրոպից, ջրից կծնվենք, աղբյուրներից... Միշտ աղպես է եղել, բարությունից կծնվենք, սիրելուց, քար, ջուր, մարդ սիրելուց... Սիրողի մարմինը կմեռնի, բայց ոչ հոգին: Արարատից կծնվենք, Արարատն է՛լ հո յեք կարող սպանել:

Բուռն հեծկլտուքից շնչակտուր՝ Մարիամը չիմացավ, թե ինչ ասաց. նրա շուրթերով հնչել էր իր նախնիների արյան ձայնը:

Նազիմը նյարդայնորեն շրջեց վեցհարվածյանի փակահակն ու հրեց առաջ, և վերջին փամփուշտը հայտնվեց կրակային դիրքում:

– Խնայիր, մարդ աստծո,– ճշաց Մարիամը, երեխային այնպես սեղմելով կրծքին, որ նա բարձր ու մեղք ձայնով լաց եղավ:

– Ուրանո՞ւմ ես,– գայրույթից կաս-կարմիր՝ հարցրեց Նազիմը՝ հրացանի փողն ուղղելով նրան:

– Չեմ կրնար,– թարգմանեցին նրա շուրթերը իր հոգու ամբողջ տառապանքը:

Նազիմը մատը ցուցադրաբար դրեց հրացանի ձգանին: Մոթոն, դաշույնը քաշելով, վրա վազեց նրան: Նազիմին թվաց, որ նա ուզում է, իրենից առաջ ընկնելով, Մարիամին խփել, և, օղում բռնելով ձեռքը, նրան նախ կանգնեցրեց, ապա և նողկանքով հրեց մի կողմ:

– Մոթո,– հևալով ասաց նա,– ի՞նչ ես ուզում այս խեղճից, Մոթո:

Նազիմին, իսկապես էլ, դուր չեկավ, որ նա փորձել էր իր ազգի կնոջն սպանել: Ինքն այդպիսի բան երբեք չէր անի: Լսվում էր միայն Մարիամի արդեն անուժ հեկեկոցը:

– Թող ապրի,– մի բռպե աչքերը կկոցած խորհելով, ասաց տասնապետ Նազիմը և վեցհարվածյանի կաշեփոկը քաշեց ուսին:– Վերադառնում ենք Երզնկա:

Առաջինը սենյակից դուրս եկավ Մոթոն, որ մեռելի գույն ուներ: Նրան հետևեցին մնացածները: Նազիմը վերջինն էր: Նա դուռը իր հետևից մինչև իսկ ծածկեց:

Չիերը կուշտ կերել էին և լավ հանգստացել:

Թուրքերը ձգեցին թամբակապերը և ճանապարհ ընկան:

Գյուղից դուրս գալով՝ Մոթոն ծիպոտով մեկ-երկու անգամ դաղեց ձիուն և բլուրից առաջ անցավ: Նա ուզում էր թուրքերին արագ հեռացնել այդ կողմերից:

Արևը մայր էր մտնում: Գունատ էր, կարծես տխուր ու նեղա-
ցած: Թվում էր, անփողջ օրը երկրի վրա հոգեհարազատություն է
որոնել ու չի գտել:

– Տասնապետ, դու ջահել ես, չես հասկանում,– Նազիմի
հետևից հասնելով, ասաց Խալիդը,– այն կնկան ու երեխին չի
կարելի ողջ թողնել:

– Նազիմը շրջվեց և քամահրանքով նայեց նրան:

– Չի կարելի,– կրկնեց Խալիդը:– Թույլ տուր գնամ, մահը
քերանները տամ:

Նրանց ձիերն արդեն կողք-կողքի չափ գցեցին:

– Մի քիչ էլ այսպես գնանք, կիրամայեմ ձիերի գլուխները
ետ դարձնել,– Առանց Խալիդին նայելու ասաց Նազիմը:– Մու-
րադը չի կարող տուն չգալ, այդպիսի կնկա հետ անկողին մտնելը
գիտես ինչ քեֆ է, կամ էլ... կամ էլ կինը կառնի երեխին ու կգնա
նրա մոտ, նրա ծոցը... նա գիտի մարդու տեղը... գիտի... աչքերը
կապես էլ՝ կգնա... Ամբողջ գիշեր գաղտնի հետևելու ենք դրան,
պետք է նրանց հավաքել մի տեղ: Երեքին քո ուզած ձևով կալատ-
ժենք, մի մեծ պղինձ է պետք, մե՛ծ-մեծ, միայն այդ ձևով...

– Ի՞նչ ձևով,– Խալիդն արդեն մոռացել էր իր սարսափելի ա-
ռաջարկությունը:

Պատասխանելու փոխարեն՝ Նազիմը եռանդուն կերպով
խթանեց ձիուն և նրա հարևանությունից պոկ եկավ:

Նա հետզհետե մեծացնում էր արագությունը: Շուտով ան-
ցավ իր առջևում գտնվող բուրբ թուրք հեծյալներից և Մոթբյի հետ
մենակ մնաց տարածության ու ժամանակի մեջ: Նրա ձին հա-
նույքով էր ենթարկվում մտրակի հարվածներին:

Մտքոն չէր նայում ետ: Նա գիտեր, որ թուրքերն այժմ կույր-կույր հետևում են իրեն, և դա՛ այդպես հետևելը, նրա ներսում արթնացրել էր երանելի մի հանգստություն:

Նա էր և իր այդ հանգստությունը, որ մթնող օրվա սպանիչ լարվածությունից հետո, թվում էր, նրան Բուլանի չորս ոտքերով թոցնում էր դեպի երջանիկ վայրեր... Հեռավոր անտառներում հողի մեջ կիսով չափ թաղված մի մատուռ կա, ով գիտե՛ որ ժամանակներից է գալիս, — հանկարծ հիշեց Մտքոն, — առավոտ դեռ լույսը չբացված դուրս կգամ քաղաքից ու կզնամ այնտեղ, մենակյաց կդառնամ, — ասաց նա մտքում, — կմաքրեմ մարմինս մեղքերից, կմոտենամ իմ մորը, կլինեմ այնպես, ինչպես ծնվել եմ... Նա թոքերի բոլոր ծալքերով ներշնչեց երեկոյի սառն ու կապույտ օդը և հիացած նայում էր քուն մտած գոգահովիտներին:

Մտքոյի և Նազիմի միջև ընկած ճանապարհի հատվածն արագորեն կրճատվում էր:

Նազիմն ուսից իջեցրեց հրացանը և, երբ մնում էր մի քանի ձիաքայլ տեղ, փողը Մտքոյի թիկունքին ուղղելով՝ կրակեց:

Մտքոն սուր ճիչ արձակեց և, դանդաղ թեքվելով առաջ, ձեռքերով փաթաթվեց ձիու պարանոցին: Շուտով ձախ ոտքը դուրս եկավ ասպանդակից: Աստիճանաբար կախ էր ընկնում: Իսկ քիչ հետո, աջը ասպանդակին կպած, նա քարշ եկավ ձիու փորի տակ:

Բուլանը դիվաշունչ խրխնջաց, վեր-վեր թռավ և, դուրս գալով ճանապարհից, խելագար թափով իրեն զցեց ժայռ ու քարի մեջ...

Մտքոյի վրա կրակելուց առաջ ի՞նչ մտածեց տասնապետ Նազիմը: Ոչ ոք չի կարող ասել:

ԵՐՐՈՐԳ ՄԱՍ

Արարս գեպը:

Ներսես Ալթուն: Կապույտ գլխաշորը:

Արարար:

1917 թվականի վերջին, Երզնկայում, զինադադարի համաձայնություն կնքվեց ռուսների և թուրքերի միջև, և շուտով ռուսական զորքերը հեռացան Արևմտյան Հայաստանից: Տարբեր գավառներում դեռևս վերապրող հայերի ուժասպառ, վախվորած, հիվանդ, սովալլուկ, ծեր, մանուկ ու կին խլյակներն անօգնական ու միսմիմակ հայտնվեցին թուրք վիշապի առջև: Լեռներից իջնող մահաբեր ձմառաքի, պղտոր հեղեղի, հրահեղուկ զանգվածի մնան վիշապը, բացված երախով, սողաց դեպի քաղաքներն ու գյուղերը, ոլոր-մոլոր գալով, կծկվելով, փորը տրորելով պտույտ գործեց, որտեղով անցնում էր, ուր հասնում՝ վերջաբանը մահն էր, էլի մահը, դարձյալ մահը: Հայ կամավորական փոքրաթիվ ջոկատները, ավելի թույլ ու նվազ հաղուկների խմբերը ի գորու չէին ընդդիմանալու վիշապին, որի գլուխը Վեհիբ փաշայի բազմաբազարանոց բանակն էր, հոգին՝ մաղձն ու ատելությունը քրիստոնյա ժողովրդի նկատմամբ, սիրտը, հրեշ ու զարհուրելի սիրտը՝ նրան վերջնականապես բնաջնջելու ճիվադական նպատակը: Վիշապ-գազանի պոչից, աջ ու ձախ կողմերից շարժվում էին թուրդ հրոսակները և երբեմն նրանից առաջ անցնում՝ ցուցադրելով զազանության ոչ պակաս պիղծ ու զազրելի օրինակներ: Թե՛

դեպի արևելք և թե՛ արևմուտք գնացող բոլոր գլխավոր ճամփաները փակված էին:

Քարավանը կանգ առավ Էրզրումից քիչ հեռու, ձորակի մեջ:

Ներսես Ալթունյանը Վահրամին և Հաբեթին ուղարկեց քաղաք՝ լուր բերելու այնտեղ տիրող կացության մասին:

Մի քանի ժամից տղաները վերադարձան:

Էրզրումը թուրքերինն է ամբողջապես: Քաղաքում հայ չի մնացել: Անդրանիկը իր զինվորներով և ողջ մնացած ժողովրդով գնացել է Սարիղամիշ-Կարս ուղղությամբ: Մուրադի վերաբերյալ ոչ մի տեղեկություն չկա:

Որտե՞ղ ես, Մուրադ: Ո՞ղջ ես, թե՞ առյուծ սիրտդ երկնքում է արդեն: Որտե՞ղ ես, Մուրադ, իմ մեծ եղբայր:

Ամստություն կլիներ ստանել քաղաք, թեև կարելի էր այնտեղ պարեն հայթայթել, հանգիստ տալ քարավանին հիմնավորաբար, թեթևանալ հիվանդություններից: Եվ որոշվեց քաղաքը հյուսիս-արևմուտքից՝ Ծաղկանց լեռներով շրջանցել և գնալ դեպի Կաղզվան, որտեղ, գուցե, դեռ հայեր են ապրում, որոնք կարող են օգնության ձեռք մեկնել իրենց: Եթե չօգնեն էլ՝ գոնե ժպտան, բարևեն հայոց լեզվով, հույս տան, մի կտոր չոր հաց:

Հեռևում հայություն չկա, մի՞թե առջևում էլ չկանք արդեն, ընդամենը այսքանն ենք մնացել՝ 113 մարդ և մի քանի ձի ու անասուն:

Ծաղկանց լեռնաշղթայի աղեղը կամաչում էր: Թոնդրակ լեռան բարձր գագաթը ծյուն ու սառույցի մեջ էլ տակավին: Նրա և Նպատ, Կերդահով լեռների ձյուններից դար ու դարեր քամվում էին անհաշիվ սառնորակ առվակներ, անդադար վազում կիրճերն ու ձորակներն ի վար և, մեկտեղվելով, շատանալով, առատանա-

լով՝ ծնուն Եփրատին: Այստեղ ամեն բան անսկիզբ է՝ ինչպես ժամանակը: Անսկիզբ են լեռները: Անսկիզբ է երկինքը: Անսկիզբ են ձյուները: Անսկիզբ է դաշտը: Անսկիզբ են քարերը: Անսկիզբ է արևը: Անսկիզբ են ձորերը: Անսկիզբ է Եփրատը. նա միշտ եղել է, նա կա, նա կլինի նաև իրենցից հետո:

Շատ հեռվում երևացին Թեփսի և Չիֆտե միմարենների գլուխները, ուրեմն՝ նրանց տակ բարձր պարիսպներով ու աշտարակներով շրջապատված միջնաբերդն է: Պարիսպներին հայերեն, հունարեն ու արաբերեն արձանագրություններ կան, որոնք պատմում են հնուց անտի Էրզրումի գլխով անցած-դարձածը: Շուտով հազարամյա քաղաքը, գերված ու սզավոր քաղաքն աչքից անհետացավ, բայց՝ ոչ սրտից ու մտածումների ցավից: Իրենք չհեռացան, նա զնաց հեռուները, սարերի հետևը, տխուր հալվեց դաշտի մշուշներում, դուման հազավ, իրենցից նեղացած, որ ներս չմտան, չհարցրին՝ ինչ էս անում, ինչպես էս, ինչ էս խոկում լուսյան մեջ. դենք ու քիկունքով շրջվեցին իրենցից օտարի մման, թշնամին, նույնիսկ թշնամին փակ դուռը բացում, ներս է մտնում, իսկ հարազատը, ա՛խ, անցավ անտարբեր, նամարդի պես, դավաճանաբար:

Քարավանը մոտենում էր Կարնո շամբերին. հին մատենագիրներն այսպես են կոչել Էրզրումի սարահարթի ճահճուտները, որոնք առաջանում են Եփրատի վերին հոսանքի ջրերից: Գարնան առատ ձնհալների ժամանակ գետի պղտոր կոհակները ողողում են դաշտի զգալի տարածություններ, լցվում փոստրակներն ու գոգահովիտները, տղմանում, շատերը չորանում են շուտով՝ հենց որ գալիս է ամառը, մի քանիսն էլ՝ խոշորները, որոնք ավելի խոր հատակ ունեն և արևից ու տաք քամիներից պատսպարված

են եղեգնուտներով, գոյատևում են մշտապես՝ ամեն զարնան լրացնելով իրենց մութ ու թանձր ջրի կորսված պաշարները: Կարճ շամբերը գորշ, կարճ ու սուր կտուցներով, կարճատուտ Ջուզուի օրրանն են, նա միայն այստեղ է ապրում, ուրիշ ոչ մի տեղ չես տեսնի նրան: Կա նաև բաղ, կտցար, որի միսը շատ համեղ է, և երկարակտուց ու բարձրասրունք պեզայա:

Տեղանքին անծանոթ ճանապարհորդը կարող է մոլոր գնալ և եթե անփորձ է նաև, կարճատես ու միամիտ՝ նույնիսկ մահ գտնել արտաքուստ հանգիստ, բայց ըստ էության նենգ ու խարդախ այդ ճահիճներում: Նրանք վտանգավոր են հատապես մշուշ օրերին և գիշեր ժամանակ, դու չես էլ զգում, թե ինչպես ընդամենը մի քանի քայլ հետո հայտնվելու ես նրանց սառը, ոտք ու ձեռքերդ երկարկաչուն ջրիմուռներով կապկպող, լայրծուն գրկի մեջ:

Երեք-չորս ժամ, գուցե ավելի, քարավանն զգուշորեն, ամեն քայլն ու շարժումը չափուկ շեւելով, ծանր ու դանդաղ ընթանում էր ճահիճների սևահող փեղերով, մեկ էտ գալիս, կիսապտույտ գործում, հետո դարձյալ շարժվում առաջ՝ մինչև որ, ի վերջո, դուրս ելավ բարձր լեռնաճյուղերով եզերված Աշկալայի նեղ հովիտը: Գիշտ դաշտի մեջտեղով հոսում էր Էփրատը, այն դեռևս շատ հեռու էր իր իսկական տեսք ու բնույթից՝ հագիվ մի քանի ոտնաչափ լայնություն ունեցող, վճիտ ու կայտառ գետակ, լեռնային ջահել մի գեղեցկուհի, որ դեռ հետո՝ հարավներում պիտի հղիանար հագար ու մեկ վտակներից՝ դառնալով մայր գետ: Բայց սա գտարյուն Էփրատն էր, մաքուր, բյուրեղյա, տոհմական, անխառն Էփրատը, մայր Էփրատի հիմքն ու արմատը, նրա անմար բջիջը, սերմը, հյուլեն, շնչերակը, սրտի թելը, որը եթե կտրվեր հանկարծ՝ անապատ և ունայնություն կդառնար ամեն-ամեն ինչ:

Երեկոյան կողմ քարավանը հասավ Եփրատի բուն ակունքին: Մի հսկայական աղբյուր էր հորդում բարձր ժայռի ճեղքված կրծքից, շառաշյունով թափվում սուր-սուր քարերի վրա, գովաշունչ շիթեր ցայտեցնում շուրջը, փրփրում, շուռմուռ գալիս և ձորակով տակնուվրա վազում դեպի դաշտ: Բոլորը, բացի Ներսեսից, առաջին անգամ էին տեսնում Եփրատի ծնունդը: Նա ծնվում էր ճչալով, ինչպես մանուկը, իսկ ժայռն ասես լարվում էր, կծկվում, գոռում-բղավում, ուշաթափվում, գալարվում երկունքի ցավերից: Հավերժական էր ճիչն այդ, և նույնքան հավերժական էր երկունքը:

Դարեր ի վեր աղբյուրը պաշտամունքի առարկա էր Կարին-Էրզրումի սարահարթում ապրող հայերի համար, նրա ջուրը՝ սրբություն, որ ոչ թե բնությունից է, այլ բարի ու ամենագոր Հայր Աստծուց:

Շուրջբոլորը Անտիպոնտական լեռնաշխարհն էր: Կապույտ երկինքը: Եփրատի խանձարուրը: Լոռությունը: Տխուր մտածմունքը: Հույսը, որ անհուսությամբ էր շարունակվում: Մենակությունը: Կորուստների հիշողությունը: Կարոտը: Անհայտությունը: Եվ դարձյալ բաժանման ցավն ու տառապանքը, որ հեռանալու են Եփրատից՝ իրենց արյունից ու սրտի հատորից, վերջնականապես: Այլև չեն տեսնի նրան: Երազ ու ցնորք կդառնա: Եվ իրենք բուն թե արթննի կգառանցեն նրա անունով: Կգառանցեն՝ նրա հարահոս կարոտախիտը իրենց սրտի ու աչքերի մեջ:

Առավոտյան ամպ-մշուշ էր սահում լեռներով: Յուրտ էր: Գիշերը թեև անձրև չէր եկել, բայց թաց ու թոն էր իջել խոտերին: Ոսկե ձին չկար: Նա Եփրատի պորտալարը բռնել ու դարձյալ գնացել էր ետ, դեպի Երզնկա՝ իր անցյալը, ծննդավայրը, դաշտը:

«Էլ չեն տեսնի նրան,— ցավ ու ասիտասանքով մտածեց Ներսես Աթուրյանը:— Երզնկան շատ հեռու է արդեն: Նա չի հասնի այնտեղ, եթե հասնի էլ՝ հմարավոր չէ կրկին վերադառնալ իրենց մոտ, ինչպե՞ս կտրի ծով լեռներն ու հովիտները, քանի՞ սև ու ահավոր գիշեր պետք է ապրի, քանի՞ լուռ, անմարդ ու սգավոր ցերեկներ, ինչպե՞ս դիմանա միայնակ՝ ինքն ու իր սիրտը, ինքն ու իր հոգին, ինքն ու իր աչքերը: Կվայրենանա: Գայլերը կհռչոտեն և ավելի՝ գազան ու գայլ մարդիկ: Կցնորվի: Ուրվականի, ոգու, տեսիլի պես անմարմին կթափառի սար ու ձորերում: Գերեզման չի ունենա: Դեմքն էլ կմոռացվի, խրխիհնջը, վերքերի ցավը, անուցը: Այլևս չի լինի ոսկե ձին»:

Որքան հեռանում էին Էրզրումից և շարժվում դեպի արևելք՝ Կաղզվանի գավառասահմանը, այնքան օրը տաքանում էր, օրվա հետ էլ՝ մարդկանց մարմինն ու տրամադրությունը: Ընտուվ լեռ ու դաշտ մաքրվեցին մշուշներից: Երկնքի կապույտ երեսը բացվեց և ժպտաց արևի ոսկեփայլ աչք-ունքով:

Փոքրիկ տղան բաց էր թողել չալպտուրիկ շանը և ուրախ վազվզում էր հետևից:

Լոք-լոք գնում էր Մամփրեն, և մանգաղի շեղքը պսպղում էր արևի տակ:

Կիրակոսյան ընտանիքի մեծ ու փոքր տղամարդիկ փոխնիփոխ քաշում էին սայլը, քանի որ լծկան ջորին սատկել էր երկու շարաթ առաջ: Մայլը բավականին ծանրաբեռնված էր, շայց այնտեղ իրենցից շատ քիչ բան կար, հիմնականում ուրիշի իրերն էին: Երբ դրանց տերերից որևէ մեկը փորձում էր օգնել, ուսր դեմ տալ, նրանք կտրականապես հրաժարվում էին և նույնիսկ նեղանում. մեր արաբան է, մենք ենք քաշելու: Կանցնի ժամանակ,

այլևս ոչինչ չի լինի սայլին դնելու, սակայն ընտանիքի ողջերը կշարունակեն վերջին նվաղուն ուժերով քաշել այն՝ հանկարծ թուրքին չմնա, չպղծվի, չայրվի, չջախջախվի, որովհետև այն սայլ չէր, ինչպես աչքին էր երևում, այլ իրենց Կարապետ աղանեծ հոր, Երզնկայի ամենապատվական արարաջու լուսե անունն ու հիշատակը:

Վահրամը, Պետոն, Հաբեթը, տղաների մեծ մասն ընթանում էին քարավանի աջ և ձախ կողմերից, օգնում ծերերին ու կանանց՝ տանելու իրենց պարկերը:

Մեղմ դողանջում էին Աթլաս կովի զանգուլակները: Օսանը ստեպ-ստեպ շոյում էր նրա մեջքը և թաքուն, սրտի մեջ ժպտում. իր հետ է, քայլում է, մի քիչ միհարել է, սակայն առողջ է և ամրակուռ:

Եփրեմը ետ էր ընկել իր ձիով, ինչպես միշտ՝ ուժեղ, կոշտ ու խոշոր դաստակը գոտուց քարշ ընկած սրի կոթին, ամեն պահ պատրաստ անհրաժեշտության դեպքում կաշեպատյանից խույն դուրս քաշելու այն:

Մի կին էր հերարձակ քայլում քարավանի խիտ շարքից անջատ, մենավոր կղզյակի պես: Երբեմն կանգնում էր, ետ նայում մտազբաղ, դիտում, նայում սարերին, հետո դարձյալ շարժվում առաջ: Վարդանուշն էր: Ոչ ոք չգիտեր և չէր տեսնում, որ նա լաց է լինում:

«Վերքերով լի ջանֆիտա եմ, Կը թափառի՛մ, տուն չունիմ, Յարիս փոխան գենքս եմ գրկեր, Գիշերները քուն չունիմ»,– ինքն իր ներսում երգում էր Մզրոն, բայց ձայնը տարածվում էր բոլոր-տիքը քաղցր-աղի քամու մման:

Նանեն թևանցուկ էր արել Սուսանին, որ շարժվում էր այն-
քան դանդաղ, կարծես չէր քայլում, այլ դոփում էր տեղում իր մի-
հար, փքուն փռրի ծանրությունից ճկված ոտքերով: Թվում էր՝
մարած մոմ է, միայն աչքերն էին առկայծում և սիրտն էր դեռևս -
քարախում սաստիկ ուժասպառ ու հալումաշ մարմնի մեջ:

Այդ պահին Ներսեսն ընթանում էր քարավանի առջևից, ու-
տավոր, ձիու սանձը բռնած: Նա թեև էրզրումից արևելք առաջին
անգամ էր լինում, սակայն մանրամասնորեն ուսումնասիրել էր
այդ հողերի աշխարհագրությունը, հատկապես՝ գլխավոր ու երկ-
րորդական ճանապարհների բնույթն ու դասավորությունը: Նրա
մախաղում իրենց երթուղու ձեռակերտ քարտեզն էր՝ մեծ ու փոքր
բնակավայրերի նշագրումներով, որ գոց գիտեր: Մայր ճանա-
պարհը, որ դեռ հնուց էր հայտնի, էրզրումից ուղիղ գծով գնում էր
Կաղզվան, որտեղ ճյուղավորվում էր մի քանի ուղղությամբ՝ դեպի
հյուսիս-արևմուտք, Ճորոխ գետի ափին գտնվող Արդվին քաղա-
քը, ապա և՛ Կարս, հետո, քիչ հարավ՝ դեպի Կողքի նշանավոր ա-
ղահանքերն ուղղվելով, մտնում Արաքսի հովիտը և Այրարատ
աշխարհ: Այս ճամփային զուգահեռ, մոռացված, խուլ ու ան-
մարդ բազմաթիվ արահետներ կային, որոնց Ներսեսը, քարավա-
նի անվտանգությանը մտահոգված, նախընտրություն էր տալիս,
դրանք թեև երկար-մանվածապատ էին, դժվարանց՝ լի վերուվա-
րումներով, բայց՝ ավելի հուսադրող: 1915-ից ի վեր քանի՛-քանի
քարավաններ քայլեցին երկրի գլխավոր ճանապարհներով և
տեղ չհասան, որովհետև անցնում էին վիշապի երախի միջով՝
բզկտվում, խեղդվում, հռչուտվում: Չփրկվեցին: Տեղ չհասան: Ա-
մայություն էր հետևում: Լռություն էր ճանապարհներին: Մահն ու
ավերը, իրենցից առաջ ընկած, իրենցից արագ ու փութաջան

զնում են արևելակողմ: Ահեղ լուծություն է ամենուրեք: Ծայնի գյուղը, որի կողքով քիչ առաջ անցան, համր ու լուռ էր գերեզմանոցի պես: Առջևում Ախքիլիսան է:

Մարգար Քեշիշյանը, արդեն որերորդ անգամ, մարդկանց ոգևորված պատմում էր իր ծիրանուտի մասին: Մելքոն Տեր-Պերպերյանը նրա յուրաքանչյուր բառը գլխի՝ հոժարական շարժումով հաստատում և հավանության էր արժանացնում:

– Զնոռնանք,– վերջում միշտ ասում էր տեր Մելքոնը,– քուզիտ այգիին արմատը իմիս ծիրանի կորիզն է, ինչո՞ւ ատ պարագան չար լուծյան կմատնես: Ծուռ քալենք, շիտակ խոսիմք: Մեծ հայրս տվեց քու հորը մեր ծառին խոշոր և քաղդ պտուղի սերմը, դուք՝ հարազատ-յուրայիններով, փառավոր այգի շինեցիք, աֆերիմ, բայց ինչո՞ւ տմարդորեն և դիտավորյալ կնոռնաս, որ իմ մեկ հատիկ ծառը քուզիտ ամբողջ այգիին մայրն է, ծնողը, ծծմայրը: Արդար կըսեն, ժողովուրդ, երախտամոռները լավությունը միշտ վատությանք կհատուցեն: Ինչո՞ւ բարի խոսք մը, ժպիտ մը դժվարդ կուզա, կզլանաս արդարը ըսել իմ ծիրանի ծառի վերաբերյալ, չէ՞ որ ան հրաշք է, ատ տեսակ ծառ աշխարհում էլի կա՞: Հարկավ չկա և չպիտի ըլլա երբեք: Եվ դուն հիանալի կտեսնես, կզգաս ու կզիտակցես: Կնախանձես իսկապես: Ինչո՞ւ կնախանձես: Ես քեզ բարեկամ չե՞մ: Ես թո՞ւրք եմ: Ես քեզնե ավելի ու սաստիկ հայ եմ:

Քեշիշյանը լուռ էր, խեղճանում, ճնշվում, որովհետև տեր Մելքոնը ճիշտ էր ասում, բացի հայությունից, ինքն էլ հայ է ուղնուծուծով:

– Կխնդդեն ազգասիրությունս չվիրավորես,– վերջապես ասաց նա,– Համբերությունս մի՛ շահագործեր, դանակը ոսկորիս հասավ արդեն, ես պակաս՞ս հայ եմ, անխիղճ-անաստված:

– Այո, չունքի չես գնահատեր իմ և մերիմներում ծիրանի ծառը:

Վեճը հասավ զագաթնակետին: Այս անգամ միջամտեց Հակոբը:

– Ամոթ է, չոջուխ չեք:

Բարեկամները լռեցին և իրարից նեղացած հեռացան: Վաղը նրանք դարձյալ կսկսեն նույն զրույցը, կասեն նույն խոսքերը, կարտահայտեն նույն զգացմունքները, իրար կներկայացնեն նույն մեղադրանքը՝ առաջին անգամվա հուզմունքով և ոգևորությամբ:

Տիկին Սիրունյանը, Վասկերտում ամուսնուն կորցնելուց հետո, լրիվ ճերմակել էր, դարձել ինքնամփոփ և լռակյաց, իր երեսնամյա տարիքում արդեն զառամյալ կնոջ տեսք ուներ:

– Հիշե որքան հարազատներ կորսնցուցինք, ժողովուրդը նահատակվեցավ, երկիրը փռշիացավ, դուրս ի՞նչ կուզես աստուծմեն, կյանքիդ մնացուլդը խնայե, արդեն անհայտ է վաղը ինչ պի ըլլանք:

– Քար կուզեմ ըլլալ,– ասաց տիկինը իր զրուցակցին և քայլքին համընթաց, երկար ընդմիջումներով շարունակեց իբր մենախոսություն:– Կույր և համր կուզեմ ըլլալ: Անսիրտ կուզեմ ըլլալ: Չորցած ծառ մը կուզեմ ըլլալ: Մոխիր կուզեմ ըլլալ: Անապատ կուզեմ ըլլալ, ուր շունչ-կենդանությունը իսպառ կբացակայե: Անզգա ավազ կուզեմ ըլլալ: Վերջ կուզեմ ըլլալ, վախճան, վերջավորություն:

Մզրոն երգում էր. Գրոող տանի քուրդ Արոյին... Չարթիր...
Չարթիր... Չարթիր... Չարթիր... Չարթիր... Մըռնիմ քըզի... Օգնե
հայուն...

– Ուշ է,– սրտի խորքում մղկտաց Ներսեսը:

Մամփրեն մղկտաց:

Հաբեթը մղկտաց:

Փոքրիկ տղան լաց եղավ, կարծելով չալպտուրիկն ուզում է
փախչել ազատվել իրենից:

Մելքոն Տեր-Պերպերյանը մղկտաց, կտոր-կտոր դարձավ,
սրտից արյուն վազեց:

Փրափիյունը մղկտաց:

Աթլաւը տխուր բառաչեց:

Վահրամը մղկտաց:

Պետոն մղկտաց, վերքերն արթնացան ու խոսեցին հոգե-
մաշ ցավով:

Կիրակոսյան սայլի ոսկորները հուսահասուությունից ճոնչա-
ցին:

Վարդանուշը մղկտաց:

Արշակ Բաբինյանը մղկտաց:

Թվում էր՝ արեգակը մղկտում է, և մղկտում է գետինը,
մղկտում է լեռան կապույտ գագաթը, մղկտում է առուն, և եր-
կինքն է մղկտում, ողբում-կոծում, մորմոքվում Մզրոյի երգից:

Կեսօր էր, զով քամի:

Մզրոն լռեց, դաժանացավ, մռայլ պատեց աչք-ունքը: Նա
հիշեց Գալշոյին, և կարասող մտավ սիրտը: Գալշոյին գրկեց: Կա-
րոտի ցավից կծեց շրթունքը: Ատամը չհասավ սրտին. որ սիրտը

անդուռ կարոտի ցավից ծամեր: Ավելի դաժանացավ: Եվ սառեց-
քարացավ անհուն վրեժով ու ատելությամբ:

Լուռ գնում էին՝ ամեն մեկը իր հետ: 113 քար լռություն: 113
տանջալից միտք: 113 լարված զգացմունք: 113 սրտի ցավ: 113
անմար կարոտ: 113 ցուրտ վախ: Մոմի պես հալչող 113 քաղցր ե-
րազ: 113 անխոսելի գաղտնիք: 113 հավերժական սեր: 113 քայ-
լող հիշողություն: 113 ծանր տվայտանք: 113 մութ ու անորոշ
փրկության ճամփա: Բոլորը՝ առանձին, բայց և իրար հետ, մեկ-
տեղ, իրար մեջ: Նույն թելի կծիկը: Մի լեզու և սիրտ: Նույն վիրա-
վոր արյունը: Բոլորը մեկ մարդ ու հոգի՝ քարավան անունով:

– Որքան սրտալից երգեց Մզրոն,– խոր շունչ քաշելու հա-
մար կանգ առնելով՝ ասաց Մուսանը:– Սիրտս լեռները վազեց, և
ես տեսա անոր:

– Ո՞ւմ,– հարցրեց Նանեն:

– Իմ զավկի հորը:

– Իմ սիրտը լեռները շվազեց, իմ սիրտը այստեղ էր, երբ կեր-
գեր Մզրոն:

– Դու մոռցեր ես քու յարին:

Նանեն շփոթվեց և, կռանալով, ճամփեզրից մի կապույտ
ծաղիկ պոկեց:

– Ինչո՞ւ այդպես կկարծես:

– Ես չեմ կարծեր, սիրտս կկարծե, երբ հարազատ քրոջ պես
կնայե քեզի, քու աչքերում:

– Ան ողջ չէ արդեն,– զգուշորեն ու շշուկով արդարացավ
Նանեն:

– Այդ պառնաճառով ալ սիրտս կխղճա և շատ կսիրե քու
կյանքն ու արևը:

– Իմ սիրտը մեճակ է, Սուսան, ոչ որ չի լսեր անոր բարախյունը: Ան մեճակ կխոսես, ինքն իր հետ, ինքն իր հետ, ինքն իր հետ:

– Նոր սեր գտիր:

– Ինչպե՞ս,– Նանեի ձայնը հուզմունքից դողաց:

– Դու ազատ թռչուն ես:

– Չեմ ուզեր ազատ լինել: Երանի վանդակում ապրեի: Կուզեմ սրտիս կապանք դնեն, ձեռք ու ոտքերս կապ անեն, հոգիս կապկպեն: Ինձ ո՞վ իր ստրկուիին կդարձնի...

– Դու սիրահարված ես, Նանե, ես շատոնց կզգամ:

– Մխալ կզգաս...

– Միրտս կմայե աչքերոտդ, և աչքերդ կմատնեն իրենց:

– Մի՞թե...

– Զեզ կսիրեն և շատ:

– Ո՞վ...– Նանեի սիրտը տակնուվրա եղավ իր հարցից:

– Չգիտեմ,– ասաց Սուսանը:– Մզրոն:

– Մզրոն ոսկի տղա է, բայց ինձի չի սիրեր, ան կսիրե Գալչոյին:

– Վահրամը:

– Ես նրան կմայեմ ինչպես հարազատ եղոր: Մի՞թե Վահրամը կսիրե ինձի: Ոչ, ես անոր համար քույր եմ:

– Հաբեթը:

– Հոգի տղա է, բայց մենք չենք սիրեր զիրար:

– Իսկ Պետո՞ն...

– Ես կսիրեմ անոր, բայց դա ուրիշ սեր է, այդպես կսիրեմ բոլորին:

– Եփրեմը:

– Հերոս տղա է և խնձի հանդեպ կատարելապես սառն ու անտարբեր: Ան պսակված է իր սուրի հետ:

– Կարո՞ն:

– Ան աչք ունի ոչ թե ինձի, այլ հրացանիս վրա: Ինչու պետք է հրացանս իրեն տամ, ես վա՞տ նշանառու եմ:

– Ներսեսը:

– Ներսես Ալթո՞ւնը...– Նանեի շուրթերը դողացին այդ անունն արտասանելիս, սիրտը վեր ելավ, աչքերը կայծեցին սև ու երկար թարթիչների ստվերում:

– Նա:

– Ան իմ ուսուցիչն է: Աշակերտուհին կհամարձակվե՞ իր ուսուցչին սիրահարվել...

– Չեմ գիտեր: Ես աշակերտուհի եղած չեմ:

– Իսկ ուսուցիչը... ուսուցիչը ի վիճակի՞ է սիրելու իր երբեմնի աշակերտուհուն, որն արդեն մեծ է, անօգնական է, մենակ է... ասա... ասա...

Մուսանը անմիջապես չպատասխանեց, որովհետև, հանկարծ, քարի պես ծանր մի ցավ գլորվելով անցավ մարմնով, վերից վար, սիրտը վախից կանգ առավ մի պահ, և ճակատը ծածկվեց պաղ քրտինքով:

– Ներսեսի մման գեղեցիկ հոգին, կարծեմ, կարող է ընել այն, ինչ շատերի զգացմունքներեն և ուժեն վեր է:

– Ան գեղեցիկ հոգի չունի:

– Չե՞ս ճանչնար անոր:

– Թույլ է և անկամ:

– Կսխալիս չարաչար:

– Դաժան է, քարսիրտ, քարսիրտ:

– Մեղք կրճես հոգուդ:

– Միայն իր մասին կմտածե, միայն իրեն կսիրե:

– Որքան անիրավացի ես:

– Երանի ինձի ուսուցիչ չլլար:

– Խղճիդ դեմ կխոսիս, բույրս, բայց ես կմտածեմ, թե լեզուդ հակառակ կերթա սրտիդ, և չեմ նեղանար:

• – Կույր է, ոչինչ, ոչինչ չի տեսներ իր շուրջը:

– Ան կտեսնե քեզի:

– Ես չեմ պաշտեր անոր, չեմ սիրեր, չեմ փայփայեր, չեմ սիրեր, չեմ կարտտեր, չեմ սիրեր, չեմ գուրգուրեր, իմ սիրտը չի արեկոծվեր, երբ անոր աչքերուն և սրտին կհանդիպե երես առ երես:

Նամեն ձեռքը տարավ բերանին և խեղդեց հեկեկոցը, իսկ արցունքներն ուլունք-ուլունք գլորվեցին աչքերից: Նա ժպտաց արցունքաշաղ: Շարունակեց ժպտալ: Քայլում էր ու ժպտում: Մեղմ ու ամուշ էր ժպիտն այդ՝ ինչպես գաղտնի, սրտին ու հոգուն փաթաթված երջանկությունը: Այդ ժպիտն ուղղված էր իր խոր ու աներևույթ ներսին: Նա ժպտում էր իրեն:

Նա արդեն չէր ժպտում, այլ ժպիտը նուրբ ու թափանցիկ պատկերն էր դեմքի վրա՝ վաղորդյան ծաղկի գոհունակ տրամադրությամբ նայող հայացքով: Աչքերում ժպիտի ոսկե ցուլքն էր կանգ առել, իսկ շուրթերը կարծես դեռ շարունակում էին ժպտալ, խոսել, ինչպես ծաղկաթերթերն են անլսելի շշմոռ իրենց շոյող քաղցր զեփյուտին, թրթռալ բացվող ջրվա լուսավոր ու սիրատենչ ջերմությունից:

Օրը կիսվել էր, բայց Նամեի համար այն նոր էր սկսվում: Օրը ինքն էր, արևն ինքն էր, դաշտը ինքն էր, աշխարհը եկել միանգամից լցվել էր սրտի մեջ, և սիրտը տրոփում էր հուզմունքների

ալեկոծումից, քիչ հեռվում աղմկող գետակը ինքն էր, լեռնալանջի կանաչ անտառը ինքն էր և ինքն էր զով քամին, որ կապույտ գլխաշորն արձակել և խաղում էր մազերի հետ:

Մի՛ նայիր այդպես, մի՛ խաղա այդպես, մի՛ սիրիր այդպես,–
ի՞նքն ասաց, թե՞ իրեն շնջացին, ո՞վ խոսեց անձայն՝ քամի՞ն,
խոտ ու ծաղիկնե՞րը, քարավա՞նը, ո՞վ էր, ո՞վ էր... Նա շփոթվեց-
շիկնեց և ուտերին փլված գլխաշորը հավաքեց դեմքի շուրջ՝ ցան-
կանալով իր ժպիտի մերկությունը ծածկել օտար աչքից: Բայց
այն դարձել էր մերկ, որովհետև մաքուր էր ու ազնիվ՝ զարմացած,
երջանիկ, հուզված սիրտն էր թրթռում շուրթերի վրա ու աչքերի
մեջ և չէր թաքնվում, չէր կոծկվում:

Սուսանի յուրաքանչյուր առարկություն անսահման ուրա-
խությամբ պարուրեց սիրտը: Նա այդ ամենը լավ գիտեր, Աստ-
ծու օրը տեսնում էր, զգում իր գոյության բոլոր թելերով, քայց հի-
մա կարծես առաջին անգամ էր լսում, առաջին անգամ էր
գտնում, առաջին անգամ էր բացում Ներսեսին: Ի՞նչ երանութ-
յուն է՝ կրկին ու դարձյալ հայտնաբերել նրան, շարունակ զգալ
սրտի երջանիկ ճիչը և անվերջ տառապել: Եվ Նանեն արդեն
մտքում խաղաց. «ան գեղեցիկ հոգի չունի»: Եվ ինքն էլ մտքում
պատասխանեց. «ոչ, խղճիդ դեմ կխոսիս»: Որքա՞ն լուսավոր ե-
ղալ այդ ոչ-ը, և իր խղճի անհրավության մերկացումը որքա՞ն հ-
րաշալի էր, քաղցր ու չնաշխարհիկ:

Նա կրկին ժպտաց, և դենքը ծածկող ժպիտի թափանցիկ
պատկերը հազիվ նկատելի ալիքվեց. այդպես անշարժ և պայ-
ծառ ջրի երեսն է հուզվում, երբ նրան համբուրում է մեղմանուշ
գեփյուռը, ծաղկի գինովցած թերթիկը, լուսափայլ աստղի շվաքը:
Այս անգամ Նանեն ժպտաց նրան և ուրախ էր, որ նա հեռու է՝

քարավանի գլխամասում, և չի տեսնում, թե ինչպես է իր արյունը կրակ ընկած լույս տալիս ու մոխրանում նրա համար: Թող չտեսնի, չիմանա, չլսի իր սրտի տրոփյունը, որ սպիտակ աղավնու փետուրներով երանությանը ճախրում է կապույտ երկնքում: Հանկարծ չնայի անհունին: Նա ավելի հուզվեց և ձեռքն ու ոտքը խառնվեցին, աչքերը վախեցան, սիրտն ու հոգին քաղցր դող ընկավ, թվաց՝ Ներսեսը տեսնում է իրեն:

Նա չէր տեսնում, և հենց այդ պատճառով էլ Նանեն ուզում էր, որ տեսնի, զգա իր ժպիտը, լսի սրտի երաժշտությունը, որ հեշտալի ու հարբեցնող նվագներով հավլում-սփռվում է արյան մեջ: Մենակ շատ դժվար էր տառապել, և նա ուզում էր, ցանկանում, կարոտում, փափագում, ամբողջ էությանը տենչում, որ նա լինի իր կողքին:

Իմ ժպիտը ծաղկում է նրա շնչով:

Իմ լեզուն խոսում է նրա հետ:

Իմ երջանկությունը կենդանի է նրա գոյությանը:

Իմ աչքերը փայլում են, որովհետև նա կա:

Իմ մտածումները շփոթվում է նրա առջև:

Իմ հոգին ալեկոծվում է նրա ջերմությունից:

Իմ սիրտը դողանջում է նրա համար:

Քայլում էր, և ժպիտի պատկերն աստիճանաբար ծածկվում էր տրտմության ստվերով:

Ե՞րբ սկսվեց Ներսեսը:

Ինչո՞ւ այդպես եղավ: Ինչո՞ւ սատանան մոլորեցրեց իրեն: Ինչո՞ւ մոռացավ նրան, նրա հիշատակը, նրա դեմքը, նրա ձայնը, նրա աչքերը, որոնք նայում էին իրեն լուսինգայի թախծությանը:

Ե՞րբ սկսվեց: Երե՞կ, թե՞ հազար տարի առաջ:

Ինչո՞ւ նրան չհայտնեց իր սրտի զգացմունքը: Ինչո՞ւ չհամբուրեց, երբ մի օր Եփրատի ափին երկուսով էին՝ ինքը և նա, ինքը և նա, ոչ ոք չկար, ամայություն էր, ոչ ոք չէր տեսնում իրենց, իր սիրտը Եփրատի՞ց ամաչեց, թե՞ արտույտից, որ ինչ-որ տեղ գեղ-գեղում էր անուշ ձայնով:

Ինչո՞ւ սկսվեց և ե՞րբ սկսվեց:

Ինչո՞ւ նրա սիրտ խոստովանությանը պատասխանեց լռությամբ, նրա շփոթված ու թախծալի հայացքին՝ ժպիտով, անփութորեն խաղաց նրա աստղազարդ հոգու հետ, անչար ու թեթև ծիծաղեց նրա երջանկության վրա:

Ե՞րբ սկսվեց այս նոր քաղցր-տանջալից մորմոքը:

Ինչո՞ւ սատանայի նենգ ոգին փչացրեց իրենց անմեղ ու սքանչելի խաղը: Ինչո՞ւ խաղը վերջացավ: Ինչո՞ւ վերջացավ: Սպանվեց: Երկնքին, աստղերին, լուսինգային մնաս բարով ասաց: Սպանվեց: Մյուս աշխարհը գնաց: Սպանվեց: Սև հողի բաժին դարձավ: Սպանվեց անխղճորեն ու գազանաբար: Հիշողության փուշի դարձավ: Սպանվեց: Հող, փոշի, մոխիր դարձավ:

Ե՞րբ սկսվեց:

Ինչո՞ւ նա չի նեղանում իրենից: Ինչո՞ւ չի արհամարհում իրեն: Չի ատում: Չի մեղադրում: Չի պատժում: Չի սպանում: Լուռ է: Լուռ է: Լուռ է՝ ինչպես քարը: Քարից էլ լուռ: Քարից էլ քար:

Նանեի ժպիտը փոխվեց տխրության: Թախծում էին աչքերը: Եվ որքա՞ն գեղեցիկ էին: Շուրթերն անձայն շշնջում էին տրտմալի մտքեր, որ դանդաղ բարձրանում էին սրտի ափերից: Եվ որքա՞ն-որքան մեղավոր էին ու անմեղ: Հիմա նրա դեմքին տխրության պատկերն էր՝ կապույտ գլխաշորով շրջանակված:

Իր և Ներսեսի միջև նա է, որ արդեն չկա, նրա ոգին է կապույտ, թափանցիկ պատի նման կանգնել իրենց արանքում, և չի կարելի անցնել այդ պատը, դժվար է, ծանր, անհնար, պատը ներքևից վերև պատված է փշերով, որոնք անտանելի դուրեկան ցավ են պատճառում, ցավում է սիրտը, երբ հավում է պատին, ցավում, մորմոքում են աչքերը և շուրթերը, ցավում է հոգին, կտոր-կտոր լինում, բզկտվում, այրվում փշերի ծակոցներից:

Նանեի սիրտը, արյան փոխարեն, անել վշտից լցվեց արցունքներով ու հեկեկաց, ինչպես քիչ ասաջ երջանկությունից էր լաց եղել: Լռիր,— ասաց նա իր սրտին,— մի՛ տանջիր քեզ, պատեպատ մի՛ խփվիր, մի՛ տանջիր ինձ, լռիր, այլևս մի՛ խոսիր, լռիր վերջնականորեն, հավիտյանս հավիտենից: Թող ոչ ոք չիմանա, Ներսես Աթունը չլսի ու չիմանա, թող ես չիմանամ, քարավանը չիմանա, բնությունը և երկինքը չիմանան, Եփրատը չիմանա, ոսկե ձին չիմանա, հրացանս չիմանա, Երզնկան չիմանա, նահատակները, հարյուր-հազարավոր նահատակները չիմանան. երբեք-երբեք չլսեն, երբեք չզգան, երբեք-երբեք երազում չտեսնեն:

Տխրության պատկերը, որ լուռ համբուրում էր նրա դեմքը, զարդարված էր թախծուռ հպարտությամբ և կոտրված ժպիտով՝ այդպես լեռների գիրկն իջնող իրիկնամուտի արևն է նայում աշխարհին և մարդկանց:

Երևացին Ախթիխաս գյուղի առաջին խրճիթները: Գլուղը կանաչ դաշտահովտում էր: Թիկունքում նսկայացան մի ժայռ կար, որ կարծես ուրիշ և հեռու վայրերից էր եկել-լռել-քարացել այստեղ: Բարձր բարդիների կատարներին արագիլները բույն էին շինել: Չէր երևում և ոչ մի արագիլ: Ներսեսին թվաց՝ ժայռի ուսին կանգնած է բուն:

Թեև ժայռի վրա բուն կանգնած չէր, բայց Ներսես Ալթունյանը տեսնում-տեսնում էր նրան:

Քարավանն անցնում էր գյուղամիջով՝ գրեթե քսվելով պատերին: Չնայած երեկոն հեռու չէր, բայց ոչ մեկի մտքին չեկավ կանգ առնել այդտեղ գիշերելու: Դրա համար պատճառ կար: Դեռևս հեռվից զգացին՝ գյուղը լուռ է և համր: Չի շարժվում, չի խոսում, նույնիսկ չի շնչում:

Լուռ էր առաջին խրճիթը, երկրորդը, որին կպան ձեռքով, լուռ էր՝ անբարբառ քար ու հող, երրորդը լուռ էր:

Լուսթյունը դանդաղ գնում էր քարավանի ոտքի հետ:

Կիսաբաց դռները լուռ էին և իրենց խորքից նայում էին միայնակ, տխուր, խավար, սգավոր լուսթյամբ:

Ժայռը լուռ էր:

Քարե ցանկապատները լուռ էին:

Լուռ էին ծառ ու թուփ, փուշ ու ծաղիկ:

Տանիքները լուռ էին:

Լուռ էին կախադան բարձրացած կաշի-ոսկոր դիակները, և անհնարին էր իմանալ՝ կի՞ն են նրանք, թե՞ տղամարդ:

Լուռ էր ցից հանված մի կմախք. ողնաշարը սարսափելի ցավերից ծռմուկած, նա նայում էր հեռու-հեռավոր լեռնաշղթային:

Լուռ ու համր էին ցանկապատերից մեկի վրա կողք կողքի շարված գլուխները: Նրանք ոչ մի տեղ չէին նայում: Եվ դարձյալ դժվար էր որոշել՝ որն է նրանցից տղամարդը, որն է կինը, որն է ծերը, որն է երեխան:

Լռությունը, քարավանի փեշից կառչած, բարձրանում էր վեր, մտնում սրտերը, լուծվում արյան մեջ, գնում երակներով, թափանցում հոգու խորքը:

Ամեն մարդ լուռ էր:

Քարդիները լուռ էին, չէր շարժվում և ոչ մի ճյուղ, և ոչ մի տերև:

Արագիլների բները լուռ էին:

Լուռ էր պարանից կախված աղջնակի շրջագգեստը, որ նման էր քարացած թիթեռի:

Լուռ էր խրճիթներից մեկի մոտ գտնվող լեռքար սանդղ, և նրան հենված փայտե թակիչն էր լուռ ու մունջ:

Օդը լուռ էր, ամենուրեք սառն ու անզգա տեսարան, վախեցնող լռություն, կույր ու մեռյալ ժամանակ, որ չէր շարժվում ետ ու առաջ, այլ կանգնել-մնացել էր տեղում, սև քար կտրել:

Լուռ էր քամին, և դա ահավոր ու ահագոր ու ամենից ավելի:

Սև քառակուսի կարմիր անապատում:

Քարավանը լուռ էր՝ քայլում էր ու չէր քայլում, կար և չկար:

Ախքիլիսա գյուղը մնաց հետևում՝ ավելի մեծակ, ավելի լուռ, ավելի սևավոր:

Երկար ժամանակ քարավանը լուռ շարունակում էր ճամփան:

Լռությունը խախտեց չալպուտուրիկ շունը. տխուր ու անօգնական կալանչ-կալանչ եկավ՝ կարծես լաց էր լինում: Փոքրիկ տղան գետնից բարձրացրեց նրան, գիրկն առավ և, ինքն էլ թնգթնգալով, քիթ-բերանը համբուրեց:

Ճռճռացին սայլերը:

Աթլաս կովը բառաչեց:

– Մամփրե՛...

– Ի՞նչ...

– Մամփրե՛...

– Ի՞նչ կուզես ինձմե...

– Մամփրե՛...

Տեր Մելքոնն էր կանչողը, և նա չգիտեր՝ ինչ է ուզում Մամփրեից:

Սուսանը ծանր ու խուլ տնքաց, կանգ առավ մի պահ, հետո կրկին, պատառոտված ոտնամանները հողին քստքստացնելով, քայլ-քայլ գցեց:

Չիերից մեկը աղեկատուր խրխնջաց. դա ոսկե ձին չէր:

Կիրակոսյանները հրում-քաշում էին սայլը՝ միմյանց հորդորելով արագ, ավելի արագ գնալ, հեռանալ Ախքիլիսայից, թեև շատ հեռու էին արդեն:

Աթլասը նորից բառաչեց, բայց զանգուլակները չղղանջեցին՝ պապանձվել էին, լռել-լռել, համրացել էին:

Ներսես Ալթունյանը ետ նայեց և քարավանի մեջ չտեսավ ոչ մեկին:

Եփրեմը նյարդայնորեն ու չարացած խաղում էր սրի հետ՝ կիսով չափ հանում պատյանից և կտրուկ հրում ներս, հետո դարձյալ դուրս քաշում:

Վարդանուշը գնում էր և հաճախակի, առանց կանգնելու, ետ նայում: Նրան թվում էր՝ Ախքիլիսան սողեսող գալիս է իր հետևից:

Նանեն լուռ էր: Սակայն լուռ չէին աչքերը. նրանք խոսում էին զարհուրած սրտի լեզվով:

Մարգար Քեչիշյանը գրպանում շփում-տրորում էր ծիրանի կորիզները: Եվ չզգաց, թե իր հետ ինչ պատահեց, աչքե՞րը մթնեցին, գլո՞ւխը դարձավ, նա գրպանից հանեց ամբողջ բուռ կորիզները և աջ ու ահյակ շաղ տվեց օդի մեջ: Երբ շուտով ուշքի եկավ և մարդկանց հրմշտկելով ետ վազեց, կորիզները խառնվել էին շեկ հողին, և նա խելագար փութաջանությամբ, չորեքթաթ, քրտինք կոխած որքան էլ որոնեց ու հող չանգռեց՝ ոչ մի, ոչ մի կորիզ չկարողացավ գտնել:

Վահրամի ձին ոտքը գետնին խփեց, շնչահատ փնչաց և կրծոտեց լկամը:

Բո՞ւն էր կռնչում. որտե՞ղ է նա, իր աչքերով ի՞նչ է գուծում քարավանին, երկնքին, հողին:

Մուսանի ոտքերն ուժատվեցին, նա կանգ առավ և ցավից կծկվեց: Մոտիկ գտնվող կանայք հասկացան, որ նրա ազատվելու ժամն է:

Քարավանը ցրիվ եկավ դաշտում: Մեծ թե փոքր կանգնեցին: Ախքիլիսան մռռացվեց իսկույն, կարծես իրականում չէր եղել երբեք, հիվանդ ուղեղի զառանցանք էր, որ դադարեց, սարսափելի երազ էր, որ անցավ, բորբոք աչքի խաբկանք էր, որ մաքրվեց:

Առաջին բռպեններին, երբ լսվում էին ծննդաբերության ցավի բռռոցները, որոնք ընդմիջվում էին դժվար ու խուլ տնքոցներով, բոլորի աչքերում սպասումի ուրախությունն էր, ոչ ոք չէր մտահոգված Մուսանի վիճակով, այդ վիճակը չէին տեսնում, չէին գիտակցում, նրանք ամբողջ զգացմունքներով ծնվող երեխայի հետ էին, որին ամեն մեկը համարում էր իրենը, իր երջանկությունը, իր փրկությունը, իր շարունակելիությունը, իրեն բնությունից ու Աստծուց տրված պարգև: Մուսանի ցավերը, որ անցնում էին նրանց

սրտի միջով, քաղցր էին ու երանելի, և անհուն քավականության
ժպիտ էին դառնում ամեն մեկի դեմքին:

Սակայն ժպիտները կամաց-կամաց փոխվեցին անհանգս-
տության. անցավ բավականին ժամանակ, Մուսանը չարչարվում
էր, հոգեհան լինում, կեղեքվում ցավերից, բայց երեխայի լուսե
ճիչը չէր լսվում:

Ի՞նչ էր կատարվում այնտեղ, ծաղկավետ ճամփեզրին, կա-
նանց սեղմ շրջանակում:

Մուսանը գոռաց, էի ու դարձյալ բղավեց հուսաբեկ ձայնով,
քիչ հետո նորից լսվեց նրա գոռոցը:

Խումբ-խումբ ցրված քարավանին պատեց մութն ու մռայլը:

Մուսանը դարձյալ բղավեց, բայց այս անգամ նրա ցավը
միախառնված էր թույլ ու անօգնական մարմնի աղաչանքին: Քիչ
անց ձայնը երգող թավջութակի լարի պես թուլացավ-բեկվեց, իսկ
աղաչանքն ավելի սաստկացավ: Այժմ նա միայն խնդրում էր, օգ-
նություն կանչում, պաղատում:

Քարավանը սարսռաց մութ ու անորոշ բնագոյով:

Չի կարող, անհավատալի է, չի կարող պատահել:

Այլևս բղավոց չլսվեց: Անուժ, փլատակ, նվաղուն մարմնի
հեծեծանքներն էին հասնում մարդկանց, ինչպես վերջին առկայ-
ծումներով մարմնող կրակի շունչը:

Քարավանը լռեց-սևացավ:

Ամեն մարդ լռեց:

Քար-սուգ լռություն եղավ սարահարթում:

Անցան մի քանի լուռ ու անշարժ բույներ, որ տաժանելի
հավերժություն թվաց:

Մարդիկ կայծակնահար ծառերի ստվերների պես, տարբեր կողմերից լուռ ու դանդաղ շարժվեցին-մոտեցան կանանց շղթային, որ իսկույն քանդվեց-բացվեց նրանց առջև:

Նա անշունչ պառկած էր դալար խոտերի վրա՝ իր մեծ փորով և կապտած-նիհար ոտքերով: Չարչարանքներից ակոսված դեմքին պաղել էր վերջին տնքոցն ու հեծեծանքը: Իսկ շուրթերը, թվաց, հազիվ նկատելի, մեղմ ու տժգույն ժպտում են՝ կարծես մազոն էր և շնորհակալ, որ ամեն ինչ ավարտվեց:

Երեկո էր արդեն, երբ Վահրամը, Պետոն, Հաբեթը և մի քանի ուրիշ տղաներ փոս բացեցին և Սուսանի մարմինը պահ տվին հողին:

Շիրմաքմբի վրա առ ամուսինն ուղղված նամակներն էին, որ Մարտիրոսը հանել էր նրա ծոցից:

Մզրոն պողպատը զարկեց կայծքարին, կարծես սրտին էր զարկել, և նամակները կրակի մատնեց:

Մարտիրոսը նայում էր վառվող նամակներին և լուռ արտասվում: «Իմ հրեղեն և իմ բնություն, իմ ծառ, իմ արև»,– հիշեց նա:

Նամակները կապույտ ծխի փետուրներով բարձրանում էին երկինք, մեղմ ու խաղաղ պտույտ գալիս և թռչում դեպի լեռները, ուր արևն էր մայր մտնում:

Քարավանը երեք օր քայլեց-քայլեց Կաղզվանի գավառով՝ անցնելով Ագարակ, Չուրուկ, Ենիջա, Շատևան, Ջալալ, Բաշքեյ

գյուղերը, որոնք բոլորն էլ լուռ էին և ամայի: Լալոյի Մավրակում, որ մի փոքրիկ բնակավայր էր Սարիղամիշից քիչ հարավ-արևելք, Արաքսի վերին վտակներից մեկի հարևանությամբ, դադար առան:

Առաջին մի քանի ժամը մնացին դրսում, չհամարձակվելով կամ չցանկանալով մտնել տխուր ու լռակյաց տները, բայց երբ երկինքը ծածկվեց սև-մութ ամպերով, անձրև-կարկուտ տեղաց, ճայթեց կայծակ-որոտը, բոլորը խումբ-խումբ քաշվեցին ներս:

Անձրևը չդադարեց ամբողջ ցերեկ և գիշեր:

Առավոտյան փչեց լեռնային ցուրտ քամին՝ վնգստալով դռների մեջ և տանիքների ճեղքերում:

Սովը հիմնավորապես տիրել էր քարավանին. մտել յուրաքանչյուրի որովայնը, դարձել համաճարակ և տանջում էր, մաշում, հոգին բերանը տալիս, աղում, պատուհասում մարմինը:

Ուտում էին ծաղիկներ ու խոտ, ծառերին քարացած խեժը, արմատ ու կեղևներ ծամում, վայրի հատապտուղներ, որոնք անցյալ տարվանից էին մնացել թփուտների վրա, իշէ՛կ նոր բերք ու բարիք դեռևս չկար:

Խրճիթները թալանված էին մինչև վերջին մանրուքը: Խոնավությունը, բորբոսն ու մզլահատն էր ծվարել ամեն տեղ: Հողե պատերը, ձեղուն ու հատակ, գետնափոր խորշերը դամբարան էին հիշեցնում՝ առանց աճյունի, առանց խաչ ու խաչքարի, առանց տապանագրի. ո՞վ էս, որ չկաս, հո՞ղ էս դարձել արդեն, թե՞ գնացել-դնացել էս մահ ու նահատակություն գտնելու քո բնության, քո հոր բնության, քո պապի ու ապուպապի բնության գրկում, ո՞վ էս, որ չկաս:

Նանեն գյուղի վերին տներից մեկում էր ապաստանել՝ Վարդանուշի, տիկին Միրունյանի և մի քանի ուրիշ կանանց հետ: Ներսեսը գիտեր նրա տեղը, բայց ոչ մի անգամ չգնաց, թեև սիրտը քաշում էր այնտեղ, աչքերը հեռվից հեռու նայում էին նրա դռանը, հոգին անվերջ ներս ու դուրս էր անում, անձկության ու խանդաղատանքի զգացմունքները քսվում-փաթաթվում էին պատերին:

Եփրեմը, Մգրոն և Հարեթը գնացին Սարիղամիշ՝ պարեն հայթայթելու: Վերադարձան հաջորդ օրվա գիշերը: Սարիղամիշում էլ թուրքերն են, զորքն ու խուժանը կախում են, տանջամահ անում, խոշտանգում ողջ մնացած հայերին: Եկեղեցու կաթողիկեից խաչը վար է առնված և նրա տեղ ծածանվում է յաթաղանի քիթ-մտուրով կիսալուսինը: Լուրեր կան, մի քանի օրից զորքը հայկական գյուղերը վերջնականապես բնաջինջ անելով շարժվելու է դեպի Կարս: Մի երիտասարդ հայուհու հանդիպեցին շուկայի հրապարակում: Բռնի հավատալիքներ էին և նվիրել փոխքաղաքապետ Նազիմ Շևքի պեյին, որովհետև շատ գեղեցիկ էր: Չաղրայի ծալքից նա տեսավ ու ճանաչեց իրենց, որ յոդ պահին, անգոուշորեն, մայրենի լեզվով մեկ-երկու խոսք էին շնջացել: «Ուզեցինք բերել մեզ հետ, ազատել թուրքի ճիրաններից: Չեկավ, որքան խնդրեցինք-աղաչեցինք՝ չուզեց գալ: Պիտ սպանիմ անոր, որոշած եմ, նպաստավոր պահի կապասիմ, անունս տարեք ձեզի հետ, ես Մանուշն եմ, անունս չմոռնաք երբեք: Նա օգնեց, որ պարկերը լցվեն հացով, նույնիսկ իր տնից շաքար, յուղ և ձավար տվեց՝ ինչքան ուներ»:

Շատ երկար ժամանակ շաքարի երես չէին տեսել, քաղցր անունն էին եիշում միայն: Յուղի անունը: Չավարի անունը: Մա-

հով, ծայրահեղ հուսահատությամբ, անուններով էին ապրում արդեն: Ամեն բառ ու անուն մի աշխարհ էր: Չորօրինակ, ասում էին՝ փիլավ, դժվժիկ: Ասում էին՝ զամպոսա. սա Նոր տարվա առիթով պատրաստված առանց յուղի խմորեղեն էր, մեջը ընկույզի խորիսխ, բաժանում էին քառանկյուն կտորների և դռչաբի մեջ թաթախելով ուտում: Նայում էին իրար աչքերի և ասում՝ Երզնկա, վարդավառ, Եփրատ: Իսկ երբ ասում էին՝ տուն-տեղ, որքա՛ն հարազատ ու թանկ հիշողություններ էին իսկույն արթնանում ամեն մեկի հոգու դաշտում և ծվեն-ծվեն անում սիրտը:

Նանեի աչքերը չէին որոնում Ներսեսին, որովհետև նա ամեն պահ իր հետ էր:

Գիշերը, երբ մութն ու լռությունը ահարկու անդունդ էին դառնում և քունը մոտ չէր գալիս աչքերին, Վարդանուշը և տիկին Սիրունյանը խոսում ու անվերջ կրկնում էին միևնույն զրույցը:

– Դուն կուզես նորե՞ն էրիկ առնել:

– Այո, կուզեմ,– ասաց Վարդանուշը:

– Ինձի ցանկությունդ երդմնազանցություն կերևա:

– Ո՞ւմ հանդեպ:

– Աստծու և մերիններուն: Եկեղեցիի մեջ չկարգվեցա՞ր:

– Խորանին առջև:

– Կհիշե՞ս ինչ պատասխանեցիր տեր հայրի հարցումին:

– Հավիտյանս խոնարհ և հավատարիմ եմ բախտիս:

– Երանի է այն կինը, որ մեղավորներուն ճամփուն մեջ չի կե՛նար,– ասաց տիկին Սիրունյանը կշտամբանքով:

– Ով տեր, մինչև ե՞րբ բոլորովին ինձ պիտի մոռնաս: Մինչև ե՞րբ քու երեսդ ինձան պիտի ծածկես: Մինչև ե՞րբ թշնամիս իմ վրաս պիտի քարձրանա: Լուսավորե ինձի, ով իմ տեր Աստ-

վածս, կամք տուր և արև, ուժ ներարկիր հոգիիս, չըլլա ընկճվիմ, խելագարվիմ, մեռնիմ վերջիվերջո, չըլլա թշնամիս ըսե հաղթեցի անոր՝ Վարդանուշ Գետիկյանին, նահատակ երեխաներու դժբախտ մորը, նահատակ Գրիգորի սիրելի կողակցին, նահատակ Երզնկայի, նահատակ Սեպուհ լեռան, նահատակ Եփրատի դուստր և ծառա Վարդանուշին:

– Ո՞վ է թշնամիդ, ե՞ս եմ,– վիրավորվեց տիկին Սիրունյանը:

– Թուրքին վրա կխոսիմ, քույրս: Չեմ ուզեր ան ինձի ճգնե, հողին հավասարեցնե, կյանքս մոխիր և փոշիի վերածե: Նորեն պիտի ընձյուղվեմ, կանաչ-կարմիր կապեմ հակառակ ինձի դեմ ելած գազանին, անոր սիրտը ավերեմ նախանձի որդերով, աչքը, աչքը հանեմ:

– Ի՞նչ պատասխան պի տաս Գրիգորի ոգիին, որ ողջ է, կխորհե՞ս այս ուղղությամբ:

– Արդեն ան ինձի կըսե. Վարդանուշ, նորեն կանաչ ծառ դարձիր, մեր օջախը ողջացրու, մեր հողին շունչ և արևշատություճ տուր, մեր լեզուն քաղցրացրու մանուկների ծիծաղով, կխնդրեմ, Վարդանուշ, ես քու մեջ կապրիմ և քեզնով կոռյատեմ, չըլլա չորնաս, այլապես ես ալ կչորնամ ու կմեռնիմ, անհալչելի սատույց և լուռ ու համր քար կդառնամ:

– Ես անոր ձայնը չեմ լսեր:

– Դու՛ն ինչո՞ւ անոր ձայնը պիտի լսես, դու՛ն սեփական ամուսինիդ ձայնը լսե:

– Ան լուռ է:

– Իմինը կխոսե անվերջ:

– Ասոված իմ, ինձ ինչո՞ւ թողուցիր,– հառաչեց տիկին Սիրունյանը:

– Տորեկը կխոսե, գիշերը կխոսե, կսիրե, կչարչարե:

– Կյանքին մեջ շատախո՞ս էր:

– Ոչ: Չափազանց քչախոս էր: Ամբողջ օրվան ընթացքին հագիվ մեկ-երկու բառ կըսեր:

– Աստված թող ողորմե ինձի և օրինե ինձի:

Նանեն լուռ լսում էր և մինչև լույս առավոտ չէր քնում:

Շաքարը հավասար բաշխեցին մարդկանց: Փոքրիկ տղան իր ամբողջ բաժինը փշուր-փշուր դրեց չալպտուրիկի բերանը: Նա ուրախ էր ու երջանիկ, որ իր սիրելին քաղցրացավ: Հետո նա լիզեց շան մռուրը, որ շաքարից էլ անուշ էր ու հոտավետ:

Մամփրեն հնձեց շրջապատի ծաղկալից խոտը, թողեց արևի տակ չորանա, հետո խրձեր կապեց և խնամքով դարսեց պատի տակ:

– Ի՞նչ կուզես քսել, Մամփրե:

– Մարդս պի ընե բոլոր մեծ ու պըզդի գործերը, որի համար Աստված մեզի շունչ տվավ:

– Իմաստուն ես, Մամփրե:

– Հայրս տեսնայիր, ինձի չէիր հավնե:

Լալոյի Մավրակում գտնվելու կարճ միջոցին Հակոբը նորոգեց այն տան փլված պատը, որտեղ իջևանել էր, կարգի բերեց ձեղունը, որ հորդառատ անձրևներից չկաթի, ամրացրեց լուսամուտ ու դուռ:

Բոլորի մտքով անցավ՝ այլևս չքայլել դեպի անհայտը, մնալ այդտեղ, վարուցանք անել, օջախ դառնալ, ապրել Աստծո ողորմածությամբ, այնքան որ ամեն մեկի հոգում սաւստիկ էր բնական ու մարդկային կեցության փափագը: Սակայն ոչ ոք իր միտքն ուրիշին չասաց, որովհետև սրտին հանկարծ վախ ու դող իջավ,

կին թե տղամարդ լուռ հասկացան, որ դա նշանակում է հոժարակամ հանձնվել գազանին, ա՛խ, խեղճ ժողովուրդ, նահատակվել, մեռնել, հա՛վիտյանս մթնել:

Պայծառ, տաք, խաղաղ առավոտ էր, երբ քարավանը Լալոյի Մավրակից ելավ բաց դաշտ և առանց ետ նայելու գնաց դեպի Սիտական գյուղը:

Եղեգնուտի մոտ գտնվող Սիտականը լուռ էր: Լուռ էին եղեգները: Լուռ էր ընդարձակ ճահճահողը:

Քարավանը փախչում-փախչում էր լուրթյունից, բայց շուտով էլ հանդիպում նոր և ավելի ծանր լուրթյան:

Չանգլին լուռ էր:

Լուռ էին նաև Քազրան և Պիվիկ գյուղերը:

Որքա՛ն տխուր էր Խոբերանը իր լուրթյան մեջ:

Երկիրը լուռ էր:

Քարավանը չմտավ Կաղզվան, այլ քայլեց հարավակողմի կտրտված բարձրավանդակով, քաղաքից բավականին հեռու, և շուտով ելավ Արաքսի ձորաբերանը, որի վերևներում Արտագերս հնագույն բերդի ավերակներն էին:

Ներսես Ալթունյանի ճակատը կնճռոտվեց. որտե՞ղ է կարդացել, ե՞րբ, ո՞վ է պատմել:

Շապուհ Բ-ն Արշակ թագավորիս Տիգրոն հրավիրեց և նենգաբար զնդանեց Անհուշ բերդում, որտեղ կուրացրին նրան, ապա և տանջամահ արին: Երկիրս մնաց անտեր-անտիրական: Թշնամի զորքը եկավ և ավեր-մահ սփռեց ամենուրեք: Փառանձեմ թագուհիս և իր որդի Պապը, տասնմեկ հազար զորական ուժերով, պատսպարվեցին Արտագերս անառիկ բերդում: Պարսիկ մեծաքանակ բանակը պաշարեց բերդը: Ապագա հայոց թագավոր

Պապիս հաջողվեց պաշարումից դուրս գալ և փախչել հռոմմների մոտ: Գեղեցիկ ու հպարտ թագուհիս, իշխաններս և բերդապահ զորքս մեկ տարուց ավելի դիմացան շրջապատմանը, բայց, ի վերջո, սովից, մահտարածամ հիվանդություններից ընկճվեցին և թշնամուն անձնատուր եղան: Պարսիկները կողոպտեցին արքունական զանձերս և բերդը տակնուվրա ավերակեցին: Հետո գերեվարեցին Փառանձեմ թագուհուս Տիգրոն և սպանեցին Շապուհի երամանով: Արտագերսը հավերժորեն լռեց:

* * *

Լուս չէր Արաքսը:

Գեմեհանդիման բարձրացած լերկ ժայռերը աքցանի պես սեղմել էին նրան իրենց մեջ, և նա, փրփրալով, ափերի քարե շղթաները կրծոտելով, անդադար գոռում-գոչյունով բողոքում էր իր գերության դեմ:

Նոր չէին նրա մոլեգին գալարումները, որովհետև շատ հին էր ստրկությունն այդ՝ անթվական և անսկիզբ, ինչպես բնությունն ու մարդը: Արևի պայծառ ճառագայթները չէին խայտում նրա երեսին, քանի որ մարմինը բզկտված էր վերքերից, աչքերը՝ տառապանքից խենթացած, հոգին՝ մութ ու դժբախտ: Ամեն պահ նա աղաղակում էր ավելի բարձր ու առավել անսանձ, չէր ընկճվում, քանզի ուզում էր հաղթել ժայռերին և դուրս գալ արձակ հովիտները, որտեղ երանելի խաղաղությունն է՝ ծառաստանների զով շունչը, խտերի ու ծաղիկների բուրմունքը, շամբուսների ներամփոփ լուսությունը:

Քարավանը մուրված ու շփոթահար կանգնել և բարձրից նայում էր Արաքսին՝ նրա խռովահույզ ալիքներում, ով իմ տեր Աստված, տեսնելով իր դեմքը:

Արդեն գնացել էր մայիսը: Լեռնագագաթների ձյունները դեռ շարունակում էին հալվել և անհաշիվ ամվակներ դարձած, աղմկաձայն վազելով քարափներն ու վիհերն ի վար՝ լցվել Արաքսը: Գետը վանդակում գնդանված ազատատենչ վագրի նման փեփափ էր զարկվում, քարեր գլորում, ծառեր արմատախիլ անում, որոնք հայտնվում էին իր ճանապարհին, ապառաժներ պոկում, փրփրաբերան մոնչում: Նրա կատաղի ընթացքից ժայտերը դողով էին բռնվել և շառաչում էին երկաթ շղթաների պես: Նա ոչ մեկին օգնության չէր կանչում, ոչ իսկ անպարագիծ երկնքին, չէր աղերսում որևէ մեկի գուրն ու խղճմտանքը, անգամ հզոր Աստծու, թեև սաստիկ էր իր աղետը, երկրաշարժը՝ ավերիչ, և դժբախտությունը՝ խորն ու ահռելի: Այդ տարի, ինչպես և միշտ ու դարեր առաջ, Արաքսը ապավինել էր սեփական ուժին՝ իր արյանը, հավատին ու բնավորությանը, և որոտում էր, գալար-գալար գալիս, մոնչում սրտի խռովքները՝ քո փրկությունը քո բազուկների, քո կամքի, քո սրի ու սիրո, քո մաքառումների, քո արգար վրեժի մեջ է, ուրիշ ոչ մի տեղ մի՛ որոնիր նրան քո ոգու դաշտից գատ, այդ հրաշագեղ ու եղերական դաշտում է նա ծաղկում:

Որքան լուռ էր քարավանը, այնքան Արաքսի մոնչյունն անսանձ էր և կատաղի, թվում էր, անհաշիվ ձիեր են քառատրոփ վարգում ձորի միջով՝ վայրասուն ձիեր, խելագար ձիեր, գինով ու լուսնոտ ձիեր, նետահար ձիեր, դիվոտած ձիեր, անթիվ-անքանակ, աշխարհի բոլոր ձիերը՝ և՛ մեռածները, և՛ ողջերը, և՛ նրանք, որ բյուր հազարներով դեռ նոր պիտի ծնվեն:

Քարավանի յուրաքանչյուր մարդ Արաքսին նայում էր ահ ու սարսափ աչքերով, կարծես նա այրվում էր ամենակույ հրդեհի մեջ, խառնվում տակնիվեր փլատակվող ժայռերին, սուզվում երկինք-գետին բռնած մահաշունչ փոթորկի գիրկը, և իրենցից ոչ ոք, ոչ մեկ արարած ի վիճակի չէր օգնելու նրան՝ մարելու հրդեհը, կանգնեցնելու երկրաշարժը, լռեցնելու փոթորիկը:

Նա կռիվ էր մղում ժայռերի դեմ՝ կրծում նրանց կողերը, ալիքների շղթաներով կատաղի մտրակում, կուրծքը վահանի նման դեմ տալիս ու փշրում սուր-սուր քարերին, սմբակների տակն առնում, շանթում, մորթվող գազանի պես բռռում, խոխոռում ամբողջ արյուն-քրտինքով և պատառոտվում:

Ամեն պահ ու վայրկյան նա ապրում էր մեռնելով, բայց դա չգիտեր, մեռնում էր ապրելով, և դարձյալ չէր զգում ու գիտակցում իր խելագար վազքի մեջ: Մահվան ու կյանքի համատեղությունը չէ՞ր նրա ուժը, երբ կյանքն անընդհատ, անսկիզբ ու անվերջ, քուն-արթուն պաշտպանվում է մահվան հարձակումներից, ձեռք բերելով պողպատյա տոկունություն և կոփվածք, թե՞ ուրիշ խորհուրդ ու գաղտնիք կար՝ անհիմանալի և՛ իրեն, և՛ Աստծուն ու բնությանը:

Մոսկում պատեց քարավանի սիրտը: Տեսարանն այնքան զարհուրելի էր, որ մարդիկ նայում ու չէին հավատում իրենց աչքերին: Արաքսի տվայտանքը հիշեցնում էր կոտորածն մանկանց և ծերերի, նրանք լսում էին հարազատների աղեկեզ ճիչերը, տեսնում խոշտանգումների ցավից աղավաղված դեմքերը խորունկ ձորի մեջ և ուզում էին նետվել այնտեղ՝ նրանց հետ չարչարվել ու նահատակվել, նրանց հետ գրկված խաչ բարձրանալ, նրանց հետ ապրել ու մեռնել: Խորխորատը իր սարսափելի ձայ-

նով խլացնում-թունավորում-հարբեցնում էր նրանց, կանչում դեպի իր մահատեսիլ ընդերքը, ձգում-քաշում, աչքերը կլանում, խարդախում-մոլորեցնում-նենգություն անում, գլուխն ու զգացմունքները խառնում, պտույտ տալիս: Բոլորը հավաքվել էին մի տեղ, ձերք ձեռքի տվել, ամուր բռնել իրար, խմբվել խլացուցիչ ու անողորմ վտանգի դեմ: Այդ ժամանակ արևը մտավ ամպերի հետևը, փչեց տաք քամին, օդ հանելով ավազն ու կավահողը, և օր ցերեկով ձորը մթնեց դեղին-կարմիր փոշիներից, որ մեկ թանձր ալիքներով իջնում խառնվում էին Արաքսին, մեկ էլ կատաղորեն վեր-վեր բարձրանում, տարածվում-փռվում վերջնականապես հուսահատեցնելու, խեղդամահ անելու, անհիշատակ փոշիացնելու ամեն կենդանի շունչ:

Ով Տեր, իմ թշնամիներս որչափ շատցան:

Ելիր, ով Տեր, զիս փրկե, ով իմ Աստվածս:

Կանչելու ատենս ինձի պատասխան տուր:

Ողորմե ինձի ու լսե իմ աղոթքս:

Ով Տեր, քու երեսիդ լույսը մեր վրա ծագեցուր:

Միտքդ առ իմ աղաղակս, իմ կանչելուս ձայնին մտիկ ըրե, ես քեզի կաղաչեմ:

Քու ճամփադ շտկե իմ առջևս, արդարությունովդ ինձի առաջնորդ եղիր ընդդեմ թշնամիներուս, վասն զի անոնց բերնին մեջ ճշմարտություն չկա, անոնց ներսդին չարություն կա, անոնց կոկորդը բաց գերեզման է: Ով Աստված, եպարծե զանոնք:

Հառաչանք ընելե հոգևեցա:

Ժայռերը դրդում էին: Երկինքն ավելի մթնեց: Կայծակներ շողացին:

Տիրոջ աթոռը երկինքն է: Անոր աչքերը կտեսնեն, անոր թարթիչները կը քննեն մարդոց որդիները:

Ով Աստված, զիս պահե, վասն զի քեզի հուսացի:

Մտիկ ըրե իմ աղաղակիս: Ականջ դիր աղոթքիս: Աչքի բիրի պես զիս պահե: Թներուդ հովանավորությանը տակ զիս ծածկե: Քու սրովդ փրկե իմ անձս գազաններեն:

Իմ Աստվածս իմ խավարս կը լուսավորե:

Մի՛ հեռանար ինձմե: Մի՛ հեռանար ինձմե: Մի՛ հեռանար ինձմե:

Շուտով ինձ օգնության հասիր, իմ անձս սուրեն ու կայծակներեն ազատե և կյանքս՝ շանը ձեռքեն:

Իմ տառապանքս նայե և բոլոր մեղքերս ներե:

Միանգամից զարկեց-մտրակեց տեղատարափ անձրևը: Շուտով օդը, ձորի անհունը, երկինքը մաքրվեցին փռոչներից: Քարավանի ահարեկ հայացքի առջև դարձյալ ամբողջ մերկուսյամբ երևաց Արաքսի խելագարված ժապավենը:

Տիրոջ ձայնը կրակին բոցերը կը ճեղքե: Տիրոջ ձայնը կը դողացնե անապատ ու լեռներ: Տիրոջը տվեք փառք և գործություն:

Որոգայթեն զիս հանե: Ասպարը ու վահանը առ և ելիր ինձ օգնություն ընելու: Նաև նիզակը քաշե ու ճամփան գոցե զիս հալածողները:

Ողորմե ինձի, ով Աստված, ողորմե, ողորմե ինձի:

Անօրինություն գործողներեն զիս ազատե և արյունահեղ մարդոցմեն փրկե:

Մի՛ հեռանար ինձմե, մի՛ հեռանար, մի՛ հեռանար, մի՛ հեռանար ինձմե:

Օ՛հ, մի՛ տանիր ի փորձություն, այլ փրկյա զմեզ ի չարեն:

Իմ օգնականս և փրկիչս դուն ես: Ով Տեր, մի՛ ուշանար:

Ականջդ ծոռ ինձի ու փրկե՛ զիս: Գուն ես իմ վեմս ու ամրոցս: Մանկութենեն ի վեր դուն ես իմ հույսս: Մորս որովայնեն իմ պաշտպանս դուն ես: Իմ գոյությանս առարկան դուն ես: Իմ զորավոր ապավենս դուն ես: Ծերության ատեն զիս մի՛ ձգեր: Ուժիս պակասած ատենը մի՛ թողուր: Գուն, որ շատ ու ծանր նեղություններ ցուցուցիր ինձի, նորեն զիս պիտի կենդանացնես: Ու երկրին անդունդներեն նորեն զիս պիտի հանես: Իմ պատիվս պիտի շատցնես ու զիս պիտի մխիթարես: Ես ալ պիտի գովեմ քեզ տավիղով քու ճշմարտությանդ համար: Իմ լեզուս ամեն օր քու արդարությանդ մասին պիտի խոսի:

Թափե՛ քու բարկությունդ այն ազգերուն վրա, որոնք քեզ չեն ճանչնար:

Քարավանով աղմուկի և խառնաշփոթության ալիք անցավ: Ճշում էին, գոռգոռում լեղապատառ, կուրծք ծեծում, ձայն ձայնի տալիս, օգնություն աղերսում չգիտես իրենց համար թե Արաքսի, որ չէր հանդարտվում, չէր լռում, այլ, կայծակներով ուղեկցվող տեղատարափից հետո ավելի սաստիկ էր հոգեհան լինում, քարեքար զարկվում՝ դուրս գալու ժանտ ու մաղձոտ ապառաժների գերությունից:

Վերջապես Ներսես Ալթունյանն ուշքի եկավ և, զգալով պահի ամբողջ վտանգավորությունը՝ գոռաց, ոտք առնելու հրաման արձակեց: Սակայն ոչ որ չարժվեց տեղից՝ կախարդվել-քարացել էին իրենց սարսափից, ինչպես խորոտիկ-մորոտիկ թռչնակն է հնայվում վիշապ օձի աչքերի ու բացված երախի առջև և հաճախ ինքնակամ կուլ գնում նրան: Այդ ժամանակ Ներսեսը հրեց առաջին պատահած մարդուն, հետո՝ մյուսին, երրորդին, առանց

ուշադրություն դարձնելու՝ կին է թե տղամարդ, ծեր է թե երեխա: Նրա օրինակին անմիջապես հետևեցին Մգրոն, Վահրամը, Հաբեթը, Պետոն և մյուսները: Քարավանը մեծ դժվարությամբ շարժվեց, այդպես լաված անիվներով սայլն է տարուբերվում և կարծես չի անում ոչ մի քայլ ետ կամ առաջ: Տղաները հրում էին, խումբ-խումբ քշում նրանց, հեռացնում ձորաբերանից՝ հանդիպելով մի տարերային, համառ, կույր ու անզգա դիմադրության:

Նրանք քշում էին քարավանը դեպի լեռնադաշտի արձակ տարածությունը, որտեղ, բավականին հեռու, անտառուտ կար: Քայց քարավանը ոտքը կախ էր գցում, շրջվում, առաջ գնալով անվերջ ձգտում ետ. ձորը կանչում էր նրան, Արաքսի մոնչյունները վախեցնում և կանչում էին, մահը կանչում էր: Այդ պահին գոյություն չունեի մի լույս, մի ուժ ու զորություն, մի հույս, որ հակադրվեր այդ ձայներին, կուրծքը դեմ տար, վահան լիներ ու ճիզակ, պահապան դառնար, պարսպի պես կանգներ դրանց ու քարավանի միջև:

Մի կին էր հերարձակ վազում դեպի ձորը: Տիկին Սիրունյանն էր: Երբ նրան նկատեցին ու բռռալով հետևից ընկան՝ կանգնիր, ո՞ր ես գնում, ո՞ր ես գնում, կանգ առ... արդեն շատ ուշ էր: Լսե՞ց նա իրեն խնդրող, իրեն գուրգուրող, իրեն կարեկցող ձայները՝ հայտնի չեղավ: Մի քանի վայրկյան հետո նա բոլորի աչքին վերածվեց ահավոր երազի: Երբ Հաբեթն առաջինը շնչապառ հասավ ձորաբերանին ու ներքև նայեց, Արաքսի փրփուրներն էին միայն և մեկ էլ, ինչպես իրեն թվաց, քարացած մի ճիչ կար դժոխք անդունդի մեջ:

Փրկյա զմեզ ի շարեն:

Մի՞թե ունայնության համար ստեղծեցիր մարդոց բոլոր որդի-
ները:

Միրոս խոտի պես չորցավ, հառաչանքիս ձայնեն ոսկոր-
ներս մարմնիս փական, անբուն մնացի ու նման եղա տանիքի՛ր
վրա մենակ կանգնած ճնճողուկին:

Լույսը հանդերձի պես կը հագնիս, երկի՛նքը վարագույրի
պես կը տարածես:

Ձիս փրկե, գիս մի՛ ձգնր:

Ողորմե՛ ինձի: Ողորմե՛ Երզնկաս: Ողորմե՛ հիշատակներս: Ո-
ղորմե՛ երկինքս: Ողորմե՛ անու՛նս:

Գնում էին և աղոթք ասում, ճշում սարսափի մեջ տուայակվող
սրտով, մտրում հուսահատությունից:

Արաքսը չէր երևում, բայց նրա խռովահույզ ձայնը քարա-
վանի հետ էր, յուրաքանչյուրի կրծքում, և շարունակում էր դե-
ղացնել հոգի՛ն, տանկուվրա անել, չորացնել:

Չիերը խրխնջում էին, ծառս գալիս, հուզված ու նյարդայնո-
րեն ծամծմում փրփրում լկամը և չէին ենթարկվում տիրոջ կամ-
քին:

Այդպես շարունակվեց մոտ կես ժամ: Անձրևը թափվում էր
բարակ ու անհամաչափ շիթերով, որ նշան էր՝ շուտով դադարե-
լու է:

Անտառուտին չհասած՝ ծռվեցին հարավ-արևելք՝ գտնելու:
Արաշատյան դաշտ տանող որևէ ճանապարհ: Ավագուտ հողերը
տեղ-տեղ ծածկված էին օշինդրի խլիտ ցողուններով, որոնց դեղին
ծաղկաբույլերը թուց ու հատավես: Ժպտում էին անցորդներին՝
նրանց կրծքում դեռևս շուռ ու մուռ եկող վախի՛ն անտեղյակ: Ա-
րաքսը լռել էր: Ուրեմն՝ հեռու է արդեն: Բաժանվեցին: Իրենց

ծանր տառապանքը ճեղքվեց, փուլ եկավ, կիսվեց: Քարավանը քիչ առաջվա հոգեկան տվայտանքից սմբել էր, կտրվել էր ձայնը, լռել էր աղոթքը, միայն սիրտն էր խուլ ու հոգնած բաբախում:

Արևելյան բարձրագույն հովիտներում կամար կապեց ոսկեկարմիր ծիածանը: Երանելի էին հովիտներն իրենց թափանցիկ, կապույտ շղարշներով, որոնց պատռվածքներից երևում էին բարձր սարերի գլուխները՝ վեհ ու տխուր ձյունների մեջ: Նրանք չհասկացան, որ դա Հայկական Պար լեռնաշղթան է, և եթե ուշադիր նայեին, ավելի հեռվում կտեսնեին նաև Արարատ լեռան հսկա սառցադաշտերը: Նրանք դա կիմանան մեկ քանի շաբաթից, երբ Արաքսի ոլորաններով կհասնեն Կարսի սարահարթը, որտեղ գետը փոքրում է մի այնպիսի ահռելի հուն, որ թվում է՝ ոչ թե երկրի վրայով է անցնում, այլ նրա ընդերկրյա խորխորատներով:

Կեսօրին մոտ ինչ-որ աղմուկ լսվեց, որ հետզհետե մոտենում էր և ահագնանում: Կարծես թշնամի գորքը, արյունն աչքերը կոխած խուժանը, գորշ գայլերի մարդակեր հրոսակն էր գոռում-գոչյուններով հարձակվում քարավանի վրա: Բնությունը մեղմ ու խաղաղ էր, երկինքը՝ այնքան ջինջ ու կապույտ, որ գլուխը դառնում էր նրա անհուն խորքերին նայելիս, չէին շարժվում անգամ խոտ ու ծաղիկները, արևից ջերմացած քարերին կպել էր բաց դարչնագույն, բարակ-երկար պոչով մողեսը, մարդկանց ոտնաձայները նրան չէին վախեցնում, նա չէր շարժվում, քար կտրած, ուռուցիկ կոպերով նայում-նայում էր ու չէր փախչում: Այդ խոր ու համատարած լռության մեջ մոտեցող աղմուկը դառնում էր ավելի ահարկու:

Առանց հրամանի սպասելու, տղաները հրացանները առան և ձիերով արագ հայտնվեցին քարավանի գլխամասում՝ դեմ ելնե-

լու արշավող գոչուներին: Քարավանը բնագդական երկյուղով ցրիվ եկավ, ինչպես թռչունների երամն է վայրկենապես ցաք ու ցրիվ լինում իր վրա հարձակված արծվի կռինչից ու թևաբախումներից: Երբ հասկացան՝ ոչ թե թուրքն է ֆշշում ու շառաշում, այլ Արաքսը, արդեն գտնվում էին մութ ու սոսկալի անդունդի եզերքին:

Այժմ Արաքսի օրհասական տագնապը զարհուրելի էր ավելի, քան մինչ այդ տեսել էին ու զգացել: Նրա հզոր մարմինը չորս կողմից սեղմել էին մռայլ ու ահազդու ապառաժները, իսկ հսկամի ժայռազանգված սպառնալի ծովեկ-կռացել էր նրա կրծքին՝ ամեն պահ պատրաստ դղրդյունով փուլ գալու և իր անչափելի ծանրությամբ ճզմելու նրան: Արևի ճառագայթները չէին հասնում անդունդի հատակը, որտեղ Արաքսը խելահեղ տեղապտույտներ էր գործում, խեղդվում իր իսկ փրփուրների ծոցում, անզոր կրծում, ճանկռտում, քերում խոր ու մթամած քարանձավի պատերը, հոգին քերանից հանում, օդ և լույս աղերսում իր գոչուներով: Երկրի ընդերքից ալիք-ալիք բարձրանում էր մահվան սառն ու չարահոտ շունչը: Արաքսը եռեփ էր գալիս, մոլեգին ջանքեր գործադրում ընդարձակելու անդունդի կոկորդը, խցկվում, պայթում, մխրճվում նրա մեջ, թնդյունով գնում առաջ, բայց, ըստ երևույթին, հանդիպելով հուժկու դիմադրության, զլուխը քաշում ետ և հոգնած ու թևաթափ զարկվում ժայռերին: Մակայն հուճահատությունը տևում էր մի քանի ակնթարթ միայն, հաջորդ պահին նա նոր և ավելի զորավոր թափով էր խուժում անդունդի որկորը, դղրդացնում, սասանում քարերը, պոկում և շրջշրջելով քշում-տսնում իր հետ: Հիրավի, Արաքսը շոնդալից վազում էր ոչ միայն երկրի մակերևույթով, այլև ընդերքով, խոր ու աներևույթ

քարանձավների, որոգայթների, անդունդների միջով, որ ինքն էր փորել հազարամյակների ընթացքում և այժմ էլ նորերն էր քանդում՝ արձակ-ազատ ճանապարհ բացելու իր լեռնաշխարհի կապուտակ ձյուների համար:

Չիավորներին հաջողվեց կանգնեցնել քարավանը, թույլ չտալ մոտենալու անդունդի վրա կախված քերձ ու խարակներին, իսկ հետո ապահով ճամփա հանել:

Արաքսի աղաղակները շարունակվում էին՝ մեկ խուլ և հոգնաբեկ, ասես վերջին շնչում, մեկ էլ փոթորկի ուժգնությամբ: Թվում էր՝ նա իրենց ոտքերի տակ է, հիմա կճեղքի գետինը, դուրս կգա և բոլորին՝ ձի, մարդ ու անասուն, կառնի իր կատաղի գիրկը:

Հետո գնաց-սուզվեց ընդերկրյա տարտարոսները: Չայնն ու մարմինը աներևույթացան: Կարծես երբեք չէին եղել:

Սակայն գետի ողբերգական կանչն ու ցավերից աղավաղված կերպարանքը քարավանի արյան մեջ էին արդեն: Քայլում էին նրա հետ և շարունակում ճչալ, սարսափեցնել, մոլորեցնել, խոշտանգել, հուսահատեցնել, մթնեցնել աչքերը, կեղեքել սիրտը, խլացնել ականջները:

Այս անգամ քարավանը լուռ էր, որովհետև արդեն ուժ չունեթ օգնություն կանչելու:

Չէր աղոթում նաև, քանի որ ի խորոց սրտի ասվել էին բոլոր աղոթքները, հայտնվել բոլոր խնդրանքները, արվել բոլոր պաղատանքները, խոստովանվել բոլոր մեղքերը, տրվել բոլոր երդումները, այլևս բառ չէր մնացել, լեզուն չէր դառնում, նախադասություն չկար:

Լուռ և լուռ էր, որովհետև զգում էր գոյության անծայրածիր դատարկությունը:

Բնապատկերը դանդաղ և աննկատելի փոխվեց: Դարուփոս լեռնաստանը իր վայրի, արդեն արևից կիզված խոտ ու փշածաղիկներով ետ էր քաշվում, առաջ էին գալիս ցածրադիր, սահունորեն միմյանց շարունակող բլուրներն ու գոգահովիտները: Դարձյալ հայտնվեցին պես-պես ծաղիկները՝ սարերից խոխոջալով իջնող առվակների եզերքներին: Նրանց ջուրը սառն էր և քաղցրահամ: Մեր լեռների ձյուններն են, — մտածեցին, ուրախացան, տխուր կարոտեցին, թեև Սեպուհը, Մնձուրյան լեռնաշղթան, Մրնգորը և ծննդավայրի մյուս սարերն արդեն այնքան հեռու էին, որ մեծագոր արծիվն անգամ չէր կարող հասնել նրանց՝ կեռօգնեին թևերը, կկոտրվեին, և նա կես ճանապարհին կգահավիժեր ու կջախջախվեր անհայտ, օտար, անանուն լեռների գրկում: Միայն մարդկային սիրտն էր ի վիճակի թռչելու ետ և համբուրելու հարազատ ձյունների երեսը: Իսկ սիրտը դադրած ոտքերով շարժվում-գնում էր առաջ:

Որքան իջնում էին հարթավայր, այնքան բուսականությունը ճոխանում էր: Մասրենու առատ թփերը և հաճախակի հանդիպող վայրի փշատն ու գաճաճ թթենին աչք էին շոյում: Փշատենին զգլխիչ բուրուճ էր ու հարբեցնում, իսկ թուփը մեղր-մեղր կաթում էր հողին:

Ամառը եկել-փռվել էր արևի ոսկով ողողված հարթավայրում, ուրեմն՝ եկել է նաև բերքի, բարության ու բարիքի ժամանակը:

Ջարավանը ժպտաց:

Ներքևներում տարածվող դաշտերի ու հովիտների պայծառ տեսքից ձիերն աշխուժացան և արձակեցին լուսավոր-արծաթ վրնջյուններ:

Փչեց մեղմ ու զով քամին:

Մի արագիլ թռավ դեպի դաշտերը: Քարավանը զմայլված նայեց ձյունածերմակ թռչունի հետևից՝ երնեկ տալով նրան. երնեկ քո հորը, երնեկ քեզ, երնեկ քո որդուն:

Արև օրը մեջտեղից կտորվել, կես էր եղել և արդեն անցնում էր իր երկրորդ ճամփան: Շոգը պապանձեցրել էր խոտ ու ծաղիկ, մինչև իսկ առվակներն էին լռել, միայն առավոտից քարավանին ուղեկցող ծղրիղների միալար երգեցողությունն էր շարունակվում: Հեռավոր լեռների կապույտ ուրվագծերը ծածկվել էին տոթ ու տապ մշուշի շղարշով:

Հեռվում, արևից շիկնած դաշտավայրում, հանկարծ գալարապտույտ, օձից խայթվածի պես շարժվեց կարմրավուն մի ժապավեն: Առաջին ռոպեներին քարավանը կարծեց խաբկանք է, աչքի մոլորություն, ցնորք: Ժապավենը ծռոճվելով, ալիք-ալիք զնում էր դեպի դաշտի ոսկե հեռաստամում շոգից թմրած կանաչ բլուրները:

Վիրավոր Արաքսն էր, որ լսյժմ խոսյտում, թռվռում, ցատկոտում էր քարերի վրայով, ծիծաղում, մեջքը ծռնռելով պար գալիս:

– Ազատվեցա՛վ... Ազատվեցա՛վ...– տասնյակ բերաններով բացականչեց քարավանը:

Կարծես ինքն էր ազատվել, ինքն էր փշրել ստրկության շղթաները, ինքն էր այսուհետև ապրելու, կարծես արևը իր համար էր շողողում, իրեն էր բարևում դաշտը և նորից մեղմորեն թրթռացուլ քամին իր անունն էր տալիս՝ Օսան, Մամփրե, Հաբեթ, Ներսես, Վարդանուշ, Մզրո, Կիրակոս, Եփրեմ, Նանե, Փղրափիյուն...

Քարավանը սրեց ականջը: Գետի կողմից եկող զով քամին քսվում էր խոտ ու ծաղիկներին և Գալշոյի անունն էր անվերջ երգում ու կրկնում՝ Գալշո, Գալշո, Գալշո... Բայց Գալշոյի մարմինն ու դեմքը չկային, կար նրա խոսքը, որ ծաղկում էր կարոտի, սիրո ու վրեժի բառերով, չկային ցորյանի հասուն արտերի պես խարտյաշ մազերն ու իր երկնքի կապույտ ավազանում մկրտված աչքերը, ոգին էր թափառում լեռներում ու դաշտերի մեջ, արևի ճաճանչներով դուրս գալիս և նրա հետ մայր մտնում: Քամին փնրտում էր Գալշոյի ոգին: Դա ամենից խորն զգաց Մզրոն: Ցավ ու կարոտանքից Մզրոյի արյունը գլխին խփեց: Առանց հրացանն ուսից հանելու, նա բարձրացրեց փողի բերանը և կրակեց երկինք:

Ներսես Ալթունյանը խիստ հանդիմանությամբ, շեղ ու խոժոռ նայեց-նայեց նրան:

Մզրոն չպատասխանեց:

Քարավանն արդեն անցնում էր Արաքսի ափերով, մեկ այնքան մոտենում նրան, որ քարերին զարկող ալիքները ցայտում էին իր վրա, մեկ էլ հեռանում, ոտքը քաշում նրանից, մտնում հետզհետե ընդարձակվող դաշտը:

Շուտով Արաքսը հանդարտվեց, փովեց-պառկեց արևի տակ՝ ասես հանգստանում էր լեռների դեմ երկար ու դժվարին մաքառումից հետո: Լերկ ու քարուքռա ափերը փոխարինվեցին փարթած կանաչությամբ: Այս ու այնտեղ ուռենիների երկար ու խոնարհ վարսերը ջուր էին խմում: Գետն առաջացրել էր բարձր եղեգներով ծածկված ընդարձակ շամբեր, որոնք մեղմ խմբերգում էին արևի, քամու և երկնքի հետ: Տասնյակ մեծ ու փոքր կղզյակ-

ները զմրուխտի նման զարդարել էին Արաքսի կտրծքը, և քարավանին թվաց՝ նա գռի էր ու երջանիկ:

Երանության ժպիտ խաղաց նաև քարավանի դեմքին, և մի պահ նա մոռացավ ամեն ինչ, նույնիսկ Երզնկան, մինչև անգամ վախը, անցած երկարատև ճանապարհի տառապանքն ու կորուստները, մինչև անգամ եղեռնը, նույնիսկ հուսահատությունը, որ քայլ առ քայլ ավելի և առավել խորն էր ներծծվում իր արյան մեջ: Ոչ, դա մի պահ չէր, այլ տևեց բավականին երկար ժամանակ, որի ընթացքում քարավանը գնա՛ց-գնաց Արաքսի խնդուն ու կանաչավետ փեշերն ի վար դեպի Բազարան գյուղը, ուր գետը զրկում էր իր ամենախոշոր վտակին՝ Ախուրյանին:

Բազարանը դեռևս հեռու էր, երբ տաք ու խաղաղ օդը հանկարծ արեկոծ եղավ:

Առաջինը թուրքերին նկատեց Եփրեմը և, որոտալով, ձին քառարշավ քեց նրանց վրա՝ քարավանին կրծքով պատսպարելու:

Մի քանի րոպեի մեջ Արաքսի հովիտը դարձավ թեժ կովի ասպարեզ:

Եփրեմին, Մզոռյին, Ներսեսին, Պետոյին, Վահրամին, զենք կրող հայերին հաջողվեց թուրքերին թույլ չտալ քարավանին մերձենալու: Նման բուռն նախահարձակ դիմադրությունն անսպասելի էր զազանի այսորժանքով թշնամու համար, նա չգիտեր, որ դա հայերի փրկության ոչ թե բազմաթիվ տարբերակներից մեկն է, այլ միակը, անխուսափելին. պարտադրականը, որ նրանց մեջք էր տվել տակավին Վասպերտում, հիմա՛ւ, չ՛ այստեղ, և դարձյալ պիտի օգնության զար:

Թուրքերը հագիվ կլինեին երկու տասնյակի չափ, աչքերը ժանգ ու արյուն, մինչև ատամները զինված և բոլորն էլ ձիավոր: Մի քիչ պակաս էլ հայ խումբն էր: Մակայն նրանց թվաց, թե հայերը կրկնակի շատ են, որովհետև քարավանը խուճապահար բռնում էր ու քարեր շարժում, հայեղում և անեծք թափում վառված սրտի խորքերից:

Մի դեմք փայլատակեց Ներսես Աթուրյանի ուղեղում: Նրան թվաց՝ իր առջև, շատ մոտիկ, Իսմայիլն է: Նա դիմահար կրակեց և մահացու գետին տապալեց նրան: Բայց դա, որքան էլ Իսմայիլին նման ու հարազատ, ուրիշ թուրք էր:

Պետոն քարավանին ստիպում-հորդորում էր ետ քաշվել կռվի ասպարեզից, բայց որևէ հաջողության չէր հասնում: Տղամարդ և կին, երեխա ու ծեր, մի կույր ու խելագար զգացողությամբ արհամարհելով իրական մահը, ով ինչպես ու ինչով կարող էր, նետվեցին թուրքերի վրա:

Մամփրեի մանգաղը արյունլվիկ արեց մի բանի թուրքի և ձիերից մեկին, բայց նա չէր ուզում ձիուն ցավ պատճառել և զղջաց ու նզովեց իրեն՝ դժոխք ուղարկելով սեփական հոգին ու մարմինը:

Թուրքերը կռնակ դարձրին:

Հետապնդելով նրանց՝ Ներսեսը թիկունքից, հեռուներից, ասես զիշերվա խորքից լսեց բռթաբեր, խեղդված մի աղաղակ, որ կանչում էր իրեն ետ դառնալ.

- Նանե՛ն...

Նա, ասես թունավոր օձից խայթված, մի այնպիսի շեշտակի ուժով քաշեց սամձը, որ քիչ մնաց լիամը ձիու բերանը պատռեր: Ցավահար խրխնջալով, ձին հետևի ոտքերի վրա ծառս եղավ և

նախ գլուխը, հետո ամբողջ մարմինը ջղզղզիա ծռնուելով՝ շրջվեց: Առջևի ոտքերը դեռ գետնին չհասած՝ Ներսեսը պիրկ խթանեց ձին և սլացավ դեպի քարավանը:

– Նանե՛ն... – կես ճանապարհին դարձյալ լսեց նա, թե՞ իրեն թվաց:

Նա ձիուց ցած թռավ և, սրտում ահ ու դող, մոտեցավ հավաքվածներին, որոնց սեղմ շրջանակը իսկույն քանդվեց, մի կողմ քաշվեց, բացվեց՝ ճանապարհ տալով նրան:

Ներսես Ալթունյանի աչքերը մթագնեցին, սիրտը տեղահան եղավ, ականջները խլացան իր առջև պարզված տեսարանից. Նանեն մեկնվել էր կանաչ խոտերի վրա, ուժատված ձեռքերը հրացանի կոթին, և դենքն այնքան գունատ էր, կարծես հնուց անտի արև չտեսած մագաղաթյա մատյանում Աստծո օրհնությանը ծաղկազարդված գեղուհի լիներ:

Ներսեսին տեսնելով՝ Նանեն դալկահար ժպտաց:

Ծանր լուրջուն էր Արաքսի ընդարձակ հովտում:

– Ես կրակ բացի անոնց վրա... Մեկ քանիսը վար գլորվեցան... Անոնք վիրավորեցին ինձի...– դողդոջ ու նվաղուն շուրթերով ասաց Նանեն՝ կարծես մեղք էր գործել և ուզում էր արդարանալ:– Դու ինձի կհավատա՞ս, ուսուցիչ...

– Կհավատամ,– ցնցվեց Ներսեսը:

– Դու ինձի կսիրե՞ս, ուսուցիչ, իբրև քեզի նվիրյալ զինվոր և ֆիտայի... – քիչ հետո շշնջաց Նանեն:

– Շատ կսիրեմ,– խենթացավ Ներսեսը:

Նանեն երջանիկ ժպտաց: Եվ ոչ ոք չհմացավ. այդ թվում՝ նաև Ներսեսը, որ դա նրա ամենաթանկ երջանկությունն էր:

Ներսեսի աչքերը հանկարծ նկատեցին Նանեի շրջազգեստի կրծքի մասում ծաղկած կարմիր վարդը, որի թերթիկների պսակը վայրկյան առ վայրկյան ավելի էր բացվում ու մեծանում:

Նա իսկույն ծնկի իջավ և ձեռքն զուշորեն ու երկյուղով սահեցրեց շրջազգեստի օձիքի տակ, որտեղ սիրտն էր:

– Ամենևին չի ցավեր, – դժվարավ շշուշոց Նանեն:

Ներսեսի ձեռքը նրա սրտի վրա էր, հայացքը՝ դեմքին, որ արդեն նման էր մարմնելով հալչող մեղրամոմի:

Մի քանի բուպեից ժպիտի վերջին շողն անեացավ, և դեմքի մոմը պաղ կտրեց:

Ներսեսը հանեց ձեռքը և չոված մատները բռնեց սուկումից քարացած աչքերի առջև. ամբողջ ձեռքը տաք ու լերդ արյան մեջ էր:

Քարավանը ցրվել էր հովտում և լռել: Ոտքի վրա սև քար դարձել: Ոչ ոք չէր խոսում: Ոչ ոք չէր նայում մեկ ուրիշի: Ոչ ոք չէր գրուցում նույնիսկ իր հետ: Դա աշխարհից դուրս գտնվող, այնկողմնային լռություն էր՝ իր անհունությամբ խելահեղ և զարհուրելի:

Ներսես Աթուրյանը շրջվեց և տեսավ Պետոյին: Տեսավ Վահրամին: Հետո տեսավ Մզրոյին ու Հաբեթին: Տեսավ Կարոյին: Տեսավ Մամփրեին, որի ծերացած աչքերը լաց էին լինում:

Գլխով նրանց նշան արեց հեռանալ և քարավանին ճամփա հանել:

Նա առավ Նանեին ձեռքերի վրա և Արաքսի ծանծաղուտներով քայլեց դեպի այն կղզյակը, որի կամաչությանը, թվում էր, ոչ մի մարդկային ոտք դեռ չէր դիպել: Հասնելով այնտեղ՝ նա Նա-

նեին զգուշորեն դրեց վարսավոր ուտենու զով շվաքում փոված ծաղկուն խոտերին և պատյանից դուրս քաշեց դաշույնը:

Ներսես Ալթունյանը դաշույնով քանդում էր հողը, ասես իր սիտն ու հոգին էր փորում, խարխլում, քանդում, ավերում, կործանում: Հողը փխրում էր՝ մեծ ու փոքր քարերով, որ Արաքսն էր հեռուններից տիղմի հետ քշել-բերել այդտեղ: Փորում էր մատներով, դաշույն խփում, ճանկռում, հողն ու քարերը խորացող փոսից նետում դուրս և խոնարհված գլխով, ծալված ոտքերով, կորացած մեջքով աստիճանաբար սուզվում գետնի խորքը:

Պողպատ դաշույնը զարնվում էր քարին կամ մինչև կոթը, որ իր մարմնի հետ խաչ էր կազմում, մխվում հողի մեջ: Կրկին ու դարձյալ մխրճվում էր, քարին խփվելիս երբեմն սուրսայր բերանից կարմրակապույտ կայծեր արծակում, որոնք, Ներսեսին թվում էր, ծակում-այրում են իր աչքերն ու սիրտը: Աչքերը դեռ ոչինչ, թող կուրանան, անկորնչելի մութն ընկնեն, որովհետև էլ ի՞նչ մնաց տեսնելու, ո՞ւմ պիտի ժպտան, ինչո՞վ պիտի հիանան այսուհետև, ո՞ւմ պիտի կաթոզին գուրգուրեն, բայց սիրտը իրեն տակավին անհշաժեշտ է, սիրտը պետք է պահի-պահպանի նրան, կարոտ քաշի, նրա անունը տա ու կրկնի, հոգեհան լինի, խոսք-գրույց շարունակի նրա հետ, վշտից մաղ դառնա, աղոթք անի սուրբ բառերով և մինչև կյանքի վերջն ու վախճանը դողանջի-դողանջի նրա համար:

Դաշույնը մտնում էր քարերի արանքը, խարխլում քարերը իրենց բնում, քանդում հողը, առանց հանգիստ-դադար առնելու փորում ու քանդում, և որքան փոսի հատակը իջնում էր, նրա հետ էլ՝ Ներսեսի չորս կողմից սեղմված մարմինը, այնքան լռություներ

դառնում էր խորհրդավոր, բնությունը՝ դատարկ ու անմիտ, մենակությունը՝ անվերջանալի:

Քարը դաշույնի հարվածից տնքում էր և խուլ արձագանք տալիս փոսի պատերին: Հառաչում էր հողը: Որտեղ դաշույնն անգոր էր, Ներսեսի մատներն էին գուրծում՝ մտնում քարերի արանքը, պոկում հողակտորները ճանկերով, կուտակում և բուռ-բուռ թափում դուրս: Ուռնու վարսերն անուշ լեզվով սոսափեցին, սակայն Ներսեսին թվաց՝ նա է երգում՝ «Լուսինգա, լուսըդ շաղ-նա...»

Փոսի հատակն արդեն թաց էր, իսկ պատերը՝ ցուրտ ու համր:

Նա շարունակում էր խորացնել թաց և ցուրտ փոսը:

Որքա՞ն անդադրում բանեց, ո՛չ ինքը իմացավ, ո՛չ իսկ մայրամուտի շեմին կանգնած արևը:

Ներսես Ալթունյանը ոտքի ելավ: Փոսը իր ուսերից էր: Եվ նա զգաց՝ ինչպես են ծնկները դողում, ինչպես է սիրտն ալեկոծվում, ինչպես են աչքերը սթնում, ինչպես է հոգին մոխրանում: Առաջին անգամ նա բոլոր զգացմունքներով գիտակցեց ահավոր իրակա-նությունը: Եվ հավատաց, որովհետև իր առջև էր: Եվ չուզեց հավատալ:

Բարձրանալով փոսից, նա նայեց շուրջը. կղզյակը ծածկ-ված էր գույնզգույն և բուրյան ծաղիկների գորգով:

Նա ծաղիկներ ժողովեց՝ մեկը մեկից նուրբ ու գեղեցիկ, և նրանցով ծածկեց փոսի հատակը:

Հետո մոտեցավ Նանեին: Նայեց երկար: Ծնկի իջավ և ու-զեց տեսնել նենգ վերքը, որ նրան խլում էր իրենից և տառնում մութ աշխարհ, որտեղ փրկության ու վերադարձի ոչ մի ճանապարհ

չկա: Ներսեսը ցնցվեց. սառած-լերդացած վերքին բրաբիոն ծաղիկն էր, երջանկության բրաբիոնը, Նանեի երջանկությունը: Նա դողդողացող մատներով վերցրեց արյունոտված բրաբիոնը և պահեց շապիկի տակ՝ սրտին մոտ: Այսուհետև նա իր երջանկությունն է, օր ու գիշեր քայլելու է նրա հետ, իր բրաբիոնն է, նրա հետ է մեռնելու:

Նա վերցրեց Նանեին, որի սպիտակ աղավնու փետուրի մնան նուրբ ու քնքուշ մարմինն ասես մի կարճ ժամանակ քուն էր մտել ու պիտի շուտով բացեր աչքերը, և զգուշորեն իջեցրեց փոսի մեջ:

Նա դարձյալ ծաղիկներ քաղեց՝ ամենասիրունները, ամենահոտավետները, ամենագունեղները, և ծաղիկների վերնակով ամբողջովին ծածկեց նրան:

Առաջին բուռ հողը նա թեթև ու կամացուկ շաղ տվեց ծաղիկներին: Երկրորդ բուռ հողը թեթև ու կամացուկ շաղ տվեց: Երրորդ բուռ հողը թեթև ու կամացուկ շաղ տվեց, որ նա համկարծ չարքնամա և չտեսնի իրեն ծաղիկների գրկում: Ներսեսը հողը մաքրում էր քարերից, փխրեցնում մատներով և տարածում փոսի մեջ, որ հողը թեթև լինի նրա վրա: Հաջորդ բուռ հողը նա կամացուկ փոեց հողի վերնակին: Հետևյալ բուռ հողը թեթև ու կամացուկ շաղ տվեց: Հողը բուռ-բուռ թեթևորեն սփռում էր հողերի վրա, մինչև որ երեկոն իջավ և փոսը բերնեբերան լցվեց:

Նա ձեռքով հարթեց գերեզմանը և կարմիր, դեղին, սպիտակ, կապույտ ծաղիկներով զարդարեց:

Կարծես ոչինչ չէր պատահել, ոչինչ չէր փոխվել կղզյակում: Միրտը վշտացավ և ցավեց այդ անփութությունից: Տանջվում էր՝ ի՞նչ անել, ինչպե՞ս այլակերպել կղզյակի դեմքը: Ալեկոծ հո-

զին խաղաղվեց, ցավող սիրտը հանգստացավ միայն այն բանից հետո, երբ դաշույնը կիսով չափ խրեց գերեզմանի ծաղկավետ, փուխր հողի մեջ և տեսավ, որ այն այժմ ավելի, քան երբևիցե՝ նման է խաչի:

Ներսես Աթուրյանը շուտ եկավ և արագ քաղեց՝ գտնելու քարավանը: Գնում էր և իրեն ստիպում ետ չնայել, չշրջվել հանկարծ, ոչ մի անգամ ետ չնայել: Սակայն, ի վերջո, կամբքը խոնարհվեց զգացմունքների առջև: Երբ նա կանգ առավ և կարոտալի սրտով, անհուն վշտից վառվող աչքերով, անմխիթար արյունով շրջվեց, համատարած մութ խավարում անձկալի կոյակը չէր երևում արդեն և նաև խաչը չէր երևում:

Նա բղավեց Արաքսի հովտի սև լռության մեջ, ձիու նման խրխնջաց մարմնի տվայտանքը:

* * *

Քարսավանը Բագարանում մնաց մեկ շաբաթից ավելի, որոշապես հայտնի չեղավ՝ որքան ապրեցին այդտեղ, քանի որ կորցրել էին ժամանակը հաշվելու կարողությունը: Ժամանակն էլ իր հերթին չէր ենթարկվում չափ ու ձևակերպության, ջնջվել էին ցերեկ-գիշերվա սահմանները, լույս ու արև օրն անգամ նրանց զգացմունքների խառնարանում մթնակալել էր, մութ էր հոգիներում, մղձավանջ, անսկիզբ ու հարատև աղջամուղջ:

Բագարան գյուղը իր մախրողների պես համակ ամայություն էր: Բնակիչներն սպանվել էին կամ ջոնի արտաքսվել իրենց հողից, դաճձել վտարանդի, գաղթական, սլանդուխտ և հայտնի

չէր, որևէ կենդանի շունչ չկար՝ ականատես մարդ, գազան, հավք, սողուն չկար, որ իր լեզվով ասեր՝ փրկութեան ափ հասա՞ն արդ-յոք, քայլո՞ւմ են դեռ, ապրո՞ւմ տակավին: Չկար մեկը, որ խաբեր հարազատ խոսքերով, թե ամեն բան դեռևս վերջացած չէ: Հուսադրեր ու ժպտար: Քանդեր աչքերը բռռացնող, իրենց սրտին ամուր փաթաթված, ուղեղը կեղեքող թանձր-մութ վարագույրը և հեռվում, թեկուզև հեքիաթային ու անիրական հեռուներում ցույց տար լույսի շողը:

Լուսնունն էր ամեն ինչի տերն ու տիրակալը, այն անգութ և քարհոգի անձայնությունը, որը վաղուց ի վեր դարձել էր իրենց ուղեկից, մտել սիրտը, արյան մեջ, մարմնի ծալքերը և հրամայում, բռնանում էր չխոսել, լեզուն ծամել, համբանալ, պապանձվել, ձայնը փոքում խեղդել:

Մոտակայքում Ախուրյանը շաչ ու շառայունով ընկնում էր Արաքսի գիրկը, սակայն ոչ ոք չէր լսում նրա կորստյան ճչումնե-րը, չէր գիտակցում և չէր զգում ինչպես է նա հալվում, կորչում, մեռնում մեծ գետի մեջ:

Ոսկե ձին չկար՝ անհետացել էր ոտք ու գլխով, մոլորվել, խե-լագարվել վերջնականապես, հոշոտվել, հող դարձած ոսկորները քամուն տվել:

Ոչ մի տեղեկություն չկար՝ որտեղ են մեծ հայրուկապետ Անդրանիկը և Սեբաստացի Մուրադը:

Ոչ ոք չգիտեր՝ ինչ եղավ Երզնկան:

Ոչ ոք չգիտեր՝ այնտեղ՝ հեռուներում, զիշեր-ցերեկ ինչ է ա-դոթում մայր Եփրատը և ադոթո՞ւմ է արդյոք, թե՞ իր լեզուն էլ է պապանձվել, արյունը սառել երակներում, մայրական արգանդը չորացել:

Վարդավառ չկար, թեև արդեն լիակատար ամառ էր: Աստղիկ դիցուհին խռովել է, որ իրեն վարդ ու ծաղիկներ չեն նվիրաբերում: Ջրի, պտղաբերության, բերքահավքի աստվածները խռովել են մարդկանցից և իրավունք ունեն: Եկեղեցիները խռովել են՝ ինչո՞ւ իրենց շենն ու խորանները մարդիկ չեն զարդարում ցորյանի հասուն հասկերով, ծառերի դալար ոստերով, ինչո՞ւ չեն աղոթում, որ կարկուտ չլինի, մորեխը չոչնչացնի իրենց արտերը, ինչո՞ւ միմյանց ծաղկեփնջեր չեն նվիրում, անձրև չեն խնդրում, գոհաբերություններ չեն անում, իրար վրա ջուր չեն ցորում, երգեր չեն ասում, աղավնիներ չեն թոցնում, իրենց անասունների ճակատը հոտավետ ծաղիկներով չեն զեղեցկացնում, ինչո՞ւ են լռել-համրացել:

Ոչ մի տեղեկություն, որևէ նշան, թեկուզև հեռավոր մի ապացույց չկար՝ ապրո՞ւմ է հայ ժողովուրդը, թե՞ արդեն գոյություն չունի, իրենք վերջին տառապյալներն են և անհայտ է՝ մերան կլիմե՞ն ազգի հարո՞թյան համար, թե՞ սուջևում, այն լեռան ստորոտին իրենց ևս սպասում է հավերժական սև գիշերը:

Ամեն վաղ առավոտ Ներսես Ալթունյանը թամբում էր ձին և Արաքսի խճճված, բազմաճյուղ հոսանքով բարձրանում վեր, զլխամուր գնում դեպի երեկվա օրը: Նա որսնում էր ծաղկուն կղզյակը, որտեղ բաժանվեց Նանեից: Անդուլ որոնում էր և չէր գտնում: Նրանք շատ էին, մեծ ու փոքր, անհաշիվ, տարբեր և իրար նման: Որքան էլ աչքերը հարբում էին նրանց երկար նայելուց՝ շարունակում էր փնտրել, մեկ տխուր ժպտալ, որ, վերջապես, գտել է, մեկ էլ՝ ծանր հուսախաբություն ապրել. նա չէ, ուրիշ է, նման է, բայց նա չէ:

Չկար միայնակ ուռննիով կղզյակը: Ոչ մի տեղ չկար գույնգույն ծաղիկներով զարդարված հողե անկողինը, որը կրծքում բաբախող սրտից ավելի թանկ ու հարազատ է իրեն: Չկար խաչ դարձած դաշույնը: Արաքսը կարծես ջնջել էր նրան երկրի երեսից կամ շաղկապել անթիվ կղզիներից որևէ մեկին և կամ թշնամաբար, անգթորեն կուլ տվել:

Բայց Ներսեսը չէր կորցնում նրան հանդիպելու հույսը:

Ամբողջ օրը ձին քշում էր այս ու այն կողմ, գնում Արաքսի ծանծաղուտներով, երբեմն մտնում խոր հոսանքի մեջ, ուր ալիքները հասնում էին ձիու կրծքին և մինչև ծնկները թրջում իր ուղեբոր, մեկ էլ երկար կանգ էր առնում, ձիու հետ անշարժանում-քար կտրում և սևեռուն նայում մի կետի. ոչ, մենավոր ուռննին չէ, սուրցից քար է դաշույնի փոխարեն, ուրիշ հողակտոր է, ոչ իր սրտի հողը:

Մեկ-երկու անգամ Ներսեսը ձին քշեց սարերը, կրկին լսեց Արաքսի որոտմունքը, աչքերը սուզեց խորախոր կիրճի երախը և դարձյալ տեսավ նրան շղթաների մեջ, մութ ժայռերին կատաղությամբ գարկվելիս: Այնտեղից նա իջավ դաշտ՝ հայացքից բաց չթողնելով ոչ մի քար ու թուփ, ոչ մի ճահիճ ու կղզյակ, աչքերով ստուգեց ու քննեց գետահովտի յուրաքանչյուր առարկա, ամեն տեսարան, բոլոր անկյունները:

Եվ այդպես ամեն օր, վաղ առավոտից մինչև մայրամուտ:

Մի անգամ, ոչ շատ հեռվում, Արաքսի խիտցանց երակների մեջ նա նկատեց քիչ ուռուցիկ, հավկիթաձև, ծաղկազարդ ափսեի տեսքով փոքրիկ մի կղզի, որի վրա միջօրեի տաք քամուց ծփում էր կանաչ ուռննին: Քարքարոտ ծանծաղուտներով նա ձին արագ քշեց այնտեղ: Միրտը տակնուվրա էր եղել: Աչքերը ձիուց և իրե-

մից առաջ ընկած վազում-արշավում էին՝ վայրկյան շուտ հասնելու կղզուն: Նա չհամբերեց, թռավ ջուրը և ասիի քարերին կառչելով բարձրացավ վեր, չորեքթաթ գնաց կղզու լայնք ու երկայնքով՝ զգուշորեն ու խանդադատալից շոյելով խոտերը, մենավոր ուռնու բունը, ծաղիկները, գետինը համբուրող ուռնու վարսերը: Կարծես կույր էր և ուզում էր շոշափելով ճանաչել նրանց: Դաշույնը չկար: Հետո ի՞նչ, որ չկա: Ներսեսն անշարժացավ, կուրծքը հպեց կղզյակի կրծքին և քարացավ, պահեց շունչը, որպեսզի սրտով լսի նրա սրտի տրոփյունը, զգա նրա շնչառությունը, սրտով տեսնի, ոչ աչքերով, որոնք կարող են իրեն ստորաբար խաբել, նրա կապույտ գլխաշորը, ժպիտը, կարմիր վարդը: Ծանր լռություն էր և թանձր խավար կղզու կրծքի տակ: Ոչինչ չէր լսվում և ոչինչ չէր երևում: Նրա աչյունը մորմոքի ցավից ճչաց: Նա ճանկեց հողը: Մատներով փորում էր, հողը ետ տալիս, ճանկեռտում, փորում, քանդում, ավերում կղզին:

Դա իր սրտի կղզյակը չէր և ոչ էլ իր սրտի հողը: Ուրիշ կղզի էր, որ չէր կարող իր սիրտը սփռվել: Ուրիշ, օտար հող էր, որ չէր կարող իր սիրտը ծաղկեցնել:

Նա դանդաղ և փլված ոտքի ելավ:

Ուռնու հաստ ճյուղին կանգնած էր մի թռչուն: Բո՞ւ է, թե՞ մման է բվի:

Ներսեսը մոտեցավ, մեկնեց ձեռքը և բվանման թռչունին վզից բռնեց: Ամուր մատներով բռունցքի մեջ սեղմեց ու խեղդեց նրան: Արդեն չէր կասկածում՝ բու է: Հետո զցեց ոտքերի տակ և կոխկոտում էր, ճզմում, տրոքում, փետրավոր մարմինը խառնում հողի եևտ, քրքրում, հողին հավասարեցնում: Երբ ոտքը ետ քա-

չեց, բուն թափ տվեց այլանդակված մարմինը, թև առավ և, կարծես ոչինչ չէր պատահել, թռավ հեռուները:

Յուրաքանչյուր առավոտ Ներսես Ալթունյանի հետ արթնանում էր հոգին կեղեքող տխուր-տխուր կարոտը: Նա և իր ձին գնում էին: Հասկանում էր ձին՝ ինչ է որոնում տերը Արաքսի սարդոստայնում, ում և ինչի համար է նրա սիրտն այդպես մթակալել: Ներսեսը ոչինչ չէր հարցնում նրան: Եվ դա հարց էր, որ շնչահեղձ էր անում իրեն, օգնության պաղատանք: Չին խլշում էր ականջները՝ որսալու քանու հետ թռչող ամեն մի ձայն, լարում աչքերը մոտիկ ու հեռու տարածություններից, մեկ էլ կանգնում էր՝ խեղճանում, թուլանում, շփոթվում, ասես փոքրանում, լռում, անգորանում, ամաչում, որ ի վիճակի չէ սիրելի տիրոջն ուրախացնելու:

Մի օր էլ, երբ երկար ու ապարդյուն թափառումներից երեկոյան կողմ վերադարձան գյուղ, բոլորը խմբվել էին տներից մեկի առջև և այնպիսի աղմուկ-իրարանցում էր, որ սկզբում հնարավոր չէրավ ոչինչ հասկանալ: Դեռ հեռվից Ներսեսը լոկ մի ահարկու խոսք զանազանեց՝ «մահը բերանը տալ», որ դաժանորեն ասվում և կրկնվում էր շատ ու տարբեր ձայներով:

Ներսես Ալթունյանին տեսնելով՝ լռեցին աստիճանաբար:

Քարավանը շրջապատել էր յոթ կանանց, որոնցից երեքը մատաղահասակ աղջիկներ էին:

– Ուլքե՞ր են, – շփոթվեց Ներսեսը:

– Քիթ-գլուխներեն չե՞ս ճանչնար, թուրք են, – ասաց Եփրեմը: – Գետին եզերքը լվացք կընեին: Ես և Դանիելը քշեցինք այստեղ, որ մորթենք, ժողովուրդի սիրտը քիչ մը հովանա: Չեզի պիտի մորթեն, կլսե՞ք, ինչպես դուք մեզի մորթեցիք, – թուրքերեն դի-

մեց Եփրեմը նրանց՝ դաշույնը շողացնելով յուրաքանչյուրի աչքերի առջև:

– Մահը բերանը տանք,– նյարդայնությամբ ու կատաղորեն բղավեց քարավանը:– Մահը բերանը տանք:

Թրքուհիները կուչ էին եկել սարսափից և լեզուն փորը քաշել:

Եփրեմը բռնեց նրանցից մեկի երկար մազերից, կոպտորեն կոլուլեց ձախ բռունցքի շուրջը և բարձրացրեց դաշույնը նրա գլխի վրա: Թրքուհին ճչաց: Հայ կանայք, որ մինչ այդ Դանիելին և Եփրեմին չորս կողմից հրահրում էին ու վրեժի կոչում, աղեկատուր բղավեցին.

– Խղճա՛... սուրդ ետ առ...

Եփրեմի աջը, պատրաստ հաջորդ վայրկյանին մահարկու թափով հարվածելու թրքուհուն, կանգնեց-քարացավ օդի մեջ:

– Ասոնց չարասիրտ արյունը կուզեմ ծով տեսնել ոտքերուս առջև,– ժանտ ու դաժան ասաց Եփրեմը,– մերիճներուն ա՛նմեղ արյունը ինչո՞ւ կմոռնաք:

– Ինչո՞ւ կնահանջեք մեր վրեժեն,– ըմբոստացավ Դանիելը, որն արդեն դաշույնը պարզած մոտեցել էր թրքուհիների կծիկին:

– Վրե՛ժ... Վրե՛ժ...– գոռացին քարավանի տղամարդիկ ու կանայք:

Մի քանիսը արյուն թափելու կույր մոլուցքով շարժվեցին առաջ:

Թրքուհիների շուրջը քարավանի շղթան ավելի սեղմվեց:

– Մի՛ թուրքացեք, տղաք,– առաջ նետվելով գոչեց Ներսեսը: -- Մի՛ թուրքացեք, մի՛ թուրքացեք,– և նախ Եփրեմին, ապա Դանիելին ուժով մի կողմ քաշեց:

Դարձյալ տիրեց լռություն: Ներսեսը տեսավ իրեն ուղղված թշնամական հայացքները:

– Մենք հայ ենք,– հուզված և հեփեկ ասաց նա:– Իսկ ասոնք կին են: Մեր հավատամքը մարդասիրությունն է ծերերի, կանանց, երեխաների հանդեպ: Սպանելով սրանց՝ մենք ավելի շատ բան կկորցնենք հաստատապես, քան կշահենք:

– Ի՞նչ կկորցնենք,– ծաղրական ու խայթիչ մի ձայն լսվեց քարավանի շարքերից:

– Մեր սիրտը,– անվարան պատասխանեց Ներսեսը:

– Բավ է, որքան հնազանդ եղանք,– պոռթկաց Փղրափիյունը:– Մեր սիրտը և մեր հավատամքը մեզի կործանեցին:

– Ես հնազանդության կոչ չեմ ըներ,– արդարացավ Ներսեսը:

– Հապա սիրտը ի՞նչ է,– բղավեց Կիրակոսյաններից մեկը կուրծք ծեծելով:– Չեմ ուզեր աս մսի կտորը իմ մեջ և ձեզի մեջ թռչկոտե, ձանձրացանք այլևս:

– Մեր սիրտը մեղք չունե, որ մենք այսչափ դժբախտ ենք,– իզուր Ներսեսը ջանաց հանգիստ երևալ, նրա յուրաքանչյուր բառը խոսեց ջղագրգիռ խռովությամբ:– Մեղքը մեր թշնամու սրտինն է՝ այդ չար, անխիղճ, գազան սրտինը:

– Ներսես Աթուր,– առանց նրան նայելու խստաձայն ասաց Սգրոն և պատյանից դանդաղ քաշեց դաշույնը,– ասոնք պիտի մեռնին:

– Միայն իմ հոգին առնելուց հետո, Սգրո,– ասաց Ներսեսը և սուրն ու հրացանը նետեց գետին:– Սպանեք զիս:

Դա խաղ չէր: Ներսես Աթուրյանն ուզում էր, ինչ գնով էլ լինի, զերծ մնալ չարիք գործելուց, չարատավորել իր հայրենակից-

ների բարի, գեղեցիկ, առաքինի անունը, որոնք անհատակ հուսահատության մեջ, մարմնական և հոգեկար ցավերից կուրացած ու խելակորույս, ժողովրդի արդար վրեժի դրդումով միտք են դրել սրի ճարակ դարձնել թուրքի կանանց: Ներսեսի հոգում լուռ և աննկատելի շարժվում էր մեկ այլ զգացումը ևս. վերջին օրերը նրա մարմինն արդեն չէր կամենում ապրել, արյունը կանգ էր առնում կարծես, սիրտը փափագում էր ննջել, հանգստանալ լռել մեկընդմիջու, բայց նա տակավին չգիտեր դա և չէր գիտակցում:

Քարավանը կարկամեց: Եփրեմը, Մզրոն, Դանիելը շփոթված հայացք ձգեցին իրար, հետո՝ ընկերոջ գետնին լուռ պառկած զենքերին, բայց խուսափեցին նայել նրա աչքերի մեջ, որ այդ պահին սաստիկ տխուր էին և միայնակ:

– Ասոնց ելքայրները և անուսիները կոտորեցին մեր ազգը:

– Խլեցին մեր եկիրը:

– Ամայացրին մեր Երզնկան:

– Չորացրին մեր Եփրատը:

– Շղթայեցին մեր Սեպուհ լեռը:

– Կլան՞ս, Ներսես:

– Ո՞ր են, ո՞ր են սիրասուն զավակներս՝ Պողոսը, Մաքրուհին, Գեղամը, Աննան:

– Հարազատներս կուլան հոգիս մեջ:

– Ասոնք թուրք են, կհասկնա՞ք ինչ ըսել է թուրք:

– Արյունի տեղ արյուն, աչքի տեղ աչք, ակռայի տեղ ակռա, մահի տեղ մահ:

– Որտե՞ղ ես, Շահանդուխտ, ձայն տուր սրտիս:

– Եթե ասոնք ապրին, ես պիտի մեռնիմ:

– Ես պիտի խելագարվիմ:

- Ինչո՞ւ չես խոսեր, Ներսես:
- Եթե ասոնք ապրին, կցնկնեն նոր թուրքեր:
- Մոսկալի է:
- Նոր չարիք:
- Նոր յաթաղան:
- Նոր թույն ու նախանձ:
- Նոր խորշակ քամի:
- Նոր ժանտախտ:
- Նոր ամայություն:
- Նոր եղեռն:
- Նոր սուգ և ողբանք:
- Նոր խավար:
- Նոր հրդեհ:
- Նոր անապատ:
- Աշխարհը մեղք է, մեզանից հետո ապրողները շատ մեղք

են:

Ներսես Աթուրյանը լուռ էր և անզեն, և այդ լռությունը զսպում-կաշկանդում էր մարդկանց՝ իրագործելու իրենց մտադրությունը:

- Նրանք սպանեցին տիգրանակերտցի Հեթումին:
- Մամիկոնին:
- Սառային:
- Դազարոսին:
- Որտե՞ղ են ծնողքդ, կինդ, գավակներդ, ինչո՞ւ չես խոսեր, Ներսես Աթուր, ինչո՞ւ կլռես քարի պես:

Ներսեսի հոգին տակնուվրա եղավ, աչքերը լցվեցին հարազատների կարոտալի և կսկծացնող պատկերներով, դանակ խրեցին սիրտը:

- Մուսանը չկա:
- Արամը չկա այլևս:
- Գրիգորի արևը նևցավ:
- Մեր ոսկե ձին խելագարվեցավ:
- Մինասը չկա:
- Տիկին Սիրունյանը ինքնասպան եղավ վշտեն:
- Գալշոն հողին տակ է:

Գալշոյի անունը լսելով՝ Ներսեսի արյունը ճչաց, նա մատները կոտրելու աստիճանի խտացրեց բռունցքը, ինչպես սրի երախակալն էր բազմիցս սեղմել թշնամուն խոցելու պահին, և դաստակը վրեժով ու ատելությամբ, վագրի թաթի նման ցատկեց առաջ:

- Գալշոն մեր վրեժին կսպասի:
- Տաճատը:
- Օհաննեսը:
- Էվգինեն:
- Երվանդ Իկիլիկյանը:
- Ժիրայր և Գեղամ եղբայրները մեր վրեժին կսպասեն:
- Իսկուեին:
- Սեդրոսը:
- Կասպարը:
- Մեր մահատակ ժողովուրդը մեր վրեժին կսպասե:
- Հակոբը:
- Սարգիս ճանճապանյանը:

- Շահենը:
- Ղուկասը:
- Մեր հողը մեր վրեժին կսպասե:
- Մառան:
- Քեռի Հմայակը:
- Մամիկոնը:
- Շավարշը:
- Հեթումը:
- Նանեն, - միաշունչ ձայնեցին մի քանիսը:
- Նանեն, - կրկնեց ամբողջ քարավանը՝ աչքերը չորս կողմից

հառած Ներսես Ալթունյանի վրա:

- Նանեն, - վիրավոր գազանի պես մռնչաց Ներսեսը և առանց որևէ մեկին նայելու, ցավից կռացած մեջքով քայլ արեց դեպի իր սուրը:

Մի ծանր և անրակուռ ոտք սուրը սեղմեց գետնին:

Ներսեսը բարձրացրեց գլուխը:

Մամփրեն էր:

- Արթնցեք, կխնդրեմ ձեզի, ելեք դժնիության գիրկեն, - հուզված և աղերսալի ասաց Մամփրեն, - Չաղտոտենք մեր պարկեշտությունը գեշ արարմունքով: Ինչ կընես՝ քեզի կընես, վատ կընես՝ նորեն քեզի և միայն քեզի կընես: Վրեժը իմ սրտի մեջ ալ կեփվե, - ասաց Մամփրեն, - ճահառուակ հարազատներու հառաչանքները կլսեմ ցերեկ-քիչեր, անդադար կլսեմ և քուն չի գար աչքերուս: Աստված մեզի արդար և բարի գործերուն համար ստեղծած է, - ասաց Մամփրեն, - անսանք անոր ձայնին և խունկն ու մոմը իրենց ճամփան կգտնեն: Սպանելով ասոնց՝ կսպանեք զիս և կսպանեք ձեզի չարության լեղիով, - ասաց Մամփրեն, - և մեկ

անգամ ևս կսպանեք մեր մեռածները, անոնք մութ հողերեն, ծանր քարերի տակեն, գետերի սառը հատակեն, շիկացած ավազների գիրկեն կպաղատեն ողջերու՝ մինչև մեր վերջին շունչը մարդ ապրիլ և գազան չըլլալ: Ելեք, գնացեք ձեր տուները,– ասաց Մամփրեն քրքուհիներին իրենց լեզվով,– մեզ թո՞ւրք կարծեցիք, անիրավներ, դե չքվեք ձեր գազանների քով: Օ՛, Աստված, ինչ անգութ և արյունարբու հարևան ստեղծեցիր մեզի համար:

Թուրք կանանց կծիկը քանդվեց, կասկածանքով ոտքի ելան, ետ-ետ գնացին՝ աչքերի մեջ չարություն, վախ և խնդություն, միմյանց հրմշտելով փախս առան:

Ոչ ոք փորձ չարեց նրանց կանգնեցնել:

Ոչ ոք չշարժվեց տեղից:

Ոչ ոք բառ չասաց:

Ոչ ոք չնայեց կողքինին:

Ոչ ոք չհաշտվեց իր հետ:

Բոլորը հասկացան և ներեցին իրար:

Մութը տարածվելու հետ ամպերը խտացան, և անձրև եղավ:

Քարավանը լուռ կանգնել էր անձրևի տակ: Վաղուց անձրև չէր եկել: Խոտը խարկվել էր: Հողը՝ ծարավից ճաքճքել: Նա կանգնել էր, չէր խոսում, չէր շարժվում նույնիսկ այն ժամանակ, երբ համատարած սև մութ էր, և անձրևը խոշոր, զովասուն կաթիլներով շոնդալից թափվում էր երկրի վրա: Անձրևը լվանում էր նրանց բաց գլուխները, կուրծքը, ուսերը, մեջքը՝ ասես փաղաքշում, մխիթարում, սիրում էր իր որդիներին: Նրանք չէին հիշում, թե վերջին անգամ երբ են արժանացել այդպիսի ողորմած և բարեգութ վերաբերմունքի: Գուցե եղել է, բայց այնքան շատոնց, որ թվում է չի եղել երբեք:

Անոնք պիտի կորսվին, դու պիտի կենաս:

Լուսացավ և արևը ծագեց:

Բազարանը այնքան միս-մենակ էր ու թախծոտ, կարծես վերջին օրերը ոչ ոք չէր նայել նրան:

* * *

Ինչպես որ խոր անդունդին կախվածն է իր վերջին ուժերը, կամքը, հույսն ու մկանուկները լարում՝ բարձրանալու փրկիչ ժայռի վրա, այդպես էլ քարավանն էր թույլ և ուժահատ ոտքերից սրտով առաջ ընկած շարժվում, գալարվում, ձգվում դեպի իր ազատութ-
յան ափը: Նա գիտեր, որ իր և կախվածի ուժերը կարող են հատ-
նել, անդունդի մութ ու սուկալի երախը միշտ պատրաստ է ընդու-
նելու իր հալածական մարմինը, բայց համառորեն գնում էր՝ ստ-
վահար, դուրս ընկած աչքերով, լուռ գնում էր որպես ցնցոտիա-
վոր ուրվական: Եղավ ժամանակ՝ նա ցանկանում էր կանգնել և
այլևս ոչ մի քայլ չանել, թեկուզ գորշ գայլերը գան ու հռչատեն ի-
րեն, իսկ այժմ, երբ սուրբ Արարատը օրավուր մոտենում էր, խո-
շորանում, բացում քեները՝ իրեն գիրկն առնելու, նա, ավելի, քան
երբևիցե, ուզում էր փրկվել, ապրել-ապրել, նոր կյանք սկսել, նոր
տուն շինել, նոր ծառ տնկել, նոր ընտանիք կազմել, նոր երեխա-
ներ ունենալ, նոր հող մշակել, նոր երգ ասել, նոր հաց թխել, նոր
ուրախություն երազել:

– Չեմ կարող, – ասաց Վարդանուշը, – և չեմ ուզեր:

– Ի՞նչ չես ուզեր, – հարցրեց Օսանը:

– Չեմ ուզեր դարձյալ սամուսնանալ, կհասկնա՞ս, չեմ կարող:

Օսանը լռեց, որովհետև հասկացավ, որ դա Վարդանուշին չգոհացրեց: Նա ցանկանում էր, որ մտնեն իր սիրտը, հոգին, արյունը և զգան ինչ կա այնտեղ, որ չի ասվի լեզվով և չի պատմվի գրով:

- Չե՞ս հասկնար:
- Շատ լավ կհասկնամ:
- Հապա ինչո՞ւ կլռես:
- Ես չեմ լռեր: Ես կարտասվիմ:
- Ո՞ւմ համար:
- Բոլորիս:

- Դուն երջանիկ ես, որ տակավին արցունք ունիս,- ասաց Վարդանուշը,- իսկ իմը չորցավ: Աչքերիս և սրտիս վրա չոր աղը մնաց՝ դառնություն, կսկիծ, լեղի, մղկաւանք: Լեղի-կսկիծ սրտով և աչքերով ինչպե՞ս կրկին ամուսնանամ, ինչպե՞ս սիրեմ, ինչպե՞ս - նորեն հիշանամ: Չեմ կարող և չեմ ուզեր նաև: Պիտի ապրիմ մեռակ՝ հոգիս վրդոված, ձեռքերս ծոցիս, զլուխս քարշ արած: Եվ ամեն իրիկուն պիտի նայիմ ետ: Մեռած ամուսինս մութեն պիտի գա, և մենք պիտի զրուցենք մինչև առավոտ: Մեռած երեխաներս մութեն պիտի գան, և մենք պիտի գուրգուրենք իրար ամբողջ լույս ու արև ցորեկը: Եվ ես պիտի հարցնեմ ամուսն՝ ինչպե՞ս եք, ձագուկներս: Եվ պիտի լսեմ պատասխանը՝ լավ ենք: Հետո անոնք պիտի հարցուն ընեն ինձի՝ դուն ինչպե՞ս ես, մերիկ, Եվ պիտի մեկ և միայն մեկ պատասխան տամ՝ դուք լավ եք, ուրեմն ես ալ լավ եմ:

Աթլասը կաշի-ոսկոր էր դարձել, զանգուլակները դողանջում էին և կուրծքը հիմա ավելի մեծ ու փարթամ էր երևում:

Ինչպես ամիսներ շարունակ, այնպես էլ այժմ, ամեն երեկո, երբ մի տեղ կանգ էին առնում գիշերելու, Օսանը կթում էր Աթլա-

սին, որ վաղուց կով չէր, այլ քույր ու ընկերուհի էր իրեն, և կաթը բաժանում քարավանին: Շոգ, հոգնեցուցիչ, քրտնակոխ ճամփորդությունից հետո, որ ամբողջ օրը շարունակվում էր գրեթե առանց դադարի, ամեն մարդ նրա կաթին սպասում էր ծարավ ու սովից նվաղած սրտի անհամբերությամբ:

– Աստված ջուրի չափ երկար կյանք տա Աթլասին, ամեն քալած տեղը կանաչ և ծաղիկ թող բուսնի:

Օսանի հոգին երջանկանում էր այդ օրհնանքից: Նա լուռ ժպտում էր: «Մեռնիմ քեզի»,– շնջում էր նա՝ երեսը կովի տաք մարմնին քսելով:

Արաքսը հեռացել էր, բայց բոլորը գիտեին, որ նա շուտով նորից է մտնելու: Իրենք պետք է անցնեն գետը և ոտք դնեն արևելյան հողերի վրա, Արարատի մյուս երեսը, որտեղ էջմիածինն է, Երևանը: Իրենց հույսը: Իրենց փրկությունը: Իրենց ապագան:

– Մենք Արարատն ենք:

– Արարատը մենք ենք:

– Եթե օր մը զավակ ունենամ, անունը պիտի դնեմ Փղրափիյուն-Արարատ,– ասում էր վաթսուներեքամյա կաշեգործ Փղրափիյունը:

– Մեկ ոտքդ գերեզմանը, զավակ ինչպե՞ս պի ունենաս,– հետաքրքրվում էր Չուքուրյան Հովակիմ աղան՝ քողարկված նախանձով:

– Զեզի ի՞նչ:

– Չիմանա՞նք:

– Իմ որդիին երեխան իմ զավակը չի՞ ըլլար:

– Կըլլա, բայց...– Հովակիմի սիրտն ավելի էր նեղվում այդ իրական հեռանկարից:

– Կնախանձե՞ս:

Հովակիմ աղան լռում էր:

– Ինչո՞ւ կնախանձես:

Հովակիմը չէր պատասխանում, լռում էր, և թախիժ-տխրություն էր իջնում դեմքին:

– Մեր դրկիցության հիսուն և ավելի տարիներու ընթացքին ես քեզի մեկ անգամ վատություն ըրի՞:

– Ոչ:

– Իմ հարազատները՝ բոլոր տունեցիք, Ակնի քույրս ու եղբայրս, որ հաճախ կուգային մեզի, կաշեգործ ընկերներս, ամուսնության քավորս, որ ամեն կիրակի, կհիշե՞ս, թութի ծառին շվաքը ինձի, երբեմն ալ քեզի հետ թավլու կխաղար, մեծ ու պզդիկ հորեղբայրներս, հացթուխ Աքրիբազը, որին շատ կսիրեի, Մանուշակ տուտուն՝ մեր տունի գրբացը, բանաստեղծ Չաքար Արիստակեսը, որին կհարգեի իր քաղցր լեզվին և պայծառ մտքին համար, կուգես բոլորի՞ն հիշեմ, չըլլար, լուսանկարիչ Ափրահամ Մեխպոսյանը, ան Ասպրամին ազգականն էր, Մարութ քահանան, գորգավաճառ Վրթանեսը, ան մեր տուն կուգար Նազելի և Մերոբ զավակներուն հետ և սառը ջուրով խահվե կխմեր, Հրաչուհին, կհիշե՞ս Հրաչուհին, իմ Ակնի քրոջս ամուսնու քույրն էր, Երզնկա կրնակվեր, վերին թաղը, ան մի լույս աղջնակ ուներ՝ Սեդա, մորմե անտարակույս գեղեցիկ պի ըլլար շուտով: Ես Սեդային, քիչ ալ մեծեար, հարս պի ընեի ինձի, և ահոր ու իմ Գարբիելի սիրուց պիտի ծնվեր Փղրափիյոն-Արարատը, Քեմախ-Բողազում

մայր և աղջիկ նահատակվեցան և սիրտս կտոր-կտոր ըրին, սա բոլոր մարդիկը քուկիններուդ օր մը ծուռ աչքով նայեցա՞ն:

– Ոչ:

– Հիսուն և ավելի տարիներ իբրև եղբայր չապրեցա՞նք մեկ-տեղ:

Հովակիմ աղան լռում էր:

– Իմ և քու պարտեզների միջև ցանկապատ կա՞ր:

– Չկար:

– Իմ տունը քու տունը չէ՞ր, իմ արևը քու արևը չէ՞ր:

– Իրավ ես:

– Մարդ Աստծու, օր ծերության, մեր աս դժբախտության մեջ հապա ինչո՞ւ նախանձություն կընես ինձի, չե՞ս ամչնար:

– Ներիր, Փղրափիյուն,– ի վերջո ասաց Հովակիմը:

– Պի չի ներիմ:

– Նախանձությունս արդարացում ունի:

– Նախանձությունը ինչպե՞ս կարդարանա,– զարմացավ ու զայրացավ Փղրափիյունը:

– Դուն երջանիկ ես, Փղրափիյուն, իսկ ես շատ դժբախտ եմ,– ասաց Չուբուրյան Հովակիմ աղան:– Աշխարհումս չկա և չի լինելու մեկ մարդ-հարազատ, որ իմ անունը վերցնե իր վրա և վրան Արարատ ավելցնե: Բոլոր հարազատներս մեռան, Չուբուրյաններու ծառը չորցավ: Ես մոռացության եմ դատապարտված, կհասկնա՞ս, ես վաղը չկամ այլև: Հովակիմ Չուբուրյանը վաղը ոչ ևս է:

– Ներիր զգացմունքներուս կուրբությունը, կխնդրեմ, ներիր անխելամտությունս,– շփոթվեց ու խեղճացավ Փղրափիյունը:– Եթե օր մը Աստված ինձի երկրորդ զավակը տա, կերդվեմ մեր

Երզնկայով, անունը պիտի դնեն Հովակիմ-Արարատ, դուն շարունակվելու ես ինձի պես, մտիկ ըրե, ես, Արարատը և դուն անմահ ենք:

– Ընորհակալություն, Փղրափիյոն,– չափազանց հուզվեց Հովակիմը,– դուն միշտ ինձի հասեր ես նեղ և թշվառ օրերուն մեջ:

Ամառ էր, շոգ: Անապատ հողեր էին, փշերով ծածկված ադուտներ, շիկացած քարադաշտեր և պարբերաբար հանդիպող փոքր, իսկ երբեմն էլ բավականին ընդարձակ շամբուտներ, որոնց մարդաբոյ եղեգները շնկշնկում էին տաք քամուց: Երբ քամին սաստկանում էր, եղեգնուտները հեծում էին չարագուշակ ձայնով, թվում էր՝ նրանց մեջ դարանակալել է բուն: Միակ հուսատու տեսիլը Արարատի սպիտակ և շողշողուն ձյունն էր, որ գուլացնում էր քարավանի սիրտը, մխիթարում աչքն ու հոգին իր հավերժական խաղաղությամբ:

– Աս ի՞նչ երկիր եկանք, բարեբեր հող չկա:

– Խոտ ու ծաղիկ չկա:

– Անտառ ու պարտեզներ չկան:

– Աղբյուրներ չկան:

– Աստծու տված բնությունեն չեն դժգոհեր,– ասաց Մամփրեն:

– Ամեն տեղ տատասկ:

– Մեռած հող:

– Քար:

– Ցամաքություն:

– Հողը մենք պիտի կենդանացնենք՝ քարերը փոշիացնելով, խոտ-ծաղիկը մենք պիտի ծաղկեցնենք,– ասաց Մամփրեն:– Ան-

տառը, պարտեզները մենք պիտի կանաչեցնենք, աղբյուրները մենք պիտի բխեցնենք ընդերկրյա ջիղերեն:

Արարատը նրանց ընդառաջ էր գալիս ժամ առ ժամ: Դա հատկապես նկատելի էր առավոտները, երբ արթնանում էին հոգնած քնից և տեսնում նրան ավելի պարզ ու մոտիկ, կարծես նա գիշերն էլ էր քայլել դեպի իրենց: Ջինջ ու կապույտ հեռաստաններում նա երևում էր իր ամբողջ ամոթխած մերկոթյամբ, որ լվացվել, բայց դեռ չի հասցրել ծագող արևի ոսկենշուշ թիկնոցը կույս ուսերին և կրծքին առնելու:

Փոքրիկ տղան և չալպտուրիկ շունը քայլում էին իրար գրկած՝ դունչ դնչի, սիրտ սրտի, աչք աչքի:

Կիրակոսյանների սայլը ճռնչում էր մահամերձի հիվանդ և տկար շնչառությամբ: Նրա մեջքին այլևս ոչ մի առարկա չկար. ամեն ինչ քանդվեց, դանդաղ այրվեց, կորավ ճանապարհի փռչիներում, մաշվեց, աննկատելի ցնդեց:

Դաժան ամառ էր: Հատկապես տանջալից էին կեսօրվա ժամերը, երբ արևը հրդեհում էր օդն ու գետինը, և գոյություն չունեի մի սովերոտ անկյուն՝ պատսպարվելու, շունչ քաշելու համար: Սովից առավել անտանելի էր ծարավը, որ թուրքի պես տանջում էր մարդկանց: Ապրում էին երբեմն հանդիպող ճահիճների թանձր ու լեղի ջրով: Ամենահուսահատական բռպետներին հիշում էին իրենց ծննդավայրի սառնորակ աղբյուրները, Եփրատի զովաստուն գիրկը, իրենց այգիների հով սոսափյունը, և դա թեթևացնում էր նրանց տոչորվող հոգին: Մի պահ թվում էր՝ այնտեղ են: Սակայն հաջորդ ակնբախքին դարձյալ զգում էին ամբողջ դժնի իրականությունը, և ճանապարհ ու փրկություն չկար. հավիտենական էլ ժամանակը և տարածությունն անվերջանալի:

Ներսես Աթուրյանի սիրտը, զգացմունքները, հոգին ճնշում էին երկու ծանր ու մութ ուժեր՝ մենակությունը և բուն: Եվ նա տխուր էր ու հուսահատ, ինչպես մահվան դատապարտված հիվանդը, որ, թեև դեռ ամուր ոտքերի վրա, պարզ գիտակցում է իր վիճակի անելանելիությունը, տեսնում՝ արդեն կանգնած է հավերժորեն փակ դռան առջև:

Մենակության սպիտակ շշուկը նրա մեջ վաղուց էր ապրում, բայց առավել զգալի եղավ Նանեի մահից հետո, երբ, ինչպես իրեն թվաց, աշխարհը վերջնականորեն դատարկվեց, ամայացավ, լռեց հոգեմաշ լռությամբ: Ո՞ւմ հետ խոսեր, քարերի՞, փշերի՞, քարո՞ւ, ճահիճների՞, հող ու ավազների՞... Ուրյնիսկ ինքն իր համար դարձել էր լուռ և ունայն: Նրա մարմնի խորքերում մենակության շշուկը երբեմն վերածվում էր լուռ ռռնոցի՝ կրծում սիրտը, երակները քաշքշում, աղ ցանում արյան վրա: Նա կանչում էր, ձայն տալիս իրեն և մեռածներին ու ողջերին, ում գիտեր և ում չգիտեր, հներին ու նորերին, բայց ոչ մի արձագանք, պատասխան չէր լսվում: Մի կարճ ժամանակ, որ թվաց ամբողջ երկար կյանք, Նանեն բացեց նրա հոգու չորս կողմից փակված դռները, և կյանքն ու բնությունը լաց-ծիծաղով խուժեցին ներս: Նա էլ, իր մահով, բոլոր դռները ներս ու դրսից խուլ փակեց. այժմ լռություն էր այնտեղ, չէր շարժվում որևէ ձայն ու աղմուկ:

Իսկ բուն, որ չկար, բայց կար, նրան տանում էր իր հետևից, և նա հնազանդ ու լուռ հետևում էր նրան, չէր բողոքում, չէր ըմբոստանում այլևս, չէր մաքառում ապլլելու համար: Նա իրեն չէր պատկանում՝ ոտքերը իրենը չէին, սիրտը իրենը չէր, աչքերը իրենը չէին, ամբողջապես բվինն էր արդեն:

– Ի՞նչ կխորհես, եղբայրս:

Ներսեսը շրջվեց և տեսավ կողքից քայլող Վարդանուշին:

– Այսօր մռայլ կերևաս ավելի, քան երբևիցե:

Ներսեսը նայեց շուրջը, ցաքուցրիվ քարավանին, որ դանդաղ շարժվում էր շեկ ու պապակ հողերով:

– Կըսեն սահմանային Արաքսը հեռու չէ:

Քարավանի մեջ Ներսեսը ինչ-որ բան էր աչքերով որոնում:

– Մենք Արարատի շուքին տակ ենք:

Ի՞նչ էին որոնում աչքերը:

– Երբ անցնենք Արաքսը, փրկված ենք այլա:

Նա հասկացավ, որ աչքերը որոնում են կապույտ գլխաշորը:

– Դու՞ն Ժողովուրդը փրկեցիր, Ներսես, ապրողներս քեզ չենք մոռնար:

Կապույտ գլխաշորը չկար՝ ոչ իբրև երկնքի ծվեն, ոչ իբրև ծաղիկ և ոչ իբրև թռչուն:

– Թող նոր սեր ծաղկե սրտիդ խորքը, տխուր և ազնիվ եղբայրս, սերը կշարունակե կյանքը, մոռցիր այն, ինչ չի մոռացվեր բնավ:

Կեսօրին քարավանը հասավ գաճաճ թթենիներով շրջապատված մի կիսաքանդ շինության, որ ժամանակին իջևանատուն էր եղել և վաղուց կորցրել իր նշանակությունը: Ծառերից մեկի տակ մեռած աղբյուր կար: Փչեց խորշակ քամին՝ տաք հողն ու ավազը բարձրացնելով երկինք:

Արևը թշնամի էր իրենց:

Քամին թշնամի էր:

Ամբողջ բնությունը թշնամի էր: ~

Միայն Արարատի ձյուններն էին իրենց կարեկից ու բարեկամ, նրանք էլ այնքան բարձր էին ու հեռու, որ չէին կարող օգ-

նության ձեռք մեկնել, ընդառաջ գալ իրենց կոտորված ու ավերակված թև-թիկունքին:

Բավականին հեռացել էին նախկին իջևանատնից, քամին թեև դադարել, բայց դեռ առաջվա պես արև էր ու տապ, երբ թուրքավարի վրա հասավ թուրքը: Ոչ ոք նրան չէր սպասում: Նա գրոհեց հանկարծակի՝ նախ թունոտ գլուխը, հետո, անմիջապես էլ, ամբողջ զագան մարմինը ասես բարձրացան գետնի տակից և ֆշշալով սողացին առաջ:

Ներսես Ալթունյանն ուշաբերվաց մենության ծանր թմբիրից և իսկույնեթ հասակացավ, որ դա իրենց վերջին կռիվն է, վերջին փորձությունը: Մեկ-երկու վայրկյան անց նրա զգացմունքը ջնջեց քարավանի անցած ամբողջ մահաշունչ ճանապարհը. ոչ թե վերջինն է, այլ առաջինը, որ չի ունենալու շարունակություն, այժմ և միայն հիմա պետք է որոշվի իրենց կյանքն ու մահը: Մինչև թուրք վիշապը կմտտենար, և ինքը գործողության հրամաններ կարձակեր, թեև Հարեթը, Մզրոն, Եփրեմը արդեն ընդառաջ էին գնացել թշնամուն և մի քանի գնդակ կրակել, նրա զգացմունքը ոլոր-մոլոր եղավ տարօրինակ ու խորհրդավոր ցնցուսից. նա սարսափեց քարավանի ճակատագրի համար՝ մի՞թե վերջ է ու վերջակետ, և, հակառակ դրան, մի երանական դող անցավ սրտի միջով. եկել է պահը իր կյանքը դնելու զոհասեղանի վրա, հրեկ շուտ էր այդ անել, այժմ Աստծո և բվի ժամանակն է, վաղն արդեն շատ ուշ կլինի:

– Վահրամ, Դանիել, Լևոն, որտե՞ղ եք... Խաչատուր, Կարո, Արշակ, Թորգոմ,– կանչեց նա մոլեգնաբար և զգաց, որ ձայնը խլացավ հաճախացող կրակոցներից:

– Ի՞նչ կուզես, Ալթուն,– ձին սանձելով՝ հարցրեց Վահրամը:

– Թող մեկը ժողովուրդը արագ տանե դեպի Արաքս:

– Ո՞վ...

– Ո՞վ,– հարցը կրկնեց Ներսեսը և իսկույն էլ պատասխանեց,– Մամփրեն:

– Ես պի կռվիմ,– ասաց Մամփրեն, որ այդ վայրկյանին նրանց մոտ էր:

– Ժողովուրդը անկանգառ կուղեկցես ահավասիկ այս ուղղությամբ,– վճռականորեն ասաց Ներսեսը և ձեռքը պարզեց հարավ-արևելակողմ:– Արաքսը ձեզ կսպասե:

– Ես պի կռվիմ, տղաս,– իր ցանկությունը նույնքան վճռաբար կրկնեց ծերունին:

– Վիճաբանության ժամանակ չէ, Մամփրե,– ավելի խիստ ասաց Ներսեսը:– Ժողովուրդի կյանքը քեզի կհանձնեն:

Մամփրեն դժկամ և գլխիկոր հեռացավ: Շուտով Ներսեսը նկատեց՝ ինչպես է քարավանը խուճապահար գնում հեռուները, ձուլվում դարուփոս հողերին: Այդ ժամանակ նա արդեն կռվի մեջ էր: Թուրքերը փորձեցին ճեղքել հայ դիմադրությունը, բայց դա նրանց չհաջողվեց: Միայն մեկ-երկուսը կարողացան, ճակատը ձախ կողմից շրջանցելով, թափանցել թիկունք, բայց մենակ մնալով՝ շտապ ետ դարձան: Եղեգնուտների ու մացառների փոքր կղզյակներով ընդմիջվող շոգ-փռշի դաշտավայրում կռիվը սաստկացավ:

Թուրքերը երեք տասնյակի չափ էին, ոչ թե խուժան, այլ, ամեն ինչից երևում էր, կազմ-պատրաստ զորագույն, իսկ իրենք՝ տասներեք մարտիկ, բոլոր ողջ մնացածները:

Գնդակներն անընդմեջ սուլում և տեղատարափով թափվում էին երկու կողմերի վրա, բայց առայժմ չէին վիրավորում, որով-

հետև տարածությունը նրանց միջև բավականին մեծ էր և ուղիղ ու շիտակ նշանառության հնարավորություն չէր տալիս: Կռվի գրեթե հարթ տարածքը չափազանց անբարենպաստ էր հայերի համար: Քարտուտներ չկային, որոնց հետևը պահված՝ կրակեին ապահովապես, չկար մի ժայռ, որ իրենց վահան դառնար: Այս պայմաններում թշնամու թվական գերակշռությունը կարող էր անուղղելի և վերջնական ողբերգությամբ ավարտվել: Ժայռը, քարը, ապառաժը միայն քար չէր, այլ՝ իրենց ընկեր, թև-թիկունք, իր լռությունից ավելի անկեղծ ու հավատարիմ զինակից, որ շատացնում էր իրենց ուժերը, ոգևորում, կռում-կոփում համարձակությունը, և թուրքը դա լավ գիտեր: Նա միշտ ձգտում էր հարթավայրերում հռչոտել, պատառոտել, զիջատել իր զոհին բազմաքանակ երախներով, իսկ իրենք փրկություն և վրեժ էին որոնում լեռների մեջ: Եթե այժմ իրենք հաղթեն, որ անհավանական է, ոչինչ չի փոխվի՝ գորշ գայլերի ծով ոհմակները կմնան և կշարունակեն ոռնալ՝ մտածեց Ներսես Այթունյանը: Իսկ եթե պարտվենք, եթե մեռնենք, եթե նահատակվենք, օ, Աստված, նրանք շուտով կհասնեն-կհարձակվեն քարավանի վրա, և իր ժողովուրդը հավիտյանս հավիտենից կլռի: Անցած ամիսներին այս տազնապը քանի-քանի անգամ էր կայծակել նրա հոգում՝ ճեղքելով սիրտը, սակայն այդ պսիհին նրան թվաց՝ առաջին անգամ են մահն ու անէացումը դամոկլյան սրի նման սպառնում իրենց կյանքին: Իրենց երկրին: Իրենց հիշողությամբ: Իրենց ներկային: Իրենց վաղվա օրվան, որի՞ն որքան մոտենում են, այնքան հեռանում է նա, անորոշանում, ծածկվում մութ ու անթափանց մշուշներով:

Ներսեսը կարգադրեց պաշտպանվելով նահանջել, թուրքին ցույց տալ, թե վախից ու երկշտությունից փախչում են, նրան

քաշել մի այնպիսի անկյուն, որտեղ կռիվը նպաստավոր լինի իրենց համար: Թուրքերը գայթակղվեցին այդ անսպասելի շրջադարձով և սկսեցին հետապնդել հայ մարտիկներին, որոնց հաջողվեց նրանց բավականաչափ հեռացնել քարավանի գնացած ճանապարհից, մոլորեցնել վար ու վեր հողերում և, ի վերջո, հասնել Արարատի արևմտյան երեսի մերձակա քարափները: Երբ թուրքը հասկացավ ինչ կատարվեց, արդեն ուշ էր: Հայերը քար ու ժայռերի հետևը դիրք մտան և, մինչև գազանը կհարմարվեր նոր տեղանքին, կրակ-կրակ տեղացին նրա վրա: Այդ առաջին հակահարվածը թշնամուց խլեց երեք կյանք: Լսվում էր վիրավորների հայիոյական բռբռոռոցը: Մի քանի ձիեր խրխնջալով տապալվեցին-ջղաձգվեցին քար ու հողերի մեջ:

– Կապրինք այստեղ կամ կմեռնինք այստեղ, մի՛ խնայեք ձեր կյանքը,– բղավեց Ներսեսը:

– Պիտի դիմանանք և կռվինք, մինչև քարավանն Արաքսն անցնե,– ձայն էր տալիս Ներսեսը տղամերթին:

– Աստված մեզի հետ է,– անվերջ կրկնում էր Ներսեսը:

Մակայն, շուտով, ուժերը հավասարվեցին, թուրքը վերագտավ իրեն և աստիճանաբար սաստկացնում էր ճնշումը հայերի վրա՝ փորձելով շրջապատել ու սեղմել նրանց իր վիշապ մարմնի մահաշունչ օղակով:

– Առաքել, Մուշեղ լեռներուց իջան,– կրակում և երգում էր Մզրոն:– Մեր հայրենիք հազար տարի շրթաներով կապկալված,– երգում էր Մզրոն:– Չայն մը հնչեց էրզրումի հայոց լեռներեն,– արյունակից, հավատարիմ բառեր էր դառնում ու երգում Մզրոն:– Կռիվ կնդե հերոս Անդրանիկ, սարսափը տիրեց օսմանյան զորքին,– երգում էր Մզրոն:– Արիք, հայկազունք, գոչենք միաձայն,

սրտագին գոչենք, կեցցե՛ Հայաստան,— երգում էր Մզրոն, և արյունը եռեփ էր գալիս, աչքերը կայծակում էին, սիրտը վրեժով ու ատելությամբ շառաչում էր հրացանից առավել սաստիկ:

Երեկոյան կողմ նրանք գրեթե շրջապատված էին: Նահանջի մի նեղ ու բաց ճանապարհ էր մնացել, որից կարելի էր օգտվել միայն մութ ժամանակ՝ խուսափելու թուրք զնդակներից:

Պետոն, ծանր վիրավոր, անզգա պառկել էր քարի հետևը:

Համբարձումը մեռած էր արդեն:

Լևոնը մեռած էր:

Կարոն մեռած էր:

Հարեթը վիրավոր շարունակում էր կռվել:

Խաչատուրը մեռած էր:

Մզրոն արդեն չէր երգում:

Ներսեսը հրամաններ չէր արձակում:

Դանիելը և Եփրեմը լուռ էին:

Բալորը լուռ կռվում էին իրենց վերջին կոճվը:

Եփրեմը գոտուց քաշեց-հանեց սուրը, երբ, սեղմելով հրացանի ձգանը, ջավով տեսավ, որ փանփուշտ այլևս չունի:

Քիչ հետո Ներսեսը քաշեց սուրը:

Արշակը դուրս քաշեց սուրը:

Թորգոմը քաշեց-հանեց սուրը:

Դանիելը քաշեց սուրն ու դաշույնը:

Վահրամը քաշեց սուրը:

Մզրոն քաշեց սուրը:

Հարեթը նետեց համր հրացանը և ծանր վիրավոր ձեռքով քաշեց սուրը:

Նրանք ելան քարերի հետևից և հարվածեցին թուրք սրերին:

Մութը մոտենում էր:

Սրերի պաղ շաշունը թանձրացնում էր լուսությունը, դաժանացնում, լուսությունը դարձնում օձ, որն իր սառն ու թունոտ մարմնով դանդաղ փաթաթվում էր նրանց:

Յուրաքանչյուրը կեվում էր երկու-երեք թուրքի դեմ, որոնք սրամարտության մեջ թեև նրանց փորձառությունը չունեին, սակայն անզերագանցելի էին իրենց կույր ու վայրենի ոգևորությամբ:

Շուտով Հաբեթը արյունաքամ եղավ նոր վերքերից և նահատակվեց:

Դանիելը մահացու դաշունահարեց իր երկու ախոյաններից մեկին, բայց ինքն էլ սրտից քիչ ներքև տաք ու ցավեցնող վերք ստացավ և ետ ու ետ գնաց:

Արշակը նահատակվեց. մի քանի թուրքի վիրավորելուց հետո, շատ տեղերից խոցված ու արյունաքամ, նա ընկավ երեսնիվայր և չգիտակցեց, թե ինչպես երկաթից էլ ծանր, գայլից էլ դաժան, խավարից էլ սև մի թաթ, իր մազերից բռնած, բարձրացրեց կիսաշրջեց գլուխը, և սառն ու անզգա յաթաղանը սղոցելով կտրեց իր պարանոցը: Նա չիմացավ, որ գլուխը մարմնից անջատվեց: Թաթը վեր պարզեց միայնակ ու անջատ գլուխը, որը ցավ ու կրակից ցնցվում էր և լուռ ճշում: Նա չէր լսում այդ ձայնը: Եվ չտեսավ, որովհետև աչքերը փակ էին, ինչպիսի հրճվանքով ու ժանտությանք է թուրքը նայում իր գլխին, որից թանձր արյուն էր գալիս: Նա ոչինչ չզգաց, և դա փրկություն էր:

– Ետ քաշվեք, փրկվեցեք, ետ քաշվեք, – հրամայաբար գոռաց Ներսես Ալթունյանը:– Հավերժական փառք մեր մեռած և ողջ մարմիններուն:

Մակայն նա չնահանջեց, այլ սուրը առաջ պարզած խոյացավ մարդասպանի վրա:

Նա հիշեց Երզնկան և Եփրատը:

Նա հիշեց Սեպուհ լեռան ձյունները՝ զարնան կապույտ հորիզոնների գրկում:

Նա հիշեց իր ծնողներին, կնոջը, երեխաներին:

Նա հիշեց բրաբիոն ծաղիկը, որ արյունոտված ապրում էր շապիկի տակ, իր կրծքի վրա:

Նա հիշեց Սուրբ Փրկիչ եկեղեցու զանգը, որ տազնապահույզ սրտի նման դողանջում էր:

Եվ մի անուն հիշեց՝ ծաղկի պես նուրբ ու գեղեցիկ, աստղի պես հեռավոր ու պայծառ, կարոտի պես անուշ ու խելագարեցնող:

Եղավ մի պահ, երբ նա կարող էր աղջամուղջին խառնված ետ քաշվել և միանալ ընկերներին, սակայն ավելի խոր գնաց թշնամու երախը՝ սրով աջ ու ախյալ շանթելով:

Հանկարծ, ի՞նչ պատահեց՝ սի՞րտը դողաց և դավաճանեց իրեն. սուրը թրավ նրա ձեռքից հակառակորդի ոտքերին:

Նրա համար անհավատալի հնարավորություն ստեղծվեց փախչելու. թիկունքն ազատ էր, իսկ առջևում գտնվող թուրքերը շփոթվեցին, կանգ առան՝ մի քանի վայրկյան չիմանալով իրենց անելիքը:

Բայց նա, լավ գիտակցելով, որ դա ապրելու ամենավերջին դուռն է, չդիմեց փախուստի, այլ մի քանի քայլ ետ-ետ գնաց և անշարժացավ:

Թուրքերը առաջ պարզած սրերով սկսեցին քայլ-քայլ մոտենալ:

Նա գրպանից հանեց լուցկին, վառեց, բոցը կպցրեց շապիկին, որն իսկույն բռնկվեց չոր խոտի մնան:

Թուրքերը դանդաղ առաջանում էին:

Բոցը լիզեց կուրծքը, կպավ թևերին և ռսերին, սահեց մեջքի վրայով:

Նա խորովվող ցավից սեղմեց ատամները և հասկացավ, որ հրդեհը մի քնի վայրկյան հետո առավել անտանելի կդառնա:

Կայծակի ակնթարթությամբ նա հիշեց Երզնկան և իր երեխաների ձայները:

Նա տեսավ՝ ինչպես են ոտքերը այրվում:

Նա լսեց՝ ինչպես է բուն դաժան վայրով կռնչում:

Բոցը հասավ սրտին:

Նա հիշեց մի անուն՝ ծաղկից ավելի գեղեցիկ էր, և նրա կարոտը տանջում էր կրակից սաստիկ:

Բոցը խուժեց աչքերը:

Թուրքերը սարսափահար կանգ առան:

Նա, որքից գլուխ բոցավառված, մի ամեհի ցատկ արեց և գրկեց-փաթաթվեց թուրքերից մեկին, իր կրակներով բոցավառեց նրան:

Թուրքը ճչաց:

Թուրքերը վրա ընկան՝ ազատելու իրենց ցեղակցին:

Յաթաղանները մխրճվեցին նրա կուրծքը, փորը, մեջքը, թափով իջան գլխին, և որքան խողխողում էին այրվող մարմինը, նա ավելի ամուր էր թուրքին սեղմում, տրորում, ճգնում իր գրկի մեջ:

Նրան թվաց՝ Իսմայիլին է բռնուտել: Իսմայիլն է, մարմնի դեռևս աղջ բոլոր երակներով հավատաց, որ Իսմայիլն է:

Նա ավելի ուժգնաբար սեղմեղ-ճզմեց թուրքին, որն Իսմայիլը չէր, և իր բոցերով վերջնականապես վառեց-մոխրացրեց նրան:

Նա փլվեց թուրքի ածխացած մարմնին և դեռ երկար այրվում էր՝ լույս տալով:

Նա անձնասպան եղավ:

Հեռվում, մթության մեջ, բարձր ժայռին կանգնած ողջերից նրա անձնասպանությունը հասկացավ միայն Մզրոն:

* * *

Քարավանն ամբողջ գիշեր քայլում էր լուսնի հետ: Միայն մի կարճ ժամանակ կանգ առավ, երբ լուսինը պահվեց ամպերի հետևը, և մութ-խավար եղավ:

Բացվեց պայծառ առավոտ:

Հորիզոնի ու երկնքի կապույտներում ծագեց Արարատը:

Ելավ արևը և համբույր տվեց աստվածային լեռան երկնակատար ձյուններին:

Ոսկե ձին վերադարձել էր: Նա տխուր-հոգնած նայեց շուրջը և իր ծանոթներից շատերին չգտավ: Նա չճանաչեց Վահրամին, Մզրոյին, Թորգոմին, Եփրեմին, որոնք իրեն սիրել էին երբոր պես: Վաղորդյան օդում նա փորձեց արձակել ողբերգության խրխինջը՝ լարեց մկանները, տառապանքից խենթացած աչքերը ոլորեց, բաց-խուփ արեց բերանը, սակայն ձայն դուրս չեկավ:

Քարավանը գնում էր դժվարությամբ փոխփոխելով ոտքերը, ասես չորեքթաթ, կուրծքը հող ու քարերին քսելով: Ոսկե ձին առաջ ընկավ՝ ուղեկցելու նրան դեպի Արաքսը, որին տեսնում էր խլշած ականջներով և հոտառությամբ:

Ոչ ոք չզիտեր՝ ինչ ամիս է ու օր, նույնիսկ իրենց կյանքի այդ թվականն էր մթագնվել, թվում էր՝ ծննդյան ժամանակից ի վեր շարժվում, գնում են դեպի փրկությունը և չեն հասնում նրան, չեն փրկվում:

Մի գեղանի արտույտ կանգնեց քարին: Բոլորը կարծեցին Երզնկայից է թեւ-եկել, երզնկացի է, Երզնկան է նրա տունն ու ծննդավայրը: Երգիր, արտուտիկ, մեր հոգի, ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ պար չես գալիս, ինչո՞ւ չես երգում:

Արտույտը լուռ էր:

Արարատը իր զավակներին սիրո ու կարեկցության ջերմությամբ առավ գիրկը: Ինքը շատ սպասեց նրանց, շատ վախեցավ, շատ տառապեց, իր կրծքի ձյուները արցունքի առուներ դարձան և վազեցին դաշտ, սիրտն այնքան կարոտեց, այնքան տագնապեց նրանց մութ ճակատագրից, այնքան ու այնքան մորմոքվեց, որ գլխի մազերը թել-թել, տակ ու վրա ճերմակեցին:

Երևաց Արաքսը: Մեջքը խաղացնելով՝ աշխույժ ու զվարթ վազում էր, գալարվում, շափաղ տալիս, կաքավում դաշտի մեջ՝ քարերին զարնվող իր ալյակների նվազածությամբ:

Կանգ առան: Նայեցին ետ: Աչքերը կկոցելով նայեցին Արաքսից այն կողմ՝ արևաշող հովտին, լեռների կապույտ ուրվագծին, հեռուների մշուշներին:

Քարավանը կանգնել էր, համրացել: Հետևը հարազատ ձայներն էին, անմոռաց պատմությունը, արյունից էլ թանկ կերսյարանքները՝ պարուրված խելագարեցնող մղձավանջով: Առջևը հույսն էր և ապագան, բայց՝ անստույգ, սառն ու օտար:

Քարավանը կանգ էր առել և չզիտեր՝ առաջ գնա, թե՞ ետ, ինչպե՞ս ապրի, ի՞նչ անի, ինչպե՞ս մխիթարվի:

Նա մահը գերադասեց կյանքից: Անցյալը՝ ապագայից: Հիշողությունը՝ կենդանի զգացմունքից: Պատմությունը՝ ներկա օրից: Կորուստները՝ այն ամենից, ինչ դեռ գտնելու է: Տառապանքը՝ ուրախությունից: Կծու վերքերը՝ քաղցր նիրհից: Մաքառումը՝ անդորր գոյությունից: Իր կենսագրության ալեկոծ մատյանը՝ փրկության ափից, որ Արաքսի խշշոցով կանչում, մոլորեցնում, հանդգում, ստիպում էր իրեն՝ անել անցյալից անջատվելու վերջին ճակատագրական քայլը:

Ոսկե ձին վարանոտ քայլ օգեց: Մտավ Արաքսի ծանծաղուտը: Ուտքերն անհանգիստ ու նյարդայնորեն խփեց քարերին: Հասնելով գետի մեջտեղը՝ զլուխը շրջեց և անմխիթար աչքերի աղաչական ձայնով կանչեց ափին լուռ կանգնած կենդանիներին ու մարդկանց: Խնդրեց՝ հետևել իրեն: Լուռումունջ թախամձեց: Աղերսում-պաղատում էր: Ողբ ու արցունք հեծկլտաց կապույտ աչքերի խորքում, որը ոչ ոք չտեսավ:

Վարդանուշը դանդաղ առաջ գնաց: Գետի մեջտեղում կանգ առավ և ետ նայեց: Ոչ, նա քարավանին չէր նայում, այլ տեսնում էր հեռուները, որ չէին երևում ամենևին: Մեկ-երկու քայլ՝ ետ եկավ: Հետո շրջվեց և գետն անցավ վերից վար փշրված մեջքով:

Փոքրիկ տղան, չալպտուրիկ շանը կրծքին սեղմած, մտավ գետը և արագ, ցատկելով քարերի վրայով, հասավ դիմացի ափ:

Թորգոմը ձիու սանձը բռնած անցավ Արաքսը՝ մարդկանց հորիզոնով շտապել և հետևել իրեն:

Մարգար Քեշիշյանը, հասնելով գետի մեջտեղը, կռացավ, մի լիքը բուռ Արաքս խփեց դեմքին և անցավ մյուս ափը:

Մգրոն, ձին հեծած, տխուր և ճգնված սրտով հաշվում էր վեց... ութ... տասնմեկ... տասնչորս...

Օսանը և Արլասը զգուշորեն անցան ջուրը և հենց ոտք դրեցին հանդիպակաց ափին, Օսանը կովին խաչակնքեց ու սրտալի բառեր շնջաց Աստծուն:

Բոկոտն ու քրզված՝ հասնելով Արաքսի մյուս ափը, Մարտիրոսը լուռ լաց եղավ: Ո՞ւմ հիշեց մա: Ո՞ւմ համար էին զլորվում նրա ուլունք արցունքները:

Կիրակոսյանները սայլը հրելով հասցրին գետի մեջտեղը, բայց այլևս չկարողացան զլորել՝ անհվները լավեցին քարերի մեջ: Նրանք բարձրացրին սայլը իրենց ուսերի վրա և հասան ափ:

Հովակիմ Զուքուրյանը՝ Փղրափիյոնի թևին կռթնած, անցավ գետը:

Վահրամն անցավ՝ ստեպ-ստեպ ետ նայելով:

Հայկուռիին անցավ:

Սգրոն հաշվում էր: Ինչո՞ւ է հաշվում: Կուրանային աչքերը, չտեսներ, ոչինչ չիմանար, մեռներ ու չտեսներ:

Մամփրենն անցավ գետը իր մանգաղի ու փոցխի հետ: Նա երբեք այնքան ընկճված չէր եղել, ինչպես այժմ:

Եփրենը քաշեց սանձը, բայց ձին տարավ նրան առաջ: Եվ Եփրենը հայիոյեց իրեն և ձիուն, որ ամբողջ կյանքում միայն անուշ խոսքեր էր ասել, սիրել մարդուց ավելի, հարգել նույնչափ, որքան և իր սուրն ու հրացանը:

Մելքոն Տեր-Պերպերյանը շալվարի լայն փողքերը մինչև ծնկները ծալծլեց և անցավ Արաքսը:

Շողակաթը անցավ:

Սեդրակն անցավ գետը և ետ շնայեց:

Բոլորը անցան և դանդաղ, գերեզմանոցից ելնող խառնի-խուռն երանի նման ցրվեցին դաշտում:

Մզրոն վերջինն էր՝ հիսուն չորսերորդը:

Արաքսի մյուս ափից Վահրամը ձայն տվեց և ձեռքով էր անում. Մզրո, ինչո՞ւ ես կանգնել, դե արի, շուտ անցիր գետը...

Մզրոյի ձին անհանգիստ դուփեց գետինը, ոտք առավ, բայց լկամը սանձեց նրան:

«Գնա, Վահրամ, և մի՛ ավերի՛ր հոգուս ավերակները, գնա, իմ եղբայր, — ասաց Մզրոն այնքան ցածր, որ լսեցին միայն ինքն ու ձին: — Դուն պիտի նորածիններուն ուսուցանես մեր հայոց լեզուն, ճանչցնես անոնց հայրենի լեռները, գետերը, դաշտերը: Դուն, եղբայր, անոնց մեջ արթուն պահե մերիներուն պատմությունը, չմեռնի հանկարծ, կլսե՞ս, պատմությունը չմեռնի երբևիցե: Ների՛ր, որ չպիտի գանք ես և իմ սուրը, ես և իմ ձին, ես և իմ հրացանը: Աստված այդպես կամեցավ»:

Քարավանը հեռզհետե հեռանում էր, ցրվում, փոքրանում: Դեմքերն ու կերպարանքներն արդեն անճանաչելի էին դարձել:

Լռություն էր:

Անսպասելի լռել էր նաև Արաքսը:

Արարատի ճերմակ-լուսավոր գլուխը խոնարհվել էր լռությունից:

Մզրոն շոյեց ձիու բաշը: Կռացավ և համբուրեց ձիու երեսը: Անձայն ներողություն խնդրեց նրանից, պաղատեց թողություն տալ իր մեղքերին, որ մինչև այժմ քիչ չեղան նրա հանդեպ և այսուհետև ավելի շատ են լինելու, աղերսանք արեց իրեն մեռակ չթողնել, գնալ իր հետ, ուր սիրտն է կանչում, որտեղ ծաղկում են սերն ու վրեժը, ուր արդարությունը մոռացության է մատնված, որտեղ իր սուրը տենչում է երգել:

Չին և Մզրոն շրջվեցին:

Նրանց առջև գերված, բայց ոչ ստորուկ երկիրն էր:

Մզրոն խթանեց նժույգ ձին և սլացավ դեպի անսկիզբ, հար ու հավիտյան երեկվա օրը:

Պատմում են, թե ջրհեղեղի ժամանակ Նոյ Նահապետը Արարատի վրա իջած տապանից դիտում էր շրջակայքը և տեսնելով մի անջուր տարածություն՝ բացականչեց «երևա անդ»: Հեռվում երևում էին ցամաք ու արևոտ բլուրներ: Նահապետի խոսքով էլ՝ այդ վայրը կոչեցին Երևան: Այստեղ Նոյը առաջին անգամ տնկեց խաղողի որթը:

1918 թվականի աշնանը հիմնավորց Երևան քաղաքում և նրա շուրջը մի գաղթական ձի էր թափառում: Նա ծայրաստիճան հյուծված էր, ցնցոտիների մեջ, տխուր և հուսաբեկ: Միայն կապույտ աչքերն էին լույս տալիս, և սիրտն էր ոգորում մահվան դեմ՝ կայծակներով զարկված կրծքի տակ: Նա նման էր մարդկանց, որոնք ստվերի պես համր ու դանդաղ շարժվում էին քաղաքի փոշոտ ու ծուռմեջք փողոցներով, և մարդիկ նման էին նրան:

Այդ ձին կարտատում էր իր դաշտը, լեռներն ու գետը, սիրում, ողբում, մոլեգնում չարի հանդեպ անքուն վրեժով ու ատելությամբ, անրջանքի մեջ էր ընկնում, խելագարվում, այրվում ու չէր մոխրանում, չէր մեռնում, չէր անէանում երկրի երեսից, այլ ավելի խորն էր ճանաչում իր գոյությունը՝ իր ով լինելը, որտեղից գալը, իր անցյալն ու ներկան:

Մի օր, աղամամութիւն, ձին ելավ քաղաքից և վազեց, քառասորոսի գնաց դեպի Արարատը: Երբ արևը ծագեց, նա արդեն լեռան ստորոտում էր: Նա երկար ու ակնդետ նայեց վեր, հետո սկսեց բարձրանալ: Սկզբում հեշտությամբ էր փոխում քայլերը, բայց հետզհետեւ ոտքերը թուլացան և շունչը ծանրացավ: Լեռան

գագաթը կանչում էր նրան: Աչքերը գնում էին: Սիրտը գնում էր այդ կանչին ընդառաջ: Արյունն էր գնում: Հոգին: Եվ մի բան, որ անուն չէր, այլ ամբողջ կան ու չկան:

Որքան տառապեց, խոշտանգվեց մարմինը վեր ելնելիս՝ ոչ ինքն իմացավ և ոչ Աստված:

Հասնելով հավերժական ձյունների գագաթին՝ ուժասպառ կանգնեց: Առաջին պահին ոչինչ չէր երևում՝ մշուշ էր աչքերում և չորսբլուրը:

Կամաց-կամաց մշուշները ցրվեցին, և նրա հայացքի առջև բացվեց իր աչքերից էլ կապույտ դրախտը. Սիփան սարն է, Բիթլիսը, Ալաշկերտի դաշտը և Քյոսսաբաղ լեռը, Վանա ծովակը, Բերդակ գետը, Սեբաստիան, Դիարբեքիլը, Մեծուրյան լեռներն են... Նրա ոտքերը դողացին հուզմունքից. Երզնկան է, իր կանաչ դաշտը բարձր լեռների մեջ, Եփրատը, Եփրատը... Եփրատ, — խելագար վրճջյունով կանչեց նա, բայց դառը համրություն էր բերանում, և Եփրատը չպատասխանեց: Նրա ոտքերը քարացան: Սիրտը քար կտրեց: Եփրատ, — խրխնջաց նա կարոտի ու սիրտ ցավագնությանը: Արյունը սառեց: Կապույտ աչքերը սառեցին: Պարանոցը գալարվելով երկարեց վեր, նիհար, ոսկրոտ կուրծքը առաջ եկավ, պուխը՝ լայն բացված բերանով գնաց ետ, և նրա աղավաղված մարմինը վերջին շնչում անեղ ու լուռ բռնաց, աղաղակեց, վրճջաց:

Այդ դիրքում նա միանգամից լուսավառյալ արձան դարձավ՝ ոսկե ձի:

Ասում են, նա մինչև հիմա էլ այնտեղ է՝ հայրենիքի բաժան ասիերի միջև, և խրխնջում է հսկա զանգի ձայնով. ելեք, զենք զրահ հագեք, զենք-զրահ, զենք-զրահ, զենք-զրահ...

Ես հավատում եմ:

ՆՈՐԱՅՐ ԱՊԱԼՅԱՆ

ԱՆՎ ՔԱՆՈՎԱԿՈՒՄԻ ԿԱՐՄԻՐ ԱՆԱՊԱՏՈՒՄ



ՄԱՏՈՐԵԿՈՅԵՐԻ

ԿՈՒՍԱԲԱՏ

Պուշկինի 46

Ֆոն: (374 10) 53-96-47, (37491) 42-51-63

E-mail: lusabats@netcity.am

lusabats@mail.ru

Դրատարակչության տնօրեն և գլխավոր խմբագիր՝

Վիտալի ԱՍԼՆՅԱՆ

Մակետավորումը՝ Սուսան ԲԱՐՈՑՅԱՆԻ

Դամկարգչային շարվածքը՝ Մարիամ ԷՌԻԼՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր՝ Վահան ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տպագրված է «Լուսաբաց հրատարակչատուն» տպարանում՝

600 օրինակ տպաքանակով



- Եթե զգացմունքները չլինեն ճշմարիտ, մեր ամբողջ բանականությունը կլինի սուտ ու կեղծ:
- Հարատև է մետաֆիզիկական, քեզնից թռչող հոգին:
- Գրողի նպատակը մարդու դրաման է:
- Ամենաթանկ բառերը լուռ բառերն են:
- Առանց հայրենիքի բարձր մշակույթ չի կարող լինել:
- Գրականությունն զգացմունք է, բայց նաև գիտություն:

- Ես չեմ սիրում իմ պատասխանները կարգադրել ընթերցողին: Նրան կանգնեցնելով այս կամ այն հարցի առջև ու չպատասխանելով՝ ես նրան մտածելու ավելի մեծ ազատություն եմ տալիս:
- Տաղանդավոր գրականությունն առնչվում է գլխավորապես սիրո հետ:
- Մխավելու իրավունք և հնարավարություն ունեն նրանք, ովքեր որոնում են, իսկ որոնում են ոչ այլ ինչ, քան ճշմարտությունը:
- Ազգայինը մայրենի երկիրն է, թռիչքադաշտ դեպի երկինք:
- Սողացող մարմնում հոգին մեռնում է:
- Մեղքից հրաժարումն ավելի մեծ մեղք է:
- Բոլորդ ուշքի եկեք. դուք գտնվում եք դատարանում:
- Ոչ ոք չգիտի՝ սատանան քանի՞ տարեկան է:
- Կյանքում շատ երևույթներ ծերանում են, հայրենասիրությունն է մշտապես երիտասարդ:
- Ով ստեղծում է՝ չի տիրանում:
- Իմ ներսում անձրև է գալիս:

ՆՈՐԱՅՐ ԱԳԱԼՅԱՆ



Պուշկինի 46

Հեռ.՝ + 374(10) 53 96 47, + 374(91) 42 51 63

E-mail: lusabats@netsys.am

lusabatc@mail.ru